



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՆԱԶԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԼԻՔԱՆԱՆԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՇՆԵՐԸ**



ԵՐԵՎԱՆ 2002

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի խորհրդի որոշմամբ

ՀՏԴ 371
ԳՄԴ 74.204
Հ 422

Խմբագիր՝ **Հ. Մ. Սախչանյան**, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Գրախոսներ՝ **Ֆ. Գ. Ղազարյան**, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Ն. Ազարյան, մանկ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հարությունյան Նազիկ Կարապետի
Հ 422 Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները: Եր.:
«Զանգակ-97» հրատ., 2002.– 304 էջ:

Ուսումնասիրությունը նվիրված է Լիբանանի և Սիրիայի հայկական ամեն-
օրյա դպրոցների պատմությանը, զարգացմանը և ներկա կրթադաստիա-
րակչական ու հայապահպան գործունեությանը: Աշխատանքում հանգամա-
նալից վերլուծության են ենթարկվում հայկական դպրոցների կարգավիճա-
կի, կրթության բովանդակության, ուսումնական ծրագրերի, դասագրքա-
ստեղծման և կադրային հարցերը:

Գրքում բացահայտվում ու արժեքավորվում է հայկական եկեղեցու, ազ-
գային կուսակցությունների, մշակութային, բարեգործական, հայրենակցա-
կան միությունների ու կազմակերպությունների մեծ դերը հայկական ամեն-
օրյա դպրոցների ստեղծման և անխափան գործունեության ապահովման
գործում:

Գիրքը նախատեսված է մանկավարժների, պատմաբանների և սփյուռքի
հայկական գաղթօջախներով հետաքրքրվողների համար:

Հ 4306000000 2002
0003(01)-2002

ԳՄԴ 74.204

ISBN 99930-2-412-0

© Հարությունյան Ն. Կ., 2002 թ.
© «ԶԱՆԳԱԿ-97» հրատ., 2002 թ.

Գիրքն նվիրում են մանկավարժ մորս՝
ԱԶԳՈՒՇ ՄԵԽԹԱՐՅԱՆԻ
սուրբ հիշատակին

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Աշխարհի տարբեր ծայրերում ստեղծված հայկական
գաղթօջախների պատմությունը անհրաժեշտ է դիտել
հայ ժողովրդի ամբողջական պատմության մի անբաժանելի մասը, ո-
րը տարբեր ժամանակաշրջաններում իր վավերական ու վճռորոշ դե-
րակատարությունն է ունեցել հայ ժողովրդի ճակատագրում:

Հայկական գաղթօջախների պատմության ուսումնասիրու-
թյամբ զբաղվել են բազմաթիվ հայրենական և սփյուռքի պատմա-
բաններ՝ Վլ. Բարխուդարյան, Ս. Գասպարյան, Հ. Թովուզյան, Լեո,
Վ. Միքայելյան, Հ. Սիմոնյան, Կ. Դալլաքյան, Ե. Նաջարյան, Զ. Ա-
վագյան, Աշ. Աբրահամյան, Գ. Ավագյան, Ս. Վարժապետյան (Բեյ-
րութ), Ե. Տասնապետյան (Հալեպ), Լ. Մարտիրոսյան (Բեյրութ), Ա.
Սյուրմեյան (Հալեպ), Հովհ. Աղպաշյան (Բեյրութ), Թ. Բասնաջյան
(Հալեպ), Կ. Արամյան (Նյու Յորք), Հ. Ալիմյան և ուրիշներ, որոնք
կատարել են մեծ հետազոտական աշխատանքներ՝ վեր հանելով և
հավուր պատշաճի արժեքավորելով սփյուռքի մեր հայրենակիցների
դաժան ու ողբերգական, բայց և միաժամանակ հերոսական պատ-
մությունը՝ մաքառումներով, տառապանքներով, սպասումներով ու ա-
պագայի հանդեպ ունեցած անկոտրում հույսով ու հավատով:

Եվ եթե հայկական տարբեր գաղթօջախների ընդհանուր պատ-
մությունը քիչ թե շատ ուսումնասիրվել է, ապա սփյուռքում գործող
հայկական կրթօջախների պատմությունը, որն ընդգրկում է ամեն-

օրյա և կիրակնօրյա դպրոցները, մի չուսումնասիրված ոլորտ է և կարոտ է լուրջ հետազոտության:

Հայաստանի անկախացումից հետո ստեղծվեցին լայն հնարավորություններ Հայաստան–սփյուռք սերտ համագործակցության և փոխճանաչման՝ հիմք ունենալով «մեկ ազգ — մեկ մշակույթ — մեկ հավատք — մեկ հայրենիք» կարգախոսը:

Սփյուռքի կրթական և պատմամշակութային արժեքների ուսումնասիրությունները էլ ավելի են սերտացնելու և միասնացնելու Հայաստանի ժողովրդին դաժան ճակատագրի բերումով սփյուռքի մեր տարագիր հայրենակիցների հետ: Ավելին, դա հնարավորություն է տալու խորությամբ ծանոթանալու և գիտամանկավարժորեն արժևորելու կրթության ոլորտում այն ձեռքբերումները, որ օտարության մեջ կարողացել են ստեղծել սփյուռքահայերը: Մույն մենագրության թեման միտված է վերոհիշյալ խնդրին և, կարծում ենք, հնարավոր սահմաններում կլրացնի այն բացը, որ ստեղծվել է մեզանից անկախ՝ ճակատագրի բերումով տարիներ շարունակ:

Հետազոտության նպատակն է եղել պատմամշակութային և գիտամանկավարժական ուսումնասիրության ենթարկել հայկական երկու գաղթօջախների՝ Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցների պատմությունը, զարգացումը և ներկան, արժեքավորել նրանց մեծ դերը հայ երեխային օտար միջավայրում հայ պահելու, նրան հայեցի կրթություն և դաստիարակություն տալու, նրա մեջ ազգային ինքնագիտակցության ոգի սերմանելու, ձուլման վտանգից զերծ պահելու ազգաշահ և չափազանց պատասխանատու գործում:

Սփյուռքի գաղթօջախներում ամենօրյա հայկական դպրոցների գոյությունը հայ երեխային օտար միջավայրում հայ պահելու երաշխիքներից ու նրան ուժացումից փրկելու կարևոր գրավականներինց մեկն է: Հետևաբար, ամեն գնով դրանց պահպանումը սփյուռքահայության հայրենասիրության և անձնվիրության դրսևորումներից է: Սփյուռքի հայկական դպրոցների գործունեության կազմակերպումը տեղի է ունենում հայկական եկեղեցիների, ազգային կուսակցությունների, հասարակական, մշակութային, հայրենակցական, բարեգործական կազմակերպությունների ու միությունների միջոցներով ու

ջանքերով, որը հայի հոգեբանությանը բնորոշ, ազգային ինքնագիտակցության բարձր ոգու, մեր նախնիների արմատներին ունեցած մեծ կապվածության, մեր երկու միլիոն նահատակներին տված երդումի և մեր պապենական հողի կանչին անսալու բարձր դրսևորում է:

Ձգալի է տարբերությունը Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցների գործունեության, կարգավիճակի, կրթության բովանդակության, ծրագրերի, դասագրքերի, ուսուցման մեթոդների, շենքային–գույքային պայմանների, նյութատեխնիկական բազայի և այլ սահմանափակումների առումով: Հսկայական է տվյալ արտասահմանյան երկրների (Լիբանան, Սիրիա) քաղաքական ռեժիմի, տնտեսավարման համակարգի, սոցիալ–տնտեսական պայմանների ներգործությունը հայկական գաղթօջախների գոյության և հետագա վիճակի վրա: Մեծ է նաև տվյալ երկրների կացութաձևի, օրենքների, հասարակական նորմերի, ապրելակերպի, մշակույթի, կրթական համակարգի, լեզվի, ավանդույթների, կրոնական ծեսերի, տոնակատարությունների ազդեցությունը սփյուռքահայության հոգեբանության, ինչու չէ, նաև մտածելակերպի ու ապրելակերպի վրա: Շոշափելի է և ակնհայտ տեղի ժողովրդի հետ հաղորդակցման ու համագործակցության փաստը, որպես հետևանք այս ամենի՝ օտար ամուսնությունները, վաղվա օրվա հանդեպ անվստահության, օտար դպրոցներ հաճախելու երևույթները, որոնք, դժբախտաբար, օրեցօր ավելացնում են ձուլման տոկոսը և վտանգում հայապահպանության գործը:

Անբավարար է հայրենիքի աջակցությունը սփյուռքի հայկական դպրոցներին՝ հիմնականում հոգեբանամանկավարժական–մեթոդական, կադրերի պատրաստման, դասագրքաստեղծման հարցերում:

Աճող սերնդի հայեցի կրթության և դաստիարակության համար կարևորվում է հատկապես հայրենիք–սփյուռք համագործակցությունը կրթական ոլորտում, որը կարող է իրականացվել Հայաստանի և հայկական տարբեր գաղթօջախների՝ տվյալ պարագայում Լիբանանի և Սիրիայի դպրոցների հետ սերտ հաղորդակցմամբ՝ քույր դպրոցների ստեղծմամբ, աշակերտների և մանկավարժների փոխայցելություններով, համահայկական կրթական տարբեր ձեռնարկների

կազմակերպմամբ (գիտաժողովներ, սեմինարներ, կոնֆերանսներ, հավաքներ), մանկավարժ կադրերի պատրաստմամբ և վերապատրաստմամբ, Հայաստանի հանրակրթական դպրոցներում և բուհերում (ներառյալ ասպիրանտուրան) սփյուռքի երեխաների և երիտասարդների ուսումնառությամբ, համահեղինակությամբ դասագրքերի, ուսումնական ծրագրերի ստեղծմամբ՝ հաշվի առնելով տեղի պայմանների և սփյուռքահայ երեխաների հոգեբանական առանձնահատկությունները:

Սույն մենագրության նյութերն ամբողջովին կարող են օգտագործվել բուհերում կարդացվող «Հայ մանկավարժության պատմության» դասընթացում՝ ի լրացում և ամբողջացում հայ մանկավարժության պատմության և ի ճանաչում այն պատմական արժեքների, որ տարիների ընթացքում ստեղծել է սփյուռքահայ մտավորականությունը:

Գրքում առաջին անգամ ներկայացվում է սփյուռքի հայկական դպրոցների մոդելը:

Աշխատանքը, ըստ մեզ, ունի ոչ միայն գիտամանկավարժական, այլ նաև պատմամշակութային նշանակություն, քանի որ այն ապագա սերունդներին ծանոթացնելու է Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցների պատմությանն ու ներկա կրթամշակութային և հայապահպան գործունեությանը:

Գլուխ առաջին

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԼԻԲԱՆԱՆ, ՍԻՐԻԱ)

§ 1.1. Հայ կրթական գործի հասարակական, քաղաքական, փնտեսական և սոցիալ-մշակութային նախադրյալները

Հայ ժողովուրդը նյութականի մեջ երբեք չի գտել իր գերագույն արժեքը: Նա միշտ գիտակցել ու ամեն ինչից վեր է դասել զիրն ու գրականությունը, մշակույթը, եղել է և է՝ արարող ու մնայուն արժեքներ ստեղծող ժողովուրդ: Նրա որոշ հատվածներ դաժան ճակատագրի բերումով որ երկրում էլ որ ապրել են, դարերի ընթացքում ստեղծել են անգնահատելի արժեքներ, որոնք կարոտ են համահայկական և, ինչու չէ, նաև համաշխարհային ճանաչման ու գնահատման:

Անհնար է ստեղծել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ առանց հայկական գաղթօջախների, սփյուռքի պատմության համապարփակ ուսումնասիրության, քանի որ սփյուռքահայությունը մեր ժողովրդի անբաժանելի մասն է կազմում և իր մեծ ու անգնահատելի դերն է կատարում հայ ժողովրդի և մեր հայրենիքի ճակատագրում: Հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրությունը կարևորվում է նաև հայ և մյուս ժողովուրդների փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրության հարցում: Սփյուռքահայությունը կարևոր ներդրում է ունեցել տվյալ երկրների (ուր ստեղծվել են գաղթօջախներ) քաղաքական, սոցիալ-տնտեսական, հասարակական, կրթամշակութային կյանքում և իր հավատարմությունն է դրսևորել ու անմիջական մասնակցությունը բերել այդ երկրների անկա-

խացման համար մղվող ազգային-ազատագրական պայքարում: Արդյունքում հայերը վայելել են նրանց սերը, վստահությունն ու աջակցությունը և ստացել լայն հնարավորություններ՝ իրականացնելու տնտեսական, կրթամշակութային և հասարակական ազատ գործունեություն՝ ի նպաստ գաղութների զարգացմանն ու բարգավաճմանը և, ամենակարևորը, հայապահպանմանը:

Ակադեմիկոս Վ. Բ. Բարխուդարյանը գրում է. «Գաղութ, գաղթավայր կամ գաղթօջախ հասկացության տակ պատմագիտությունն ընդունում է օտար երկրներում հաստատված որևէ ժողովրդի այն զանգվածների գոյությունը, որոնք նոր բնակավայրում ստեղծում են իրենց համայնքը, ստանում ինքնավարություն, պահպանում մայրենի լեզուն, ազգային սովորությունները, դավանանքը, գիրն ու գրականությունը կամ ունենում նշված հատկանիշների մի մասը: Ուրիշ խոսքով, երբ այդ զանգվածները օտար միջավայրում պահպանում են ազգային նկարագիրը և՛ իրենց հատկանիշներով, և՛ համապարփակ կյանքով առանձնանում հյուրընկալող ժողովուրդներից»¹:

Հայկական տարբեր գաղթօջախներում անմիջականորեն լինելը, համայնքների կյանքին ու առօրյային մտտիկից ծանոթանալը, գաղութների պատմության հանգամանակից ուսումնասիրությունները մեզ հանգեցրին այն մտքին, որ բոլոր հայկական գաղթօջախները, որոշակի նմանություններ ու ընդհանրություններ ունենալով հանդերձ, ունեն նաև առանձնահատուկ տարբերություններ, որոնցով և պայմանավորված է նրանց և, ընդհանրապես, հայ ժողովրդի պատմության ինքնատիպությունն ու հարստությունը:

Առաջին ընդհանրությունը, թերևս, բոլոր գաղթօջախների մույն ճակատագրին արժանանալն է. տարագրություն, օտար ափերում դեզերումներ, ֆիզիկական և հոգևոր տառապանքներ, ջարդ, կորուստ ու վիշտ, անվերջ որոնումներ՝ հույսի նշույլները սրտերում և վերջապես հարաբերականորեն ապահով որոշակի մի տեղում հաստատում: Օտար երկրում հիմք զգելով՝ տարագիր հայը, տարիների ճանապարհ անցնելով, իր հոգու խորքում միշտ փայփայում է հայրենիքի գաղափարը՝ իր մեջ ամուր պահելով ազգային ավանդություններն

ու սովորույթները, մայրենին ու մշակույթը: Սակայն ապրելով տարբեր օտար երկրներում, շփվելով ու հաղորդակցվելով իրարից չափազանց տարբեր ազգերի ու ժողովուրդների հետ՝ հայն իր մեջ մի ինքնատիպ կամուրջ է ստեղծել, որը կարողացել է ներդաշնակորեն միացնել իրար ազգայինի և օտարի առանձնահատկությունները:

Հայերի ապաստանած յուրաքանչյուր երկիր իր կառույցներով, տնտեսավարման համակարգով, քաղաքական, սոցիալ-հասարակական, կրթամշակութային ինքնատիպ արժեքներով ու հիմնահարցերով մեծ ներգործություն է թողել այդտեղ ապրող ազգային փոքրամասնությունների, որոնց թվում և հայ համայնքների գոյատևման և զարգացման վրա:

Եվ պատմական տարբեր ժամանակաշրջաններում տվյալ երկրների վերոհիշյալ գործոնները կրել են լուրջ փոփոխություններ՝ փոխելով նաև այդտեղ ապրող ժողովուրդների սոցիալ-տնտեսական, հասարակական և կրթամշակութային կյանքը, նրանց պատմությունը: Ահա սա է այդքան տարբեր ու բազմազան դարձնում մեր գաղթօջախների պատմությունը, որը, այնուամենայնիվ, ինչպես իրավամբ նշում է մեծ պատմաբան Լեոն, մի ամբողջություն է կազմում մեր հայրենիքի պատմության հետ. «Հայոց ժամանակակից պատմութեան ամենախոշոր, ամեն ինչ վճռող եւ բացատրող յատկութիւնն այն է, որ նա կազմում է հայ գաղութների հզօր ազդեցութեան տակ, համարեա նրանց ձեռքով միայն: Բուն Հայաստանն ապրել է սկսում իր գաղութներում ստացած գաղափարներով, ցուցումներով, ներշնչուած շարժումներով... Հասկանալ եւ բացատրել այն ամենը ինչ XIX–XX դարերում կատարուեց բուն Հայաստանում այնպիսի արագասահ ուժգնութեամբ, որպիսին չի տեսել հայոց պատմութիւնն իր առաջին օրերից, երբեք չի կարելի, եթե նրանցից անջատենք գաղութները: Այս բոլորովին անհնարին է, որովհետև ժամանակակից պատմութեան ընթացքում գաղութների եւ մայր երկրի կեանքը միախառնուած է, ամբողջացած է, եւ անկարելի է բաժանարար գծեր դնել երկու կողմերի մեջ»²:

¹ Բարխուդարյան Վ. Բ., էջեր հս. 1 գաղթավայրերի պատմութեան, Երևան, 1996, էջ 2:

² Լեո, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1984, էջ 73:

Ամենևին նպատակ չհետապնդելով ներկայացնել ուսումնասիրվող երկու՝ լիբանանահայ և սիրիահայ գաղթօջախների ամբողջական պատմությունը (դա արել և հիմա էլ հաջողությամբ անում են մեր հայ պատմաբանները), այնուամենայնիվ, մեր ուսումնասիրած նյութը տրամաբանական զարգացման ընթացքով վերլուծելու համար կցանկանայինք համառոտ ակնարկով ներկայացնել այն հիմնական ու ածանցյալ պատճառները, որոնք դարեր շարունակ ստիպել են հայությանը բռնել գաղթականության դաժան ուղին. կորցրել են ու վերագտել, խորտակվել ու մոխիրներից որպես փյունիկ վեր են հառել՝ իրենց հոգիներում անսասան հավատն ու լավատեսությունն ունենալով որպես կյանքի փարոս:

Արտագաղթի պատճառները շատ հիմնավորված է ներկայացնում Վարդգես Միքայելյանն իր «Հայկական արտագաղթերը» (VI–IX դդ.) ուսումնասիրության մեջ, որտեղ նա փաստում է, որ հայերի շրջանում արտագաղթի երևույթը եղել է դեռևս մինչ քրիստոնեությունը, սակայն «հայկական արտագաղթերի եւ գաղութների առաջացման իսկական պատմությունը,— գրում է նա,— սկսում է, իրօք, քրիստոնեության ընդունումից յետոյ: Մի որեւէ երկրում հայ գաղութի հիմնադրման, ամփոփման եւ գոյատևման նախապայմանը գաղափարաբանական ընդհանրությունն է. առանց նրա ցեննետող ուժի ոչ մի ազգային ընդհանրություն երկար գոյատևել չի կարող: Գաղթահայ համայնքների համար այդ ուժը հանդիսանում էր քրիստոնեական ուսմունքը եւ եկեղեցին՝ որպէս այդ ուսմունքը ջատագովող և պահպանող հաստատություն: Ահա թէ ինչու մինչեւ քրիստոնեության ընդունումը Հայաստանից հեռացած բազմահազարանոց եւ ոչ մի գաղթական հոսանք չստեղծեց Հայկական գաղութ եւ կուլ գնաց օտար միջավայրին»³:

Նշենք մի շատ հետաքրքրական փաստ ևս: Հայ ժողովուրդն աշխարհի այն եզակի, հնագույն ժողովուրդներից է, որն իր ողջ պատմության ընթացքում անընդհատ բախվել է արտագաղթի երևույթի հետ: Եվ քանի որ «այն, ցավօք, պարբերական բնույթ է կրել,— գրում

է ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանը,— դարձել է նրա պատմական զարգացման անբաժան ու կարեւոր առանձնահատկությունը: Դարեր շարունակ հայրենիքից՝ Հայաստանից դուրս են գտնուել հայութեան ստուար զանգուածներ, հետեւաբար եւ հասարակական–քաղաքական կեանքի, գիտութեան ու մշակոյթի շատ օջախներ: Ժողովուրդի հաւաքական ամբողջությունը խաթարուելու, նրա մի մեծ հատուածը հայրենի բնաշխարհից դուրս գտնուելու հանգամանքը պատմական զարգացման ընթացքում մշտապէս ուղեկցել է հայ ժողովուրդին: Արդի ժամանակաշրջանում եւս պատմական ճակատագրի այդ բախտորոշ դրոշմը հայ ժողովուրդը կրում է իր վրայ: Այսօր էլ Մայր Հայրենիքից դուրս, աշխարհի տարբեր երկրներում հանգրուան է գտել հայ ժողովուրդի կեւը՝ աւելի քան երեք ու կէս միլիոն հայութիւնը»⁴:

Այստեղից ինքնին ծագում են հարցեր. հայ ժողովրդի գոյապահպանությանը և նրա պատմական զարգացմանը վնասող արտագաղթի երևույթը ինչու է այսպես արմատավորվել հայության մեջ, որո՞նք են այն ծանրակշիռ պատճառները, որոնք ստիպել են նրան դիմել այդ քայլին՝ ծանր կորուստներ կրելով հանդերձ: Արդյոք վտանգ չկա՞, որ դա կդառնա մեր ժողովրդի կենսակերպը: Չէ՞ որ դրանով հարցականի տակ է դրվում աշխարհի հնագույն ժողովուրդների շարքում դասվող հայության հետագա գոյության խնդիրը:

Այս մտահոգող հարցադրումներով հանդերձ մենք լավատեսորեն ենք նայում հայ ժողովրդի ապագային և երևույթն ընկալելու, նրա մեջ խորամուխ լինելու և վերոհիշյալ հարցադրումները փարատելու նպատակով ուզում ենք վերլուծել այն ծանրակշիռ պատճառները, որոնք ժամանակ առ ժամանակ ծառայել են հայ ժողովրդի առջև և ստիպել նրա որոշ զանգվածների դիմել արտագաղթի: Արտագաղթը ծնող պատճառների մի ամբողջ շարք է ներկայացնում Վ. Միքայելյանը, որոնցից ամեն մեկը հայ ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններում իր կործանարար դերն է կատարել նրա ճակատագրում:

³ Միքայելյան Վ., Հայկական արտագաղթերը, «Էջեր հայ գաղթավայրերի պատմության», Երևան, 1996, էջ 22:

⁴ Բարխուդարյան Վլ., Էջեր հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1996, էջ 1:

«Հայկական արտագաղթերը խթանող հիմնական պատճառների մեջ,— գրում է Վ. Միքայելյանը,— առաջին հերթին պետք է առանձնացնել օտար նուաճողների դեպի Հայաստան պարբերաբար կատարած արշավանքները (որոնք իրենց հերթին պայմանաւորուած էին Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ Հայաստանի զբաղեցրած բուֆերային աշխարհագրական դիրքով), ազգային պետականութեան կորուստը, երկրում օտարերկրեայ անտանելի տիրապետութեան հաստատումը, արտաքին աշխարհի հետ ունեցած առեւտրատնտեսական սերտ կապերի առկայութիւնը, սոցիալական եւ դաւաքանական պայքարը, ինչ—որ չափով նաեւ՝ տարերային աղէտները»⁵:

Սրանց ավելանում են նաև երկրի տնտեսական ծանր վիճակը, հողագործութեան, արհեստների, առևտրական ձեռնարկությունների զարգացման համար երկրում ամենատարրական պայմանների բացակայությունը, XIX և XX դարերում տեղի ունեցած ռուս—թուրքական և ռուս—պարսկական պատերազմները և մեզ հայտնի հայկական ջարդերը: Շատ ինքնատիպ ու դիպուկ է հնչում Վ. Միքայելյանի այն միտքը, թե «յուրաքանչիւր հարիւրամեակ հայկական արտագաղթերում մտցնում էր իր «ուղղումներն ու կերպափոխութիւնները», երեւոյթի էութիւնը, սակայն, թողնելով նույնը՝ Հայաստան աշխարհի մարդաթափ դառնալը»⁶:

Հիմա էլ մենք այդ տագնապն ենք ապրում, քանի որ արտագաղթի երևույթը տեղի է ունենում նաև այսօր՝ մեզ հայտնի օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Սակայն վստահ ենք, որ լավատեսությունը և վաղվա օրվա հավատը չեն լքել մեզանից շատերիս հոգիները, և շատ մոտ ապագայում մենք ակնառես կլինենք նաև դեպի Հայաստան ներգաղթի երևույթին՝ միասնանալու, մեկ ամբողջություն կազմելու, «մեկ ազգ — մեկ մշակույթ — մեկ հայրենիք» կարգախոսն իրականություն դարձնելու գերագույն նպատակով:

Վերոհիշյալ պատճառների հետևանքով տարբեր ժամանակներում հայության ստվար զանգվածները ցրվել են աշխարհով մեկ և տարբեր պետություններում ստեղծել համայնքներ:

Համեմատաբար առավել հայահոծ գաղութներ են ստեղծվել Մերձավոր Արևելքում՝ հատկապես Սիրիայում և Լիբանանում, և այն էլ XIX դարի վերջերին և XX դարի սկզբին՝ մեզ հայտնի իրադարձություններից հետո:

Այստեղ հետաքրքիր է փաստել մի շատ կարևոր հանգամանք: Քրիստոնյա հայ ժողովուրդը առավել հանգիստ ու ապահով կացություն է գտնում դարձյալ այլակրոն, այս դեպքում արաբ ժողովրդի մեջ, որը նրան, իրավամբ, կարեկցանքով է ընդունել իր հարկի տակ և օգնության ձեռք մեկնել: Հայերը որոշ ժամանակ անց կարողացել են վերագտնել իրենց ու լծվել շինարար աշխատանքի՝ այս անգամ արդեն հյուրընկալող երկրներում, «որոնց հովանաւորող քաղաքականութեան շնորհիւ, որն, անշուշտ պայմանաւորուած է եղել տուեալ երկրների առեւտրատնտեսական շահերով,— գրում է Վլ. Բարխուդարյանը,— այդ գաղութներում դիւրին կերպով պահպանում էր հայ զանգուածի ազգային նկարագիրը»⁷:

Սիրիա և Լիբանան էին գաղթել տարբեր զբաղմունքի տեր հայեր: Եվ կարճ ժամանակահատվածում նրանք հարմարվում են նոր միջավայրի պայմաններին և ընդգրկվում այդ երկրների տնտեսության տարբեր բնագավառներում: Սակայն գերակշռող ոլորտները, այնուամենայնիվ, և հատկապես սկզբնական շրջանում, համարվում էին առևտուրը և արհեստագործությունը՝ իր բազմաթիվ ճյուղերով:

Ս. Վարժապետյանն իր «Հայերը Լիբանանի մեջ» գրքում մեջբերում է արաբական «Ալիֆբա» թերթից մի հաղորդագրություն. «Հայերը աղքատ և թշվառ վիճակի մեջ մեր երկիրը եկան: Շնորհիվ իրենց աշխատասիրության և ընդունակություններում՝ նրանք սկսան տնտեսապես զարգանալ և մեզի հավասար դիրքեր ստեղծեցին: Անոնցմէ շատեր առևտրական հրապարակին վրա բարձր դիրքեր գրավեցին և օգտակար հանդիսացան մեր երկրի բարգավաճմանը»⁸:

Օտար մտավորականները նույնպես արժևորում և բարձր էին գնահատում հայերի դերը և ներդրումը Լիբանանի և Սիրիայի տնտեսության զարգացման գործում: Ահա թե ինչ է գրում Բեյրութի ամերի-

⁵ Միքայելյան Վ., էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Երևան, 1996, էջ 22:

⁶ Միքայելյան Վ., էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Երևան, 1996, էջ 37:

⁷ Բարխուդարյան Վլ., էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Երևան, 1996, էջ 4:

⁸ Վարժապետյան Ս. Գ., Հայերը Լիբանանի մեջ, հ. 2, Բեյրութ, 1981, էջ 69:

կյան համալսարանի դասախոս, պրոֆեսոր Մտյուարտ Դադը. «Հայ գաղթականները Սուրիա բերեցին գործավար ձեռքերու առատություն, և օրավարձքերը ընկան իրենց սակեն, բան մը, որ անշուշտ վնասակար էր բանվորին և ձեռային աշխատանք տանողին համար, սակայն ասկէ օգուվեցավ գործատերը և վերջ ի վերջո սպառողը: ...Սուր մրցակցութիւնը նմանապէս հրապարակեն քէնց անատակ և անկարող արհեստավորները և սուրիական ձեռային աշխատավորներու որակը բարձրացուց: Այս կացութենէն ի վերջո շահողը եղավ երկիրը: Թերևս ամենէն ակնհայտ օրինակը աժան բանվոր ունենալուն կկայանա նոր շինութեանց մեջ, որոնք կկատարվին Սուրիայի մեծ քաղաքներուն մեջ...: Կասկած չկա, որ այս անօրինակ վազքը՝ կառուցանելու և գեղեցկացնելու քաղաքը, ինչպէս նաև հին ճամբաները ընդլայնելու և նորերը բանալու ճիգը խթանված է գաղթականներու աժան աշխատանքէն»⁹:

Հ. Խ. Թոփուզյանն իր «Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն» աշխատության մեջ նշում է, որ Սիրիայի և Լիբանանի տարբեր քաղաքներում գործում էին հայ վարպետների ոսկերչական, երկաթագործական, ձուլագործական, պղնձագործական, մեքենաների վերանորոգման, կոշկակարական, կաշեգործական և այլ բազմատեսակ արհեստանոցներ, որոնցից մի քանիսի հիմքի վրա համաշխարհային պատերազմի տարիներին առաջացան բավական կարևոր ձեռնարկություններ: Արդյունաբերության և արհեստագործության համեմատությամբ հայերը փոքր դեր էին կատարում գյուղատնտեսության ասպարեզում¹⁰:

Սա, թերևս, պայմանավորված էր նրանով, որ հայերի մեծամասնությունը կենտրոնացած էր հիմնականում Լիբանանի և Սիրիայի քաղաքներում՝ հատկապէս Հալեպում, Դամասկոսում և Բեյրութում:

Լիբանանի և Սիրիայի հայերը, շնորհիվ արաբ ժողովրդի հանդուրժող և բարյացական վերաբերմունքի և տվյալ երկրների իշխա-

նությունների ազգային փոքրամասնությունների հանդէպ վարած ճիշտ քաղաքականության և տրված արտոնությունների, կարողացան ակտիվորեն ներգրավվել Լիբանանի և Սիրիայի առևտրաարդյունաբերական գործունեության մեջ և ունենալ որոշակի հաջողություններ: Եվ, ի երախտագիտություն իրենց հանդէպ արաբների դրսևորած նմանատիպ վերաբերմունքի, հայերը նրանց հետ կողք կողքի պայքարել են այդ երկրների ազատագրման համար, ինչպէս նաև դրսից եկող ցանկացած վտանգի ու ռոնձգությունների դէմ:

Ավելին, հայերն իրենց գիտելիքներն ու կարողություններն են դրսևորել նաև Լիբանանի և Սիրիայի հասարակական, կրթամշակութային ոլորտներում, ընդհուպ մինչև քաղաքական ոլորտը: Դրա վառ ասպարույցն այսօր այդ երկրների խորհրդարաններում հայ պատգամավորների և կառավարություններում հայ նախարարների առկայությունն է: Սա, իհարկէ, ազգային փոքրամասնությունների հանդէպ Լիբանանի և Սիրիայի իշխանությունների վարած ճիշտ ու խելամիտ քաղաքականության բացառիկ դրսևորումներից է:

Լիբանանն ու Սիրիան, երկուսն էլ լինելով Մերձավոր Արևելքի արաբական պետություններ, ունենալով որոշ ընդհանրություններ, այնուամենայնիվ, իրենց տնտեսավարման համակարգերով, կենսամակարդակով, տիրող ռեժիմով, ժողովրդագրական կազմով, բնական ռեսուրսներով, տարածաշրջանում ունեցած ռազմաքաղաքական կշռով, միջազգային գործընթացներին ինտեգրվելու չափով, կրթական համակարգերով և մշակութային արժեքներով բավականին տարբերվում են իրարից՝ դրանով իսկ դրսևորելով իրենց ինքնատիպությունն ու դերը տվյալ տարածաշրջանում:

Այսօր Լիբանանում ու Սիրիայում են գտնվում Մերձավոր Արևելքի ամենահայախոժ գաղութները: Տարբեր աղբյուրներից ստացված տվյալների համաձայն՝ Լիբանանում այսօր ապրում է 100–120 հազար հայ, իսկ Սիրիայում՝ 80–100 հազար:

Հայերը, ապրելով այլակրոն ժողովրդի մեջ, առավել ամուր են կառչել իրենց հավատքից ու եկեղեցուց, որոնք օգնել և նեցուկ են եղել նրանց դժվարին ու օրհասական պահերին: Հենց եկեղեցու և հավատքի միջոցով են հայերը կարողացել օտար երկրներում «պահպա-

⁹ Վարժապետյան Ս. Գ., Հայերը Լիբանանի մեջ, հ. 2, Բեյրութ, 1981, էջ 44–45:

¹⁰ Թոփուզյան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 187:

նել իրենց հոգևոր կյանքի, մշակույթի ավանդները» (Վլ. Բարխուդարյան), իրենց գիրն ու գրականությունը, ազգային առանձնահատկությունները: Ահա սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ բոլոր գաղթօջախներում բոլոր ժամանակներում հայերի ամենաառաջին գործը հայկական եկեղեցու կառուցումն է եղել, որին, որպես տրամաբանական շարունակություն և ներքին պահանջ ու մղում, հաջորդել է դպրոցաշինությունը: Բարաքներում ու վրանների տակ են սկսել գործել հայկական առաջին դպրոցները, սակայն հայ երեխային օտար միջավայրում հայ պահելու և նրան հայեցի կրթություն ու դաստիարակություն տալու գերագույն նպատակը նրանց տվել է դժվարություններին դիմակայելու, պայքարելու ուժ և նոր արժեքներ ստեղծելու ձգտում: Հայկական դպրոցներ բացելու և նրանց գործունեությունն անխափան տանելու գործի հիմնական մախաձեռնողն ու կազմակերպողը եղել է և է՝ հայկական եկեղեցին (առաքելական, կաթոլիկ, ավետարանական): Դա է վկայում այն փաստը, որ բոլոր առաջին հայկական դպրոցները բացվել են եկեղեցիներին կից ու նրանց հովանավորությամբ: Սփյուռքում եկեղեցին ու դպրոցը կայրօժես միասնացած լինեն:

Այսօր էլ սփյուռքում հայ եկեղեցին, որի համապարփակ գործունեության մեջ իր վճռորոշ ու կարևոր տեղն ունի կրթական գործը, իր բացառիկ ուշադրության ու հոգածության տակ է պահում հայկական դպրոցները և բոլոր հարցերում աջակից դառնում նրանց:

Տարբեր ժամանակաշրջաններում զարգացման տարբեր փուլեր անցնելով, տարաբնույթ դժվարություններ հաղթահարելով, եկեղեցու, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մշակութային, բարեսիրական, հայրենակցական միությունների, անհատ բարերարների և ամբողջ համայնքի մեծ ու անզնահատելի աջակցությունն ու օգնությունը ստանալով՝ հայկական դպրոցները կարողացել են գոյատևել ու զարգանալ՝ հավատարիմ մնալով իրենց բարձր առաքելությանը՝ հայ ժողովրդի ապագայի՝ երեխաների պահպանմանը:

Այսօր հայկական դպրոցների լայն ցանց է ստեղծված թե՛ Լիբանանում և թե՛ Սիրիայում: Եվ եթե հայկական գաղթօջախների

(տվյալ դեպքում Լիբանանի և Սիրիայի) ընդհանուր պատմությունը քիչ թե շատ ուսումնասիրվել է, ապա սփյուռքում գործող հայկական կրթօջախների պատմությունը մի շուտամասիրված ոլորտ է և կարոտ է լուրջ հետազոտության: Ահա այս կարևոր խնդրին է միտված մեր սույն ուսումնասիրությունը, որի նպատակն է հանգամանորեն ներկայացնել և, ըստ արժանվույն, գնահատել լիբանանահայ և սիրիահայ գաղութների պատմության մեջ, ինչպես նաև ազգապահպանության և հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործում մեծ դերակատարություն ունեցող հայկական ամենօրյա դպրոցների գործունեությունը:

Գրքի 4-րդ և 5-րդ գլուխներում առանձին կտրվեն Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցների պատմությունը, զարգացումը և ներկա գործունեությունը: Դպրոցները կներկայացվեն ըստ համայնքային պատկանելության, քանի որ և՛ Լիբանանում, և՛ Սիրիայում հայերը ներկայացված են երեք համայնքներով. հայ առաքելական, հայ կաթոլիկ և հայ ավետարանական: Մեծ շեշտը կդրվի, իհարկե, հայ առաքելական դպրոցների ծավալած կրթամշակութային և ազգապահպան գործունեության վրա:

Լիբանանի և Սիրիայի գաղթօջախների և այստեղ գործող հայկական ամենօրյա դպրոցների, մշակութային օջախների համապարփակ ուսումնասիրությունը մեզ հանգեցրեց այն մտքին, որ վերոհիշյալ հայկական գաղութներում ոչ միայն պահպանվել են, այլ նաև մեծ զարգացում են ապրել հայ մշակույթը, գիրն ու գրականությունը: Դրանում իրենց անզնահատելի դերն են կատարել հայկական եկեղեցին և դպրոցը՝ որպես սփյուռքահայությանը ուժացումից պահպանող անասան հենասյուներ:

§ 1.2. Սփյուռքահայության պայքարն ուժացման դեմ: Օրար միջավայրի բացասական ներգործության հաղթահարման ուղիները

Անառարկելի փաստ է, որ աշխարհի տարբեր երկրներում ապրող ազգերին ու ազգություններին բնորոշ է արտագաղթի երևույթը տարաբնույթ պատճառներով: Արտագաղթի երևույթներն այսօր էլ տեղի են ունենում երկրագնդի տարբեր մայրցամաքներում: Տարագիրների հոծ զանգվածների կարելի է հանդիպել գրեթե բոլոր երկրներում՝ հատկապես Եվրոպայում, Ասիայում և Ամերիկայում՝ որպես հետևանք ինչպես բնական աղետների, պատերազմների, ազգամիջյան բախումների, կոտորածների, այնպես էլ տարածքների վերաբաշխման, մեծ տերությունների՝ այս կամ այն տարածաշրջանում տիրապետման ոլորտների ձեռքբերման, որոշ երկրների՝ սոցիալ-տնտեսական ծանրագույն պայմանների և այլ պատճառների: Արդյունքում մարդիկ հարկադրաբար լքում են իրենց բնակավայրերը, ուր ապրել ու արարել էին տարիներ շարունակ, կորցնում ամեն ինչ ու ճանապարհվում դեպի անորոշություն: Այսպիսի դաժան ճակատագրի, ցավոք, արժանացել են նաև հայերը՝ սփռվելով աշխարհով մեկ՝ իրենց բախտը որոնելով օտարության մեջ, միշտ բախվելով իրենց ազգային ինքնությունը կորցնելու, օտարին ձուլվելու վտանգին:

Այնուամենայնիվ ոչ բոլոր ժողովուրդներին է հաջողվել վերաբնակված երկրում ստեղծել իրենց գաղթօջախը՝ պահպանելով ազգային հատկանիշները, իրենց ինքնությունը, որի մասին արդեն խոսվել է այս գլխի սկզբում: Շատերը, ապրելով անջատաբար՝ ոչ համայնքով, ձուլվել են տեղի ժողովուրդին՝ կորցնելով իրենց ազգային նկարագիրը:

Մինչև XIX և XX դարերը Լիբանան և Սիրիա ներգաղթած հայությունը նույնպես արժանացել է նույն ճակատագրին հավաքական, համայնքային կյանքով չապրելու և ազգապահպանման կարևորագույն գործոններ չստեղծելու պատճառով: Դրանց թվին են պատկանում եկեղեցին, դպրոցը, տպարանը, թերթը, մշակութային օջախները,

ավանդական ընտանիքը և այլն: Սրանք այն հիմնական կոմուններն են, որոնց միջոցով միայն սփյուռքահայությունը կարողացավ պահպանել ու շարունակում է պահպանել իր ինքնությունը, իր ազգային նկարագիրը՝ լեզուն, հավատը, պատմությունը և մշակութային արժեքները: Սրանց միջոցով է սփյուռքահայությունը, տվյալ պարագայում լիբանանահայությունը և սիրիահայությունը, կարողանում պայքարել տեղի ժողովուրդի հետ ձուլման դաժան վտանգի դեմ, որն այսօր էլ համառորեն ծառայած է մեր հայրենակիցների առջև:

Օտար երկրներում, այլակրոն ժողովուրդի մեջ հայ սերնդին հայ պահելու գործը ոչ թե դժվարին, այլ, ավելի ճիշտ է ասել, հերոսական քայլ է, ուղղակի ամենօրյա պայքար՝ հային բնորոշ աննկուն ու անկոտրում կամքի ու հարատևության տեսիլքին հավատալու շնորհիվ: Իր դեգերումների ճանապարհին հայը ձգտել է հիմնավորվել այն երկրներում, ուր համեմատաբար հնարավոր է ոչ միայն ապահովել ֆիզիկական գոյությունը, այլ նաև ծավալել արդյունավետ գործունեություն, քանի որ իր բնույթով, իր ներքին էությանը հայը արարող, ստեղծող ու շինարար ժողովուրդ է: Եվ նա իր այդ բացառիկ հատկությունը դրսևորել է տարբեր գաղթօջախներում:

Հայկական գաղթօջախների ձևավորման ու զարգացման, հայությանը համախմբելու ու աջակցելու, նրանց մեջ վաղվա օրվա նկատմամբ հույսն ու հավատը անմար պահելու, նպատակասլաց գործունեության մղելու և վերջապես նրանց մեջ հայկականությունը, ազգային արժեքները պահպանելու գործում վճռորոշ դերը ամենից առաջ պատկանում է հայկական եկեղեցուն, որը սփյուռքում ծավալած իր համապարփակ հոգևոր-մշակութային և կրթալուսավորչական գործունեությամբ, իրավամբ, կատարել է պետության դեր և իրականացրել համապատասխան գործառնություններ: Նա եղել է սփյուռքահայության հիմնական հենարանը դժվարին ու օրհասական ժամերին: Եվ հայությունը համախմբվել է նրա շուրջը, կարծես միասնացել նրա հետ:

Եկեղեցին իր ազգապահպան գործունեությամբ կարողացել է հետ պահել երիտասարդությանը խառն ամուսնություններից, որոնք, ինչպես և օտար դպրոցներ հաճախելը, հայությանը դեպի ուժացում տանող ամենավտանգավոր գործոններն են:

Սփյուռքահայության ուժացման դեմ պայքարի կարևոր ու վճռական գործոն է հայկական դպրոցների լայն ցանցի ստեղծումը: Դպրոցները ոչ միայն իրականացնում են սփյուռքահայ երեխայի հայեցի կրթության ու դաստիարակության գործը՝ նրանց ծանոթացնելով ու փոխանցելով ազգային անգնահատելի արժեքներ, նրանց մեջ ձևավորելով հայկական լեզվամտածողություն ու հոգեբանություն, այլ նաև տվյալ գաղութում դառնում են մշակութային, հասարակական, ազգապահպան կենտրոններ: Հայ երեխաներին պահելով հայկական շրջանակում, նրանց շուրջը ստեղծելով հայկական մթնոլորտ՝ հայկական դպրոցները սփյուռքահայ երեխայի մեջ սերմանում են ազգային ինքնագիտակցության ոգի, նպաստում նրա ինքնաճանաչմանը՝ ո՞վ է ինքը, ինչպիսի՞ն է ինքը, որտեղի՞ց է եկել և ո՞ր է գնում: Դպրոցները ձուլում, կապում են նրան իր արմատներին, քանի որ առանց արմատի ոչ մի բույս չի կարող ծլարձակել, ճյուղավորվել ու կանգուն մնալ:

Համարժեք կարևոր դերակատարություն ունեն նաև սփյուռքում գործող մշակութային, հասարակական, մարմնակրթական, բարեսիրական միություններն ու ակումբները: Հսկայական են հայ մամուլի և տպարանի մատուցած ծառայությունները հայկական գաղթօջախների հայկականության պահպանման, կարևոր ու անհրաժեշտ տեղեկատվության տարածման, ինչպես նաև սփյուռքահայության լուսավորության և մատաղ սերնդի դաստիարակության գործում: Այս առնչությամբ Ս. Գասպարյանը գրում է. «Ոչ մի տեղ հայ մամուլը, տարբեր ուղղությունների պատկանող հասարակական ու մշակութային կազմակերպությունները այնպիսի խայտաբղետ պատկեր չեն ներկայացնում, ինչպես Լիբանանում: Լիբանանում ավելի շատ գրքեր, թերթեր ու ամսագրեր են հրատարակվում, քան սփյուռքահայ որևէ այլ գաղութում»¹¹:

Սիրիայում հայության ուժացման տոկոսն անհամեմատ ցածր է, քան Լիբանանում: Մա, թերևս, հիմնականում պայմանավորված է Լիբանանի և հատկապես Բեյրութի առավել ազատականացված կենսակերպով, արտասահմանյան երկրների հետ ունեցած մեծ

շփումներով ու համագործակցությամբ, որոնց իրենց չափով մասնակից են դառնում նաև լիբանանահայության որոշ շերտեր: Արդյունքում արձանագրվում է ձուլման տոկոսի բարձրացում:

Սակայն պետք է իրատեսորեն նայենք երևույթներին: Սփյուռքի գաղթօջախների գոյությունն ու նրանց զարգացումը, որպես փաստական իրողություն, պետք է դիտենք իբրև հայությանը հայրենիքից միայն տարածականորեն անջատող մի ժամանակավոր կացություն, որի գերագույն նպատակն է վերջո հայրենիքի հետ մի ամբողջություն կազմելն է, նրան միասնաձայն, կորցրած արժեքների վերագտնելը, «մեկ ազգ — մեկ մշակույթ — մեկ հավատք — մեկ հայրենիք» կարգախոսը իրականություն դարձնելը:

Այս առումով ինքնատիպ են հնչում Դ. Նազարյանի հետևյալ խոսքերը. «Սփյուռքը, անկախ համայնքային ներքին ձգողականությունից, այնուամենայնիվ Երկրից վեր հառնած կղզի չէ: Նա լաստանավ է, Հայոց տապանն է (ընդգծումը մերն է), որ դեգերում է օտար օվկիանոսներում՝ քաղաքական, տնտեսական, կրոնական, բարոյական ու բյուր-բյուր խութերի, թայֆունների քմայքին գերի: Ինչպես Նոյան տապանը, թե Հայոց Տապանն էլ Այրարատ իջնի, նրա գոյապահպանումի հույսը կդառնա իրական»¹²:

§ 1.3. Սփյուռքի և Հայաստանի համագործակցությունը կրթամշակութային ոլորտում

Ինչպես նշել ենք մենագրության սկզբում, սույն հետազոտությունն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Մեկ ազգ — մեկ մշակույթ — մեկ հայրենիք» սկզբունքը, որի գործնական իրականացման ուղիների և զարգացման հեռանկարին կմիտվի մեր հետագա խոսքը:

Սփյուռքի հայկական գաղթօջախների և Հայաստանի կապն ու համագործակցությունը եղել են դեռևս Խորհրդային Միության ժամանակաշրջանում: Այդ աղերսները, իհարկե, սահմանափակվում

¹¹ Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 109:

¹² Մալխասեան Ս., «Կրթութիւն», Առաջաբանի փոխարեն, Նազարյան Դ., Երևան, 1995, էջ 10:

էին կրթամշակութային ոլորտներում և գտնվում էին խիստ վերահսկողության տակ: Ելնելով կոմունիստական գաղափարախոսության դրույթներից՝ Խորհրդային Միության իշխանությունները սփյուռքահայերին դիտում էին որպես բուրժուական երկրների քաղաքացիներ և գտնում ոչ նպաստավոր, նույնիսկ վտանգավոր Խորհրդային Հայաստանի քաղաքացիների հետ նրանց հաճախակի շփումներն ու համագործակցությունը՝ հնարավոր համարելով բուրժուական գաղափարախոսության ներթափանցումը երկիր: Սա Հայաստան-սփյուռք ոչ սերտ համագործակցության քաղաքական հիմքն է, որն այդ տարիներին ամենակարևորն էր ու գերիշխողը:

Խորհրդային Միության շրջանում Հայաստանում գործում էր Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե, որն էլ կազմակերպում, համակարգում ու վերահսկում էր այդ համագործակցությունը: Կազմակերպվում էին մշակութային խմբերի, արվեստի գործիչների, ոչ հաճախակի նաև որոշ մտավորականների այցը սփյուռքի մեր գաղթօջախներ, որոնց թվում իրենց ակտիվ տեղն ունեին Լիբանանի և Սիրիայի հայկական գաղութները:

Մշակութային բնույթի այցելությունները հայկական գաղութներ նպաստում էին հայկական մշակույթի բարձր արժեքներին սփյուռքահայության հաղորդվելուն ու դրանց ճանաչմանը՝ դրանով իսկ առիթ ունենալով շփվելու հայրենիքի շնչին ու հեքին, նրանցից լիցքավորվելով հետագա գոյապայքարի համար: Համեմատաբար քիչ, բայց լինում էր նաև լիբանանահայ և սիրիահայ գաղութների մշակութային խմբերի այցը Հայաստան՝ ներկայացնելով ու փաստելով, որ հայ մշակույթը հայրենիքից դուրս նույնպես շարունակում է ապրել ու զարգանալ: Կային նաև որոշ աղերսներ կրթության ոլորտում: Շատ սփյուռքահայ երիտասարդներ ուսանում էին Հայաստանի տարբեր բուհերում, հատկապես ԵՊՀ-ում, Երևանի պետական բժշկական ինստիտուտում, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում և Ֆիզիկական կուլտուրայի մանկավարժական ինստիտուտում: ՀՀ լուսավորության նախարարության Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտը, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հետ համագործակցած,

պարբերաբար իրականացնում էր սփյուռքահայ ուսուցիչների մասնագիտական, հոգեբանամանկավարժական և մեթոդական վերապատրաստման դասընթացներ: Դրանք խորապես նպաստում էին ուսուցիչների մասնագիտական պատրաստվածությանն ու մեթոդական զինվածությանը: Ավելին, 2-ից 4 շաբաթ գտնվելով Հայաստանում և մասնակցելով դասընթացներին, սփյուռքահայ ուսուցիչները հաղորդակցվում էին հայրենիքի բնաշխարհին, հայրենակիցներին, նրանց կենցաղին, սովորույթներին, մտիկից ծանոթանում Հայաստանի պատմամշակութային կոթողներին, որոնց մասին նրանք գաղափար ունեին գրքերից ու լուսանկարներից: Մրանք հայրենիքը կերպարող խորհրդանիշներն են, որոնց ճանաչումն օգնում էր սփյուռքահայությանը իրեն չզգալ անմասն հայրենիքից, քանի որ հայրենիքը մեկն է համայն հայության համար: Կրթության ոլորտում Հայաստանի և Սիրիայի ու Լիբանանի գաղութների համագործակցության մի ձև էր նաև հայկական դպրոցների համար հայոց լեզվի և հայ գրականության դասագրքերի ստեղծումն ու առաքումը: Որոշ ժամանակ սփյուռքի հայկական դպրոցները գործածել են դրանք, որոնք, մանկավարժական և դիդակտիկական առումով ճիշտ կազմված լինելով հանդերձ, չէին համապատասխանում սփյուռքահայ երեխայի հոգեբանությանն ու մտածելակերպին և չէին արտացոլում այն իրականությունը, որտեղ ապրում էր սփյուռքահայ երեխան: Սա, բնականաբար, գալիս էր նրանից, որ հայաստանցի գիտնական-մանկավարժը . գաղափարախոսական խոչընդոտների հետևանքով հնարավորություն չունեի մոտիկից իմանալ ու ճանաչել վերոհիշյալ առանձնահատկությունները, առանց որոնց ոչ մի դասագիրք սփյուռքում չի կարող կայանալ ու հաջողություն ունենալ: Սա է պատճառը, որ Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցների ղեկավարությունը և մանկավարժները, խորությամբ գիտակցելով այն, ձեռնամուխ են եղել իրենց սեփական ուժերով կազմելու դասագրքեր: Այսօր Սիրիայի և Լիբանանի հայկական երեք կրոնական համայնքներում գործող դպրոցներում սկսված է դասագրքաստեղծման գործընթացը, սակայն այն առայժմ չի հասել ցանկալի արդյունքի: Բոլոր դպրոցներում էլ դասագրքերի հարցը դեռևս մնացել է չլուծված

խնդիր: Այս խնդրի մասին հանգամանալից կխոսվի գրքի 4-րդ և 5-րդ գլուխներում, իսկ այստեղ միայն նշենք, որ այս հարցում սփյուռքահայ մանկավարժներն ունեն հոգեբանամանկավարժական և մեթոդական օգնության կարիք և ակնկալում են Հայաստանի հոգեբան-մանկավարժների և մեթոդիստների աջակցությունը:

Ուզում ենք համոզված շեշտել, որ հայրենիքն այս հարցում պարտավոր է աջակցել սփյուռքի հայկական դպրոցներին և մենակ չթողնել նրանց վերոհիշյալ խնդրի լուծման գործում: Սրա գործնական քայլն արդեն արվել է. ճանաչված գիտնական-պատմաբան, ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի և լիբանանահայ քաղաքական մեծ գործիչ, կրթության մշակ, պատմաբան Երվ. Փամբուկյանի համատեղ ջանքերով ու ուժերով, համահեղինակությամբ կազմվել է Լիբանանի հայկական դպրոցների 6-րդ դասարանի հայոց պատմության դասագիրքը, որը հաջողությամբ գործածության մեջ է մտել ազգային վարժարաններում: Այս դասագրքի մասին առավել հանգամանալից խոսվում է մենագրության 4-րդ գլխում:

Հայաստանի անկախացումից հետո որակապես փոխվել է Հայաստանի և սփյուռքի համագործակցությունը: Այսօր Հայաստանի Հանրապետությունը՝ որպես անկախ ու ինքնիշխան պետություն, դիվանագիտական հարաբերություններ է ստեղծել այն երկրների հետ, որտեղ կան հայկական գաղութներ: Սրա արդյունքում կնքվել են միջպետական համագործակցության բազմաթիվ պայմանագրեր տարբեր ոլորտներում՝ տնտեսության, առևտրի, գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և այլն: Մասնավորապես Լիբանանի և Սիրիայի հետ Հայաստանն ունի բարեկամական հարաբերություններ, որոնք, բնականաբար, նպաստում են տվյալ երկրների իշխանությունների՝ հայերի հանդեպ բարյացակամ ու ջերմ վերաբերմունքի ստեղծմանը:

Միջպետական պայմանագրերին իր մասնակցությունն է բերում նաև Լիբանանի և Սիրիայի հայությունը, որն ակտիվորեն ներգրավված է այս երկրների ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական և կրթամշակութային ոլորտներում՝ իր որոշակի նպաստը բերելով դրանց զարգացման գործին:

Այսօր Հայաստանը, վերստանալով իր ինքնուրույնությունն ու անկախությունը, կրկին հայացքն ուղղել է դեպի սփյուռք՝ ցանկանալով վերականգնել այն բացթողումները, որ տեղի ունեցան վերջին 10-12 տարիների ընթացքում երկրի սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, շրջափակման, դարաբաղյան պատերազմի, աղետալի երկրաշարժի, պետական կառույցների նոր ձևավորման ու գործառույթների հստակեցման տարաբնույթ պատճառների հետևանքով: Ավելին, այդ տարիներին հայրենիքն ինքն էր զգում սփյուռքի սոցիալ-տնտեսական գորակցության ու աջակցության կարիքը:

Հատկապես վերջին 5-7 տարիների ընթացքում զգալիորեն աշխուժացել է համագործակցությունը Մերձավոր Արևելքի երկու խոշոր՝ Լիբանանի և Սիրիայի հայկական գաղթօջախների և Հայաստանի միջև՝ կրելով տարբեր բնույթ, որակ և ծավալ, ընդգրկելով հիմնականում տնտեսության, բիզնեսի, կրթության, մշակույթի և սպորտի ոլորտները:

Շատ սփյուռքահայ գործարարներ իրենց ներդրումներն են կատարում Հայաստանի տնտեսության մեջ: Բարեգործական տարբեր միություններ ու անհատ բարերարներ իրենց անվարձահատույց միջոցներն են տրամադրում երկրի տարբեր ոլորտների զարգացման համար, այդ թվում և կրթության: Դրանցից առանձնակի հիշատակության են արժանի ՀԲԸՄ-ը, Լինսի հիմնարկը, Գ. Գյուլբենկյան հիմնադրամը, ՀՕՖ-ը և ուրիշներ: Նրանք իրենց ներդրումն ու աջակցությունն են բերում Հայաստանին ինչպես Համահայկական հիմնադրամի խողովակով, այնպես էլ ուղղակի՝ որևէ ճյուղի, հաստատության հետ անմիջական հաղորդակցմամբ. կրթության ոլորտում՝ թեմաների ֆինանսավորում, կրթաթոշակների և նրբանակների շնորհում: Հայաստանի և սփյուռքի սերտ համագործակցության մի բացառիկ դրսևորում էր 2000 թ. սեպտեմբերին Երևանում կայացած Հայաստան-սփյուռք համահայկական առաջին համաժողովը, որի ամենամեծ հաջողությունն այն էր, որ երկար տարիների անջատումից հետո մեկտեղվեցին Հայաստանի և աշխարհի տարբեր ծայրերի հայկական գաղութների ներկայացուցիչները՝ փորձ անելով առավել մոտիկից հաղորդակցվել ու ճանաչել միմյանց, քննարկել երկուստեք առկա խնդիրները և միասին որոնել դրանց լուծման ճանապարհներ:

րը՝ հիմք ընդունելով «Մեկ ազգ — մեկ մշակույթ — մեկ հավատք — մեկ լեզու և մեկ հայրենիք» կարգախոսը: Համաժողովում քննարկվեցին նաև կրթության ոլորտի հարցեր: 2002 թ. մայիսին կայացավ համահայկական երկրորդ համաժողովը՝ այս անգամ ակնկալելով առավել գործնական քայլեր:

Հայաստան-սփյուռք համագործակցության հրաշալի դրսևորում էին երկու տարի պարբերաբար տեղի ունեցած համահայկական խաղերը, որոնք Հայաստանի և սփյուռքի պատանիների ու երիտասարդների հայրենասիրական, բարոյական և ֆիզիկական դաստիարակության կարևոր միջոց հանդիսացան: Ոչ միայն բուն խաղերի անցկացումը, այլև երիտասարդության շփումն ու հաղորդակցությունն արդեն մեծ հաջողություն էր, սփյուռքահայ երիտասարդությանը հայրենիքի հետ կապելու կարևոր պայման:

Երկար տարիների ընդմիջումից հետո Հայաստանը Համահայկական հիմնադրամի աջակցությամբ կարողացավ վերականգնել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացները: Այն հաջողությամբ կազմակերպում ու անցկացնում է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը՝ տնօրեն բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանի անմիջական ջանքերով ու նախաձեռնությամբ:

Արդեն երկու տարի է, ինչ աշխարհի տարբեր ծայրերից հայկական գաղութների (ներառյալ ԱՊՀ-ն) դպրոցների տասնյակ ուսուցիչներ մեկամսյա դասընթացների են գալիս Հայաստան՝ հայրենի մանկավարժ-գիտնականներից ստանալու և լրացնելու իրենց մասնագիտական, ինչպես նաև հոգեբանամանկավարժական գիտելիքներն ու մեթոդական պատրաստվածությունը:

Հուսանք, որ սկսված կարևոր գործն անխափան երթ է ունենալու՝ նպաստելով ոչ միայն սփյուռքահայ ուսուցիչների մասնագիտական կատարելագործմանը, այլև Հայաստանի և սփյուռքի մանկավարժների փոխճանաչմանն ու սերտ համագործակցությանը: Կրթության ոլորտում Հայաստան-սփյուռք համագործակցության մի կարևոր ձև է Հայաստանի և սփյուռքի դասախոսների, գիտնականների

փոխայցելությունները՝ հայագիտական կենտրոններում դասախոսություններ կարդալու և գիտական կոնֆերանսներին մասնակցելու նպատակով: Դրանցից հատկապես կառանձնացնենք Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկի և Երևանի պետական համալսարանի միջև 1991 թ. հունիսի 27-ին կնքված փոխճանաչման և գիտաուսումնական համագործակցության պայմանագիրը, որը գործունեության լայն հեռանկարներ է բացում հայագիտական բարձրագույն հիմնարկի և նրա ուսանողության առջև: Ըստ այս պայմանագրի՝ Երևանի պետական համալսարանը պաշտոնապես ճանաչում է Համազգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկին: Արդյունքում նրա շրջանավարտներն իրավունք են ստանում ընդունվելու և իրենց ուսումը շարունակելու Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայում, ապա՝ ասպիրանտուրայում:

Սերտ է համագործակցությունը երկու կրթօջախների դասախոսների միջև: Հատկապես ԵՊՀ-ի բանասիրության, պատմագիտության և մանկավարժության ոլորտի շատ դասախոսներ պարբերաբար (տարին 2-3 դասախոս) հրավիրվել են Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկ՝ իրենց աշխատանքով նպաստելու կրթօջախի ազգանպաստ գործունեությանը:

Վերջին 4-5 տարիներին միջդասախոսական աղերսներ են ստեղծվել նաև Համազգայինի Սիրիայի շրջանային վարչության Հալեպի հայագիտական նորաբաց կենտրոնի խողովակով: Այս համագործակցությունն ընդգրկում է ինչպես ԵՊՀ-ի, այնպես էլ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի և Ազգային ակադեմիայի մտավորականների:

Այսօր լիբանանահայ և սիրիահայ երեխաների շարունակական կրթությունն իրականացնելու համար Հայաստանի առաջատար համալսարաններում ստեղծված են բոլոր պայմանները: Այս գործին իր պետական հոգածությունն ու աջակցությունն է բերում ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ նրանց համար հատկացնելով առանձին տեղեր, որոշ մասին էլ ապահովելով անվճար ուսմամբ: Արդյունքում՝ այսօր Հայաստանում տարբեր բուհերում իրենց ուսումն են ստանում մեծաթիվ սփյուռքահայ ուսանողներ՝ իրականաց-

նելով իրենց շարունակական կրթությունը ինչպես բակալավրիատում և մագիստրատուրայում, այնպես էլ ասպիրանտուրայում: Այս ամենը նպատակաուղղված է հայկական գաղութների համար որակյալ մասնագետներ պատրաստելու գործին: Իսկ վերջինս էլ նպաստելու է գաղութների պահպանմանն ու զարգացմանը:

Հայաստան-սփյուռք համագործակցության վերոհիշյալ ձևերը գալիս են փաստելու այն իրողությունը, որ, հիրավի, այդ համագործակցությունը վերջին տարիներին ստացել է նոր շունչ ու ոգի, նոր թափ ու ընդգրկման նոր ոլորտներ, որոնք բոլորն էլ նպաստելու են Հայաստանի հզորացմանը և սփյուռքի հայկական գաղութների զարգացմանն ու հայապահպանությանը: Այսպիսով, Հայաստանի և սփյուռքի՝ այս պարագայում Լիբանանի և Սիրիայի հայկական գաղութների համագործակցությունը կրթության ոլորտում տեսնում ենք հետևյալ ճանապարհներով.

1. համահայկական համաժողովների, գիտական կոնֆերանսների, մանկավարժների հավաքների, ուսումնամեթոդական սեմինարների անցկացում,
2. սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կազմակերպում,
3. սփյուռքահայ ուսանողների ուսումնառություն Հայաստանի առաջատար բուհերում,
4. դասախոսների, գիտնական-մանկավարժների փոխալսելությունների, դասախոսությունների կազմակերպում,
5. համահեղինակությամբ դպրոցական դասագրքերի ստեղծում,
6. դաստիարակչական, հայրենասիրական, մարմնակրթական հավաքների և մշակութային ձեռնարկների կազմակերպում,
7. քույր դպրոցների ստեղծում,
8. բուհերի միջև գիտաուսումնական պայմանագրերի կնքում,
9. կրթության ու գիտության զարգացմանը նպաստող համատեղ ծրագրերի ստեղծում,
10. արվեստի տարբեր բնագավառներում երիտասարդ արվեստագետների ստեղծագործական համագործակցության հաստատում:

Գլուխ երկրորդ

ՍՓՅՈՒՌԷԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԸ (ԼԻԲԱՆԱՆ, ՍԻՐԻԱ) ԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆԷԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 2.1. Հայկական ամենօրյա դպրոցների տիպերը, կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, կրթության բովանդակությունը

Որև գաղութի կյանքը ճիշտ չէ արժեքավորել ու գնահատել մեկ տարեթվից մյուս տարեթիվն ընկած կարճ ժամանակահատվածով: Այդ կյանքն ունեցել է սկիզբ, շարունակել ու զարգացում է ապրել, տարեթվերից անկախ ունեցել է վերիվարումներ, բայց անխափան է պահել իր հեքն ու ռիթմը, նպատակն ու խնդիրները:

Այդուհանդերձ, երբ որևէ հանգրվանի է հասնում գաղութի կյանքը, երբ հայությունը հետադարձ հայացք է գցում իր անցած ճանապարհի վրա, նրա աչքերի առջև պարզվում են մի շարք կարևոր դեպքեր ու կատարած գործեր, որոնք ունեցել են պատմական նշանակություն և իրենց ազդեցությունն են թողել գաղութի զարգացման վրա: Այս իմաստով լիբանանահայ ու սիրիահայ գաղութների կյանքում իրենց շարունակական ու առանձին պատմությունն ունեն և իրենց ազգանվեր ներդրումն են բերել կրթական հաստատությունները, մշակութային, հասարակական և բարեսիրական միություններն ու կազմակերպությունները:

Այս գլխում մեր նպատակն է ընդհանուր և համեմատական վերլուծության կարգով ներկայացնել Լիբանանի և Սիրիայի գաղթօջախներում գործող հայկական ամենօրյա դպրոցների տիպերը, կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, կրթության բովանդակ-

կությունը, տվյալ երկրների կրթական մարմինների հետ համագործակցությունը, դպրոցներում պետական և հայագիտական ծրագրերի համադրումը, կրթական գործունեության որոշ սահմանափակումները, դրանցից բխող խնդիրներն ու դժվարությունները:

Այս ամբողջ վերլուծականի հիման վրա այս գլխում կներկայացվի սփյուռքի հայկական ամենօրյա դպրոցի՝ մեր կողմից մշակված մոդելը, որը, վստահ ենք, համապարփակ պատկերացում կտանրա մասին:

Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցների նպատակն է սփյուռքահայ երեխաներին տալ հայեցի կրթություն և դաստիարակություն, նրանց մեջ սերմանել ազգային ինքնագիտակցության ոգի, հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին, նպաստել գաղութների զարգացմանն ու հայապահպանմանը: Եվ այս նպատակներին հասնելու համար նրանք իրականացնում են կրթադաստիարակչական, կրթամշակութային, հայապահպան, համապարփակ գործունեություն:

Լիբանանի և Սիրիայի հայ առաքելական, հայ կաթոլիկ, հայ ավետարանական երեք համայնքներում գործող բոլոր հայկական ամենօրյա դպրոցներն ընդգրկված են տվյալ երկրների կրթական համակարգերում և պարտադրաբար իրականացնում են պետական կրթական ծրագիրը, առանց որի հնարավոր չէ այդ երկրներում իրականացնել հայ երեխաների շարունակական կրթությունը:

Երկու երկրների բոլոր հայկական ամենօրյա դպրոցները հաջողությամբ համադրում են պետական և հայկական կրթական ծրագրերը, որը, սակայն, գերծանրաբեռնում է հայկական դպրոցների կրթության բովանդակությունը, ավելացնում շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը:

Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցներն ունեն կրթական երեք աստիճան.

նախակրթական — 1–6–րդ դասարաններ,

միջնակարգ — 7–9–րդ դասարաններ,

երկրորդական (բաքալորեա) — 10–12–րդ դասարաններ:

Երկու գաղթօջախներում էլ գործում են ինչպես միայն նախակրթարանի բաժինն ունեցող, այնպես էլ միայն միջնակարգի և երկրորդականի կամ էլ նախակրթարան–միջնակարգ, միջնակարգ–երկրորդական և նախակրթարան–միջնակարգ–երկրորդական կրթական աստիճաններ ունեցող դպրոցներ:

Երկու գաղթօջախներում ստեղծված կրթական ցանցում գերակշռում են նախակրթարանները, որը, ի դեպ, ինչպես Սիրիայում, այնպես էլ Լիբանանում պարտադիր ուսուցման կրթական աստիճանն է:

Դպրոցների միջնակարգի և երկրորդականի բաժիններ բացելը պայմանավորված է մի քանի գործոններով. ֆինանսական, շենքային, կադրային, աշակերտության թվի, ուսուցման միջոցների (ծրագրերի և հատկապես դասագրքերի) և այլն:

Այդ իսկ պատճառով հայկական յուրաքանչյուր համայնքում եթե կա 3–ից նույնիսկ մինչև 10–ը նախակրթարան, ապա գործում է ընդամենը երկուսից չորս երկրորդական վարժարան կամ ճեմարան:

Երբ համեմատում ենք Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցների գործունեության շրջանակը, ազատությունը, անկախությունը, ինքնուրույնությունը, հայագիտական առարկաների ուսուցման հնարավորությունները, ապա ակնհայտ են դառնում բազմաթիվ մնանություններ և տարբերություններ:

Այս համեմատության մեջ բացահայտորեն ազատ գործունեության լայն հնարավորություններ ունեն Լիբանանի հայկական դպրոցները: Այս երևույթը, թերևս, պայմանավորված է Լիբանանի առավել ազատականացված կացութաձևով, եվրոպական կրթական համակարգին միանալու ձգտմամբ, երկրի համայնքային դրությամբ, որն առավել ազատ գործունեության երաշխիք է տալիս Լիբանանում ապրող տարբեր ազգային փոքրամասնությունների համայնքներին, ինչպես նաև Լիբանանի հայության երկրի ներքաղաքական, հասարակական, տնտեսական և կրթամշակութային ոլորտների համապատասխան կառույցներում (խորհրդարան, կառավարություն) առավել ակտիվ ներգրավմամբ՝ իրենց համայնքների շահերը պաշտպանելու նպատակով:

Լիբանանի հայկական դպրոցների (հիմնականում ազգային վարժարանների) կրթական գործունեության ամենամեծ առավելությունը, ի համեմատություն Միրիայի հայկական դպրոցների, նախակրթարանում (տարրականներում) ուսուցումը հայերեն իրականացնելն է: Սա նպաստում է երեխաների հայկական լեզվամտածողության ձևավորմանը, որն էլ իր հերթին ընկած է աշխարհայացքի հիմքում:

Նախակրթարանում հայերենով ուսուցումն օգնում է հայ երեխաներին՝ իրենց մայրենի լեզվով հաղորդակից դառնալու ազգային պատմական արժեքներին, վերջիններս էլ նպաստում են ազգային ավանդույթների, սովորույթների, հոգեբանության փոխանցմանը՝ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի:

XIX դարի մանկավարժ-հոգեբան Ա. Բահաթրյանը, չափազանց կարևորելով ազգային (ժողովրդական) դպրոցների դերը հայ երեխայի հայեցի կրթության ու դաստիարակության գործում, գրում է. «Ժողովրդական դպրոցը պիտի ծառայե կյանքի մեծամեծ գորուքեանց—ընտանյաց, եկեղեցւոյն, ազգին ու հայրենյաց: Նա մեծ եռանդով պիտի աշխատ լինի յուր սաների մեջ վառել սեր ու հասուն խոհականութիւն դեպի նոցա, այնքան էլ նա մեծ եռանդով պիտի ջանա հնար լինի այդ նպատակին համապատասխանող նյութ ընտրել: Եթե հիրավի դպրոցի հոգսը պիտի լինի ուսման մի այնպիսի բովանդակութիւն ընծայել, որ սա ընտանյաց, ազգի ու հայրենյալ հետ մշտնջենավոր ու ներքին հարաբերութեան մեջ գտնվի, այն ժամանակը և իրոք կապացուցանե, որ նա յուր սաներին նախապատրաստում է դոցա ծառայելու և այդ կեանքի համար»¹³:

Ազգային դպրոցի դերը կարևորվում է նաև հասարակության մտավոր առաջընթացի համար: Իսկ դպրոցի ընդհանուր գործունեության մեջ առանձնակի տեղ ունի նախակրթարանը (տարրական դպրոցը):

Նախակրթարանում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և մաթեմատիկական տրամաբանության հիմքերի,

ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

Տարրականում վերոհիշյալի նպատակասլաց ու ճիշտ կազմակերպումից է կախված միջին ու ավագ դպրոցներում (սփյուռքում՝ միջնակարգ և երկրորդական բաժիններում) ուսուցման գործընթացի արդյունավետությունը, սովորողների անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, գիտական աշխարհայացքի ձևավորումը:

Այս առումով միանգամայն տեղին ենք համարում փաստել, որ դեռևս XIX դարում տաղանդավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն իր ականավոր նախորդների՝ ռուս դասական մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու, շվեյցարացի մանկավարժ Յ. Պետալտցու և հայ մեծ մանկավարժ Ղ. Աղայանի հետևողությամբ առաջ քաշեց բոլոր ժամանակների համար ճշմարիտ այն գաղափարը, որ տարրական ուսուցումը մարդկային զարգացման հիմքն է: «Հիմքը,— գրում է Ա. Բահաթրյանը,— պետք է շատ ամուր լինի, չէ՞ որ խախտու հիմք ունեցող ամենագեղեցիկ տունը չի կարող կանգուն մնալ, կփլվի»¹⁴:

Տարրական դպրոցի կրթության, մասնավորապես մայրենի լեզվի բովանդակությունը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների մտավոր ուժերի զարգացումը, լեզվի հարստությունը, տարիքային և անհատական առանձնահատկությունները, ինչպես նաև կյանքի պահանջները, դպրոցի, ուսման ընդհանուր նպատակները: Կարծում ենք, որ այս դեպքում ուսուցումը կդառնա նպատակային և արդյունավետ:

Ե՛վ Լիբանանում, և՛ Միրիայում միջնակարգի և երկրորդականի բաժիններում ուսուցումը տարվում է՝ Միրիայում արաբերեն, իսկ Լիբանանում՝ կամ ֆրանսերեն կամ անգլերեն: Պետական քննությունները՝ 9-րդում բրյովելի, իսկ 11-րդ և 12-րդ դասարաններում՝ բաբալրեայի, դարձյալ հանձնվում են վերոհիշյալ լեզուներով:

Կառուցվածքային առումով Լիբանանի և Միրիայի հայկական ամենօրյա դպրոցները նման են: Իսկ ինչ վերաբերում է դպրոցների

¹³ Բահաթրյան Ա., Ընթերցարանը և նրա նշանակությունը ժողովրդական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», թիվ 9, Թիֆլիս, 1879:

¹⁴ Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսումը տարրական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», թիվ 2, Թիֆլիս, 1878:

կարգավիճակին, կառավարմանը, կրթության բովանդակությանը, հայկական ծրագրերին և հայագիտական առարկաներին հատկացված ժամաքանակին, ապա այստեղ մենք հանդիպում ենք հսկայական տարբերությունների, որոնք էլ, բնականաբար, իրենց հերթին ազդում են այդ երկու երկրների հայկական դպրոցների հայագիտական առարկաների ուսուցման գործընթացի որակի վրա:

Հենց սկզբից նշենք, որ մինչև 1967 թ. Սիրիայի հայկական դպրոցները նույնպես օգտվում էին ազատ ու անկաշկանդ գործունեության լայն հնարավորություններից, ինչպես Լիբանանի դպրոցները:

Սիրիայի հայկական դպրոցների նախակրթարանի բաժնում նույնպես ուսուցումը տարվում էր հայերեն: Սակայն 1967 թ-ին, երբ Սիրիայի իշխանության գլուխ անցավ ԲԱԱՍ կուսակցությունը, (իսլամի «ալաուի» ճյուղի ներկայացուցիչները), մեծ փոփոխություններ տեղի ունեցան երկրի թե՛ քաղաքական-հասարակական, թե՛ սոցիալ-տնտեսական և թե՛ կրթամշակութային ոլորտներում: Ներկայացվեցին մեծ թվով սահմանափակումներ ազգային փոքրամասնությունների (համայնքների) ազգային, կրթամշակութային գործունեության ոլորտում: Առաջին հերթին երկրում գործող բոլոր դպրոցները դրվեցին պետական խիստ հսկողության տակ.

1. նրանց տրվեցին արաբական անվանումներ,
2. դպրոցներում նշանակվեցին արաբ տնօրեններ,
3. տեսչական պարբերական հսկողություն սահմանվեց պետական ծրագրերի կատարման գործին,
4. նախակրթարանում արգելվեց ուսուցումը տանել մայրենի լեզվով, պարտադրվեց արաբերենը,
5. բացի կրոնից (շաբաթը 4 ժամ), արգելվեց որևէ ուրիշ հայագիտական առարկայի ուսուցումը հայկական դպրոցներում,
6. առանց արաբ տնօրենի թույլտվության, արգելվեց որևէ միջոցառման կազմակերպում դպրոցներում:

Սիրիայի հայկական դպրոցները տազնապի մեջ էին: Նրանք բախվեցին լուրջ դժվարությունների, գործը հասավ ընդհուպ մինչև որոշ դպրոցների փակմանը:

Անհրաժեշտ էր իրավիճակին համարժեք խելացի քաղաքականություն վարել՝ ստեղծված ծանր կացությունից նվազագույն վնասով դուրս գալու, սկսած գործը՝ որդեգրած սուրբ առաքելությունը շարունակելու և նպատակին հասնելու համար:

Շատ հայկական դպրոցներ չընդունեցին վերոհիշյալ սահմանափակումները և որոշ ժամանակով փակվեցին: Սակայն Սիրիայի ազգային վարժարանները, ազգային առաջնորդարանի ղեկավարությամբ, ճիշտ չգտան պայքարի այդ ճանապարհը: Նրանք որոշեցին շարունակել իրենց գործունեությունը և զուգահեռաբար աշխատանք տարան մայրենի լեզուն հայկական դպրոցներում որպես ուսումնական առարկա վերականգնելու հարցում:

Համառ ու երկարատև աշխատանքից հետո արձանագրվեց հաջողությունը: Պետությունը թույլատրեց հայերենը դասավանդել հայկական դպրոցներում, սակայն որպես ծիսական լեզու (4 ժամ), այն լեզուն, որով աղոթում է հայ քրիստոնյա երեխան: Իսկ հայոց պատմության դասավանդման հարցը առ այսօր մնում է չլուծված: Այն հատվածաբար դասավանդվում է կրոնի ժամերին, իսկ մնացած մասը լրացվում է արտադպրոցական տարբեր բնույթի սեմինարներում, հավաքներում, ակումբներում, միջոցառումներում:

Իսկ Լիբանանի հայկական դպրոցներում դասավանդվում է ինչպես հայոց լեզու, այնպես էլ հայ գրականություն, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և հայ մշակույթի պատմություն:

Ահա այսպիսի հսկայական տարբերություն գոյություն ունի Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցների միջև՝ կրթության բովանդակության առումով:

Սիրիայի հայկական դպրոցների ուսուցիչներից առավել ճիգեր, հմտություն ու մեթոդական վարպետություն է պահանջվում. շաբաթվա ընդամենը 4 ժամվա ընթացքում երեխաներին ուսուցանել մայրենի լեզուն, զարգացնել բանավոր և գրավոր խոսքը, նրանց հաղորդակից դարձնել մեր ազգային արժեքներին, նրանց մեջ սերմանել ազգային ինքնագիտակցության ոգի՝ դրանով իսկ նպաստելով

նրանց հայկականությանը, ազգային դիմագծի ու հոգեբանության պահպանմանը:

Վերոհիշյալ կրթական սահմանափակումներով են պայմանավորված նաև մեծ տարբերությունները դասագրքաստեղծման գործում:

Քանի որ Միրիայի հայկական դպրոցների նախակրթարաններում ուսուցումը տարվում է արաբերեն, և միանգամայն վտանգված է հայ երեխաների հայկական լեզվամտածողության ձևավորման գործը, սիրիահայ մանկավարժ Հակոբ Չոլաքյանը գնացել է հարցի լուծման մի ինքնատիպ ճանապարհով, որը, կարծում ենք, եղած իրավիճակում ամենաճիշտ ուղին է: Նա, համադրելով նախակրթարանում պետական ծրագրով նախատեսված ուսումնական առարկաների ծրագրային նյութը, հայկական դպրոցների 1–6–րդ դասարանների համար կազմած իր «Հայերենի դասագիրք» դասագրքերում հայոց լեզվի համապատասխան նյութերի կողքին զետեղել է նաև հայերեն եզրույթներով նյութեր բուսաբանությունից, թվաբանությունից, աշխարհագրությունից, երկրաչափությունից, կենդանաբանությունից և այլն:

Հ. Չոլաքյանի դասագրքերը փոքրիկ հանրագիտարաններ են, որոնք ապահովում են հայ երեխայի աշխարհաճանաչողությունը հայկական լեզվամտածողությամբ, որը չափազանց կարևոր է հայի ինքնության համար: Հ. Չոլաքյանի դասագրքերի առավել հանգամանալից վերլուծությունը տրվում է չորրորդ գլխում:

Նման հիմնախնդրի չենք հանդիպում Լիբանանի հայկական դպրոցներում գործածվող դասագրքերում, որովհետև այստեղ հայագիտական առարկաների դասավանդմանը երկրի կողմից մամանատիպ սահմանափակումներ չկան:

Սակայն երկու գաղթօջախների հայկական դպրոցների հայագիտական առարկաների դասագրքերի ստեղծման գործում առկա են շատ նման թերություններ: Նշենք, որ բավականին հաջող և սխյուրքահայ երեխայի հոգեբանությանը հարազատ դասանյութեր պարունակելով հանդերձ, դրանք չեն համապատասխանում դասագրքաստեղծման չափորոշիչներին, որոնց հիմքում ընկած են դիդակտիկա-

կան հայտնի սկզբունքները: Մշակման կարիք ունի նաև մեթոդական կողմը: Լիովին չեն ապահովված դասագրքերի հոգեբանամանկավարժական հիմքերը: Սրանց մասին առավել հանգամանորեն կխոսվի մենագրության չորրորդ և հինգերորդ գլուխներում:

Մեծ է տարբերությունը Լիբանանի և Միրիայի հայկական դպրոցների միջև նաև կադրային հարցում: Միրիայի հայկական դպրոցներում համալսարանավարտ մանկավարժների թիվը անհամեմատ փոքր է, քան Լիբանանի հայկական դպրոցներում, ընդ որում, սա վերաբերում է ոչ միայն հայագիտական առարկաներ դասավանդողներին, այլ նաև մյուս ուսումնական առարկաների ուսուցիչներին:

Կարծում ենք, որ անառարկելի ճշմարտություն է, որ ուսուցիչների մասնագիտական որակից, կրթական մակարդակից և նաև մեթոդական զինվածությունից են հիմնականում կախված ուսուցման գործընթացի արդյունավետությունը և կրթության որակն ընդհանրապես:

Կադրային հարցում Լիբանանի հայկական դպրոցների համեմատաբար բարվոք վիճակը պայմանավորված է, թերևս, այն հանգամանքով, որ Բեյրութում երկար տարիներ է, ինչ գործում են երկու բարձրագույն կրթօջախներ՝ Հայկազյան համալսարանը և Համագզայինի հայագիտական բարձրագույն հիմնարկը, որոնք պատրաստում են որակյալ մասնագետներ ինչպես հայ բանասիրության ու պատմագիտության, այնպես էլ այլ ոլորտների համար (Հայկազյան համալսարան):

Միայն վերջին մի քանի տարիներին է, ինչ սկսել է գործել Համագզայինի Միրիայի շրջանային վարչության հայագիտական կենտրոնը, որը փորձում է լրացնել եղած բացը:

Լիբանանի և Միրիայի հայկական դպրոցների հայագիտական առարկաների ուսումնական ծրագրերի հարցում կան և՛ նմանություններ, և՛ տարբերություններ:

Նախ և առաջ նշենք, որ ցանկացած ուսումնական առարկայի ծրագիր ներառում է առարկայի նպատակը, խնդիրները և ուսուցման բովանդակությունը: Ծրագրի ընդարձակ կամ սեղմ լինելը պայմանա-

վորված է նաև սովյալ ուսումնական առարկային հատկացված ժամաքանակով, որի շրջանակներում էլ այն ուսուցանվում է:

Եվ քանի որ չափազանց մեծ է Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցներում դասավանդվող հայագիտական առարկաների ընդգրկման և հատկացված ժամաքանակի տարբերությունը, ապա ինքնին հասկանալի է, որ տարբեր կլինեն նաև ուսումնական ծրագրերը:

Իսկ նմանությունը, թերևս, երկու գաղթօջախների հայկական դպրոցների գործունեության նպատակներն են, մասնավորապես հայոց լեզվի ուսուցման նպատակը՝ լեզվի լիարժեք իմացություն, բանավոր և գրավոր խոսքի զարգացում, լեզվանտածողության ձևավորում և մայրենի լեզվով ազգային արժեքներին հաղորդակցում:

Այսուհանդերձ երկու երկրներում հավասար չեն վերոհիշյալի իրականացման հնարավորություններն ու պայմանները՝ Սիրիայում մեր նշած կրթական սահմանափակումների պատճառով:

Ինչ վերաբերում է երկու գաղթօջախների դպրոցներում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման մեթոդներին, ապա փաստենք, որ այստեղ ևս կարելի է հանդիպել և՛ նմանությունների, և՛ տարբերությունների՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով:

Նմանությունն այն է, որ երկու տեղում էլ բավականին թույլ են սփյուռքահայ մեր գործընկերների մեթոդական զինվածությունը և հոգեբանամանկավարժական գիտելիքները: Իհարկե, գործում են նաև վաստակաշատ մանկավարժներ, որոնք իրենց մասնագիտական բարձր գիտելիքներին զուգակցում են մանկավարժական վարպետությունը, հմտությունն ու փորձառությունը: Սակայն նրանց թիվն այնքան էլ մեծ չէ, և նրանց կողքին աշխատում են շատ բանիմաց, խելացի ու խոստումնալից երիտասարդ ուսուցիչներ, որոնց աշխատանքում պակասում է մեթոդական զինվածությունը և փորձը:

Մեթոդական պատրաստվածության հարցում, իհարկե, մեղքը միայն դասավանդող ուսուցիչներինը չէ: Նրանք քաջ գիտակցում և ընդունում են եղած բացը և ցանկանում լրացնել այն, սակայն ինչպե՞ս և ի՞նչ ճանապարհներով ու միջոցներով, նրանք անգոր են ինք-

նուրույն լուծել խնդիրը: Կարծում ենք, որ ուսուցիչների հոգեբանամանկավարժական և մեթոդական վերապատրաստման հարցերը իրենց վրա պետք է վերցնեն ինչպես Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցների գործունեությունը համակարգող ուսումնական խորհուրդները, Բեյրութի Հայկազյան համալսարանը, Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկը և Հալեպի հայագիտական կենտրոնը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության հովանու տակ գործող Խաչեր Գալուստյան մանկավարժական կենտրոնը, այնպես էլ Հայաստանի կրթության և գիտության նախարարությունը և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանին կից «Մփյուռք» գիտաուսումնական կենտրոնը: Վերջինս արդեն երկու տարի է, ինչ ձեռնամուխ է եղել վերականգնել սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման՝ Հայաստանում երկար տարիներ գործող, սակայն վերջին տասը տարիներին դադարեցված դասընթացները: Այս աշխատանքների նպատակի և խնդիրների մասին առավել հանգամանորեն խոսվում է գրքի չորրորդ և հինգերորդ գլուխներում:

Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցներում կազմակերպվող ուսումնադաստիարակչական գործընթացների ամենամեծ նմանությունը նրանցում առկա ազգային ոգին է, բարձր կարգապահությունը և դաստիարակչական միջոցառումների մեծամասնության հայրենասիրական բնույթն ու շունչը: Սրանք են հայ երեխայի մեջ սերմանում ազգային ինքնագիտակցության ոգի, բարձր հայրենասիրություն, մեր արմատներին ունեցած մեծ կապվածություն:

Սրանք այն կովաններն են, որոնց միջոցով հնարավոր է պայքարել ուժացման դեմ, օտար միջավայրում հայ երեխային պահել ու մեծացնել հայ:

Հայապահպանության գերագույն նպատակին են ուղղված Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցների ուսումնադաստիարակչական և կրթամշակութային համապարփակ գործունեությունը:

§ 2.2. *Սփյուռքահայ ուսուցիչը՝ նրա առաքելությունը և աշխատանքի առանձնահատկությունները*

Մանկավարժության մեջ վաղուց հայտնի է այն իրողությունը, որ նորմալ պայմաններում ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է առնվազն երկու նախապայման՝ ուսուցչի գիտելիքները, կարողություններն ու շահագրգռվածությունը և աշակերտի կարողություններն ու ձգտումը: Ուսուցիչն է այն կարևոր դեմքը, որից սկսվում և որի միջոցով իրականացվում են աշակերտների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքները: Այս առումով ուսուցչի անձնային որակները, գիտական մակարդակը, մասնագիտական որակը, մեթոդական զինվածությունը, մանկավարժական տակտն ու վարպետությունը, ներհայեցողական մտածողությունը, մտահորիզոնը, աշխարհայացքը բացառիկ նշանակություն ունեն ուսումնադաստիարակչական աշխատանքների գիտական ու արդյունավետ կազմակերպման համար:

Միանգամայն տեղին ու արդարացի են հնչում անվանի մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկու հետևյալ խոսքերը. «Մենք՝ մանկավարժներս, մարդուն դաստիարակում ենք նախ և առաջ նրանով, ինչ որ կա մեր հոգում՝ մեր համոզմունքներով ու զգացմունքներով: Այնպիսին պիտի լինի երեխաներին և պատանեկությանն ուղղված մեր խոսքը, որ շունչը պահած լսեն, այդ խոսքի մեջ զգան զոյության գերագույն ճշմարտությունը, հավատան մեզ, ինչպես որ մարդ հավատում է արևի ճաճանչումին: Այնպես, որ մեր ամեն մի խորհուրդն ու խրատը իսկականից կտակ լինի նրանց համար»¹⁵:

Անառարկելի ճշմարտություն է, որ ուսուցման բովանդակությունը, սկզբունքները, մեթոդները որքան էլ առաջավոր լինեն, չեն կարող արդյունավետ կերպով ազդել աշակերտների մտքի ու զգացմունքների վրա և ձեռք բերել զարգացնող հարաբերություններ, եթե այդ ամենին չհամադրվի ուսուցչի անձնական օրինակը, նրա խոսքի և գործի միասնությունը:

Հայ մեծ մանկավարժ Ա. Բահաթրյանը ուսուցչի մասնագիտությունը համարել է վեհ ու նվիրական. «Բավական չէ միայն առարկայի գիտութունը,— գրում է նա,— վասնզի գիտութեամբ, ուսումնասիրութեամբ դեռևս ոչ ոք ուսուցիչ չի դարձած: Գիտութիւն ունեցողը կարող է գիտնական լինել, բայց գիտնականի և ուսուցչի մեջ մեծ զանազանութիւն կայ: Ամեն գիտնական լաւ ուսուցիչ չի կարող լինել, որպէս և ամեն ուսուցիչ լաւ գիտնական լինել չի կարող: Համալսարանի հռչականունն ուսուցչապետը չի կարող տարրական դպրոցի հմուտ ուսուցիչ լինել, որպէս և վերջինս չի կարող համալսարանում առաջինի տեղը բռնել: Հարկավոր է, որ ուսուցիչը ոչ թե միայն տէր լինի իւր առարկային, այլ նա պիտի ունենայ մաս տոկուն համբերութիւն և եռանդուն սէր դեպի գործունէութիւն»¹⁶:

Հայ ուսուցիչները թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում իրենց պատմական առաքելությամբ մատաղ հոգիներում միշտ վառ են պահել կրթության կենարար լույսը՝ այդ գործի մեջ դնելով անսահման սեր, նվիրում և ապրումակցում: «Տարրական դասարանի ուսուցիչը այնպես պիտի ուսումնասիրէ մանկական բնավորությունը,— ասում է Ա. Բահաթրյանը,— որ նա ինքը ևս կարող լինի երեխայ դառնալ. այդ ժամանակ նա կարող է խոսել մանկանց սրտի հետ»¹⁷:

Ուսուցչի հեղինակությունը ստեղծվում է նրա անձնային հատկանիշներով ու գործունեությամբ: Ուսուցչի անձնավորությունը, նրա վերաբերմունքը աշակերտների ու իր գործընկերների հանդեպ չափանիշ են դառնում աշակերտական կոլեկտիվի անդամների փոխհարաբերությունների համար: Այս պատճառով ուսուցչի անձնական օրինակը կարող է ոչ միայն դրական, այլև բացասական դեր խաղալ, եթե նա աշակերտի հետ ունեցած փոխհարաբերություններում դրսևորում է իր անձնային արատները:

Ինչպե՞ս չհամաձայնվել անվանի մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկու այն խոսքերին, թե «Մեզանից յուրաքանչյուրը պետք է լինի ոչ թե մանկավարժական իմաստության վերացական մարմնացում,

¹⁵ Սուխոմլինսկի Վ. Ա., Հայրենիքը սրտումդ ունեցիր, Երևան, 1980, Նախաբան, էջ 13:

¹⁶ Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսումը տարրական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1878, թիվ 2:

¹⁷ Նույն տեղը:

այլ այն իրական անձնավորությունը, որը դեռահասին օգնում է ճանաչելու ոչ միայն աշխարհը, այլև ինքն իրեն: Մենք պետք է դեռահասների համար լինենք հոգևոր կյանքի հարստության օրինակ. միայն այդ պայմանով մենք կունենանք դաստիարակելու բարոյական իրավունք»¹⁸:

Անմիջականորեն գտնվելով Լիբանանի և Սիրիայի հայկական գաղթօջախների դպրոցներում և մոտիկից ծանոթանալով սփյուռքահայ ուսուցիչների կատարած անձնագոհ ու հայրենամակեր գործունեությանը՝ մենք հպարտորեն և միևնույն ժամանակ վստահորեն կարող ենք փաստել, որ սփյուռքահայ երեխայի հայեցի կրթության ու դաստիարակության գործը վստահելի ձեռքերում է, ավելին՝ ազգի նվիրյալների հոգածության տակ է, որոնք անհամեմատ (բոլոր առումներով) դժվարին պայմաններում, օտարության մեջ կարողանում են հայ երեխային հայ պահել և բոլոր միջոցներով ու ճանապարհներով պայքար տանել ուժացման դեմ:

Այո՛, սփյուռքահայ ուսուցիչն իր գործունեության ընթացքում բախվում ու հաղթահարում է բազմաթիվ ու բազմատեսակ դժվարություններ, որոնք ժամանակ առ ժամանակ տարբեր սրությամբ ծառանում են նրա առջև: Դրանք են. կրթական սահմանափակումները Սիրիայի հայկական դպրոցներում, որոնց մասին արդեն խոսել ենք, ծրագրերի, դասագրքերի բացակայությունը կամ անկատար լինելը, արաբերենի և անգլերենի կամ ֆրանսերենի ոչ կատարյալ իմացությունը, որը խանգարում է, բացի հայերենից, այլ ուսումնական առարկաների ուսուցմանը, ինչպես նաև անհնարին է դարձնում ուսումնառությունը համալսարաններում՝ ապահովելու համար շարունակական կրթությունը և որևէ մասնագիտության ձեռքբերումը: Հաջորդ դժվարություններից է մեթոդական ոչ բավարար զինվածությունը, որի մասին արդեն խոսվել է նախորդ պարագրաֆում:

Օտար հողի վրա և օտարության մեջ գտնվելու փաստը ռեալ գիտակցելով՝ սփյուռքահայ ուսուցիչը հավելյալ ժամանակ, ջանքեր ու էներգիա է տրամադրում արտադասարանական և արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումներ կազմակերպելու գործին՝ նպա-

տակ ունենալով աշակերտությանը մասնակից դարձնել դրանց և որքան հնարավոր է պահել հայկական շրջանակներում:

Սփյուռքահայ ուսուցիչների մեծ մասը թե՛ Լիբանանի և թե՛ Սիրիայի գաղութներում ճանաչված մտավորականներ են, կրթության մշակներ, ակտիվ հասարակական, քաղաքական և մշակութային գործիչներ, որոնք իրենց համապարփակ ու հայրենամակեր գործունեությամբ նպաստում են հայ գաղութների պահպանմանն ու զարգացմանը:

Նրանց աշխատանքներում ակնհայտ է ձգտումը դեպի նորն ու առաջադիմականը: Միանշանկանորեն պետք է շեշտենք, որ մանկավարժական աշխատանքն աներևակայելի է առանց ստեղծագործական մոտեցման, առանց նորի ու առաջադիմականի որոնման, եղածի թարմացման, արդիականացման ու կատարելագործման անվերջ գործընթացի:

Ստեղծագործական աշխատանքը մանկավարժական գործընթացի առաջնիշխ ուժերից մեկն է թե՛ ուսուցչի մանկավարժական ու մեթոդական վարպետության բարձրացման և թե՛ մանկավարժական գիտության առաջընթացի համար:

«Մեր հասարակության մեջ ուսուցիչն ապագայի մարդն է,— գրում է վրացի տաղանդավոր մանկավարժ, ակադեմիկոս Շ. Ա. Ամոնաշվիլին, որն եկել է երեխաներին ոգևորելու ապագայի հանդեպ երազանքով, նրանց սովորեցնելու, ներկայի մեջ հաստատելու ապագայի գաղափարները... Ուսուցիչն ինքը պետք է լինի անհատականություն, քանզի միայն անհատականությունը կարող է անհատականություն դաստիարակել: Նա պետք է լինի չափից ավելի մարդկային, քանզի երեխայի մեջ մարդկայնություն ներարկել հնարավոր է միայն հոգու բարությանը: Նա անպայման պետք է լինի բազմակողմանիորեն կրթված ու ստեղծագործող մարդ, քանզի իմացության տենչ կարող է առաջացնել միայն նա, ով տոգորված է դրանով: Ուսուցիչը պետք է լինի հայրենասեր, քանզի հայրենիքի հանդեպ սեր կարող է սնուցել միմիայն հայրենասերը»¹⁹:

¹⁸ Սուխոմլինսկի Վ. Ա., Քաղաքացու ծնունդը, Երևան, 1978, էջ 114:

¹⁹ Амонашвили Ш. А., В школу — с шести лет, "Педагогический поиск", М., 1987, с. 39.

Սփյուռքահայ ուսուցիչների գործունեության ընթացքում հանդիպող դժվարություններից մեկն էլ նրանց հոգեբանամանկավարժական գիտելիքների ոչ բավարար լինելն է, իսկ դրանց իմացությունը խորապես օգնում է, որպեսզի ուսուցիչը կարողանա ներթափանցել երեխաների հոգեկան աշխարհը, հաղորդակցվել նրանց հույզերին ու զգացմունքներին և օգնել նրանց ինքնաճանաչման ու ինքնարժեքավորման գործում, դժվարություններ հաղթահարելու հարցում:

Տեղին ենք համարում մեջբերել խորհրդային մանկավարժ-նորարար Վ. Շատալովի հետևյալ խոսքը. «Ուսուցչի աշխատանքի դժվարությունն այն է, որ գտնվի դեպի յուրաքանչյուր աշակերտը տանող ճանապարհը, ստեղծվեն պայմաններ նրանում եղած ունակությունների զարգացման համար: Ամենակարևորն այն է, որ ուսուցիչը օգնի աշակերտին՝ գիտակցելու իր անհատականությունը, նրա մեջ արթնացնի պահանջ ճանաչելու իրեն, կյանքը, աշխարհը: Ուսուցչի պարտքն է աշակերտի մեջ դաստիարակել մարդկային արժանապատվության զգացում, որի անբաժանելի մասերից է իր արարքների համար ընկերների, դպրոցի և հասարակության առջև ունեցած պատասխանատվությունը: Յուրաքանչյուր աշակերտի հնարավորությունների հանդեպ ուսուցչի ունեցած հավատից, նրա հետևողականությունից, համբերությունից, ժամանակին օգնության հասնելու կարողությունից են կախված աշակերտի հաջողությունները ճանաչողության դժվարին ճանապարհին»²⁰:

Չափազանց բարձր է Հայաստանի և սփյուռքի ուսուցիչների պատասխանատվությունն իրենց առաքելության մեջ, քանի որ նրանց ձեռքերում է ձևավորվում ու կոփվում հայ ժողովրդի ապագան: Իսկ մեր ժողովրդի ապագան վտանգելու իրավունքը մենք չունենք:

§ 2.3. Ազգային կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, կրթամշակութային, բարեգործական, հայրենակցական միությունների և եկեղեցու դերը սփյուռքի ամենօրյա դպրոցների ստեղծման ու զարգացման գործում

Աշխարհի տարբեր ծայրերում ստեղծված հայկական գաղթօջախների, մասնավորապես Լիբանանի և Սիրիայի գաղութների պատմության մեջ իրենց վճռորոշ դերն են ունեցել և հիմա էլ ունեն ազգային կուսակցությունները, բարեգործական, կրթամշակութային և հայրենակցական միությունները, որոնցից յուրաքանչյուրն իր ներդրումն է բերել գաղթօջախներում հայապահպանության գործին:

Այսօր Լիբանանում և Սիրիայում գործում են երեք խոշոր ավանդական կուսակցություններ՝ Հայ հեղափոխական դաշնակցություն, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցություն և Ռամկավար – ազատական կուսակցություն, որոնց քաղաքական գործունեության կանոնադրյալ մաս են կազմում հայկական հարցին պահանջատեր լինելը, հայապահպանությունը և գաղութների զարգացումը:

Մենք ամենևին նպատակ չենք հետապնդում աշխատանքում ներկայացնել վերոհիշյալ կուսակցությունների պատմությունը, նրանց գաղափարախոսությունը կամ ծրագրերը: Դա պատմաբանների ու քաղաքագետների գործն է:

Մեր խնդիրն է ներկայացնել նրանց գործունեությունը գաղութների կրթամշակութային ոլորտներում, որոնց զարգացման համար, հիրավի, նրանք իրականացրել ու հիմա էլ շարունակում են իրականացնել բազմաբնույթ ու հայրենամտ գործեր՝ աջակցելով դպրոցների և կրթամշակութային օջախների ստեղծմանն ու գործունեության զարգացմանը: Այս է վկայում այն պարզ իրողությունը, որ այսօր Լիբանանում և Սիրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցների զգալի մասը վերոհիշյալ երեք կուսակցությունների հովանու տակ է գործում: Բնականաբար, այս պարագայում կրթօջախներում իրեն

²⁰ Шаталов В. Ф., Учить всех, учить каждого. "Педагогический поиск", М., 1987, с. 142–143.

զգացնել է տալիս կուսակցական գաղափարախոսությունը: Սակայն համոզված կարող ենք շեշտել, որ այն երբևիցե չի կաշկանդում սփյուռքի հայկական ամենօրյա դպրոցների լուսավորչական, ազգաշահ ու հայապահպան գործունեությունը, որը նրանց հիմնական նպատակն ու առաքելությունն է: «Լիբանանը, հատկապես նրա մայրաքաղաք Բեյրութը,— գրում է Ս. Գասպարյանը,— սփյուռքահայ մտքի ու մշակույթի գլխավոր կենտրոններից մեկն է: Այստեղ ներկայացված են հայկական բոլոր քաղաքական կուսակցությունները, որոնք զգալի դեր են խաղում երկրի քաղաքական կյանքում: Ոչ մի տեղ քաղաքական հակամարտություններն ու պայքարը հայկական կուսակցությունների միջև այնքան ցայտուն ու ուժեղ չեն, ինչպես այստեղ: Ոչ մի տեղ հայ մամուլը, տարբեր ուղղությունների պատկանող հասարակական ու մշակութային կազմակերպությունները այնպիսի խայտաբղետ պատկեր չեն ներկայացնում, ինչպես այստեղ: Ու թերևս ոչ մի երկրում հայերը երկրի հասարակական ու քաղաքական կյանքում այնպիսի կարևոր դեր չեն խաղում, ինչպես այստեղ»²¹:

Նմանատիպ պատկերն է տիրում նաև Սիրիայում՝ Հալեպ և Դամասկոս քաղաքներում:

Լիբանանում և Սիրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցների գերակշռող մասը կազմող ազգային վարժարանները վայելում են Հայ հեղափոխական դաշակցության հովանավորությունն ու աջակցությունը:

Թվով համեմատաբար ավելի քիչ դպրոցներ ունեն ՌԱԿ-ը և ՄԴՀԿ-ը: Կուսակցությունների գործունեության մեջ որոշակի տեղ են զբաղեցնում ազգային-մշակութային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստող հարցերը: Նրանց անմիջական հովանավորությամբ ու աջակցությամբ Լիբանանում և Սիրիայում տեղի են ունենում բազմաբնույթ մշակութային ձեռնարկներ, որոնց մասնակցությամբ սփյուռքահայությունը պահպանում է իր ինքնությունը և հաղորդակցվում ազգային արժեքներին:

Լիբանանի և Սիրիայի գաղթօջախների զարգացման ու հայապահպանության գործում իրենց ակտիվ մասնակցությունն են բե-

րել հայրենակցական միությունները: «Մինչև 1920-ական թթ. վերջերը,— գրում է Հ. Թոփուզյանը,— Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների մշակութային կյանքի առանցքը կազմում էին Այնթապի, Մարաշի, Ադանայի, Խարբերդի, Թոմարգայի, Մալաթիայի, Արաբկիրի, Երզնկայի, Սեբաստիայի, Յոզկաթի, Ուրֆայի, Ջեյթունի և այլ ավելի քան երեսուն հայրենակցական միությունները: Ինչպես Հալեպում, այնպես էլ Բեյրութում ստեղծվել էր միջհայրենակցական կենտրոնական վարչություն: Հայրենակցական միություններն այնքան էին ճյուղավորված և այնպիսի ուժ էին ներկայացնում, որ հնարավոր չէր նրանց շրջանցել Սիրիայի և Լիբանանի գաղթականության վերաբերող այս կամ այն կարևոր հարցը լուծելիս»²²:

Հայրենակցական միությունների գործունեության հիմնական նպատակը տարբեր միջոցներով ու ճանապարհներով մեր պապենական բնակավայրերի ապրելակերպը, կենցաղը, ավանդույթներն ու սովորույթները, երզն ու պարը, բարբառը երիտասարդ սերունդների մեջ պահպանելն ու մոռացությունից փրկելն է, որը նրանց մեջ միշտ արթուն կպահի մեր նախնիների տված երդումն ու հայկական հարցի լուծման պահանջատիրությունը:

Եվ այս նպատակին հասնելու համար Լիբանանում ու Սիրիայում հայրենակցական միություններն իրականացնում են կրթամշակութային լայն գործունեություն՝ բացելով դպրոցներ, մշակութային օջախներ, կազմակերպելով ու աջակցելով տարաբնույթ գրական, մշակութային և կրթական միջոցառումներ. դասախոսություններ, համերգներ, գրական երեկոներ, ցուցահանդեսներ, ճաշկերույթներ՝ ազգային ճաշատեսակներով, ուղևորություններ պատմական վայրեր, հայ նշանավոր մտավորականների և արվեստի գործիչների հանդիպումներ և այլն:

«Ազգակ» օրաթերթը գրում է. «1918-1922 թթ. լիբանանահայ ազգային կեանքի գործոնները հայրենակցական միություններն էին ընդհանրապես, երբ տակավին գլանազան մշակութային կազմակեր-

²² Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 284:

²¹ Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 108-109:

պութիւններ գոյութիւն չունէին և կուսակցութիւններն ալ գրեթէ անկազմակերպ վիճակի մէջ էին»²³:

Աստիճանաբար, սակայն, հայրենակցական միութիւնները իրենց դիրքերը զիջում են նոր կազմակերպութիւնների, որոնք ոչ հայրենակցական հիմունքներով էին կազմակերպված: Դրանք մշակութային ընկերություններն էին:

«Ստեղծվել են ավելի քան հարյուր հիսուն անուն մշակութային ընկերություններ,— գրում է Հ. Թովուզյանը,— որոնց մեծագույն մասը կարճատև կյանք է ունեցել, իսկ մնացյալը գնահատելի դեր է կատարել Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների մշակութի մակարդակը բարձրացնելու գործում»²⁴:

Այսօր Լիբանանում և Սիրիայում գործում են բազմաթիվ մշակութային միություններ, որոնցից առավել համապարփակ գործունեություն իրականացնողներն են՝ Հայ բարեգործական ընդհանուր միությունը (մասնաճյուղերը), Համազգայինի կրթամշակութային հրատարակչական միությունը (մասնաճյուղերը), Հայ օգնության խաչը (ՍՕԽ և ԼՕԽ), «Վահան Թեքեյան» մշակութային ընդհանուր միությունը, «Նոր սերունդ» մշակութային շարժումը, Հայ մարմնամարզական միությունը, «Վերածնունդ» մշակութային միությունը, «Գրական շրջանակ» գրական կազմակերպությունը և այլն:

Հետաքրքրական է Հ. Թովուզյանի այն միտքը, թե «յուրաքանչյուր մշակութային ընկերություն առավել կամ նվազ չափով գտնվում էր այս կամ այն կուսակցության վերահսկողության ներքո»²⁵: Տրամաբանորեն այս միտքը բացատրվում է կուսակցությունների գործունեության մեջ հայ դպրոցի ու մշակութի հարցերին հատկացված մեծ ուշադրությամբ: Արդյունքը ստեղծված մշակութային միություններն են:

Լիբանանի և Սիրիայի մշակութային միություններն էլ իրենց հերթին մեծ հոգածություն ունեն կրթական գործի նկատմամբ:

Նրանց նախաձեռնությամբ ու ջանքերով այսօր և՛ Լիբանանում, և՛ Սիրիայում գործում են շատ ճանաչված ու կրթական բարձր վարկանիշ ունեցող այնպիսի դպրոցներ, ինչպիսիք են՝ Համազգայինի Նշան Փալանջյան, Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանները՝ Բեյրութում և Քարեն Եփփե ճեմարանը՝ Հալեպում, Հայ բարեգործական ընդհանուր միության Հովակիմյան-Դարուիի Հակոբյան երկրորդական վարժարանները՝ Բեյրութում և Նաջարյան-Գյուլբենկյան կենտրոնական վարժարանը՝ Հալեպում:

Այս կրթօջախներն իրենց գործունեությամբ ոչ միայն նպաստել են հայ կրթական գործի զարգացմանը Լիբանանում և Սիրիայում, այլև մեծ դերակատարություն են ունեցել երկու գաղթօջախների պատմության մեջ:

Հիրավի, ճշմարիտ է այն միտքը, թե կրթությունն ու մշակույթն են պահում ու զարգացնում ժողովրդի ազգային ոգին, ստեղծված մշակութային արժեքներով է հարուստ յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ:

Մշակույթը նաև ազգի գոյապահպանման կարևորագույն գործոններից մեկն է, հատկապես հայերիս նման երկար դարեր պետականություն չունեցող ժողովրդի համար, որն իր լեզվի, հավատքի և մշակույթի պահպանմամբ կարողացավ անցնել պատմության դաժան քառուղիներով, կարողացավ գոյատևել, պահպանել իր ինքնությունը և մյուս ազգերի հետ կողք կողքի մուտք գործել XXI դար:

Լիբանանի և Սիրիայի հայկական գաղթօջախներում հայ կրթական գործի ամենամեծ նախանձախնդիրը, կազմակերպողն ու աջակցողը հայկական հարանուն եկեղեցին է՝ Հայ առաքելական, Հայ կաթոլիկ և Հայ ավետարանական:

Տարբեր երկրներում ձևավորված հայկական գաղութներում, մասնավորապես Լիբանանում և Սիրիայում, հայերի ամենաառաջին գործը հայկական եկեղեցու կառուցումն է եղել՝ որպես քրիստոնեական հավատքին կապված լինելու առհավատյալ:

Հայկական եկեղեցին սփյուռքի գաղութներում, հիրավի, կատարել է պետության դեր՝ իր շուրջն է հավաքել տարազիր հայության բեկորները և օգնել կազմակերպելու նրանց կյանքն օտարության մեջ:

²³ «Ազդակ», Պեյրութ, 6 ապրիլի, 1927:

²⁴ Թովուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 285:

²⁵ Թովուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 284:

Եկեղեցին սփյուռքում իրականացրել է ոչ միայն կրոնական, հոգևոր քարոզչություն և գործունեություն, այլև համապարփակ գործառույթներ, որոնք ընդգրկել են համայնքների բոլոր ոլորտները՝ կրթական, մշակութային, սոցիալական, տնտեսական, դատական, հրատարակչական, թարգմանչական-մատենագիտական և այլն: Մրանք այն հիմնական ոլորտներն են, որոնց հարցերով զբաղվում է ցանկացած պետություն ու իշխանություն: Իսկ պետականություն չունեցող սփյուռքայության համար այդ դերը ստանձնել է հայկական եկեղեցին:

Ե՛վ Հայ առաքելական, և՛ Հայ կաթոլիկ, և՛ Հայ ավետարանական եկեղեցիներն իրենց համապարփակ գործունեության մեջ առանձնակի ուշադրության են դարձնում կրթական հարցերին, դպրոցների գործունեությանը: Մրա վառ ապացույցն այն է, որ և՛ Լիբանանում, և՛ Սիրիայում առաջին հայկական ամենօրյա դպրոցները բացվել են եկեղեցիներին կից և նրանց օժանդակությամբ:

Հայկական եկեղեցիներն իրենց ամենօրյա հոգածության տակ են պահում հայկական դպրոցները: Շատ հոգևորականներ մասնաճյուղների հոգաբարձուների խորհրդի անդամներ են և իրենց անմիջական ներդրումն են բերում դպրոցների գործունեության մեջ:

Լիբանանում և Սիրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցների գերակշռող մասը հայկական եկեղեցիների հովանավորության տակ է, և նրանց առաջնորդարանների կրթական ենթակառուցվածքը՝ ուսումնական խորհուրդները, համակարգում, կազմակերպում և վերահսկում են դպրոցների ուսումնադաստիարակչական գործունեությունը:

Հայկական եկեղեցիները, բացի ամենօրյա դպրոցների հովանավորումից, աջակցում են մաս կիրակնօրյա (մեկօրյա) դպրոցների աշխատանքներին, ուր սփյուռքահայ երեխան ստանում է քրիստոնեական կրթություն ու դաստիարակություն: Այս դպրոցների մասին առավել հանգամանորեն կխոսվի գրքի երրորդ գլխում:


Լիբանանի և Սիրիայի հայկական գաղութներում եկեղեցին և դպրոցը կարծես միասնացած լինեն: Նրանց միջև տիրում է գործունեության բացառիկ ներդաշնակություն և համագործակցություն:

Կրկին անգամ հաստատակամորեն փաստենք, որ եկեղեցին և դպրոցը, հավատքն ու լեզուն այն կարևորագույն գործոններն են, որոնք օտարության մեջ, տարբեր արիավիրքների ժամանակ հայության համար եղան փրկարար օղակներ, որոնց հավատալով ու ապավինելով՝ հայ ժողովուրդը կարողացավ պահել իր ազգային դիմագիծը, իր ինքնությունը:

Այսպիսով, ի մի բերելով Լիբանանի և Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցների ստեղծման ու անխափան գործունեության մասնադրյալները, կազմակերպող օղակները, ուղիներն ու միջոցները՝ ստորև ներկայացնում ենք սփյուռքի հայկական դպրոցի՝ մեր կողմից մշակված մոդելը, որը հստակ պատկերացում է տալիս կրթօջախի ինքնատիպության ու կառուցվածքի մասին:

Մ Ո Ղ Ե Լ

ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՆՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ



Նկար 1.

**ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՅՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(ԼԻԲԱՆԱՆ, ՍԻՐԻԱ), ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԻ
ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

§ 3.1. Եկեղեցու դերը կիրակնօրյա դպրոցների ստեղծման հարցում

Հայկական գաղութներում ազգային մթնոլորտն ու ավանդույթները պահպանող հիմնական գործոններն են եղել և են հայկական եկեղեցին, դպրոցը, տպարանը, թերթը, մշակութային և հասարակական-քարեգործական միությունները: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ բոլոր հայկական գաղթօջախներում հայությունը համախմբվել է եկեղեցու շուրջը և նրա հետ տեսել իր կյանքի անցնելիք ճանապարհը:

Հայաստանյայց եկեղեցին հայրենիքում և սփյուռքում ծավալել է և հիմա էլ շարունակում է ծավալել ազգաշահ, կրոնական, քարոզչական, դաստիարակչական, կրթական, հրատարակչական, մատենագիտական, թարգմանչական համապարփակ գործունեություն՝ դրանով իսկ մեծ դեր խաղալով մեր ժողովրդի պատմության ընթացքում:

Հիշենք մեր հռչակավոր բանաստեղծ Նարեկացուն, բանաստեղծ և գիտնական Անանիա Շիրակացուն, Գրիգոր Տաթևացուն, որոնք բոլորն էլ եղել են քրիստոնյա հավատացյալներ:

Հավատքի շնչով է ստեղծված ամբողջ ոսկեդարյան հարուստ գրականությունը: Վանքերի գավիթներում կրթվել ու դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ և իրենց հաջորդներին են փոխանցել քրիստոնեության լույսը: Կրոնը մեր ժողովրդի պատմության հազա-

րամյանկների ընթացքում եղել է ժողովրդի ոգին, ոգեշնչման աղբյուրը, մխիթարությունը՝ օրհասական պահերին:

Մեր հոգևոր մեծ առաջնորդ, երջանկահիշատակ Վազգեն Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսն ասում է. «Հայոց քրիստոնեությունը ազգային եղավ ի սկզբանե և այդպես էլ մնաց Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով, Ս. Մեսրոպ Մաշտոցի տառերու գյուտով և Ս. Վարդանի արդարության և ազատության շեփորումով»²⁶:

Այսօր, իհարկե, անժխտելի ու անվիճելի է այն փաստը, թե ինչ անգնահատելի դեր են խաղացել քրիստոնեական հավատքը և Հայաստանյայց եկեղեցին, և ինչ մեծ ավանդ են ունեցել հայ հոգևորականները մեր ժողովրդի գոյատևման, նրա անցած փոթորկալից ճանապարհին ազգային ինքնագիտակցության ոգու պահպանման, ինչպես փյունիկ վեր հառնելու, նրա զարգացման, հոգևոր-մշակութային արժեքների ստեղծման, մատաղ սերնդի դաստիարակության գործում:

Սփյուռքում եկեղեցաշինությանն անմիջապես հաջորդել է դպրոցաշինությունը. եկեղեցիներին կից մեկը մյուսի հետևից բացվել են հայկական ամենօրյա դպրոցներ՝ որպես մեր մայրենի լեզվի պահպանման, մատաղ սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության, նրանց մեջ ազգային ինքնագիտակցության ոգի սերմանելու, գիտության լույսը հարատև պահելու և հայապահպանության գրավական:

Սփյուռքում եկեղեցին և դպրոցը կարծես միասնացած լինեն: Հայ առաքելական եկեղեցին իր գորավոր աջակցությունն է ցույց տալիս հայ կրթական գործի զարգացմանը, հայկական ամենօրյա և կիրակնօրյա դպրոցների ստեղծմանն ու նրանց անխափան գործունեությանը՝ նրանց դիտելով մեր ժողովրդի ապագա սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության, հայապահպանության, քրիստոնեական հավատքի, ազգային ավանդույթների ու մշակույթի պահպանման կարևորագույն օջախներ:

Բոլոր հայկական ամենօրյա դպրոցներում՝ սկսած նախակրթարանից մինչև երկրորդարանը, դասավանդվում է կրոն առար-

²⁶ Վազգեն Ա Յայրապետ Յայոց, Ճառեր, Քարոզներ, Կոնդակներ, հ. գ., Էջմիածին, 1976, էջ 64:

կան, որի ուսուցմամբ երեխաներին ծանոթացնում են քրիստոնեական ուսմունքին, հայ առաքելական եկեղեցու պատմությանը:

Առարկան դասավանդում են ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ ուսուցիչներ:

Սփյուռքում Հայ առաքելական եկեղեցու հովանու տակ գործող բոլոր հայկական ամենօրյա վարժարանների կրթադաստիարակչական գործունեության, ուսումնական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական սեմինարների, վարչական, ուսուցչական կադրերի ընտրության ու վերապատրաստման, ուսուցման գործընթացների վերահսկողության բոլոր հարցերի կարգավորողն ու կազմակերպողը թեմերի առաջնորդարանների կրթական ենթակառույցն է՝ ուսումնական խորհուրդը: Խորհրդի կազմն ու ատենապետին ընտրում է առաջնորդարանը, որին պարբերաբար հաշվետու է ուսումնական խորհուրդը:

Ուսումնական գործընթացից դուրս դպրոցների կազմակերպած արտադասարանական և արտադպրոցական գրեթե բոլոր միջոցառումներին իր անմիջական մասնակցությունն ու աջակցությունն է բերում հայ եկեղեցին՝ ցանկանալով լինել կողք կողքի, միասնացած ու մի ամբողջություն իր ժողովրդի զավակների ու հավատացյալների հետ:

Հայ առաքելական եկեղեցու համապարփակ գործունեության մեջ իր ուրույն տեղն ունի կրոնական դաստիարակությունը՝ որպես նոր սերնդին հոգևոր բարձր արժեքների հաղորդման ու փոխանցման կարևոր աղբյուր և միջոց: Ահա այս կարևոր գործին են լծված հայկական զաղթօջախներում եկեղեցիներին կից գործող կիրակնօրյա դպրոցները, որոնք լրացնում են սփյուռքի հայկական ամենօրյա դպրոցների իրականացրած կրթադաստիարակչական գործունեությունը՝ շեշտը, իհարկե, դնելով կրոնական, հայրենասիրական, բարոյական դաստիարակության և հայապահպանության հարցերի վրա:

Առաջին կիրակնօրյա դպրոցը ծնունդ է առել Անգլիայի Գլոսթեր քաղաքում 1780-ին՝ քաղաքի շաբաթաթերթի խմբագիր Ռոբերտ Ռեյքսի նախաձեռնությամբ, որին անչափ մտահոգում էր փողոցում թափառող մուրացիկ երեխաների անմխիթար վիճակը: Նա կիրակի

օրերին հավաքում էր այդ երեխաներին և աստվածաշնչական ու բարոյական պատմություններով նրանց մեջ սերմանում հավատն առ Աստված և կապվածություն քրիստոնեական կրոնին ու եկեղեցուն:

Իհարկե, սկզբնական շրջանում Ռոբերտ Ռեյքսի սկսած դաստիարակչական այս շարժումն ընդունվում է որոշ վերապահությամբ, սակայն աշխատանքի ծավալման հետ, երբ նշմարվում է նրա բարերար ազդեցությունը երեխաների առողջ դաստիարակության վրա, ամբողջ Անգլիայում և Եվրոպայում մեկը մյուսի հետևից բացվում են կիրակնօրյա դպրոցներ: Հետզհետե քրիստոնյա բոլոր ազգերը՝ նախանձախնդիր իրենց երեխաների կրոնական առողջ դաստիարակության, զարկ են տալիս կիրակնօրյա դպրոցների ստեղծմանը:

Այսօր քաղաքակիրթ Եվրոպայում, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում, Կանադայում, Ավստրալիայում, Աֆրիկայում, Միջին Արևելքում և այլ երկրներում կիրակնօրյա դպրոցներն ունեն իրենց հատուկ տեղն ու նշանակությունը:

Հայերի շրջանում դեռևս ապրիլյան եղեռնից առաջ, հայկական որոշ գավառների մեջ ոչ պաշտոնապես բացված էին կիրակնօրյա դպրոցներ: Ապրիլյան եղեռնագործությունը խափանեց նաև այս գործը: Երկու տասնամյակ հետո միայն կիրակնօրյա դպրոցները պաշտոնապես մուտք գործեցին հայ իրականության մեջ:

1929 թ. Համաշխարհային կիրակնօրյա դպրոցների ամերիկյան ընկերությունը Լիբանանի Բաալպեք քաղաքում մեծ համաժողով է գումարում, որտեղ լայն քննարկման է դրվում աշխարհի քրիստոնյա երկրներում կիրակնօրյա դպրոցներ բացելու հարցը:

Համաժողովին մասնակցում էր նաև հայերի պատվիրակությունը՝ որպես ներկայացուցիչ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության և Երուսաղեմի հայոց պատրիարքության (Բաբկեն Սրբազան, Արտավազդ Ծ. Վրդ. Սուրմելյան և լեզվագետ Դիոնիսիոս քահանա Տրեգեյան):

Հենց այս համաժողովում էլ որոշվում է կիրակնօրյա դպրոցներ բացել նաև Հայաստանյայց եկեղեցու հովանավորությամբ:

Եվ 1929 թ. **հոկտեմբերին** Հալեպի Սրբոց Զառասուն Մանկանց եկեղեցու մանկապարտեզում պաշտոնապես բացվում է առաջին կի-

րակնօրյա դպրոցը՝ հետևյալ նշանաբանով. «Չգեցեք որ մանուկները ինծի գան, եւ արգելք մի ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Երկինքի Արքայութիւնը»²⁷:

Իսկ 1930 թ. հունիսին Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ կաթողիկոսն իր կոնդակով ծանուցում է կիրակնօրյա դպրոցների հիմնադրությունը՝ հայ նոր սերնդին կրոնաբարոյական և ազգային դաստիարակություն տալու համար: Չափազանց կենդանի ու այժմեական են հնչում Վեհափառ հայրապետի հետևյալ խոսքերը. «Մենք չենք կրնար անտեսել Հայաստանեայց Եկեղեցւոյ շուրջ լարուած ընտանի եւ օտար թակարդները. չենք կրնար թոյլ տալ, որ հայ մատաղ սերունդը հակակրօն գաղափարներով դաստիարակուի. մենք չենք ներեր, որ հայ երիտասարդութիւնը եղբայրատեսաց զգացումներով դաստիարակուի: Մենք յայտնի կերպով կը տեսնենք, թէ ինչպիսի ողբալի վիճակի մը մէջ ինկած է Աւետարանի լոյսէն, կրօնքի սրբարար շնորհքէն զրկուած հայ երիտասարդութիւնը: Մենք կ' ուզենք, որ մեր մայրենի եկեղեցւոյն զավակները հարազատ զավակները ըլլան իրենց ընտանիքին, իրենց ազգին եւ իրենց Եկեղեցիին. չենք կրնար թոյլ տալ, որ աս ու ան իրենց ուզած կերպով խաղան մեր եկեղեցւոյն անուան հետ եւ մեր երիտասարդութեան ճակատագրին հետ: Վերջապէս, չենք ուզեր, որ անկրօն ու տգէտ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը... Հետեւաբար կը յայտարարեմ եւ կը հրամայեմ որդեսեր ծնողաց, որ հոգ ու խնամք տանին իրենց զաւակաց բարք ու բարոյականին, հոգածու ըլլան կրօնական եւ եկեղեցասիրական ոգին վառ պահելու կիրակնօրեայ դպրոցներով...»²⁸:

1930 թվականից սկսած՝ մեկը մյուսի ետևից կիրակնօրյա դպրոցներ բացվեցին Սիրիայում, Լիբանանում, Կիպրոսում, Իրաքում, Քուվեյթում, Հունաստանում, Ամերիկայում (Հյուսիսային և Հարավային), Կանադայում, Ավստրալիայում:

Իսկ 1989-ից կիրակնօրյա դպրոցներ են գործում նաև Հայաստանում՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու տակ:

Այսօր մեր իրականության մեջ կիրակնօրյա դպրոցները թե՛ սփյուռքում, թե՛ Հայաստանում ու Արցախում Հայաստանյայց եկեղեցու միջմաբերդն են, որովհետև այնտեղ ուսանած ու կրթված հայ պատանին ու պարմանուհին համապարփակ գաղափար են կազմում իրենց եկեղեցու ամբողջական ու վավերական պատմության ու վարդապետության մասին:

Շատ բնութագրական են հնչում Սեպուհ Ծ. Վրդ. Սարգսյանի հետևյալ խոսքերը. «Հայ հավատացեալի գիտակցութեան մէջ Հայց. Եկեղեցւոյ անարատ դիմագիծը պահպանելու, հայոյ քրիստոնէական ու ազատատենչ ոգին միշտ կենդանի պահելու, որպէս մարդու եւ հայ մարդու իր հայրենիքին, ամբողջական հայրենիքին անպայմանօրէն վերատիրանալու սրբազան աւանդը հրաբորբ պահելու եւ վերջապէս ազգին, ամբողջական ազգին այսօրուան եւ վաղուան երազներուն եւ ձգտումներուն անյապաղ գործադրման նուիրական վայրը Կիրակնօրյայ Դպրոցն է, որ այս բոլորին հետ հայ մարդուն մէջ կը գորացնէ նաեւ բարոյական կեանքի ազնուական այն զգացումները, որոնցմով մարդը, ազգ մը, կրնան իրենց շրջապատին համար դառնալ լուսատու փարոս, ներշնչման աղբիւր եւ բարձր կեանքի գեղեցիկ օրինակ»²⁹:

§ 3.2. Կիրակնօրյա դպրոցների նպատակն ու խնդիրները

Կիրակնօրյա դպրոցների հիմնական նպատակն ու առաքելությունը մանկանը քրիստոնեական առողջ դաստիարակություն տալն է՝ խարսխված, իհարկե, ավետարանական ուսուցման վրա:

Հիմնադրության առաջին իսկ օրից կիրակնօրյա դպրոցներն իրենց հիմնական ծրագրի մեջ շեշտեցին կարևորագույն երկու կետ.

1. Հայաստանյայց եկեղեցու դավանության և ավանդության համաձայն կրոնական դաստիարակություն տալ մասնավորապես մանուկներին և պատանիներին, որպես լրացուցիչ մաս ազգային

²⁷ Աւետարան ըստ Մատթէոսի, 19:14 (Յիսուս մանուկները կ' օրհնէ):

²⁸ Սահակ Բ Կաթողիկոս, Կոնդակ կիրակնօրյա դպրոցներու մասին, Անթիլիաս, 1930:

²⁹ Հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներ, Անթիլիաս, 1994, էջ 25:

ընդհանուր կրթության և դաստիարակության: Իսկ ընդհանրապես չափահասներին ավանդել գիտելիքներ ու ծանոթություններ քրիստոնեության և մայրենի եկեղեցու վերաբերյալ:

2. Այս դաստիարակությամբ հայ ժողովրդի զավակներին գիտակից դարձնել իրենց քրիստոնեական կրոնին և մայրենի եկեղեցուն և կերտել նրանց քաղաքացիական նկարագիրը:

Հայկական գաղթօջախներում կիրակնօրյա դպրոցը սփյուռքահայ կրթական պահանջներից ծագած և նոր սերնդի ազգային-բարոյական նկարագրի կերտմանը մվիրված անհրաժեշտ ու այժմեական հաստատություն է, ուր կրթվում են հայ մանուկն ու պատանին իրենց հայրերի տոկուն հավատքով ու ազգային ինքնությունը դաստիարակությամբ:

Հայ երեխաներին կրոնական դաստիարակություն տալու կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ իր ինքնատիպ մտքերն է արտահայտել երջանկահիշատակ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ կաթողիկոսը. «Կրոնական առողջ դաստիարակութեան կարիքը այսօր արեւի քան երէկ ստիպողական անհրաժեշտութիւն մը զգեցած է արդիապաշտ կեանքի պայմաններու բերումով: Նիւթապաշտական եւ հաճոյապաշտական այս ժամանակներուն, խնդրոյ առարկա են դարձած հոգեկան արժէքները եւ բարոյական սկզբունքները: Պատմականօրէն ճշմարտած իրողութիւն է, որ ազգերը, ինչպէս անհատները, իրենց տոկունութիւնը կը պարտին իրենց հոգեւոր-բարոյական առողջութեան: Տնտեսական յառաջդիմութիւնները սոսկ առիթներ են ու ազդակ, եւ ո՛չ նպատակներ: Ահա այս հասկացողութեամբ՝ քրիստոնեական հաւատքի, Աւետարանի ճշմարտութիւններուն փոխանցումը եւ շաղախումը մեր ժողովուրդի կեանքին մէջ, բացառիկ նշանակութիւն ունեցող առաքելութիւն մըն է: Այդ ժողովուրդի կազմատրման մէջ որոշադրիչ կարեւորութիւն ունի մատղաշ սերունդի եւ երիտասարդութեան դաստիարակութիւնը: Այստեղ է, որ Կիրակնօրյա վարժարանները կոչուած են առաւել նուիրումով եւ կազմակերպական ծրագրեալ աշխատանքով հայ մանուկներուն ջամբել Քրիստոսի սուրբ հաւատքին սնունդը: Կիրակնօրյա վարժարանները մեր եկեղեցոյ կեանքին մէջ հաւաքական ընտանիք

մըն են, ուր մեր երեխաները կը ստանան այնպիսի դաստիարակութիւն մը, որով քրիստոնեական ճշմարտութիւնները կը ներթափանցեն անոնց կազմութեան մէջ եւ կը դառնան կենսականօրէն ուղղիչ ազդակներ՝ անոնց ապագայի կեանքին համար»³⁰:

Այսօր Մերձավոր Արևելքում գործում են 35 կիրակնօրյա դպրոցներ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության Միրիայի Բերիոյ թեմում՝ 13 դպրոց, Լիբանանի թեմում՝ 18, Կիպրոսի թեմում՝ 3, Զուվեյթում՝ 1:

Կիրակնօրյա դպրոցներում սովորում են 4–16 տ. երեխաները: Ուսման տևողությունը 9 տարի է: Վերջում քննություն հանձնելուց հետո տրվում է վկայական՝ տվյալ թեմի Սրբազան առաջնորդի ստորագրությամբ:

Յուրաքանչյուր թեմի առաջնորդարանում գործում է կիրակնօրյա դպրոցները համակարգող խորհուրդ՝ վարիչ տնօրենով: Թեմի ամեն մի եկեղեցի ունի իր դպրոցը: Յուրաքանչյուր դպրոց ունի իր ուսուցչական խորհուրդը և տեսուչը (տնօրեն): Ուսուցիչների մի մասը (Միրիայում գերակշռող մասը) երկրորդական վարժարանի վկայական ունի՝ մեր միջնակարգ հանրակրթական դպրոցին համարժեք, մյուս մասը՝ համալսարանական կրթություն, իսկ որոշ ուսուցիչներ աշխատում են նաև ամենօրյա հայկական դպրոցներում՝ դասավանդելով կրոն առարկան:

Կիրակնօրյա դպրոցներն աշխատում են ամեն կիրակի՝ ժամը 11–13–ը:

Կիրակնօրյա դպրոցներում դասավանդում են կրոնի պատմություն, սովորեցնում աղոթքներ, հոգևոր երգեր, շարականներ, նաև հատվածաբար ուսուցանվում է հայոց պատմություն:

Փաստորեն կիրակնօրյա դպրոցներում լիարժեք կերպով իրականացվում է կրոնական դաստիարակություն, և երեխաներին դեռ մանուկ տարիքից փոխանցվում են հոգևոր-բարոյական, պատմական և մշակութային բարձր արժեքներ՝ դրանով իսկ խորապես նպաստելով մատաղ սերնդի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, նրանց մէջ ազգային ինքնագիտակցության ոգու սերմանման:

³⁰ Գարեգին Բ կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Գիր Օրհնութեան, առ կիրակնօրեայ վարժարանս Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս, 10–ը Մոյնմբերի, 1994:

նը, լիարժեք դաստիարակությանը և հայապահպանմանը:

Կիրակնօրյա դպրոցներն ապահովված են դասագրքերով, ուրոնք կազմված են ինչպես Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության, այնպես էլ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանավորությամբ ու ջանքերով՝ Հայաստանյայց եկեղեցու կիրակնօրյա դպրոցների վարիչ տնօրենների նախաձեռնությամբ ու ուժերով:

Դասագրքերն ունեն «Կիրակնօրեայ դպրոցի դասեր» խորագիրը: Իսկ ամեն մի դասարանի համար, հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, պատրաստված է առանձին գիրք՝ համապատասխան խորագրով: Օր.՝ «Չ» (6-րդ) դասարանի համար գրված գիրքը վերնագրված է՝ «Դէմքեր եւ դէպքեր հայ եկեղեցւոյ պատմութենէն», որտեղ ընդգրկված են նյութեր, տեղեկություններ ու պատմություններ հայոց առաջին լուսավորիչների՝ Ս. Թադէոս և Ս. Բարթողիմէոս առաքյալների մասին: Սրան հաջորդում են Ս. Գրիգոր Լուսավորիչը, Մեծն Տրդատ Թագավորը, Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Հայ գրերի գյուտը, Վարդանանց պատերազմը, Ս. Գր. Նարեկացին, Ս. Ներսես Շնորհալին, Ս. Գր. Տաթևացին, Ներսես Ե. Աշտարակեցի հայրապետը, Խրիմյան Հայրիկը և ուրիշներ:

Հայ ժողովրդի պատմության մեջ այս փառահեղ զավակների ունեցած վճռորոշ, ճակատագրական ու մեծ վավերական դերակատարության մասին հայ երեխաներին հաղորդակից դարձնելը հսկայական նշանակություն է ունենում նրանց ազգային դաստիարակության, իրենց ժողովրդի անցյալն ու արմատները ճանաչելու, իրենց նախնիների ոգով սնվելու ու կրթվելու մեծ գործում:

Իսկ «Է» (7-րդ) դասարանի դասագիրքը վերնագրված է՝ «Քրիստոնեական», որտեղ ընդգրկված են հետևյալ նյութերը. ի՞նչ է կրոնը, հավատը, դավանանքը, Տիեզերական ժողովը, Ամենասուրբ երրորդությունը, եկեղեցին, մկրտությունը, հաղորդությունը, ս. պսակը, աղոթքը, պահեցողությունը, ս. պատարագը և այլն:

Այս ամենի իմացությունը, ըստ մեզ, անհրաժեշտ է յուրաքանչյուր հայ քրիստոնյային՝ ըմբռնելու և զգալու եկեղեցու խորհուրդը, հավատքի լույսն ու վեհությունը՝ որպես մարդու հոգևոր-բարոյական մաքրության և հոգու անաղարտության գրավական:

Կիրակնօրյա դպրոցների գործունեության հաջողության մեջ իրենց ծանրակշիռ տեղն ունեն աշխարհիկ ու հոգևորական ուսուցիչները, որոնց անձնական կերպարներն ամենամեծ դաստիարակիչ ազդեցությունն են ունենում երեխաների կյանքում, նրանց ձևավորման ու զարգացման գործում:

Այստեղ տեղին են հնչում եգիպտահայ մտավորական Պերճ Շիկահերի հետևյալ մտքերը. «Հոգևորական ուսուցիչները, միշտ քաղաքացիական ազատ մտայնութեան եւ ըմբռնումին համամիտ եղած են եւ մեր դպրութեան արի առաջնորդներն ու ջահակիրները հանդիսացած են: Հոգևորական ուսուցիչները իրենց աշակերտներուն առանձնապէս ցոյց տուած են կեանքի պայծառ ու առաքինի ուղին, յաջողութեան եւ յարատեւութեան լուսաւոր ճամբան, գերժ պահելով զանոնք, փորձութիւններէ, զանազան ապիկար ու խարդախ գործերէ ու ժխտական ձեռնարկներէ: Հոգևորական տիպար ուսուցիչներու շնորհիւ է, որ հաւատքի ուժն ու զօրութիւնը թափանցած են մեր ներաշխարհին, մտքին ու հոգիին մէջ: Մեր Սուրբ Եկեղեցին եւ մեր դպրոցը, մեր հոգևորականներն ու մեր ուսուցիչները, լիակատար ամբողջութիւն կը կազմեն, ազուցուած են իրարու և անբաժանելի մասնիկներն են մեր Քրիստոնեայ, կրթասեր ու պատուական ժողովուրդին»³¹:

Կրոնական դաստիարակությունը պետք է սկսել դեռ ընտանիքում, որն իր շարունակական ընթացքը պետք է ստանա կրթօջախներում՝ ինչպես ամենօրյա, այնպես էլ կիրակնօրյա դպրոցներում, քանի որ, ինչպես նշում է երջանկահիշատակ Ամենայն հայոց Գարեգին Առաջին կաթողիկոսը, «կրոնը մտքի հարց չէ: Կրոնը մարդ-էակի ներքին զգացողութեան հարց է, որը կազմավորվում է վաղ մանկութեան տարիքից»³²:

Այդ իսկ առումով, Վեհափառը չափազանց կարևորում է քրիստոնեական կրթության հարցը, որը «մարդ-էակը Աստուծոյ գիտակցութեան մէջ կ'ամրացնէ»:

Բոլոր թեմերի կիրակնօրյա դպրոցները գործում են իրենց կանոնագրության համաձայն:

³¹ Դայ եկեղեցին եւ հայ հոգևորականներու դերը դաստիարակութեան մէջ. «Արև» օրաթերթ, Կահիրէ, 1.09.1992.:

³² Դարցագրույց Գարեգին Ա. Ամենայն հայոց կաթողիկոսի հետ, Ս. Էջմիածին, 16 օգոստոսի, 1997:

Բացի կրթական և կրոնաքարոյական դաստիարակչական գործունեությունից, կիրակնօրյա դպրոցները, նրանց վարիչ տնօրինությունը իրականացնում են նաև կազմակերպչական և հրատարակչական լայն աշխատանքներ: Կազմակերպչական գործունեության մեջ ամփոփվում են ուսուցիչների համար կազմակերպված հատուկ դասընթացները, միօրյա, միշաբաթյա համագումարները, Աստվածաշնչի սերտողության ժամերը: Այստեղ ներգրավված են նաև աշակերտական հավաքները (միջթեմական)՝ կրոնական և քաղաքացիական տարբեր տոների կապակցությամբ:

Այս ամենի մեջ ծանրակշիռ տեղ ունեն մշակութային ձեռնարկները՝ ի նպաստ հոգևոր գրականության և մշակութային երևույթների տարածմանն ու զարգացմանը՝ Թարգմանչաց տոն, մայրերի օր, ասմունքի, ազգային պարերի, երգերի երեկոներ և այլն:

Հրատարակչական աշխատանքներն ընդգրկում են ինչպես դասագրքերը, այնպես էլ մանուկների համար սուրբ գրային ավետարանական դրվագներով գեղատիպ ու գունազարդ գրքույկները, հայ եկեղեցու սրբերին և ազգային սեծ հերոսներին նվիրված հրատարակությունները, Հիսուս Քրիստոսի կյանքը երեք հատորով, սեղանի փոքրիկ օրացույցները, «Նոր Դրագարկ» պաշտոնաթերթը (1984-ից), կիրակնօրյա դպրոցների ուղեցույց-ծրագիրը, շարականների, երգերի և աղոթքների ծաղկաքաղը, ուսուցիչների համար ուղեցույցներ և այլ գործեր:

Այս ամենը վկայում է կիրակնօրյա դպրոցների աշխատանքի առողջ ու անխափան դիման ու հեքը, նպատակասլաց, ազգանպաստ, քրիստոնեապաշտ գործին նվիրվածությունն ու հավատարմությունը: Եվ այս գործին իր սեծ աջակցությունն է բերում Հայաստանյայց եկեղեցիների կիրակնօրյա դպրոցների օժանդակ միությունը՝ (ՀԵԿԴՕՄ-ը, ստեղծվել է 1950 թ.), որի հիմնական նշանաբանն է. «Արդ, դուք կատարեալ եղեք, ինչպես որ ձեր երկնատր Հայրը կատարեալ է»³³:

ՀԵԿԴՕՄ-ի հիմնական նպատակն է աջակցել և օգնել կիրակնօրյա դպրոցներին, որպեսզի համատեղ աշխատանքով հնարավոր

լինի միշտ կանգուն պահել կիրակնօրյա դպրոցն ու նրա շուրջը համախմբված երիտասարդական կազմակերպությունները:

ՀԵԿԴՕՄ-ի առաքելությունն է հայ երկսեռ երիտասարդությանը միշտ կապված պահել իր եկեղեցուն և նրա սուրբ ավանդություններին ու սովորություններին, որպեսզի նրանք լինեն հավատարիմ Հայ առաքելական եկեղեցու դավանությանն ու վարդապետությանը: Միությունն իր ձեռնարկած դաստիարակչական, ընկերային, մարզական, թատերական ձեռնարկներով սատարում է հայ երիտասարդների բարոյական նկարագրի կերտմանը:

Կիրակնօրյա դպրոցների գործունեության վերաբերյալ խիստ բնութագրական են հնչում Սեպուհ Ծ. վրդ. Սարգսյանի հետևյալ իմաստալից մտքերը. «Հայոց Եկեղեցույ Կիրակնօրեայ Դպրոցները իրենց երախտարժան ծառայութեամբ կը հանդիսանան այն դարբնոցը, ուր թրծուեցաւ ու կը թրծուի հայ մանուկին սիրտն ու հոգին լուսատրչեան կենդանի հաւատքով ու մեսրոպաստեղծ աստուածապարգեւ տառերով: Ան այն ոսկեայ կամուրջն է որով այսօրուան հայ պատանին յարատեւ կապի ու միութեան մէջ կը պահէ իր երանաշնորհ հայրերուն հետ: Օրինասփիռ կրօնա-կրթական այս հաստատութիւնը ձուլարան է ու հրաշագործ տաճար, ուր իրօք «կապարն յոսկի եւ միւսն յոգի կդառնան»: Կիրակնօրեայ դպրոցները եղան նաև ջատագովները հայ ժողովրդի համազգային զգացումներուն, երազներուն եւ տեսիլքներուն: Աւետարանական իրենց դաստիարակութեամբ եղան ազգի միութեան, ամբողջական միութեան սատարող այն հաստատութիւնները, որոնք կրցան իրենց շրջապատին մէջ ըլլալ «անլռելի զանգակատուն»՝ անդադար դողանջելով բաղձացուած միութիւնը հայ ժողովրդի բոլոր զաւակներուն եւ տարածելով քրիստոնեական անադարտ սէրը հայ ժողովուրդի ընտանիքներէն ներս»³⁴:

«Եկեղեցի-ժողովուրդ-դպրոց» անբաժանելի եռամիասնությունը մեր ազգի գոյապահպանման այն ամրակուռ բերդն է, որն անսասան մնաց տարաբնույթ և բազմաթիվ հարվածների ու վտանգների պայմաններում: Եկեղեցին դարձավ ժողովրդի հենարանը, վաղվա հույսը, արդարության, բարության, լույսի ու հավատի գրավակամը:

³³ Աւետարան ըստ Մատթեոսի (Սարի վերայ Քրիստոսի քարոզը), Ե. 48:

³⁴ Հայաստանեայց եկեղեցույ կիրակնօրեայ դպրոցներ. Անթիլիաս, 1994, էջ 17, 24:

Հայ եկեղեցու խորախորհուրդ ինքնությունը և նրա համապար-
փակ գործունեությունը բնութագրող ինքնատիպ մտքեր են պարու-
նակում հոգևորական մեծ մանկավարժ, երջանկահիշատակ Անե-
նայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի հետևյալ խոսքերում.
«Եկեղեցին ժողովուրդն է հաւատքին մէջ միացած, հայօրէն ապրող
եւ մեր ազգային ինքնութիւնը հոգեւոր այս հարստութեան մէջէն ար-
տահայտող: Եկեղեցին համահաւաքոյթն է, միասնութիւնն է բոլոր ա-
նոնց, որոնք կը հաւատան ի Քրիստոս, հայօրէն, Լուսաւորչօրէն,
Մեսրոպաբար, Վարդանաբար»³⁵:

Գլուխ չորրորդ

ԼԻՔԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

**§ 4.1. Լիբանանի հայկական գաղթօջախը: Լիբանանահա-
յության ակտիվ մասնակցությունը Լիբանանի պե-
տական և փոփոխական կառավարման, երկրի և հա-
սարակության զարգացման գործընթացին**

Հայկական գաղթօջախների պատմությունն առանձին-ա-
ռանձին և միասնաբար վճռական ներգործություն է ունե-
ցել հայ ժողովրդի ամբողջական պատմության վրա: Միանգամայն
տեղին ու արդարացի են հնչում ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի
հետևյալ խոսքերը. «Հայկական գաղութների անցեալն ու ներկան
հայոց պատմագիտութեան թույլ ուսումնասիրուած ասպարէզներից
է: Եվ դա հասկանալի է: Միայն վերջին տասնամեակներում հնարա-
ւոր դարձաւ շրջադարձ կատարել դէպի պայմանների բերումով
պատմագիտութեան կողմից անտեսուած այս բնագավառը: Տարա-
կույս չի կարող լինել, որ առաջիկայում գաղթավայրերի պատմու-
թեան խոր ու մանրախոյս, միաժամանակ լայն յետնախորքի վրայ
հետազօտական աշխատանքների ծավալումը արգասատր արդիւնք-
ների կը յանգեցնի եւ մեզ անձանօթ նոր ծալքեր կարող է բացել ու նոր
երանգներով կը հարստացնի հայոց պատմությունը»³⁶:

Անենկին նպատակ չհետապնդելով ներկայացնել Լիբանանի
հայկական գաղթօջախի ամբողջական պատմությունը, այնուամե-
նայնիվ, հետևելով մտքի տրամաբանական զարգացման ընթացքին
և հայկական դպրոցների պատմությունը դիտելով գաղթօջախների

³⁵ Գարեգին Ա. Կաթողիկոս ամենայն հայոց, Անցեալն անցած չէ..., Անթիլիաս, 1991, էջ 141:

³⁶ Բարխուդարյան Վլ., Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Եր., 1996, էջ 19:

պատմության անբաժանելի մասը՝ կցանկանալինք ամփոփ ներկայացնել Լիբանանի գաղթօջախի ստեղծման պատմական նախադրյալները և նրա պահպանման հիմնական գործոնները:

Լիբանանը, որտեղ դարեր ի վեր կազմավորվել է հայկական գաղութը, Մերձավոր Արևելքի արաբական պետություն է՝ փոխած Միջերկրական ծովի ափին, ընդամենը 10.4 հազար քառ. կմ տարածքով և մոտ 2 մլն բնակչությամբ, որից 90%—ը արաբներ են, մնացածը՝ հայեր, քուրդեր, քրդեր, քուրքմեններ, չերկեսներ, հրեաներ, հնդկացիներ և այլն: Մայրաքաղաքը Բեյրութն է, պետական լեզուն՝ արաբերենը:

Լիբանանն էլ Հայաստանի նման մի քանի դարերի ընթացքում գտնվել է գաղութային լծի տակ՝ դառնալով մեծ տերությունների հակամարտության օբյեկտ: Սա, բնականաբար, բացասաբար է անդրադարձել ոչ միայն երկրի տնտեսության, այլև մշակույթի զարգացման վրա՝ պատճառելով երբեմն մաս անդառնալի վնասներ:

Հայությունը, ինչպես վերը նշվեց, Լիբանանում ապրող ազգային փոքրամասնություններից է: Այսօր որոշակի հնարավոր չէ նշել, թե երբ է սկզբնավորվել հայկական գաղութը Լիբանանում, քանի որ պատմական տարբեր աղբյուրներ նշում են, որ մեր թվարկության առաջին դարերից սկսած արդեն հայերը լայն շփումներ են ունեցել Մերձավոր Արևելքի երկրների ժողովուրդների հետ: Այդ շփումները տարբեր պատճառներով ու նպատակներով շարունակվել են դարաշրջաններ: Սակայն կայուն գաղթօջախ չի ստեղծվել: Լիբանանում հայտնված հայերը, որոնք չեն ապրել խմբերով, ժամանակի ընթացքում ձուլվել են տեղի բնակչությանը՝ կորցնելով լեզուն, հավատը և ազգային մյուս որակները:

Սրան հաջորդում են հայերի բավականին հոծ արտագաղթերը Լիբանան Կիլիկյան թագավորության կործանումից և 1895 թ. համիդյան կազմակերպված ջարդերից հետո:

Իսկ 1915–1916 թթ. հայկական մեծ կոտորածներից և Առաջին համաշխարհային պատերազմից հետո քուրքական յաթաղանից մազապուրծ տասնյակ հազարավոր հայեր ապաստանեցին Լիբանանում և Սիրիայում: Թե թվով ինչքա՞ն հայություն էր գաղթել այդ երկրներ, ստույգ տեղեկություններ չկան: Պատմական տարբեր աղբյուրներ

տարբեր տվյալներ են տալիս: 1924 թ. «Սիրիահայ տարեցույցում» նշվում է, որ Բեյրութում կար 15000 հայ, իսկ միայն Հալեպում՝ 48000³⁷: Իսկ «Հայաստանի կոչնակ»-ում տրվում է, որ 1925–ին Սիրիայում և Լիբանանում եղել է մոտ 150000 հայ³⁸:

Ի տարբերություն մյուս ժամանակներում Լիբանանում բնակություն հաստատած հայերի՝ XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայտնի իրադարձությունների հետևանքով Լիբանան ապաստանած հայերը ապրում էին հավաքական կյանքով՝ կառուցում եկեղեցիներ, բացում դպրոցներ, ստեղծում հասարակական և բարեգործական կազմակերպություններ, հրատարակում թերթեր, որոնք, իրավամբ, համարվում են գաղութի կազմավորման, գոյատևման և հայապահպանման հզոր կռիվներ:

Հայերը, բնակություն հաստատելով օտար երկրում, այս պարագայում Լիբանանում, արագ հարմարվում են տեղական պայմաններին, սովորում են նրանց լեզուն (արաբերենը), յուրացնում սովորույթներն ու բարքերը՝ դրանով իսկ նպաստելով իրենց նոր կարգավիճակին հարմարվելու գործին՝ խուսափելու համար որոշ բարդություններից:

Իհարկե, անհրաժեշտ է շեշտել, որ Լիբանանում հայերի նոր պայմաններին հարմարվելուն խորապես նպաստել է մաս արաբ ժողովրդի բավականին բարյացակամ վերաբերմունքը: Հայերին իրենց երկրում ապաստան տալով՝ արաբները նրանց տվել են ազատություն առևտրական, հասարակական, կրթամշակութային գործունեություն իրականացնելու համար: Անառարկելիորեն փաստենք, որ առանց դրանց հայկական գաղթօջախը չէր կարողանա գոյատևել և զարգանալ:

Ի գնահատումն արաբների այսպիսի վերաբերմունքի՝ հայերը Լիբանանի համար ճակատագրական պահերին (ազատագրական շարժում, պատերազմ և այլն) միշտ եղել են արաբների կողքին և պայքարել իրենց երկրորդ հայրենիքի ազատության և անվտանգության համար:

³⁷ Սուրիահայ տարեցույց, Հալեպ, 1924:

³⁸ Հայաստանի կոչնակ, 1925, էջ 794:

Արաբների ուսման հայերի հավատարմությանն ու դրսևորած խիզախություններին են վերաբերում Լիբանանի (1943 թ.) կառավարության նախագահ Ռիադ Սուլիի հետևյալ մտքերը. «Ես հայերի ներկայությունն այս երկրում ընդունում եմ գրկաբաց և առանձին հաճույքով: Նրանք այս երկրի անկախությունը գուցե մեզմից ավելի լավ պաշտպանեն: Որովհետև նրանք երկար ժամանակ ապրել են բռնության տակ, պայքարել և զոհվել են անկախության համար, հետևաբար լավ գիտեն անկախության արժեքը: Իմ կառավարության սիրտը բաց է հայերի համար: Ես անելու եմ ինչ հնարավոր է, որպեսզի հետ այսու նրանք ավելի լայնորեն մասնակցեն կառավարական գործերին»³⁹:

Ավելին, հայերն իրենց առևտրատնտեսական, արդյունաբերական և գիտամշակութային գործունեությամբ նպաստել են Լիբանանի տնտեսության և մշակույթի զարգացմանը:

Լիբանանի հայերի մասին հավուր պատշաճի գնահատանքի մտքեր են պարունակում Լիբանանի 1950–ական թվականների խորհրդարանի նախագահ Ադել Օսեյրանի հետևյալ խոսքերում. «Ես անձնապես կգնահատեմ հայ ժողովուրդը... հայերը Լիբանանին մեջ յառաջդիմութեան, արեստի, ճարտարեստի, գիտութեան և կեանքի բոլոր մարզերում մեջ օրինակներ հանդիսացած են մեզի, հիացումով միայն կրնամ խոսիլ հայերու մասին»⁴⁰:

Հայերն իրենց ակտիվ մասնակցությունն են բերել նաև երկրի քաղաքական և հասարակական կյանքում: Դրա վառ ապացույցն է այն փաստը, որ, Լիբանանի անկախացումից հետո հայերն ունեն իրենց ներկայացուցիչներն ինչպես երկրի խորհրդարանում (պատգամավորներ), այնպես էլ կառավարությունում (նախարարներ):

Սա արաբների կողմից հայերի բարձր արժևորումն ու գնահատումն է, ինչպես նաև իրենց երկրում ազգային փոքրամասնությունների հանդեպ նրանց վարած ճիշտ քաղաքականությունը:

Այստեղ հարկ է նշել, որ Լիբանանը համայնքային երկիր է: Եվ երկրում ապրող ազգերը իշխանություններում ներկայացված են ըստ իրենց կրոնական հավատքի:

³⁹ Ժողովրդի ծայն, 1 դեկտեմբերի, Բեյրութ, 1943:

⁴⁰ Արարատ, 2 սեպտեմբերի, 1953:

Երկրում համայնքային դրությունը տալիս է ինքնավարության և բոլոր ոլորտներում ազատ գործունեության հնարավորություն՝ իհարկե, երկրի օրենքների շրջանակներում:

Հայերը Լիբանանում ներկայացված են երեք համայնքով. հայ առաքելական, հայ ավետարանական և հայ կաթոլիկ:

Ի հավելումն սրան՝ նշենք, սակայն, որ հայերի՝ երեք համայնքների շրջանակներում գործելը, ըստ մեզ, կարող է վտանգել հայերի միասնականությունը գաղութներում և տարանջատել նրանց ուժերը, քանի որ մեր անմիջական դիտարկումները փաստեցին, որ բավականին թույլ են Լիբանանի հայկական երեք համայնքների միջև եղած աղերսներն ու համագործակցությունը:

Անառարկելի ճշմարտություն է, որ սփյուռքահայության միասնականության և զոյատևման համար «Մեկ ազգ — մեկ մշակույթ — մեկ եկեղեցի — մեկ հայրենիք» սկզբունքը պետք է ընդունել որպես հիմք:

Յուրաքանչյուր պատմաբան, որն արդեն գրել կամ գրելու է Լիբանանի հայկական գաղթօջախի պատմությունը և ներկան, բնականաբար պարտավոր է առանձին-առանձին անդրադառնալ երեք համայնքների կյանքին ու գործունեությանը՝ միաժամանակ նշելով նրանցից յուրաքանչյուրի ներդրումը գաղութի ընդհանուր կյանքում ու նրա զարգացման գործում:

Վերը նշեցինք ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի այն միտքը, որ բավարար չափով չի ուսումնասիրված հայկական գաղթօջախների պատմությունը: Սրան կարող ենք հավելել, որ առավել չուսումնասիրված է սփյուռքի կրթօջախների պատմությունը, ըստ արժանվույն չի արժեքավորված սփյուռքի մեր գաղթօջախներում ստեղծված կրթական և մշակութային բազում արժեքներ, հավուր պատշաճի չի գնահատված կրթամշակութային օջախների մեծ դերն ու նշանակությունը հայապահպանության գործում:

Սույն ուսումնասիրությունը գալիս է հնարավոր սահմաններում լրացնելու ստեղծված բացը, արժանին մատուցելու Լիբանանի հայախոժ գաղթօջախի պատմության մեջ, ընդհանրապես, և կրթամշակութային ասպարեզում, մասնավորապես, պատմական մեծ ու ան-

զնահատելի և ազգանվեր դերակատարություն ունեցած և ունեցող հայկական ամենօրյա դպրոցներին թե՛ Բեյրութում և թե՛ Լիբանանի հայահոծ մյուս քաղաքներում ու գյուղերում:

§ 4.2. Հայկական ամենօրյա դպրոցները Լիբանանում կարգավիճակը, կրթության բովանդակությունը, պեդագոգական և հայկական ուսումնական ծրագրերի համադրումը

Լիբանանում, մասնավորապես Բեյրութում հայկական դպրոցներ բացվել են դեռևս XIX դարի 50–60–ական թվականներին: Ըստ Կ. Սանջյանի «The Armenian Communities in Syria» գրքի տեղեկությունների՝ Բեյրութում հայկական ծխական դպրոցը բացվել է 1859 թ. Ս. Նշան վանքի շրջանակում: Դպրոցին կից գործել է նաև մանկապարտեզ: Նմանատիպ դպրոցներ են բացվել նաև Լիբանանի մյուս հայահոծ շրջաններում⁴¹:

Իսկ 1923 թ. «Արև» օրաթերթի տվյալներով առաջին հանրակրթական հայկական դպրոցները Լիբանանում բացվել են գաղթավայրերում: 1922–ին սկսում են գործել Սին Էլ Ֆիլի (Բեյրութ) Արամյան, Էշրեֆիեի (Բեյրութ) ավետարանական, Չահլեի Պալըքճյան և մի քանի այլ դպրոցներ վրանների տակ:

1923–1932 թթ. մեկը մյուսի հետևից բացվում են դպրոցներ թե՛ առաքելական, թե՛ ավետարանական և թե՛ կաթոլիկ համայնքների ու եկեղեցիների հովանավորությամբ ու աջակցությամբ:

Ըստ 1930 թ. «Ազդակի» տպագրած տեղեկության՝ Լիբանանում արդեն գործում էին 29 հայկական դպրոց, որից 16–ը պատկանում էր հայ առաքելական, 8–ը՝ հայ կաթոլիկ և 6–ը՝ հայ ավետարանական համայնքին⁴²:

Հայ առաքելական եկեղեցու հովանու տակ Բեյրութում բացված դպրոցների մեծամասնությունը գտնվում էր Անդր Նահրի կամ

⁴¹ K. Sanjian, The Armenian Communities in Syria, Cambridge, 1965, p. 84.

⁴² «Արև», 28 հուլիսի, 1923:

Բուրջ Համուդ հայահոծ շրջանում, որն առ այսօր էլ պահպանել է իր հայկականությունը՝ իր դպրոցներով, եկեղեցիներով, առաջնորդարանով, մշակութային կենտրոններով, իր մարզադաշտով, հայ քաղաքապետով ու հայ ոստիկաններով, տներից, խանութներից ու արհեստանոցներից լավող հայկական երգով, փողոցներում ու բակերում խաղացող հայ երեխաների ճովոլոյունով: Իրավամբ, Բեյրութի Բուրջ Համուդ թաղամասը հիշեցնում է մի փոքրիկ Հայաստան՝ իր կոլորիտով, վարք ու բարքով ու սովորույթներով:

Այդուսակ 1–ում ներկայացնում ենք «Ազդակ»-ի 1932 թ. հոկտեմբերի 14–ի համարում տպագրված տվյալները Բուրջ Համուդում գործող ազգային վարժարանների մասին:

Այդուսակ 1.
Բուրջ Համուդի ազգային վարժարանները

Դպրոցներ (վայրը)	1932 թվական սովորողների թվաքանակը	Ուսուցիչների թվաքանակը
1. Նոր Մարաշ ա. նախակրթարան բ. մանկապարտեզ	ա. - 90 բ. - 141	ա. - 4 բ. - 3
2. Լուսավորչի թաղ ա. նախակրթարան բ. մանկապարտեզ	ա. - 88 բ. - 80	ա. - 4 բ. - 1
3. Թրառ ա. նախակրթարան բ. մանկապարտեզ	ա. - 15 բ. - 30	ա. - 1 բ. - 1
4. Նոր Սիգ ա. նախակրթարան բ. մանկապարտեզ	ա. - 15 բ. - 60	ա. - 1 բ. - 1
5. Սին Էլ Ֆիլի ա. նախակրթարան բ. մանկապարտեզ	ա. - 10 բ. - 22	ա. - 2 բ. - 1

1930–ական թվականներին Լիբանանի հայկական դպրոցները գտնվում էին անմխիթար վիճակում թե՛ տնտեսական և թե՛ ուսումնական ու կադրային հարցերում: Համեմատաբար առավել բարվոք վիճակում էին հայ կաթոլիկ և հայ ավետարանական դպրոցները:

Նրանք Հոռմից և Ամերիկայից ստանում էին դրամական աջակցություն, որից, սակայն, զրկված էին ազգային (առաքելական) վարժարանները:

Չնայած այս ամենին՝ 1940–50-ական թվականներին Լիբանանում հայ կրթական գործը զարգացում էր ապրում. բացվում էին նոր դպրոցներ, ավելանում էր աշակերտության թիվը: Ստեղծվում էր դպրոցական մեծ ցանց, որը հսկայական դեր էր կատարում լիբանանահայ երեխաների հայեցի կրթության և դաստիարակության գործում:

Աղյուսակ 2-ում ներկայացնում ենք 1951 թ. «Չարթոնք»-ում գետեղված վիճակագրական տվյալները Լիբանանի հայկական դպրոցների մասին.

Աղյուսակ 2.

Լիբանանի հայկական դպրոցները 1951 թ.

	Չամայնքներ /1950-51թթ./	Դպրոցների թիվ	Սովորողների թիվ
1.	Չայ առաքելական	28	6834
2.	Չայ կաթոլիկ	11	2723
3.	Չայ ավետարանական	12	2452

Վերոհիշյալից պարզ երևում է, որ Լիբանանի հայկական դպրոցների կեսից ավելին պատկանում է հայ առաքելական համայնքին: Նշենք նաև, որ դրանց մեծ մասը գտնվում է Բեյրութում:

Այս ժամանակաշրջանի հայկական ամենօրյա դպրոցների մասին ընդհանուր և համապարփակ պատկերացում կազմելու համար փաստենք հետևյալը. երեք համայնքների դպրոցներում գործում են կրթական տարբեր ծրագրեր:

Հայ ավետարանական համայնքի դպրոցները հետևում էին անգլիական և ամերիկյան համապատասխան դպրոցների ծրագրերին, հայ կաթոլիկ համայնքի դպրոցները՝ ֆրանսիական: Իսկ հայ առաքելական համայնքին պատկանող դպրոցները (բացի Նշան Փալանջյան ճեմարանից) չունեին միասնական կրթական ծրագրեր: Յուրաքանչյուր դպրոց անջատաբար կիրառում էր իր որդեգրած ծրագիրը՝ դրանով իսկ վնասելով կրթական գործի նպատակի և պահանջների միասնականությանն ու որակին: Այս երևույթն, ի դեպ, շա-

րունակվել է մինչև 60-ական թվականները: Միայն 1961 թ. է Լիբանանի թեմի ուսումնական խորհուրդը կազմել և հրատարակել հայ ազգային վարժարանների միասնական կրթական ծրագիր: Սույն ծրագիրը վավերացվել է Լիբանանի թեմի պատգամավորական գավառական ժողովի կողմից 1961 թ. ապրիլի 26-ի 7-րդ նիստում:

Հայ ազգային վարժարանների միասնական ծրագիրն ընդգրկում է մի քանի պրակներ.

Ա պրակ — Ընդհանուր սկզբունքներ:

Ըստ ուսումնական խորհրդի որոշման՝ ազգային վարժարանները կարող են ունենալ հետևյալ երեք բաժինները.

1. Մանկապարտեզ

Մանկապարտեզն էլ իր հերթին բաժանվում է երեք դասարանների՝

ա. բողբոջ կամ կապույտ դասարան, (4-ից 5 տարեկան երեխաներ),

բ. կոկոն կամ կանաչ դասարան, (5-ից 6 տարեկան երեխաներ),

գ. ծաղիկ կամ դեղին դասարան, (6-ից 7 տարեկան երեխաներ):

2. Նախակրթարան (տարրական)

Ազգային դպրոցների նախակրթարանները հնգամյա էին և պատրաստում էին լիբանանյան պետական վկայականին (սերտիֆիկատին): Նշենք, որ 1998 թվից Լիբանանում նախակրթարանները դարձան վեցամյա տևողության, որոնց մասին կխոսենք ավելի ուշ:

Նախակրթարանի Ա-ից Ե դասարաններում սովորում են 7–12 տարեկան երեխաները: Հիմներորդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների համաձայն տրվում է պետական սերտիֆիկատ (վկայական):

3. Բարձրագույն նախակրթարան (միջնակարգ)

Բարձրագույն նախակրթարանն ընդգրկում է ուսումնառության չորս տարի (Չ, Է, Ը, Թ-դասարաններ): Համաձայն պետական ծրագրի՝ այն պատրաստում է ֆրանսիական կրթական ծրագրի՝ բրյովեի քննություններին: Ուսուցումը տարվում է ֆրանսերեն:

Այստեղ նշենք, որ ազգային վարժարաններում դասավանդվող եվրոպական առաջին լեզուն ֆրանսերենն է, որի ուսուցումը սկսվում է նախակրթարանի երկրորդ դասարանից: Իբրև երկրորդ եվրոպական լեզու՝ դասավանդվում է անգլերենը, որի ուսուցումը սկսվում է չորրորդ դասարանից:

Ուսումնական ծրագրի Ա պրակում տրվում է նաև նախակրթարանում և բարձրագույն նախակրթարանում (միջնակարգում) դասավանդվող առարկայացանկը և ամեն մի դասարանի դասաժամերի շաբաթական ծանրաբեռնվածությունը:

Կրթական միասնական ծրագրի Բ պրակն ընդգրկում է մանկապարտեզի ծրագրային նյութը՝ ըստ դասարանների: Յուրաքանչյուր դասարանի համար նշվում են նպատակը, խնդիրները, առաջադրանքները:

Ծրագրի Գ պրակը վերաբերում է նախակրթարանի (Ա-Ե, Զ-լրացուցիչ) կրոնագիտական դասանյութերին՝ նշելով նպատակը և ընդհանուր թելադրանքները:

Ծրագրի Դ պրակում տրված է նախակրթարանի և միջնակարգի (Ա-Թ դասարաններ) հայերենի ծրագրային նյութը (ըստ դասարանների) և շաբաթական ժամաքանակը:

Կրթական ծրագրի Ե պրակն ամփոփում է ազգային պատմության ծրագրային դասանյութերը՝ ըստ դասաժամերի և ժամաքանակի, ընդգրկում է և՛ նախակրթարանի և՛ միջնակարգի բոլոր դասարանները:

Այսպիսով, 1961 թ. ստեղծված կրթական միասնական ծրագիրը համակարգեց և միասնական գործունեության մղեց ազգային վարժարաններին: Այն խորապես նպաստեց դպրոցների ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, դրանց կազմակերպմանն ուղղված պահանջների ու նպատակների միասնականությանը:

Լիբանանի ազգային վարժարանները

Այս գլխի սկզբում մենք նշեցինք, որ Լիբանանը համայնքային երկիր է, և այնտեղ ապրող ազգային փոքրամասնությունները պետական կառույցներում գրանցված են ըստ իրենց կրոնական պատկանելության (դավանանքի):

Հայերը Լիբանանում ներկայացված են 3 համայնքով՝ Հայ առաքելական, Հայ կաթոլիկ և Հայ ավետարանական հարանուն եկեղեցիներով ու հավատացյալներով: Հետևաբար հարկ ենք համարում Լիբանանում գործող հայկական ամենօրյա դպրոցները ներկայացնել ըստ համայնքների՝ խոսքը համակարգված ու համեմատության եզրերով մեկնաբանելու համար:

Որպեսզի հստակ պատկերացում կազմենք Լիբանանում գործող հայկական ամենօրյա դպրոցների իրականացրած կրթադաստիարակչական, մշակութային և հայապահպանական համապարփակ գործունեության մասին, անհրաժեշտ է աղերսներ ու տրամաբանական կապ տանել Լիբանանի կրթական համակարգի հետ, որի կառույցի մեջ են նրանք (հայկական դպրոցները): Ուստի նպատակահարմար ենք գտնում նախապես տալ համառոտ պատմական ակնարկ Լիբանանի կրթական համակարգի ձևավորման ու առանձնահատկությունների մասին:

Մի քանի դարերի ընթացքում Լիբանանը գտնվել է գաղութային լծի տակ՝ դառնալով մեծ տերությունների հակամարտության առարկա: Սա բացասաբար է անդրադարձել ոչ միայն տնտեսության, այլ նաև ազգային մշակույթի զարգացման վրա: Լիբանանի գաղութային վիճակը հատկապես կործանարար է անդրադարձել երկրի կրթության վրա:

Խալիֆաթական և թուրքական բռնապետության ժամանակաշրջանում կրթությունը գտնվում էր մուսուլման (իսլամ) հոգևորականության ձեռքերում:

Սակայն Վատիկանը, ցանկանալով Լիբանանում քրիստոնեություն տարածել, օժանդակում է կաթոլիկ հոգևորականության միսիոներական գործունեությանը:

XVI դարի երկրորդ կեսին միսիոներական գործունեությանը ներգրավվեցին ճիզվիտները: Սակայն իսլամը շարունակում էր մնալ քրիստոնեության ուժեղ մրցակիցը:

Մինչև XIX դարը երկրում գործում էին մուսուլմանական հոգևորական և կաթոլիկ միսիոներական դպրոցներ և քոլեջներ:

XIX դարի սկզբին երկրում ի հայտ եկան առաջին աշխարհիկ դպրոցները: Դա կապված էր լիբանանյան լուսավորիչների տարած պայքարի հետ, որոնք գտնում էին, որ արաբ ժողովրդի վերածնունդը կախված է նախ և առաջ նրա շարքերում լուսավորության տարածումից:

Գաղութատիրության շրջանում ամերիկացի և ֆրանսիացի միսիոներները Լիբանանում հիմնեցին բավականին մեծ թվով միջնակարգ և բարձրագույն դպրոցներ, որոնցից շատերը գործում են մինչև օրս: Դրանց թվում են Բեյրութի ամերիկյան համալսարանը (հիմն. 1866 թ.), Սուրբ Իոսիֆի համալսարանը (1881 թ.), Միջագային քոլեջը (1891 թ.) և այլն: Բոլոր այս ուսումնական հաստատությունները նպաստեցին երկրում գրագիտության տարածմանը և կադրերի պատրաստմանը: Սակայն ուսուցման գաղափարական ուղղվածությունը չէր համընկնում Լիբանանի ժողովրդի շահերին: Այսպես՝ ֆրանսիական կրթօջախներում ուսուցումը տարվում էր Ֆրանսիայում գործող ծրագրերով և դասագրքերով: Արդյունքում Լիբանանի երիտասարդությունն ավելի լավ գիտեր Ֆրանսիայի պատմությունն ու աշխարհագրությունը, քան իր երկրինը:

Բացի դրանից, մեծ ուշադրություն էր դարձվում հումանիտար և կրոնական ուսումնական առարկաներին՝ բնագիտականի և տեխնիկականի հաշվին, որը և հանգեցրեց այդ բնագավառի մասնագետների բացակայությանը:

Անկախության նախօրյակին երկրի կրթօջախների 85%-ը մասնավոր էին, ընդ որում, դրանց մեծ մասը գործում էր տարբեր օտար կազմակերպությունների միջոցներով:

1943 թ. Լիբանանը, պայքար տանելով թուրքական, ապա ֆրանսիական գաղութատիրության դեմ, ձեռք բերեց քաղաքական անկախություն:

Պետական անկախություն ձեռք բերելուց հետո, ավելացավ պետական կրթօջախների և նրանցում սովորողների թիվը: Սկսվեց մասնագետների պատրաստումը Լիբանանի (ազգային) պետական համալսարանում: Չնայած այս ամենին՝ երկրում ազգային կրթական համակարգի կողքին շարունակում են գործել ֆրանսիական և ամերիկյան (անգլ.) կրթական համակարգերը:

Լիբանանի կառավարությունը ջանում է հսկողություն իրականացնել մասնավոր դպրոցների գործունեության վրա: Վերջին տարիներին կրթության նախարարությունը կարողացել է մշտական հսկողություն սահմանել քննությունների անցկացման կարգի և ուսումնական ծրագրերի ու դասագրքերի վրա:

Չնայած այս ամենին, այնուամենայնիվ, մասնավոր (այդ թվում և հայկական) և օտար դպրոցները դեռևս օգտվում են բավականին մեծ ինքնավարությունից:

Մինչև 1999 թ. Լիբանանի տարրական դպրոցները հնգամյա էին, 1999-ից դարձան վեցամյա:

Լիբանանում գործող ներկայիս դպրոցներն ունեն կրթական երեք աստիճան.

1. նախակրթարան — 1-ից 6-րդ դասարաններ, (մեզ մոտ՝ տարրական դպրոց),

2. ոչ լրիվ միջնակարգ դպրոց — 7-ից 9-րդ դասարաններ (հիմնական դպրոց),

3. երկրորդական կամ լրիվ միջնակարգ դպրոց — 10-ից 12-րդ դասարաններ (ավագ դպրոց):

Նախակրթարանում, որտեղ ուսուցումը 6 տարի է, դասավանդվում են կրոն, մայրենի և օտար լեզու (անգլ. կամ ֆրանսերեն), քաղաքացու իրավունքներ ու պարտականություններ, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն, հիգիենա, նկարչություն:

Ոչ լրիվ միջնակարգ դպրոցում (ուսուցումը 3 տարի) ուսուցանվում են կրոն, արաբերեն և օտար լեզուներ, պատմություն, աշխարհագրություն, քաղաքացիական իրավունք, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, հիգիենա: 9-րդ դասարանում շրջանավարտներին տրվում է վկայական (սերտիֆիկատ):

Երկրորդական վարժարանում (լրիվ միջնակարգ դպրոցում) ուսուցումը դարձյալ 3 տարի է: Ուսումնական ծրագրերն ընդգրկում են նույն առարկաները, ինչ որ ոչ լրիվ միջնակարգում և հումանիտար մի քանի առարկա. գրականություն, փիլիսոփայություն, տրամաբանություն, սոցիոլոգիա:

Լրիվ միջնակարգ դպրոցում իրականացվում է ֆրանսիական կրթական համակարգը, ըստ որի՝ ուսման 2-րդ տարվա վերջում սովորողները հանձնում են քննություններ բաքալավրի աստիճանի առաջին մասի համար՝ հումանիտար կամ բնագիտական թեքումով: Երրորդ տարվա վերջին տրվում են քննություններ բաքալավրի աստիճանի 2-րդ մասի համար, որը հնարավորություն է տալիս ուսումը շարունակելու բուհում:

Միջնակարգ մասնագիտական դպրոցները, հատկապես տեխնիկականը, բացվել են Լիբանանի անկախությունից հետո: Ուսուցումն այնտեղ 3 տարի է: Տեխնիկական կրթություն տալիս են արհեստաց ազգային դպրոցները, որոնք պատրաստում են միջին որակավորման մասնագետներ շինարարության, մեխանիկայի, քիմիական արտադրության և քաղաքացիական տեխնիկայի բնագավառների համար:

Արհեստների դպրոցները պատրաստում են էլեկտրիկներ, մեխանիկներ, գորգագործներ և այլն: Գործում են նաև կանանց տնայնագործական դպրոցներ: Միջնակարգ դպրոցների համար մանկավարժական կադրեր է պատրաստում Լիբանանի համալսարանին կից գործող մանկավարժական քոլեջը:

1960-ին մտցվեց անվճար ուսուցում բոլոր պետական տարրական դպրոցներում (նախակրթարաններում), սակայն Լիբանանում գործող կրթօջախների գերակշռող մասը դեռևս մնում էր մասնավորը: Լիբանանի կրթության զարգացման և կադրերի պատրաստման հարցում աջակցություն էին ցույց տալիս արաբական մյուս պետությունները. Կահիրեի, Ալեքսանդրիայի համալսարաններում սովորում էին հազարավոր լիբանանցի ուսանողներ:

Այսօր արդեն լիբանանցի հարյուրավոր երիտասարդներ հնարավորություն ունեն իրենց բարձրագույն կրթությունը ստանալու

Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի և Իտալիայի բարձրակարգ ու մեծ ճանաչում ունեցող համալսարաններում: Այս ուսանողների թվում են նաև հայ երիտասարդները, որոնք տարբեր բնագավառներում լավագույն մասնագետների որակավորում ստանալու համար փորձում են իրենց ուժերը վերոհիշյալ եվրոպական երկրների համալսարաններում:

Եվ այստեղ շեշտված ու համոզմունքով պետք է փաստենք, որ մեր հայ երիտասարդներին այդ համալսարանների պահանջներին համապատասխան գիտելիքներ են տալիս Լիբանանում գործող հայկական ամենօրյա դպրոցները՝ կրթական երեք աստիճաններով, որոնք լիովին համապատասխանում են Լիբանանում գործող պետական դպրոցների կառուցվածքին:

Հայկական ամենօրյա բոլոր դպրոցները մտնում են Լիբանանի կրթական համակարգի կազմի մեջ և պարտադիր կերպով իրականացնում են պետական կրթական ծրագրերը:

Քանի որ հայերը Լիբանանում ներկայացված են կրոնական 3 համայնքներով, տրամաբանական ենք համարում դպրոցներն էլ ներկայացնել ըստ համայնքային պատկանելության. հայ առաքելական, հայ կաթոլիկ և հայ ավետարանական:

«1920-ական թվականներին,— գրում է Ս. Գասպարյանն իր «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» գրքում,— երբ Կիլիկիայի հայ բնակչության մի զգալի մասը ապաստան գտավ Սիրիայում և Լիբանանում, Կիլիկյան Կաթողիկոսությունը փոխադրվեց Լիբանան, Անթիլիաս բնակավայրը, որը Բեյրութի արվարձաններից մեկն է: Այստեղ կառուցվեց նոր վանք, բացվեց դպրեվանք»⁴³:

Այսօր Լիբանանում գործող հայ առաքելական եկեղեցիները Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության ենթակայության տակ են: Լիբանանի թեմի առաջնորդարանը գտնվում է Բեյրութում: Ունի իր ենթակառույցները՝ խորհուրդները. կրոնական, ուսումնական, տնտեսական, դատական, ընկերային և այլն: Այս ամենի ղեկավարն ու համակարգողը սրբազան առաջնորդն է, որը ղեկավարում ու վերահսկում է Լիբանանի հայ առաքելական եկեղեցիների համապար-

⁴³ Գասպարյան Ս. Տ., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 108:

փակ գործունեությունը: Նա իր վրա պատասխանատվություն է վերցրել հայկական գաղութի հոգսերի ու խնդիրների, նրա զարգացման ու, որ ամենակարևորն է, հայապահպանության համար:


Հայ առաքելական եկեղեցու Լիբանանի թեմի առաջնորդարանի ենթակայության ու հովանավորության տակ այսօր Լիբանանում գործում է 15 հայկական ամենօրյա դպրոց, որից 11-ը՝ Բեյրութում, մյուսները՝ Այնճարում, Չախլեում, Ճիպեյլում, Թրիփոլիում:

Բոլոր դպրոցներն էլ մտնում են Լիբանանի կրթական համակարգի մեջ և պարտադրաբար իրականացնում են պետական կրթական ծրագիրը:

Ազգային վարժարաններից 8-ը ունի միայն կրթական առաջին աստիճանը՝ նախակրթարանը (ներառյալ մանկապարտեզը), 7-ը՝ միջնակարգի և երկրորդականի կրթական աստիճանները: Սա պայմանավորված է մի քանի պատճառներով.

1. *Աշակերտության թվով:* Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի նախկին տնօրեն, քաղաքական, հասարակական և կրթական ճանաչված գործիչ Հրաչ Տասնապետյանը նշում է, որ «Լիբանանի պատերազմը պատճառ դարձաւ արտագաղթի մեծ հոսքի: Իսկ դրա հետևանքով կրճատվեցաւ աշակերտութեան թիւը: Երկիրը տնտեսական մեծ տագնապ ունեցաւ: Դժվար կացութեան մեջ գտնեցան հայկական բոլոր դպրոցները: Ծնողների մեծ մասը դարձաւ անվճարունակ: Շատ դպրոցներ կանգնեցան փակվելու վտանգի առջեւ՝ տնտեսական և աշակերտութեան թվի անկման պատճառաւ: Միայն անկոտրում կամքն ու հայապահպանութեան մեծ գաղափարը մեզի հետ պահեցին այդ վտանգէն»⁴⁴:

2. *Տնօրենական-ֆինանսական:* Դիշտ է ազգային դպրոցներին ֆինանսական մեծ աջակցություն են ցույց տալիս առաջնորդարանը, երբեմն նաև անհատ բարերարներ, Գ. Գյուլբենկյան ֆոնդը, այնուամենայնիվ, դպրոցներն աշխատում են վճարովի հիմունքներով, և նրանց ֆինանսական մեծ ծախսերը պետք է, որ փակվեն աշակերտների ուսման վարձերից: Բայց քանի որ ծնողների մեծ տոկոսը



Անթիլիասի Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարը
Բեյրութ, Լիբանան


⁴⁴ Հարցազրույց Հր. Տասնապետյանի հետ, Բեյրութ, 28 ապրիլի, 1998:



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ




ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԻԿԻՈՅ ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ




ՀԱՄՈ ՕՐԱՆՉԱՆՅԱՆ
Համազգայինի առաջին նախագահը

Համազգայինի Նշան Փալանջյան ճեմարան
Բեյրութ, Լիբանան




ԼԵՎՈՆ ՇՐԻՐ
Նշան Փալանջյան ճեմարանի
հիմնադիրներից (նաև տնօրեն)




ՆՈՎՈՆ ԱՐՔԱՆԻԱՆ
Նշան Փալանջյան ճեմարանի
հիմնադիրներից




ՍԻՄՈՆ ԿՐԱՆԾՅԱՆ
Նշան Փալանջյան ճեմարանի
տնօրեն



ՆՇԱՆ ՓԱԼԱՆԶՅԱՆ,
նրա անվամբ է կոչվում
Համազգայինի Բեյրութի
Հայ ճեմարանը




Բուրջ Չամուղ
Բեյրութի հայաիւծ թաղանասը



Սրբոց Քառասնից Մանկանց վարժարան
Բեյրութ, Լիբանան




Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի տարեվերջյան հանդեսները
Բեյրութ, Լիբանան



Ս. Նշան վարժարանի հին շենքը
Բեյրութ, Լիբանան



Միրզ Բառասնից Մանկանց վարժարանի աշակերտությունը
աշակերտական պատարագի ժամանակ
Բեյրութ, Լիբանան




Լ. և Ս. Բակոբյան
ազգ. վարժարան
Բեյրութ, Լիբանան



Սուրեն Խանամիրյան ազգային թուփ
Բեյրութ, Լիբանան



Ազգային Արգարյան վարժարանի սաները
պատի թերթի վրա աշխատելիս
Բեյրութ, Լիբանան



Մ. Կարապյոզյան ազգ. վարժարան
Բեյրութ, Լիբանան



Ազգային Արգարյան վարժարանի երգչախումբը
Բեյրութ, Լիբանան



Ազգային Արգարյան վարժարանի սաները հանդեսի ժամանակ Բեյրութ, Լիբանան




Ազգային Արգարյան վարժարանի պարախուները Բեյրութ, Լիբանան



Ազգային Արգարյան վարժարանի աշակերտությունը ս. Զաղորդության ժամանակ Բեյրութ, Լիբանան



Ազգային եղիշե Մանուկյան քոլեջի շենքը Բեյրութ, Լիբանան



Ազգային եղիշե Մանուկյան քոլեջ Բեյրութ, Լիբանան



Ազգային եղիշե Մանուկյան քոլեջի թատերախումբը
Բեյրութ, Լիբանան



Ազգային եղիշե Մանուկյան քոլեջի սաները հանդեսի ժամանակ
Բեյրութ, Լիբանան




Ազգային եղիշե
Մանուկյան քոլեջի
բասկետբոլի թիմը
Բեյրութ, Լիբանան



Ազգային եղիշե Մանուկյան
քոլեջի մանկապարտեզի
սաները
Բեյրութ, Լիբանան




Նույն մանկապարտեզի սաները
հանդեսի ժամանակ
Բեյրութ, Լիբանան



Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարան
Բեյրութ, Լիբանան




Վահան Թեքեյան վարժարան
Բեյրութ, Լիբանան



Հայ ավետարանական քոլեջ
Բեյրութ, Լիբանան



Հայ կաթոլիկ Մեսրոպյան բարձրագույն վարժարան
Բեյրութ, Լիբանան



Հայ կաթոլիկ Մեսրոպյան
բարձրագույն վարժարանի
աշակերտությունը
ս. Պատարագի ժամանակ
Բեյրութ, Լիբանան



Նույն վարժարանի աշակերտները
ս. Հաղորդության պահին
Բեյրութ, Լիբանան



Համազգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկը (հիմնադրվել է 1974 թ.)
Բեյրութ, Լիբանան



Երևանի պետական համալսարանի և Համազգայինի Հայագիտական հիմնարկի միջև համագործակցության պայմանագրի ստորագրման պաշտոնական արարողությունը Բեյրութ, Լիբանան

տնտեսական ծանր կացության մեջ է, երկրի վիճակից կախված, չի կարողանում վճարել երեխայի ուսման վարձը, դպրոցը հայտնվում է, իրավամբ, բարդ իրավիճակի մեջ.

ա. նյութականի պատճառով չի ցանկանում կորցնել հայ երեխային, որը մերժվելու դեպքում կհաճախի պետական անվճար դպրոց՝ դրանով իսկ մեծացնելով հայության ուժացման տոկոսը: Հետևաբար, դպրոցը կհսով կամ լրիվ չափով զեղչում է աշակերտության որոշ տոկոսի ուսման վարձը,

բ. իր վրա վերցնելով անվճարունակ աշակերտների ծախսերը՝ դպրոցը հայտնվում է ֆինանսական լուրջ դժվարությունների առջև՝ ընդհուպ մինչև դասարանների փակում և կադրերի կրճատում:

3. Թվով շատ միջնակարգ և երկրորդական վարժարաններ չբացվելու 3-րդ պատճառն էլ *կրթական համապատասխան մակարդակ ու որակ ունեցող կադրերի պակասն է:*

Միջնակարգ և երկրորդական վարժարաններում և ճեմարաններում պետությունը թույլատրում է աշխատել համապատասխան առարկայի (մասնագիտության) համալսարանական կրթությամբ ուսուցիչներին՝ բակալավրիատ, մագիստրատուրա բարձրագույն կրթական աստիճաններով:

Սրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ համապատասխան համալսարանական կրթությամբ հայ ուսուցիչների պակասի պատճառով դպրոցները ստիպված են աշխատանքի հրավիրել օտար մասնագետներին: Սա հիմնականում վերաբերում է ոչ հայագիտական առարկաներին: Քանի որ պետությունը հսկողություն է իրականացնում միայն իր պետական ծրագրերի և դրանց հիման վրա կրթական համապատասխան աստիճանում կրթության բովանդակության մեջ ընդգրկված ուսումնական պարտադիր առարկաների դասավանդման որակի վրա:

Հայագիտական առարկաների պարագայում դպրոցներն ազատ են իրենց գործունեության մեջ. ընտրելու ծրագրեր, դասագրքեր, կադրեր, դասավանդման մեթոդներ և այլն:

Սրան ավելանում է նաև այն փաստը, որ Լիբանանում միայն նախակրթարանում է, որ ուսուցումը տարվում է հայերենով, այսինքն՝

բացի արաբերենից և որևէ օտար լեզվից, մնացած առարկաները դասավանդվում են հայերենով: Միջնակարգում ուսուցումն իրականացվում է արաբերենով, իսկ երկրորդականում՝ ֆրանսերենով կամ անգլերենով:

Այստեղ հայկական դպրոցների առջև ծառայած է ևս մեկ խնդիր. ապահովել ոչ միայն համապատասխան մասնագիտությամբ համալսարանական կրթությամբ կադրեր, այլև ուսուցիչներ (մասնագետներ), որոնք կատարյալ տիրապետում են արաբերենին, ֆրանսերենին կամ անգլերենին՝ իրենց ուսումնական առարկան (պատմություն, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, կենսաբանություն, փիլիսոփայություն, գրականություն, սոցիոլոգիա և այլն) այդ լեզուներով արդյունավետ դասավանդելու համար:

Արդյունքում. եթե միայն նախակրթարանի բաժին ունեցող ազգային վարժարաններում ուսուցչական կազմը 95 % հայեր են, ապա միջնակարգում, առավել ևս երկրորդականում (ճեմարանում), այս տոկոսը բավականին ցածր է, ընդհուպ մինչև 55–60 %:

Անենևին չշոշափելով օտարազգի ուսուցիչների մասնագիտական որակի, մեթոդական պատրաստվածության հարցը՝ կուզենայինք այստեղ մեկնաբանել շատ նուրբ ու մեր հայ երեխաների դաստիարակությանն առնչվող մի հարց: Խոսքը վերաբերում է նրան, որ օտարազգի մանկավարժները, առարկայական գիտելիքներ հաղորդելուն զուգահեռ, շփվելով ու հաղորդակցվելով հայ աշակերտների հետ, ինքնաբերաբար, թե նպատակային նրանց են փոխանցում նաև իրենց ազգային առանձնահատկությունները՝ մտածելակերպը, հոգեբանությունը, մշակույթը, լեզուն, պատմությունը, սովորույթներն ու ավանդույթները, որոնք, ներազդելով հայ երեխաների մտքի ու հոգու վրա կարող են վնասել ազգային լեզվամտածողության ձևավորմանը և ազգային ինքնագիտակցության ոգու սերմանմանը: Իսկ սրանք, մեր խորին համոզմամբ, հայապահպանության կարևոր կոմաններից են:

Բեյրութում գործող նախակրթարանի բաժին (ներառյալ մանկապարտեզը) ունեցող ազգային վարժարաններն են. Սրբոց Քառասնից Մանկանց, Աբգարեան, Աքսոր Գասարճեան, Գեորգ Չաթալպաշեան, Կիլիկեան, Ռուբինեան, Սահակ–Մեսրոպեան դպրոցները:

Ազգային առաջնորդարանի հովանու տակ գործող բոլոր ազգային վարժարանների կրթադաստիարակչական գործունեությունը համակարգում և վերահսկում է առաջնորդարանի ենթակառուցյունից մեկը՝ ուսումնական խորհուրդը:

Ուսումնական խորհուրդը կազմել է դպրոցների կրթական երեք աստիճանների միասնական ծրագիր (ներառյալ մանկապարտեզը), որը պարտադիր է բոլոր ազգային վարժարանների համար: Ծրագիրն ընդգրկում է ինչպես ընդհանուր դրույթներ, այնպես էլ առարկայական չափանիշներ:

Ուսումնական խորհուրդն է նախաձեռնում ու կազմակերպում ուսումնական դասագրքերի ստեղծման գործը՝ կազմելով համապատասխան մասնագիտական խմբեր, որոնք եղած առարկայական ծրագրերի հիման վրա գրում են նոր դասագրքեր: Այս դասագրքերը դարձյալ միասնական գործածվում են բոլոր ազգային վարժարաններում:

Ուսումնական խորհրդի խնդիրներից է նաև մանկավարժական կադրերի առարկայական և մեթոդական վերապատրաստման հարցը, որն առ այսօր մնում է չլուծված ու դժվարին խնդիր:

Խորհրդային Միության գոյության ժամանակ լիբանանահայ շատ ուսուցիչներ մասնագիտական և մեթոդական վերապատրաստման դասընթացների էին մասնակցում Հայաստանում: Վերջին տարիներին այդ գործընթացն ակտիվ չէ:

Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ուսումնական խորհուրդը ջանում է այդ հարցը լուծել տեղում, սեփական ուժերով: Այսպես, բոլոր ազգային վարժարանների մանկապարտեզների դաստիարակների մեթոդական վերապատրաստումը ստանձնել է Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արալանյան ճեմարանը:

Տարրական դպրոցի հայերենի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման հարցերով զբաղվում է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության հովանավորությամբ գործող Խաչեր Գալուստեան մանկավարժական կենտրոնը՝ հիմնադրված 1978 թ.:

Ազգային վարժարանների միջնակարգ և երկրորդական բաժինների հայոց լեզվի և գրականության, պատմության ուսուցիչների

պատրաստման դժվարին գործն իր վրա է վերցրել Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկը, որը հիմնադրվել է 1974 թ. և առ այսօր անխափան ու հայրենամովեր գործունեություն է իրականացնում՝ որակյալ կադրեր պատրաստելով ոչ միայն Լիբանանի հայկական դպրոցների, այլ նաև Սիրիայի, Եգիպտոսի, Քուվեյթի, Իրաքի, Արաբական Էմիրությունների, Հունաստանի և այլ երկրների հայկական գաղթօջախների դպրոցների համար՝ ապահովելով բանասիրության և պատմագիտության բարձրագույն կրթության բակալավրիատի աստիճանը:

Վերադառնալով առաջնորդարանի ուսումնական խորհրդի գործունեությանը՝ փաստենք, որ նա է բոլոր ազգային վարժարանների տնօրեններին նշանակում կամ ազատում աշխատանքից, իհարկե, Սրբազան առաջնորդի հետ խորհրդակցաբար: Նա է հաստատում դպրոցների հոգաբարձուների խորհրդի կազմը: Ավելացնենք նաև, որ ուսումնական խոհուրդը, բացի կազմակերպչական, կառուցողական, համակարգող գործառնություններից, ունի նաև դպրոցներում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքները վերահսկողի դեր՝ տեսուչների միջոցով պարբերաբար ստուգումներ անցկացնելով:

Ուսումնական խորհրդի նախաձեռնությամբ ու ջանքերով գաղութում կազմակերպվում են արտադպրոցական կրթադաստիարակչական բազմաբնույթ աշխատանքներ. միջդպրոցական առարկայական մրցույթներ (օլիմպիադա), ասմունքի, սպորտի տարբեր ձևերի մրցումներ, երգչախմբային և պարային համույթների ելույթներ, տարբեր տոների ու հիշատակի օրերի կազմակերպում Բեյրութի կամ համազգային մասշտաբով, գրականության, մշակույթի, ազգային ճանաչված գործիչների ու մշակների հորելյանական երեկոներ և այլն:

Մեկ խոսքով, կարելի է ընդհանրացնել, որ ուսումնական խորհուրդը Լիբանանում իրականացնում է կրթադաստիարակչական, մշակութային, համապարփակ գործունեություն՝ հանուն հայապահպանության, հանուն լիբանանահայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության և նրանց համակողմանի զարգացման:

Քանի որ նախակրթարանի բաժին ունեցող ազգային բոլոր վարժարանները գործում են նույն միասնական ուսումնական ծրագրերով ու դասագրքերով, հարկ ենք համարում անդրադառնալ դրանցից մի քանիսի աշխատանքներին, որոնք մեր ուսումնասիրությունների ժամանակ դրսևորվել են իրենց ինքնատիպությամբ:

Ազգային Մ. Քառասնից Մանկանց վարժարան

Ազգային Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանը հիմնադրվել է 1930 թ. համանուն եկեղեցու թաղական խորհրդի, Մարաշի հայրենակցական միության նախաձեռնությամբ ու Ազգային առաջնորդարանի օժանդակությամբ Բեյրութի Բուրջ Համուդ թաղամասում, որի հողատարածքը 1929–30–ական թվականներին գնվել է Մարաշի հայրենակցական միության Լիբանանի մասնաճյուղի (հիմնված՝ 1929 թ.) վարչության ժողովի որոշմամբ՝ դրամահավաք կազմակերպելով: Նպատակն էր Կիլիկիայից Լիբանան գաղթած հայերի բեկորները միավորել՝ համախումբ և նույն հարկի տակ ապրելու ձգտումով: Գնված հողը մկրտվում է Կիլիկիայի Մարաշ քաղաքի անունով՝ Նոր Մարաշ: Այստեղ կառուցվում են տներ և բաժանվում ժողովրդին: Առաջին ձեռնարկն ավարտելուց հետո Մարաշի հայրենակցական միությունը ձեռնամուխ է լինում եկեղեցաշինության և դպրոցաշինության հայրենամովեր գործին:

1930 թ. բացված դպրոցը և 1931 թ. ավարտված ու օծված եկեղեցին կոչվեցին բուն Մարաշի մայր եկեղեցու անունով՝ Սրբոց Քառասնից Մանկանց:

Լիբանանի հայության համախմբման և հայապահպանման գործում բացառիկ մեծ դերակատարություն են ունեցել Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցին և վարժարանը, որտեղ կրթվել ու դաստիարակվել են հայաշունչ սերունդներ, որոնք այսօր տարբեր բնագավառների ճանաչված դեմքեր են և շարունակում են իրենց նպաստը բերել գաղութի կրթական, եկեղեցական, ընկերային և մշակութային կյանքի զարգացմանը:

Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու և դպրոցի 50-ամյա տոնակատարության առթիվ իր հայրապետական խոսքում Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Խորեն Ա. գրում է. «Պուրճ-Համուտի սրտին վրայ, կեղորնական կարեւորութեամբ ահա յիսուն տարիներ է վեր հայ ժողովուրդի հոգեւոր կարիքներուն, եւ կրթական պէտքերուն, հայադրոշմ դաստիարակութեան համար, պայծառօրէն եւ բազմաբղիւն պտղաբերութեամբ գործող կեղորններ հանդիսացան Նոր-Մարաշի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին եւ դպրոցը: Մեծ եղեռնէն հազիւ ազատած, պատմական Կիլիկիոյ շէն քաղաքի Մարաշի գաւակները, հաւատարիմ իրենց հայրերու եւ նահատակներու սուրբ աւանդին՝ Պուրճ-Համուտի մէջ իրենց արդար վաստակով, քրտինքով, զոհաբերութեան ոգիով կանգնեցրին իրարու լրացուցիչ, իրարմէ անբաժան այս զոյգ օճախները՝ եկեղեցին եւ դպրոցը, որովհետեւ անոնք հաւատացին հայութեան ապագային: Անոնք իրենց աչքերը ուղղեցին դէպի գալիք տարիները եւ կեանքին բացուելիք նոր սերունդները: Եկեղեցին ու դպրոցը կառուցին «Մեռելներուն իբրեւ խաչ», իսկ նոր սերունդներուն համար որպէս «Տաճար հրաշագործ, վսեմ ձուլարան»: Եւ ահա յիսուն տարիներ է վեր Ս'Լուսաւորչի անմար կանթեղը պայծառօրէն կը շողայ Նոր-Մարաշի վրայ եւ Ս. Մեսրոպի լեզուն ջինջ ու յարթապանծ կը հնչէ Նոր-Մարաշի թաղերուն մէջ, թրքերէնը հալածելով այնպէս, ինչպէս լոյսը կը հալածէ խաւարը...: Յարգանք եւ պատիւ անոնց, որոնք իրենց հաւատքին, յոյսին եւ սիրոյն հետ խառնեցին իրենց վաստակը, քրտինքը, քսակը: Յարգանք եւ պատիւ անոնց, որոնք այն կեանքը զոր Աստուած տուած է իրենց եւ Թուրքը չէր կրցած խլել իրենցմէ, արժեւորեցին ստեղծագործական ընթացքով եւ հին Մարաշի փոխարէն կառուցին նոր Մարաշը իր Մասիսանման զոյգ զագաթներով՝ եկեղեցիով եւ դպրոցով»⁴⁵:

Այսօր Սրբոց Քառասնից Մանկանց դպրոցը 72-ամյա պատմություն ունի՝ հաջողություններ ու զգալի առաջադիմություն արձանագրած կրթադաստիարակչական, կազմակերպչական, հայապահպանական գործերում: Այսօր դպրոցն իր անխափան ընթացքով շա-

րունակում է սկսած գործը՝ հավատարիմ իր սկզբունքներին և սուրբ առաքելությանը՝ «հայ ժողովրդի գոյութեան կռանումին ի խնդիր»:

Սրբոց Քառասնից Մանկանց ազգային վարժարանի կրթադաստիարակչական գործունեությունը արժեքավորող խոսքեր է ասել դպրոցի շրջանավարտ, այժմ կիպրահայ «Նարեկ» ազգային վարժարանի տնօրէն Վարդան Թաշճեանը. «Յիսուն տարի է վեր կա ու կը գործէ մեսրոպեան այս գեղեցիկ ածուն, կրթական ու դաստիարակչական հարազատօրէն հայեցի իր նկարագրով, յօգուտ իր շրջանի ուսումնատենչ երկսեռ գաւակներուն եւ ի պարծանս Լիբանանի վերածնած հայ գաղութին: Կէս դար շարունակ, անոր գուրգուրոտ գիրկին մէջ ապաւէն ու ապաստան գտան աղէտեալ մեր ժողովուրդին հարազատ գաւակները, աւելի ուշ՝ հոգեպէս, ֆիզիքապէս եւ իմացականապէս ուռճացած՝ երախտագիտութեամբ ու կարօտով հրաժեշտ առնելու անկէ, իրենց կարգին նոր սերունդներու մտքի ծարար յագեցնելու անսակարկ ոգիով ու վեհանձնութեամբ: Կը համբուրեմ ձեռքերը կրթական բոլոր մշակներուն, որոնց տարիներու նուիրումն ու զոհաբերութիւնը, շունչ ու քրտինքը թե ու ձեւ, ծափ ու թափ տուին անոր ազգօգուտ առաքելութեան»⁴⁶:

Դպրոցում (տնօրէն՝ քաղաքական, կրթական ճանաչված գործիչ Հովիկ Բերթիզյան) հաջողությամբ է իրականացվում պետական և հայկական ծրագրերի համադրումը: Աղյուսակ 3-ում ներկայացնում ենք դպրոցում դասավանդվող առարկայացանկը շաբաթական ծանրաբեռնվածությամբ՝ ըստ պետական և հայկական ծրագրերի:

Դպրոցի պետական և հայկական ծրագրերն ընդգրկող ուսումնական պլանի շաբաթական ծանրաբեռնվածությունից մեզ համար պարզ է դառնում, որ շաբաթը 21 ժամ հայ երեխան դպրոցում հնարավորություն ունի խոսել, գրել, կարդալ, լսել հայերեն, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից դառնալ մայրենի լեզվով: Այս հանգամանքը չափազանց կարևոր նշանակություն ունի հայ երեխաների մէջ հայկական լեզվամտածողություն ձևավորելու, հայեցի կրթություն և դաստիարակություն իրականացնելու համար:

⁴⁵ Յիսնամեակ Սրբոյ Քառասնից Մանկանց եկեղեցոյ եւ վարժարանի, Լիբանան, Պուրճ Համուտ, 1980, էջ 7-8:

⁴⁶ Յիսնամեակ Սրբոյ Քառասնից Մանկանց եկեղեցոյ եւ վարժարանի, Լիբանան, Նոր Մարաշ, 1980, էջ 113:

**Աղյուսակ 3.
Սրբոց Քառասնից Մանկանց ազգային վարժարանի
ուսումնական պլանը**

Դասագրքեր

Շաբաթական դասաժամեր.							
դասարաններ							
		1-ին	2-րդ	3-րդ	4-րդ	5-րդ	6-րդ
Թիվ	Դասանյութ	ժամ	ժամ	ժամ	ժամ	ժամ	ժամ
1.	Չայերեն	6	6	6	6	6	6
2.	Չայոց պատմ.	2	2	2	2	2	2
3.	Կրոն	1	1	1	1	1	1
4.	Գիտություն	1	1	1	1	1	1
5.	Աշխարհ.	-	-	-	1	1	1
6.	Չայ թվաբ.	5	5	5	5	4+1	5
7.	Արաբեր. գիտ.	1	1	1	1	1	1
8.	Արաբ. աշխարհ.	-	1	1	1	1	1
9.	Արաբ. պատմ.	-	-	-	1	1	1
10.	Արաբ. թիվ	1	1	1	1	1	1
11.	Քաղաքաց. կրթ.	1	1	1	1	1	1
12.	Արաբերեն	8	8	8	7	7	7
13.	Անգլերեն	7	7	7	7	7	7
14.	Գծագրություն	1	1	1	1	1	1
15.	Երգ	1	1	1	1	1	1
16.	Մարզանք	2	1	1	1	1	1
17.	Համակարգիչ	1	1	2	2	2	2

Նախակրթարանում ուսուցումը մայրենի լեզվով կազմակերպելու այս կարևորագույն առավելությունից, ցավոք, զրկված են Սիրիայի հայկական դպրոցները՝ պետական սահմանափակումների հետևանքով, որի մասին առավել հանգամանալից վերլուծություն կտրվի հաջորդ «Սիրիայի հայկական կրթօջախները» խորագիրը կրող գլխում:

Վերադառնալով Սրբոց Քառասնից Մանկանց նախակրթարանի կրթության բովանդակությանը՝ նշենք, որ ի հավելումն մյուս նախակրթարանների ուսումնական պլանների ու շաբաթական ծանրաբեռնվածության՝ դպրոցում առաջին դասարանից (1 ժամ) անցնում են համակարգչային դասընթացներ՝ ծրագիրը համապատասխանեցնելով սովորողների տարիքային առանձնահատկություններին:

Ինչպես արդեն ասել ենք, Ազգային առաջնորդարանի հովանու տակ գործող բոլոր նախակրթարաններում կիրառվում են ուսումնական խորհրդի վավերացրած միասնական դասագրքեր՝ կազմված սփյուռքահայ մտավորականների և ուսուցիչների ուժերով, որը, ըստ մեզ, միանգամայն ճիշտ ու տրամաբանական է, քանի որ նույն գաղութում, նույն միջավայրում ապրող մտավորականն է առավել լավ ճանաչում ու հասկանում սփյուռքահայ երեխայի հոգեբանությունը, մտածողությունը, գաղութի առանձնահատկությունները՝ բոլոր առումներով: Հետևաբար, նրա խոսքը (լեզուն), բերած օրինակներն ու փաստերն առավել հասկանալի են սփյուռքահայ աշակերտին, քանի որ դրանք բերված են այն իրականությունից, այն միջավայրից, ուր ապրում է նա: Ուստի ուզում ենք խորին համոզվածությամբ փաստել, որ սփյուռքահայ մտավորականի (ուսուցչի) թեկուզև որոշ թերություններով դասագիրքն առավել նախընտրելի է ու արժեքավոր, քան գաղութն իր առանձնահատկություններով խորությամբ չճանաչող և սփյուռքահայ երեխայի հոգեբանությունը լիովին չհասկացող Հայաստանի թեկուզև ճանաչված մի գիտնականի ստեղծած դասագիրք, որը կարող է գիտականորեն և մանկավարժորեն ճիշտ կազմված լինի, բայց ոչ երբեք հոգեհարազատ սփյուռքահայ աշակերտին՝ նրա հոգում ու սրտում խոր արմատներ չունենալու պատճառով:

Համաձայն ենք միջանկյալ տարբերակին՝ համահեղինակությանը, որի օրինակն արդեն ունենք. պատմության դասագրքի վրա համատեղ աշխատանքի եզակի և ինքնատիպ դրսևորում իրականացրին պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանը և Համազգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկի տնօրեն, պատմաբան Երվանդ Փամբուկյանը:

Երկու ճանաչված պատմաբանների մեծ կարողությունների միասնացումից ծնունդ առավ հայոց պատմության մի հաջողված դասագիրք, քանի որ միաժամանակ ապահովված էր և՛ բարձր մասնագիտական գիտամեթոդական մակարդակ, և՛ սփյուռքահայ իրականության ու հայ աշակերտի ճանաչման մեծ ունակություն:

Այս պարագայում ոչ միայն ստեղծվեց հաջողված դասագիրք, այլև տեղի ունեցավ հայրենական և սփյուռքի մտավորականների փոխճանաչում, ինչպես նաև Հայաստանում և սփյուռքում ստեղծված արժեքների իմացություն և արժևորում:

Այսօր ինչպես Սրբոց Քառասնից Մանկանց, այնպես էլ մյուս ազգային նախակրթարաններում գործածության մեջ են հայոց լեզվի և գրականության, ընթերցանության, հայոց պատմության հետևյալ միասնական դասագրքերը.

1. Յ. Զյուրքչեան, Հայերեն լեզու (նոր քերականություն):
2. Յ. Զյուրքչեան, Մ. Գալաջեան, Հայրենի աղբյուր (որը գրականության դասագիրք է, նաև լեզվի և բացատրական ընթերցանության):
3. Ար. Եղիայան, Ծիածան (ընթերցարան), Ծիածան (տետրակ, ուր ընդգրկված են քերականական վարժություններ):
4. Բ. Թաշեան, Հայկարան (հայոց լեզու և գրականություն):
5. Ա. Մարաշլեան, Հայոց պատմութիւն:
6. Երվ. Փամբուկեան, Վլ. Բարխուդարեան, Հայոց պատմություն:

Կատարված է հսկայական գործ, ստեղծված են դասագրքեր, որոնց գոյությունն ինքնին արդեն մեծ հաջողություն է սփյուռքում դասագրքաստեղծման գործում:

Այս ամենով հանդերձ, սակայն, բոլոր դասագրքերն էլ կարիք ունեն մանկավարժական, դիդակտիկական, մեթոդական վերանայման, այսպես.

1. 1–3–րդ դասարանների գրականության տեքստերը պետք է մատուցել ըստ թեմատիկայի (խմբավորված):
2. Նյութի հաղորդման ժամանակ ապահովել գիտականության, մատչելիության, զննականության, համակարգայնության և հաջորդականության սկզբունքները՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:
3. Դասագրքում ճանաչողական, ստուգողական վարժությունների հետ մեկտեղ զետեղել նաև զարգացողական վարժություններ:

4. Նյութի մատուցման ժամանակ կիրառել ակտիվացնող մեթոդներ (փոխներգործում (ինտերակտիվ) մեթոդ), պրոբլեմային իրավիճակների ստեղծում և այլն:

5. Վերացնել առկա որոշ անհամապատասխանությունը դասագրքերի և ուսումնական ծրագրերի միջև:

Ուսումնական խորհրդի, տնօրենների և ուսուցիչների հետ մեր կողմից պարբերաբար քննարկվել է դասագրքերի հարցը: Համատեղ գրույցներից մեզ համար պարզ դարձավ, որ մեր սփյուռքահայ գործընկերները նույնպես դասագրքերը վերամշակելու, դրանցում բովանդակային–մեթոդական փոփոխություններ կատարելու կողմնակից են և ակնկալում են Հայաստանի մանկավարժների օգնությունը:

Կարծում ենք, որ համագործակցության կոնկրետ առաջարկների դեպքում հայրենական մտավորականներն աջակից կլինեն նրանց այդ գործում:

Համահեղինակությամբ դասագրքերի ստեղծումը Հայաստանի և սփյուռքի մտավորականների համագործակցության լավագույն ձևերից մեկն է կրթության ոլորտում:

Ուսուցչական կազմը

Քանի որ նախակրթարաններում (1–ից 6–րդ դասարաններում) ուսուցումը տարվում է հայերենով, և այստեղ ուսուցիչ աշխատելու համար նվազագույն թույլատրելի կրթական աստիճանը բաքալորեայի վկայականն է, ուստի ազգային վարժարանները, որոնց թվում և Սրբոց Քառասնից Մանկանց դպրոցը, կարողանում են ապահովել համապատասխան վկայականով հայ ուսուցիչների, որոնք դասավանդում են ոչ միայն հայոց լեզու, հայ գրականություն և հայոց պատմություն, այլև մնացած բոլոր առարկաները, երբեմն նույնիսկ արաբերեն, թվաբանություն և պատմությունը արաբերենով: Հիմնականում օտար լեզուներ (ֆրանսերեն, անգլերեն) դասավանդելու համար են հրավիրվում օտարազգի ուսուցիչներ: Որոշ դպրոցներում նույնիսկ դրանք էլ են հայ ուսուցիչները դասավանդում: Հետևաբար ազգային նախակրթարաններում ուսուցչական կազմը 95–100 % հա-

յերից է բաղկացած: Այս հանգամանքը խորապես նպաստում է օտար միջավայրում երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործին:

Հայ ուսուցիչ-ուսուցչուհիների հետ ամենօրյա շփումները և հաղորդակցումը օգնում են հայկական ինքնության ձևավորման ու պահպանման հարցին:

Ազգային վարժարաններում պարբերաբար դասալսումներ կատարելու և դրանց հոգեբանամանկավարժական և մեթոդական քննարկման արդյունքում ունեցանք հետևյալ պատկերը.

ա. բացառիկ է նախակրթարաններում դասավանդող ուսուցիչների հայրենասիրական ոգին, որը նրանք հաջողությամբ փոխանցում են հայ աշակերտներին: Այստեղ տեղին ենք համարում մեջբերել դպրոցի հոբելյանական հուշամատյանում տեղ գտած ուսուցչին արժեքավորող հետևյալ խոսքերը. «Ինչպե՞ս եւ ինչո՞ւ հայ ուսուցիչը ազգային լուսաւորութեան դժուարին առաքելութիւնը կրած է դարերով:

Պատասխան՝ հայ ուսուցիչը հաւատք ունեցող մարդ է:

Լուսաւորութեան առաքելութիւնը դժուար առաքելութիւն մըն է, առաքելութիւն մըն է, որ կը պահանջէ ներշնչում, լայնամտութիւն, իրատեսութիւն, համբերութիւն, խոհեմութիւն եւ կարեկցութիւն, առաքելութիւններ՝ որոնք երբեք չեն պակասած հայ ուսուցչին, բայց առաւելապէս հաւատքի առաքիմութիւնն է, որ անսասան մնացած է հայ ուսուցչի հոգւոյն մէջ:

Հայ ուսուցիչը հաւատացած է ու կը հաւատայ հայ ժողովրդի ազնուականութեան:

Հայ ուսուցիչը հաւատացած է ու կը հաւատայ հայ մշակոյթի յաւերժութեան:

Կը հաւատայ աճող հայ սերունդի ապագային:

Կը հաւատայ կեանքի բարոյական սկզբունքներու անխորտակելիութեան:

Ուրեմն կը հաւատայ՝ նիւթականէն ու մարմնականէն վեր հոգեկանի գերակայութեան:

Եւ այս հաւատքով կը սնուցանէ ազգին զաւակներու հոգին, իր իսկ հոգիէն ամէն օր մասեր տալով անոնց»⁴⁷:

Այո՛, բարձր գնահատականի են արժանի լիբանանահայ ուսուցիչների մվիրվածությունը գործին, անձնագոհ ու տքնաջան աշխատանքը, եռանդը, ջանքերը, սերը դեպի երեխաները: Մրանք այն կարևորագույն գործոններն են, որոնք լիբանանահայ ուսուցչին օգնում են դժվարին պայմաններում աշխատել և արդյունքի հասնել:

Այս ամենին մենք ականատես եղանք բազմաթիվ դասալսումների ժամանակ, երբ ուսուցչուհիներն իրենց տարերքի մեջ էին՝ դրսևորելով մասնագիտական և անձնային բարձր որակներ, գիտամանկավարժորեն, հոգեբանորեն ու մեթոդապես գրագետ ու արդյունավետ դասեր վարելով: Դրանք այն դասերն էին, երբ ուսուցիչները հստակ ունեին դասանպատակ, պահպանում էին դիդակտիկական սկզբունքները, դասին վերաբերվում էին ստեղծագործաբար, կիրառում էին նպատակամետ ու ակտիվացնող մեթոդներ՝ դասարանում ստեղծելով բարոյահոգեբանական առողջ, անկաշկանդ ու առանց վախի մթնոլորտ՝ հասնելով շոշափելի արդյունքների:

Այսպիսի հմուտ ու վաստակաշատ ուսուցիչների կողքին, սակայն, աշխատում են նաև այնպիսիները, որոնք կարիք ունեն հոգեբանամանկավարժական գիտելիքների և մեթոդական լուրջ պատրաստվածության, առանց որոնց հնարավոր չէ գիտականորեն կառուցել դասը, կառավարել դասարանը, ճիշտ եղանակով ու ճանապարհներով հասնել ցանկալի արդյունքների:

Այստեղ դարձյալ մեծ անելիքներ ունեն Հայաստանի գիտնականներն ու մանկավարժները, որոնք թե՛ զաղթօջախներում և թե՛ Հայաստանում իրենց վրա պետք է վերցնեն սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման գործը՝ մանկավարժական գիտություններում արդեն ձևավորված գիտական ավանդույթներն ու արձանագրած ձեռքբերումները սփյուռքահայ մանկավարժներին փոխանցելու նպատակով:

⁴⁷ Յիսնամեակ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եւ վարժարանի, Լիբանան, Նոր Մարաշ, 1980, էջ 173:

Դաստիարակչական հարցեր

Արտատուումնական դաստիարակչական աշխատանքների անընդմեջ, բարձր կազմակերպվածությամբ, աշխույժ գործընթաց է տեղի ունենում Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանում: Արդյունքում ողջ աշակերտությունը եռուզեռի մեջ է: Ամեն օր զգացվում է հայկականության հեքն ու շունչը:

Շաբաթվա ուրբաթ օրը կոչվում է ատենամարզանքի օր: Եվ ամեն ուրբաթ՝ դասերից հետո, դպրոցում միջոցառում է. որևէ դասարան կազմակերպված ներկայացնում է որևէ տոնի, հիշատակի օրվա նվիրված, ինչպես նաև գրական, երաժշտական, թատերական, հայրենասիրական, պարային և այլ բնույթի մի ձեռնարկ:

Միջոցառմանը ներկա են լինում դպրոցի ողջ աշակերտությունը, ուսուցիչները, տնօրինությունը, հրավիրվածներ, նաև ծնողներ:

Այս միջոցառումներին երեխաները պատրաստվում են սիրով, սպասում սրտի թրթիռով՝ առիթ ունենալով դրսևորելու իրենց կարողությունները, ձիրքն ու շնորհքը՝ միաժամանակ ձեռք բերելով նորանոր ազգային ու համամարդկային արժեքներ:

Դպրոցում կազմակերպվում են նաև միջդասարանային մրցումներ՝ ասմունք, մարմնամարզություն և այլն:

Դպրոցն իր ակտիվ մասնակցությունն է բերում նաև ուսումնական խորհրդի կազմակերպած միջդպրոցական առարկայական և այլ բնույթի մրցույթներին: Սրանք բոլորը նպաստում են երեխաների մեջ դեռ վաղ տարիքից ձևավորելու ձգտում դեպի առաջընթացը, պայքարելու ունակություն, հնարավորություն տալիս ինքնաճանաչման, ինքնադրսևորման, նորի ճանաչման ու արժևորման՝ նպատակ ունենալով իրականացնել աշակերտների համակողմանի զարգացումն ու լիարժեք դաստիարակությունը:

«Յիսուն տարիներ է ի վեր Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի զանգերը հնչեցին ու կը հնչեն՝ հայացնելով գեղաժիժաղ Լիբանանի միջերկրականեան ակեխոով սա ափը: Փաղանգ մը կրթական մշակներ՝ Մեսրոպեան շունչով տոգորուն, դաստիարակեցին, զոհուեցան ու կը շարունակեն ծառայել հայ գիրին: Վարժարանը ե-

ղաւ հայ հոգիի կերտման օճախ մը,— «տաճար հրաշագործ, լուսոյ վառարան»,— ասվում է վարժարանի հորելյանական հուշամատյանում⁴⁸:

Այսօր արդեն 72 երկար ու ձիգ տարի է, ինչ դողանջում են Սրբոց Քառասնից Մանկանց վարժարանի զանգերը՝ ավետելով մաշտոցյան շնչի ու հայության հարատւությունը:

Ազգային Արգարեան վարժարան

Լիբանանում հայ կրթական գործի զարգացմանն իր ներդրումն է բերել ազգային Արգարյան վարժարանը, որը հիմնադրվել է 1931 թ. Ադանայի համանուն վարժարանի հիշատակին՝ մի խումբ ազգայինների նախաձեռնությամբ Բեյրութի Բուրջ-Համուդ թաղամասում (Նոր Ադանա):

Արգարյան վարժարանը Լիբանանի ազգային վարժարանների ցանցի մի մասը կազմող միավոր է, որն անխափան իրականացնում է հայակերտումի և մարդակերտումի իր առաքելությունները՝ «բուլոնելով իր սփյուռքահայության» 71 տարին:

Դպրոցաշինության գործում հայ հավատավոր մարդու դերն արժևորող հայրենասիրական ու պատմագիտական համապարփակ ընդգրկումի մի յուրատեսակ դրսևորում է վարժարանի վաստակաշատ տնօրենուհի, հմուտ մանկավարժ-դեկավար Գեղանի Էթենեզյանի ներքոհիշյալ խոսքը. «Ատանայի մեջ գոյութիւն ունեցող, եւ սակայն այսօր պատմութեան էջերուն անցած Արգարեան վարժարանի յիշատակին է կառուցուած այս հաստատութիւնը: Ինչպէս այլ ազգային վարժարաններ, ազգային Արգարեանն ալ հաստատուած է մեր պատմութեան տագնապալի հանգրուանին, հայրենակցական զգացումներէ առաջնորդուած կարգ մը ազգայիններու խիզախ նախաձեռնութեամբ, անցեալի անմոռաց յիշատակ մը յաւերժացնելու ազնիւ ձգտումով, ինչպէս նաև սփիւռքեան անորոշ պայմաններու մէջ նոր ձեւի ջարդի մը առաջքը առնելու եւ մեր գոյատեւումը ապահովելու նախանձա-

⁴⁸ Յիսնամեակ Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եւ վարժարանի, Լիբանան, Նոր Մարաշ, 1980, էջ 135:

խնդրութեամբ: Մեր վարժարաններուն համեստ ծննդոցը այսօր կրկնապէս երախտապարտ կը դարձնէ մեզ: Եղեռնէն ճողոպրած ասի մը հայութեան ներկայացուցիչներն էին այդ «Համեստ Ծննդոց»-ը կերտողները, որոնք առօրեայի տագնապին հետ, ընդհանրական պահանջք մը անձնականացուցած, տուին իրենց սիրտը, բազուկը, միտքը եւ նիւթը, ի խնդիր նորահաս սերունդի առողջ դաստիարակութեան եւ դարատր լոյսի մեր պաշտամունքին՝ անխափան շարունակման: Անոնք ժողովուրդին հետ, ժողովուրդին համար, իրենց առաւելագոյն կարելիութիւնները ի սպաս դրին: Տխուր էր իրենց արմատախիլ գոյավիճակը, սակայն հաւատաւոր ժառանգորդներն էին գեղեցիկին, ճշմարիտին, բարիին երկրպագուներուն: Լոյսի ջահը փոխանցեցին նաեւ հաւատաւոր մշակները, որոնք նիւթական շէնքը յաջողեցան ոգեղինացնել եւ հայրենագուկ հայորդիներուն տալ հարազատութեան զգացողութիւն եւ յոյս՝ գալիքի: Անոնք յաջողեցան ապահովել անխափան երթը վարժարանին: Որքան ալ Սփիւռքեան մեր կազմակերպութիւնները բերին, պիտի բերեն իրենց օժանդակութիւնը հայապահպանման ընդհանուր ճիգերուն, մշակույթի հետ հաղորդուելու իբրեւ առաջին մեկնակէտ ու կռուան կը մնայ, պիտի մնայ Հայ Դպրոցը»⁴⁹:

Սփյուռքի հայկական դպրոցը, հիրավի, իր գոյության ու պայքարի կռիվն է մղում տարբեր ճակատներում՝ քաղաքական, տնտեսական, կրթական, հայապահպանման, գաղափարական՝ դառնալով գաղութի ամբողջականության պահպանման կարևոր գործոն ու միջոց: Սրանից անենավտանգավորը տնտեսական գործոնն է, որին դիմագրավելու գործընթացում սփյուռքահայությունը գնում է մեծ գոհողությունների:

Ահա սա է պատճառը, որ ազգային Աբգարյան վարժարանը, որը 1987–1992 թթ. ունեցել է նույնիսկ երկրորդական բաժին (կրթական աստիճան), 1992–2001 թ. տնտեսական դժվարությունների պատճառով աշխատեց միայն նախակրթարանի և միջնակարգի կրթական բաժիններով (ներառյալ մակապարտեզը), իսկ 2001–ից ունի միայն մանկապարտեզի և նախակրթարանի բաժինները:

⁴⁹ Ազգ. Աբգարեան երկրորդական վարժարանի 1990–91 տարեշրջանի տարեգիրք, Պեյրոթ, Նոր Ատանա, 1991, էջ 6–7:

Սա գալիս է փաստելու այն իրողությունը, որ սփյուռքի հայկական դպրոցները, չնայած իրենց իրականացրած կրթադաստիարակչական ու հայապահպան արդյունավետ գործունեության, իրենց գերագույն ճիգերին ու ջանքերին, այնուամենայնիվ, ամուր երաշխիքներով ապահովագրված չեն վաղվա գոյության, գործունեության ու զարգացման համար:

Վաստակաշատ մանկավարժների, կրթական ու հասարակական–մշակութային գործիչների մեջ գերիշխում է իրատեսությունը, երկրի քաղաքական, տնտեսական իրավիճակների խոր իմացությունը և, դրանց հակակշիռ, հայկական դպրոցի գոյապայքարի ոչ նյութական ուժեղ կռվանների գիտակցումը:

Այսուհանդերձ թուլացած չեն սփյուռքահայության լավատեսությունը, հույսն ու հավատը հայի ապագայի հանդեպ՝ նրա իրագործումը տեսնելով մայր հայրենիքի բարգավաճմամբ ու հզորացմամբ:

Վերադառնալով ազգային Աբգարյան վարժարանին և չցանկանալով կրկնել այն խնդիրները, որոնք միասնական են ազգային բոլոր վարժարանների համար, կցանկանանք շեշտադրել դպրոցի գործունեության այն կողմերը, որոնք ինքնատիպ են և տարբերվում են մյուսներից իրենց բնույթով ու որակով:

Բարձր գնահատականի են արժանի ազգային Աբգարյան վարժարանի այն մեծ ջանքերը, որոնք ծնունդ տվեցին դպրոցի աշակերտական տարեգրքին՝ «Լուսաճեմին», որն իր գոյությամբ (1991–ից) աճող սերնդի մեջ դաստիարակում է ազգային ինքնագիտակցության ոգի, օգնում աշակերտներին՝ իրենց մտքերն ու խոհերն ազատ արտահայտելու, մեծապես նպաստում նրանց ինքնադրսևորմանն ու ինքնաճանաչմանը, սերմանում նրանց մեջ վեհ ու բարձր գաղափարներ՝ դրանով իսկ երեխաներին ցույց տալով կյանքի խորիմաստությունն ու գեղեցկությունը, այն արժանապատիվ ապրելու մեծ իմաստը:

Ինքնատիպ են հնչում Լիբանանի թեմի առաջնորդ Գեղամ արքեպիսկոպոս Խաչերյանի «Լուսաճեմ»-ի գոյությունն արժեքավորող խոսքերը. ««Լուսաճեմ»-ի հրատարակութիւնը կը դրսևտրէ վարժարանի աշխատանքի լրջութիւնը եւ յարատեւելու ոգին ու կորովը: Գե-

ղեցկագոյն նախաձեռնութիւններն անգամ ապարդիւն կը մնան առանց յարատեւութեան կամքին: «Լուսաճեմ»-ը իր բովանդակութեամբ, ծաղկեփունջ մըն է, որով այդքան անոյշ կը բուրեն Ազգային Վարժարանի յարկին տակ կատարուած կրթական, դաստիարակչական եւ ազգային գործունեութեան բազմատեսակ աշխատանքները:

«Լուսաճեմ»-ը հոգեկան վարձատրութիւն եւ գոհունակութիւն է տնօրէնութեան, ուսուցչական կազմին, խնամակալութեան, ծնողաց եւ բոլոր անոնց, որոնք սիրտ ու հոգի կը դնեն մատղաշ սերունդին հայեցի դաստիարակութիւն ջանքելու: Գոհունակութիւնը չի կայանար ազգային կրթական մշակին ջանքելուն, տալուն մէջ միայն, այլ այդ բոլորը «Լուսաճեմ»-ի ընդմէջէն կը վերադառնան որպէս աշխատանքի յոգնութիւնը արդարացնող:

Ահա այս նկատառումներով, «Լուսաճեմ»-ի հրատարակութիւնը կ'ընդունինք որպէս մեր ազգային կրթական անդաստանի բարեբեր հողին քաղցր պտուղը»⁵⁰:

Դպրոցի աշակերտական պարբերաթերթ-տարեգիրք ստեղծելը սփյուռքում խիզախ ու անձնվեր մի քայլ է, որը ոչ բոլոր դպրոցներն են կարողանում նախաձեռնել ու իրականացնել, այն էլ երկրի տնտեսական ծանր կացութեան պայմաններում: Իսկ Հայաստանում դա հազվադէպ երևոյթ է: Այս դժվարին ու պատասխանատու գործի իրականացման համար տնտեսականի հետ մեկտեղ անհրաժեշտ է, հիրավի, դպրոցի ուսուցչական և աշակերտական կազմի նպատակի բարձր գիտակցում, ստեղծագործական ձիրք, մտքի ու հոգու թռիչք, մի խոսքով՝ խիզախում:

Այս գործին նախանձախնդիր եղավ ու արարեց ազգային Արգարյան վարժարանը, որի մասին «Ազդակ»-ի մի թղթակից (Ս. Պ.) գրում է. «Այս տարեգիրքով կը յայտնաբերուի վարժարանին ներքին կեանքը, հոն կ'արտացոլայ ու կը թրթռայ հայու ոգին ու հոգին, որոնք լուսատու փարոսներն են հայ աշակերտին դէպի հայակերտում բացուելուն: Երանի թէ գրիչին հետ նոր մտերմութիւն ապրող մեր նորագոյն սերունդին զաւակները դպրոցական կեանքին հետ ու անկէ ետք

ալ շարունակէին նոյն հաւատքով ապրիլ հայ գիրին, գրականութեան ու մշակոյթին հետ:

«Լուսաճեմ»-ը հայելին է Ազգային Արգարեան երկրորդական վարժարանին: Մաքուր ու լուսատր հայելի մը, որ կ'արտացոլայ լիբանանահայ մեր կրթական ընդհանրական կեանքէն պատկեր մը, որ ունի իր յատուկ եւ առանձնակի դերն ու խորհուրդը»⁵¹:

Խորութեամբ ծանոթանալով «Լուսաճեմ»-ի հրատարակութեաններին՝ առավել կարևորեցինք ու արժևորեցինք դպրոցի տնօրէնութեան նախաձեռնութեանը, քանի որ, հիրավի, «Լուսաճեմ»-ի միջոցով աշակերտները հնարավորութեամբ են ստացել ազատ արտահայտելու իրենց խոհերն ու մտորումները կյանքի երևոյթների, բնութեան-մարդ, մարդ-մարդ փոխհարաբերութեանների, սիրո, երջանկութեան, դավաճանութեան, չարի ու բարու, ընկերութեան, պայքարի, կյանքի իմաստի, հայրենասիրութեան, նյութապաշտութեան, երազանքների մասին, որոնք երևակայութեան, մտքի թռիչքի, քննադատութեան, ստեղծագործութեան բացառիկ ու ինքնատիպ դրսևորումներ են: Դրանք խորապէս նպաստելու են աշակերտների անձի զարգացմանը, աշխարհայացքի ձևավորմանը, ինքնուրույնութեան ու ակտիվ գործունեութեան դրսևորմանը՝ նրանց մէջ սերմանալով հայրենասիրութեան, ազատամտութեան, համարձակութեան, արդարամտութեան, քննադատական մտածողութեան, կյանքի նկատմամբ իրատեսական վերաբերմունք, նպատակասլացութեան:

«Լուսաճեմ»-ում զետեղված աշակերտական շարադրութեանները մաս դպրոցի առօրյայի, աշխատանքների, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերութեանների արտացոլումներն ու արժևորումներն են, որտեղ դրսևորվում են սուր միտքը, դիտողունակ աչքը, ճկուն լեզուն:

«Լուսաճեմ»-ն իր պայծառ քայլարշավով, հայրենասիրական ու ազգային դիմագիծը բնորոշող կեցվածքով խորապէս կնպաստի հայրենիք-սփյուռք համագործակցութեան սերտացմանը՝ որպէս մեկ միասնութեան, մեկ ազգ ու մեկ ժողովուրդ:

«Եթէ «Լուսաճեմ»-ը կոչուած է Ազգային Արգարեան վարժարա-

⁵⁰ Ազգային Արգարեան երկրորդական վարժարանի տարեգիրք, (1996-97), Պեյրուք, Նոր Ատանա, 1997, էջ 5:

⁵¹ Ազգային Արգարեան երկրորդական վարժարանի տարեգիրք, (1997-98), Պեյրուք, Նոր Ատանա, 1998, էջ 12:

նի մատղաշ աշակերտներուն ներքին յոյզերը հունաւորելու, ապա անիկա արդարօրէն յաջողած է հարազատ թարգմանը դառնալու սերունդի մը, որ լիբանանեան հայրենիքի կողքին կ'ապրի նաեւ Հայաստանի ներքին կեանքով, կը տուայտի իր ազգին անցեալով եւ կը խանդավառուի անոր ապագայի տեսիլքով», — ասվում է 1997 թ. տարեգրքում⁵²:

«Լուսաճեմ»-ի երկրորդ մասը տնօրինության տարեկան ամփոփագիրն է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների, հաջողությունների, դժվարությունների (տնտեսական, կազմակերպչական, կադրային, ծրագրային ուսումնական), լայն ընգրկում ունեցող արտադասարանական (համադպրոցական) և արտադպրոցական միջոցառումների մասին:

Արգարյան վարժարանում գործում են աշակերտական երգչախումբ, նվագախումբ՝ «Այգեստան», և պարախումբ: Այս երեք մշակութային կառույցներում դպրոցի աշակերտության ընդգրկումը նպաստում է նրանց գեղագիտական դաստիարակությանը, ձևավորում նրանց մեջ գեղեցիկը տեսնելու, ընկալելու, արժևորելու ունակություն, գեղագիտական ճաշակ, հաղորդակից դարձնում մշակութային արժեքներին:

Այս երեք կառույցներն էլ օգնում են երեխաների ինքնաճանաչմանը, հնարավորություն ստեղծում նորանոր հատկանիշների դրսևորման ու զարգացման համար:

Գոհունակությամբ շեշտենք, որ մշակութային երեք կառույցների աշխատանքները կազմակերպվում են բարձր պրոֆեսիոնալիզմով ու մասնագիտական բարեխղճությամբ:

Դպրոցի աշխատանքներին ի նպաստ են գործում ծնողական խորհուրդը և տիկնանց հանձնախումբը, որոնց ջանքերով կազմակերպված տարբեր բնույթի ձեռնարկները նյութական աջակցություն են բերում վարժարանին, օգնում հաղթահարելու տնտեսական դժվարություններն ու խնդիրները:

Ծնողական խորհրդի աշխատանքները դպրոցում ունեն նաև խորհրդատվական ու կազմակերպչական բնույթ՝ ամրապնդելով ըն-

տանիք-դպրոց փոխհարաբերություններն ու համագործակցությունը՝ միասնական ջանքերով լուծելու դպրոցի սաների կրթադաստիարակչական տարաբնույթ խնդիրները:

Ինչպես մյուս վարժարաններում, Արգարյանում նույնպես տեղի են ունենում ներդպրոցական տարբեր ձեռնարկներ, ատենամարզանքի ժամեր, ազգային տոների հատուկ հանդիսություններ, որոնց առիթով վարժարան են հրավիրվել թե՛ հայրենի և թե՛ սփյուռքահայ գրողներ, մտավորականներ, արվեստագետներ, որոնք իրենց խոսքով ու գնահատանքով արժևորել են վարժարանում կատարվող կրթադաստիարակչական, ուսումնամեթոդական աշխատանքները՝ իրենց հերթին շունչ ու ոգի ներշնչելով հայորդիներին:

Մերտ է կապը վարժարանի և եկեղեցու միջև, որը նպաստում է դպրոցում կրոնական դաստիարակության իրականացմանը:

Ամեն շաբաթ դպրոցի աշակերտները ներկա են գտնվում առավոտյան ժամերգությանը: Դասարանային հերթականությամբ Մեծ պահքի շրջանում մասնակցում են Արևազայի արարողությանը, հաղորդվում են Ս. Ծննդի և Ս. Հարության տոների առթիվ:

Այս ամենը նպաստում է դեռ վաղ տարիքից երեխաների մեջ սերմանելու մարդասիրական բարձր զգացումներ և անխափան ընթանալու քրիստոնեության լուսավոր ճանապարհով:

Շատ բնութագրական են հնչում ազգային Արգարյան վարժարանի տնօրենուհու՝ Գեղանի Էթիմեզյանի հետևյալ խոսքերը. «Այո, կը կարօտինք քաջութեան, հաւատքի, կրկնակ ճիգի, որպէսզի յաջողինք արարումի կեդրոն՝ դպրոցին, վերջին միջնաբերդին վստահուած՝ հողանիւթ շինուածքներուն փոխանցել մեր հարուստ աւանդին տառն ու ոգին, խնկարկուն դարձնել զանոնք բարիին ու գեղեցիկին, զինել զանոնք համապատասխան վկայականներով...»⁵³:

Լիբանանի Հայ առաքելական եկեղեցու Ազգային առաջնորդարանի հովանու տակ գործում են ոչ միայն նախակրթարաններ, այլև միջնակարգ և երկրորդական վարժարաններ, որոնք ապահովում են լիբանանահայ երեխաների շարունակական կրթությունը,

⁵² Ազգային Արգարեան երկրորդական վարժարանի տարեգիրք, Պեյրուք, 1997, էջ 9:

⁵³ Ազգային Արգարեան երկրորդական վարժարանի տարեգիրք, (1997-98), Պեյրուք, Նոր Ատանա, 1998, էջ 10:

նպաստում նրանց գիտական աշխարհայացքի ձևավորմանը, համակողմանի զարգացմանը, լիարժեք դաստիարակությանը և մասնագիտական կողմնորոշմանը: Իսկ այս ամենը հնարավորություն է ստեղծում նրանց ընտրելու կյանքի ճիշտ ուղին, համալրելու որակյալ մասնագետների շարքը:

Ազգային միջնակարգ և երկրորդական վարժարաններից են Ս. Խանամիրեան, Եղ. Մանուկեան, Լ. Ս. Յակոբեան, Նուպարեան-Խրիմեան դպրոցները և Ազգային Յառաջ Գ. Կիլպենկեան վարժարանը՝ Այնճարում, որն ամբողջովին հայկական գյուղ է: Հողատարածքն անգամ հայերի սեփականությունն է: Հայերի համար այն արարներից գնել է Ֆրանսիան՝ բնակեցնելու համար տեղահանության գոհ դարձած հազարավոր հայերի:

Լիբանանի տարածքի վրա «կտոր մը Հայաստան է Այնճարը»՝ իր գեղեցիկ բնությամբ, կոկիկ ու մաքուր թաղամասերով, իր եկեղեցիներով ու դպրոցներով, հուշարձաններով, սրահներով, իր բառ ու բանով, կոլորիտով, ավանդապաշտությամբ, մի խոսքով՝ իր հայկակալությամբ, բարձր լավատեսությամբ, մեծ հույսով ու հավատով:

Լինելով Այնճարում, խորությամբ զգալով այնտեղ տիրող հայի շունչն ու ոգին՝ կրկին անգամ համոզվեցինք, որ ո՛չ բռնությունը, ո՛չ ջարդն ու կոտորածը, ո՛չ տարածությունն ու ժամանակը չեն կարող թեքել անգամ «հայության կաղնին», որն իր խոր ու ամուր արմատներով, ուրիշներին անհասկանալի ներքին, անկարագրելի ուժով, իր հպարտ ու խրոխտ կեցվածքով կանգուն է մնալու հարատև:

§ 4.3. Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանը

Ուսումնական ծրագրի հարցը լուծելուց հետո ազգային վարժարանների և, ընդհանրապես, Լիբանանի բոլոր հայկական դպրոցների համար առաջնային չլուծված դժվարին խնդիրներից էր մնում ուսուցչական կադրերի հարցը: Գրեթե բոլոր դպրոցներն ունեին որակյալ կադրերի պակաս, որը խորապես վտանգում էր ուսուցման որակը և ողջ կրթական գործը, լիարժեք զարգա-

ցած և հայեցի դաստիարակություն ստացած սերունդ ունենալու մեծ նպատակը: Այս ամենին ավելանում էր նաև ազգային մտավորակալություն ունենալու մեծ խնդիրը, որը պետք է ստանձնեի եղած ազգային արժեքների պահպանման և նորի ստեղծման ու հայապահպանության պատասխանատու և դժվարին գործը:

Ահա վերոհիշյալով էին պայմանավորված Լիբանանում երկրորդական վարժարաններ ունենալու հարցի հրատապությունն ու անհրաժեշտությունը:

«Մեկ միտք կը դեկավարեի բոլորը՝ հայ տղան և հայ աղջիկը կը պատկանին հայ դպրոցին. պիտի յաճախեն հայ դպրոց: Այս էր պահանջը թե՛ մանկավարժութեան հիմնական սկզբունքին և թե՛ առողջ ազգայնութեան թելադրանքին:

Կար եւ ուրիշ հրամայական պահանջ մը. հայ մտաւորականութիւն ստեղծելը: Ազգային տարրական դպրոցներէն չէ, որ պիտի ելլէին այսպիսի մարդիկ. ուստի կենսական հարց էր միջնակարգ դպրոցի հիմնադրութիւնը: Ան պիտի դառնար ոգին ցրուած հայութեան հոգեղէն հայրենիքին», — գրում է Գ. Գյոզալյանը⁵⁴:

Ահա այդպիսի ոգի դարձավ, պատմական մեծ ու ազգանվեր դերակատարություն ունեցավ և մինչև վերջերս էլ շարունակում էր ունենալ Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանը: Մի կրթօջախ, որի ստեղծումը շրջադարձային նոր էջ է բացել լիբանանահայության կյանքում և խորապես նպաստել գաղութի հետագա զարգացման գործին: «Հայակերտ առաքելութիւն մը ունեցավ ճեմարանը: Եվ մարդակերտ բոլորանուէր ճիգ՝ առաջին տասնամեակներուն ջանքուած Հայոց նորագույն պատմութեան հայրենակերտ տիտաններուն իսկ կողմէ, — Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան, Սիմոն Վրացեան»⁵⁵:

Այո՛, այս տիտանների ազգանվեր ու նպատակասլաց ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ իրականություն դարձնել «օտար հողի վրա հայը հայ պահելու» գլխավոր նպատակին ծառայող առաջին ու վճռական քայլը:

⁵⁴ Գիւլալեան Գ., Համազգայինի եւ Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ (1929–1954), Պեյրութ, 1954, էջ 10:

⁵⁵ Համազգայինի Մեկնաբան և Հայկ Արսլանեան և Նշան Փալանճեան ճեմարաններ (1994–95), տեղեկագիր, Պեյրութ, 1995, էջ 3:

Սփյուռքում հայության և հայ մշակույթի պահպանման և հավերժացման նախանձախնդիրն ու ջատագովը դարձավ նորաստեղծ (1929 թ. մայիսի 28) «Հայ կրթական և հրատարակչական համագալստիքի ընկերություն»-ը, որի համար գործունեության առաջնահերթ դաշտը եղավ կրթությունը: Ծննդարանի ստեղծման համար հիմնարար ու վճռորոշ դեր խաղաց 1929 թ. մայիսի 28-ին Կահիրեում Լ. Շանթի արտասանած ոգեշունչ ճառը, ուր նա մասնավորապես ասում է. «Օտար գաղութներու մէջ, շրջապատի այլասերող եւ ապագայնացնող հազար ու մէկ փտանգներուն մէջ ինչպէ՞ս կրնայ նոր սերունդը հայ ըլլալ եւ անկախութեան պայքարը մղել: Մանաւանդ ինչպէս պէտք է հոգիով հայ մնայ: Մայիսի 28-ը անցեալ կը դառնայ, մինչ ան պէտք է ապագայի տենչ մը ըլլայ: Ո՞վ պէտք է կատարէ այս դերը: Երկու միջոց կայ. դպրոց եւ գիրք, որոնք միայն կրնան փրկարար դեր կատարել, հայ մնալու պայքարը մղել, հայ հոգիներու մէջ ազգային մակարդակը պատրաստել»⁵⁶:

Նույն հանդիսության ժամանակ Նիկոլ Աղբալյանն էլ, կարևորելով դպրոցի դերը նոր սերնդի հայեցի դաստիարակության գործում, իր խոսքում ասում է. «Դպրոցին մէջ մեր փոքրիկներուն պէտք է սորվեցնել, թե դուք հայրենիք ունիք... անոնց ամէն բան պէտք է սորվեցնել՝ գիտութիւն, լեզու, նկարչութիւն, բայց պէտք է ամենէն առաջ եւ ամենէն վեր մէկ բան սորվեցնել՝ հայութիւն...»⁵⁷:

Նորաստեղծ «Հայ կրթական եւ հրատարակչական համագալստիքի ընկերություն»-ը ծրագրել էր իր գործունեությունը տանել երեք ուղղություններով՝

- ա. նոր սերնդին տալ հայեցի կրթություն,
- բ. նպաստել չափահասների ինքնագարգացմանը,
- գ. մշակել հայագիտությունը:

«Համագալստիքի» գործունեության առաջին (կրթական) ուղղության փաստական քայլը հայ ճեմարանի ստեղծումն էր Լիբանանում, որը մի շարք գաղափարական գործիչների գերագույն ջանքերի ու զո-

հողությունների արդյունքն էր: Հայ ժողովրդի խոր հարգանքին և երախտագիտությանն արժանի են հիմնադիր բոլոր անդամները, որոնց մեջ մի ինքնատիպ եռյակ էին կազմում հայտնի գրող և մանկավարժ Լ. Շանթը, գրական քննադատ և հայագետ Ն. Աղբալյանը և հասարակական մեծ գործիչ դոկտոր Հ. Օհանջանյանը, որոնք քսան տարի անընդմեջ «հանդիսացան Համագալստիքի ընկերութեան և Հայ ճեմարանի ամրակուռ սիւները»: Եվ այս եռյակից երկուսը՝ հայ կրթական գործի ջահակիրներ Լ. Շանթը և Ն. Աղբալյանը, 1929 թ. հիմնում են առաջին Հայ ճեմարանը Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում:

ԳՃԵՄԱՐԱՆԻ ԿԻՄՆԱՊԻՐ ՈՍՏՈՑԻՉՆԵՐԸ

Մեծ մանկավարժ Լ. Շանթը 22 տարի անընդմեջ ղեկավարեց Հայ ճեմարանը, նրանում ստեղծեց մանկավարժական առողջ մթնոլորտ, կարողացավ նոր սերնդին ներշնչել կրթության և դաստիարակության կարևորությունն ազգապահպանման գործում:

«Մեծ մարդ մը, մեծ գրագետ մը և մեծ մանկավարժ մըն էր Լ. Շանթ: Հայու ամբողջական նկարագիրն ուներ, առաւել՝ երոպական դաստիարակութիւն մը, որ զինք կը դարձնէր տիպար երոպացի մը՝ աշխատանքի կանոնաւորութեամբ, ճշդապահութեամբ և արժանապատուութեամբ: Լ. Շանթ հայ մտաւորականութեան գաղափարական ընտանիին կը պատկանէր և իր ամբողջ կեանքն ու գործունեութիւնը կը ղեկավարէր օգտապաշտ սկզբունքներով, հայ ժողովրդին վերադարձնելու առաւելագոյնը, որ կրցած էր ժառանգել անկէ որպէս ընդունակութիւն»,— գրում է Կ. Սասունիին⁵⁸:

Լ. Շանթը ճեմարանում դասավանդում էր հայերեն, քերականություն, մանկավարժություն, հոգեբանություն: Լ. Շանթի կյանքն աշխատանք էր նշանակում: Նա ուներ չափազանց բեղմնավոր գրիչ, որն ընդգրկում էր գրական, գիտական և մանկավարժական ոլորտները: Բարձր գնահատանքի է արժանի նրա դասագրքաստեղծման գործունեությունը:

⁵⁶ Համագալստիքի եւ Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ (1929–1954), Պեյրութ, 1954 թ., էջ 20:

⁵⁷ Նշված աշխատությունը, էջ 23:

⁵⁸ Համագալստիքի եւ Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ (1929–1954), Պեյրութ, 1954 թ., էջ 54:

Տաղանդի և տքնաջան աշխատանքի արդյունք էր տարրական (նախակրթարան), միջին դասարանների համար գրված նրա դասագրքերի շարքը, որոնց թիվը հասնում էր 18-ի: Լ. Շանթն իր մեծ նվիրումով ու սիրով ճեմարանը դարձրեց մի պատկառելի հաստատություն՝ հայությանը նվիրելով պատրաստված սերունդներ, որոնք այսօր աշխարհի տարբեր ծայրերում ծառայում են հայ մշակույթին և հայապահպանությանը:

Նույնարժեք մեծ ծառայություն մատուցեց ճեմարանին Նիկոլ Աղբալյանը՝ լինելով նրա տնօրենը, մտավորական և բարոյական սյունը: Նիկոլ Աղբալյանի մանկավարժական հայացքները համընթաց էին Լ. Շանթի մանկավարժական սկզբունքներին: Սա խորապես նպաստավոր ազդեցություն էր գործում ճեմարանի անխափան ու արդյունավետ գործունեության վրա:

Գրագետ-քննադատ, հայագետ և մանկավարժ Նիկոլ Աղբալյանի մտքի ճառագայթումները մի նոր հմայք ու որակ էին տալիս ճեմարանին, որտեղ նա դասավանդում էր հայոց պատմություն, աշխարհագրություն, հայ մատենագրություն և գրականության պատմություն: Իրավացիորեն է գրում Կ. Սասունին, թե՛ «աշակերտությունը անոր ներկայութիւնը ճեմարանի մէջ կը նկատէր շարժական Հայաստան մը: Հայ ըլլալու հպարտանքը, որ այնքան շեշտուած կը տեսնենք քսան տարիներու ճեմարանական սերունդին քով, առաւել չափով Ն. Աղբալեանի մտքին ու գեղեցիկ արտահայտութիւններուն կը պարտինք»⁵⁹:

Հայ հին մատենագրության վերաբերյալ իր բացառիկ դասախոսությունների շարքով նա գրասեր երիտասարդության մեջ վառում էր լույսի և ուսման տենչ, ստեղծում մտավորական բացառիկ մթնոլորտ:

Դասախոսություններին զուգահեռ նա նույնպես զբաղվում էր պատմագրական, լեզվագիտական, գրական և քննադատական ուսումնասիրություններով, որոնք «նրա մտքի կանոնաւորութեան և հայերեն լեզուի բարձր ոճի նմոյշներ են»:

Ճիշտ է, ճեմարանի գոյությունը պայմանավորված էր հայ ժողովրդի, մասնավորապես լիբանանահայության, միությունների և բարերարների նվիրաբերությամբ, սակայն, վստահորեն կարող ենք շեշտել, որ Հայ ճեմարանի հոգեկան և բարոյական մեծ բարերարները եղան Լ. Շանթը և Ն. Աղբալյանը:

Հայ ճեմարանի բացումը և գործունեությունը

1930 թ. մարտին բացված Հայ ճեմարանն ուներ միայն նախապատրաստական դասարան՝ 15 աշակերտով: Դասավանդվող առարկաներն էին՝ հայոց պատմություն, աշխարհագրություն, իրավագիտություն, թվաբանություն, հայոց լեզու, հայ գրականություն, օտար լեզուներ, գեղարվեստ, մարզանք:

Իսկ կանոնավոր ուսումնական տարին ճեմարանում սկսվեց 1930 թ. հոկտեմբերին: Այն ուներ երեք հիմնական (երկրորդական վարժարան) և մեկ նախապատրաստական դասարան՝ 64 աշակերտով:

Ժամանակի համար երկսեռ երկրորդական վարժարանի գոյությունը որոշ վերապահությամբ ընդունվեց: Սակայն ճեմարանի մանկավարժների նվիրական աշխատանքը ծնողների մեջ հավատ ու վստահություն ներշնչեց և փոխեց վերաբերմունքը երևույթի վերաբերյալ:

1947 – ին հարց դրվեց Բեյրութի Հայ ճեմարանը վերանվանել Նշան Փալանջյանի անունով: Սա տեղի ունեցավ այն պայմանի համաձայն, որ առաջադրել էին Նշան Փալանջյանի երկու քույրերը՝ տիկ. Պայծառ Խանջյանը և օր. Անուշ Փալանջյանը, այն է՝ իրենց եղբոր հիշատակը հավերժացնելու համար նրանք ճեմարանին նվիրում են 20000 անգլ. ոսկի, մի պայմանով, որ ճեմարանը կրի իրենց եղբոր անունը: Բնականաբար, այս խոշոր նվիրատվությունը շրջադարձային դեր կարող էր խաղալ ճեմարանի կյանքում՝ իրականացնելու վաղեմի բաղձանքը՝ ունենալ սեփական շենք ու նոր ոգով շարունակել սկսած գործը: Առաջարկն ընդունվում է, և 1947-ից ճեմարանը կրում է Նշան Փալանջյանի անունը:

⁵⁹ Կ. Սասունի, Գամազգայինի և Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ, Պեյրութ, 1954, էջ 55:

1951 թ. ծանր կորստից՝ Լ. Շանթի մահից հետո Համագայինի կենտրոնական վարչությունը Ամերիկայից ճեմարան աշխատանքի է հրավիրում Սիմոն Վրացյանին, որը շարունակեց Լ. Շանթի և Ն. Աղբալյանի սկսած գործը: «Ես ուրախ եմ յայտարարելու, — գրում է Ս. Վրացյանը, որ պաշտոնակից ընկերներուս սրտագին ու անձնուր օժանդակութեամբ մենք անվթար պահեցինք Լ. Շանթի և Ն. Աղբալեանի մեզի ժառանգութիւն ձգած հաստատութիւնը»⁶⁰:

Ճեմարանի կրթական աստիճանները և կրթության բովանդակությունը

Ճեմարանի կրթական ծրագիրը համապատասխանում էր ֆրանսիական լիցեյի ծրագրին՝ ավելացրած հայագիտական առարկաները:

Ըստ ֆրանսիական ծրագրի՝ ճեմարանը յոթնամյա էր և բաժանվում էր կրթական երկու աստիճանի. առաջին չորս տարիները կոչվում էին բարձրագույն նախակրթություն (միջնակարգ դպրոց), տրվում էր ընդհանուր կրթություն, հաջորդ երեք տարիները, որոնք կոչվում էին լսարան, բաժանվում էին 3 ճյուղի՝ գիտական, գրական, առևտրական, այսինքն՝ կրթությունն իրականացվում էր հոսքերով, որը, բնականաբար, չափազանց նպաստում էր սովորողների մասնագիտական կողմնորոշմանը: Վերջին երեք տարիները կոչվում էին երկրորդական վարժարան:

Գիտական ճյուղն ավարտողները հնարավորություն ունեին մասնակցելու ֆրանսիական բաքալորեայի քննություններին (12-րդ դասարան):

Գրական ճյուղում առավել խորությամբ դասավանդվում էին հին ու նոր հայերեն, հայ գրականություն, հայոց պատմություն, Մերձավոր Արևելքի ժողովուրդների գրականության պատմություն և մանկավարժություն:

Օտար լեզուներից ճեմարանում դասավանդվում էին՝ արաբերեն, ֆրանսերեն և անգլերեն: Ճեմարանում ֆրանսերեն լեզուն հայե-

րենից հետո դիտվում էր երկրորդ կարևոր լեզուն: Եվ գիտական շատ նյութեր դասավանդվում էին ֆրանսերենով:

Այս ամենով հանդերձ պետք է ընդգծել այն կարևոր փաստը, որ Հայ ճեմարանի բուն նպատակը բաքալորեան չէր: Ճեմարանի հիմնադիրները և նրանով շահագրգիռ բոլոր կազմակերպություններն իրենց գործունեությունն իրականացնում էին՝ առաջնորդվելով հայ մշակույթի պահպանման նպատակով ու մտահոգությամբ: Հետևաբար ճեմարանի կրթության բովանդակության մեջ հայագիտական նյութերը (առարկաները) մեծ տեղ էին զբաղեցնում: Սրանց ավելանում էր նաև կրոնի և հայ եկեղեցու պատմության դասավանդումը:

Նշան Փալանջյան ճեմարանն այսօր

Նշան Փալանջյան ճեմարանը 1930 թ. սկսեց իր ուսումնական առաքելությունը՝ Լ. Շանթի և Ն. Աղբալյանի տեսիլքով՝ նպատակ ունենալով տարագիր հայության համար ստեղծել հայեցի դաստիարակության, հայ մշակույթի, հայկական արժեքների պահպանմանն ու զարգացմանը կոչված գիտակից սերունդ:

Եվ հազարավոր ճեմարանականներ այսօր տարբեր գաղութներում ծառայում են այդ առաքելությանը՝ մշտնջենապես կապված լինելով մայր հաստատությանը, նրա գաղափարական մթնոլորտին:

Հիմնադրության սկզբնական շրջանում ճեմարանը նախակրթարանի (տարրական) դասարաններ չուներ: Տարիների ընթացքում այն լրացվեց և ունեցավ ինչպես մանկապարտեզի, այնպես էլ նախակրթարանի և քոլեջի բոլոր կրթական աստիճանները՝ միջնակարգ և երկրորդական:

Նախակրթարանում առարկաները դասավանդվում են հայերեն, իսկ միջնակարգում և երկրորդականում՝ ֆրանսերեն:

Նշան Փալանջյան ճեմարանն անխափան երթ է ունեցել, մույնիսկ լիբանանյան ծանր պատերազմական տարիներին: Ունեցել է տնտեսական դժվարություններ, սակայն դրանք հաղթահարվել են հայության անկոտրում վճռականության, կամքի ու բարձր նպատակասլացության շնորհիվ:

⁶⁰ Բանեան Գ. և Իշխան Ս., Համագայինի եւ Ն. Փալանջեան ճեմարանի քսանհինգամեակ, Պեյրոս, 1954, էջ 106:

1973–74 թթ. Նշան Փալանջյան ճեմարանն ուներ 1000–ից ավելի աշակերտություն, և նրա շենքն արդեն չէր բավարարում անհրաժեշտ պահանջները: Ջգացվում էր դպրոցական երկրորդ կենտրոնի կարիքը, որի վերաբերյալ իր համապատասխան որոշումն ընդունեց Համազգայինի վարչությունը:

Եվ 1988 թ. նոյեմբերի 20–ին տեղի ունեցավ Անթիլիասի բարձունքին Մզհերի բլուրների վրա վեր խոյացած Համազգայինի երկրորդ ճեմարանի հանդիսավոր բացումը՝ կառուցված Անվերսի Արսլանյանների մեծ նվիրատվությամբ, որով էլ պայմանավորված էր ճեմարանը Մելանքթոն և Հայկ Արսլանյանների անվանակոչմամբ: «Նորաբաց ճեմարանը փոքրիկ Հայաստան մըն է, որ հետզհետե ամբողջանալով ու ճոխանալով, իր կարգին իր կարելուր նպաստը պիտի բերէ Մեծ ու Յաւերժական Հայաստանի դարբնումին»⁶¹:

Երկրորդ ճեմարանի բացումից հետո Նշան Փալանջյան ճեմարանը պահպանել էր միայն մանկապարտեզի և նախակրթարանի բաժինները: Նրա շրջանավարտներն իրենց ուսումը հիմնականում շարունակում են Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի միջնակարգ և երկրորդական բաժիններում:

Ճեմարանը Լիբանանի պետական կրթական համակարգին կապված չէ, սակայն ուսուցումը տարվում է ըստ պետական ծրագրի՝ պահպանելով աշխատանքի ոճի առանձնահատկությունները:

Առարկայական հանձնախմբեր դպրոցում չեն գործում, բայց ժամանակ առ ժամանակ գումարվում են նույն առարկան դասավանդող ուսուցիչների ժողովներ: Նշան Փալանջյան ճեմարանի ուսուցչական կազմում հիմնականում հայեր են:

Կրթության բովանդակությունն ընդգրկում է՝ հայերեն, հայոց պատմություն, արաբերեն, ֆրանսերեն, թվաբանություն–մաթեմատիկա, բնագիտություն, աշխարհագրություն, կրոն, ինչպես նաև մարզանք, երգ, նկարչություն, ձեռքի աշխատանք:

1936–ից առ այսօր դպրոցում գործում է շրջանավարտից միությունը, որի գործունեությունը խորապես նպաստում է դպրոցի անխափան երթին և հայ մշակույթի զարգացմանն ու տարածմանը:

Ճեմարանը պարբերաբար լույս է ընծայում տարեգրքեր, որոնք հանգամանորեն ամփոփում են դպրոցի ձեռք բերած հաջողությունները, վերլուծում դժվարությունները, փաստում կրթօջախի անընդմեջ զարգացող ընթացքը: «Ճեմարանի վաստակը անոր զլխաւոր կերտիչներու անուան ու երախտիքին չափ շողարձակ ու պատկառելի է, եւ անոնց նման՝ իր ակունքը առնող Հայաստանէն, բաշխուելու համար աշխարհացրի հայութեան, իբրեւ հայրենական ամենաթանկագին աւանդ եւ, մռայլ օրերու մէջ, ազգային մշտարժարժ հաւատքի ու կամքի աներեր պատուանդան: Վաստակ մը՝ որ Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալեանի և Սիմոն Վրացեանի ամենօրեայ ինքնամուէր մաշումին ոգեղէն բիրեղացումն է, հայրենաբոյր անոնց շունչով փոխանցուած իրենց գործակիցներուն եւ աշակերտներուն, անոնցմով շարունակուելու, բազմապատկուելու, ճոխանալու համար»⁶²:

Մտավոր կյանքի կենտրոն է եղել Համազգայինի Նշան Փալանջյան ճեմարանը՝ իր անցյալով ու ներկայով, իր տված սերունդներով և հայ մշակույթի զարգացման ու պահպանման նվիրական գործին այդ սերունդների բերած նպաստով:

Սակայն ցավով պետք է արձանագրենք, որ երկու տարի առաջ Համազգայինի կենտրոնական վարչության որոշմամբ Նշան Փալանջյան ճեմարանը՝ տարրական կրթական բաժնով, դադարեցրել է իր գործունեությունը որպես առանձին գործող կրթօջախ (ֆինանսական դժվարությունների պատճառով) և միավորվել է Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանին:

Թե որքանով է արդարացված այս որոշումը, ցույց կտա ժամանակը: Սակայն մեկ բան ակնհայտ է, որ տարիների բովով անցած, պատմական, ազգապահպան, անգնահատելի դերակատարություն ունեցած, հայ խոշոր մշակներ Լևոն Շանթի, Ն. Աղբալյանի, Ս. Վրացյանի ոգով ու քրտինքով մարմնավորված, հայապահպանական մեծ առաքելություն ունեցած Նշան Փալանջյան ճեմարանի լույսը պետք է ճառագեր հարատև՝ որպես հայության հավերժության խորհրդանիշ:

⁶¹ Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանյան ճեմարանը, Տեղեկագիր, Պեյրուք, 1991 թ., էջ 9:

⁶² Համազգայինի Ն. Փալանճեան ճեմարան, 50–ամեակ, տեղեկագիր, Պեյրուք, 1980 թ., էջ 7:

Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարան

Ինչպես վերը նշեցինք, 1988 թ. նոյեմբերի 20-ին Բեյրութում բացվեց իբրև Նշան Փալանջյան ճեմարանի շարունակություն և միաժամանակ նրա հետ մի ամբողջություն կազմող Համազգայինի երկրորդ՝ Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանը, ուր տիրում է հայկական ոգին, ուր ամեն օր իրենց ազգային արժեքների հետ են ծանոթանում ու հաղորդակցվում հարյուրավոր հայորդիներ, որը նպաստում է նրանց մեջ ազգային ինքնագիտակցության ոգու սերմանմանը և հայապահպանությանը:

Ինչպես Նշան Փալանջյան ճեմարանը, այնպես էլ Մ. և Հ. Արսլանյան ճեմարանը Լիբանանի պետական կրթական համակարգի հետ կապված չէ (ենթակայության, վերահսկողության առումով), այդուհանդերձ պարտադիր իրականացնում է կրթական պետական ծրագիրը, սակայն առանձնահատուկ մոտեցումներով: Դպրոցն ունի տնօրեն-խորհուրդ՝ չորս հոգուց բաղկացած, տնօրենի նախագահությամբ: Տնօրեն-խորհրդի իրավասության շրջանակներում են գտնվում ճեմարանին վերաբերող բոլոր հարցերը՝ ուսումնադաստիարակչական, տնտեսական, ֆինանսական, կադրային, ծրագրային, դասագրքաստեղծման և այլն:

Քանի որ ճեմարանը Համազգայինի օժանդակության և ենթակայության տակ է, հետևաբար դպրոցի բոլոր հարցերի համակարգողն ու պատասխանատուն Համազգայինի կենտրոնական վարչության ընտրած կրթական հանձնախումբն է, որի միստերին մասնակցում է ճեմարանի տնօրենը և պարբերաբար հաշվետվություն տալիս դպրոցի տարբեր խնդիրների վերաբերյալ:

Տնօրենի իրավասություններից են ուսուցիչ ընդունելը և աշխատանքից ազատելը (պետության օրենքներին համապատասխան)՝ խորհրդակցելով, իհարկե, կրթական հանձնախմբի հետ: Ուսուցիչ ընտրելու հարցում հաշվի է առնվում նրա կրթական վկայականը և փորձառության տարիները:

Մ. և Հ. Արսլանյան ճեմարանն ունի կրթական երեք աստիճաններ՝

- 1. նախակրթարան (1-6 դասարաններ),

- 2. միջնակարգ (7-9 դասարաններ),

- 3. երկրորդական (10-12 դասարաններ):

Ճեմարանում ուսուցումն իրականացվում է ֆրանսիական կրթական ծրագրով (բաքալորես):

Համընթաց իրականացվում է երկու ծրագիր՝ պետական և հայկական: Հարկ է այստեղ նշել, որ Լիբանանում պետականորեն ճանաչված են և թույլատրելի են միաժամանակ և՛ ֆրանսիական՝ բրյովելի, բաքալորեսայի, և՛ արաբական ծրագրերը:

Ճեմարանը պարտադրված իրականացնում է պետական ծրագիրը՝ իր սաների համար ապահովելու շարունակական կրթության հնարավորությունը ինչպես Լիբանանում, այնպես էլ երկրից դուրս:

Կրթության բովանդակությունը և ուսուցչական կազմը

Համընթաց երկու՝ պետական պարտադիր և հայկական ծրագրերի իրականացումը բավականին դժվարացնում է ճեմարանում ուսուցման կազմակերպման գործը, քանի որ այն ծանրաբեռնում է աշակերտների շաբաթական ուսումնական զբաղվածությունը՝ յուրաքանչյուր դասարանի պարտադիր կրթության բովանդակությունն ավելացնելով որոշակի ուսումնական ժամաքանակով (հայագիտական առարկաներ):

Աղյուսակ 4.
Ճեմարանի ուսումնական պլանը (շաբաթական ժամերի քանակ)

Նախակրթարան - Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ.	Ժամեր	Դասարան
1. Հայերեն	7	7 և Ե
2. Հայոց պատմություն	2	
3. Արաբերեն	6	
4. Ֆրանսերեն	6	
5. Թվաբանություն	5	
6. Իրավագիտություն	2	
7. Նկարչություն	2	
8. Ձեռքի աշխատանք	1	
9. Երգ	1	
10. Ռիթմիկ մարզանք	2	
11. Աշխարհագրություն	1	

Միջնակարգ - Զ. Է. Ը. Թ.		
1. Հայերեն	6	
2. Հայոց պատմություն	2	
3. Արաբերեն	6	
4. Ֆրանսերեն	6	
5. Անգլերեն	4	
6. Մաթեմատիկա	5	
7. Գիտություն	2	
8. Ընդհ. պատմ. - աշխարհագրություն	4	
9. Հայաստանի աշխարհագրություն	1	
10. Մարզանք	1	
11. Համակարգիչ	1 թ	
12. Գրաբար	3 թ	
13. Բնագիտություն	2 թ	
14. Բնապատմություն		
Երկրորդական - Ժ. գիտ. Ժ. գրական ԺԱ. գիտ. ԺԱ. գրական JF. գիտ. JF. գրական		
1. Հայ գրականություն	4	
2. Հայոց պատմություն	2	
3. Արաբերեն գրականություն	6	
4. Ֆրանսերեն գրականություն	6	
5. Անգլերեն գրականություն	3	
6. Պատմ. - աշխարհագր. (Ֆրանս.)	2	
7. Պատմ. - աշխարհագր. (արաբերեն)	2	
8. Ուսուցողություն - մաթեմատիկա	6	
9. Բնագիտություն	5/7	
10. Բնապատմություն	4/7	
11. Քիմիագիտություն	3/4	
12. Փիլիսոփայություն /ֆրանս./	6	
13. Փիլիսոփայություն /արաբերեն/	6	
14. Գրաբար	1	Ժ և ԺԱ գրակ.
15. Մատենագրություն	2	Ժ և ԺԱ գրակ.
16. Հայաստանի աշխարհագրություն	1	Ժ գրական
17. Հայ քաղաքացիական կրթություն	1	Ժ գիտ. և Ժ գրակ.
18. Հայ եկեղեցու պատմություն	1	ԺԱ գրական.
19. Համակարգիչ	1	Ժ և ԺԱ գրական.
20. Մարզանք	1	

Պետք է հատկապես նշենք, որ ճեմարանի ամենամեծ հաղթանակն այն է, որ նախակրթարանի բաժնում ուսուցումը տարվում է հայերեն լեզվով, որը, ինչպես նշում էր ճեմարանի տնօրեն, հայտնի քաղաքական և կրթական գործիչ Հրաչ Տասնապետյանը, «խորապես կնպաստեի հայկական լեզվամտածողութեան ձևաորմանը, որպեսզի անոնք մտածեն հայերեն»⁶³:

Ըստ լիբանանյան ծրագրի՝ միջնակարգ և երկրորդական բաժիններում բնագիտական առարկաները դասավանդվում են կանֆրանսերենով, կան անգլերենով:

Հայկական ճեմարանում, որը որդեգրել է ֆրանսիական ծրագիրը, վերոհիշյալ առարկաները դասավանդվում են ֆրանսերենով:

Այստեղ անհրաժեշտ ենք համարում շեշտել այն փաստը, որ 9-րդ քրյովեի ավարտական դասարանի քննություններն անցկացվում են ֆրանսերենով և կենտրոնացված համակարգով (ոչ ճեմարանում): Քննությունները կազմակերպում է պետությունը՝ օբյեկտիվությունը ապահովելու համար: Այն պարտադիր է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր դպրոցների համար: Նույն կարգով են անցկացվում նաև բաքալոբեայի (12-րդ դ.) ավարտական քննությունները:

Բազմաթիվ դասալսումները ճեմարանում և զրույցներն ինչպես աշակերտների, այնպես էլ ուսուցիչների հետ մեզ հանգեցրին այն եզրակացության, որ բավականին բարդ ու դժվարություններով լի են բաքալոբեայի ավարտական քննությունները, որի հետևանքով աշակերտության որոշ տոկոս չի կարողանում հաղթահարել անցումային շենը:

Այդ դժվարություններից են.

1. ֆրանսերենի ոչ կատարյալ իմացությունը (քննությունները անցկացվում են ֆրանսերենով),
2. ծրագրերի բարդությունը,
3. աշակերտների շաբաթական ուսումնական գերծանրաբեռնվածությունը,
4. ուսուցիչների մեթոդական ոչ բավարար զինվածությունը,

⁶³ Հարցազրույց Սելանթթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի տնօրեն Հրաչ Տասնապետյանի հետ, Լիբանան, մարտ, 1998:

5. դասագրքերի ոչ բարձր մակարդակը կամ դրանց նորերի ստեղծման խնդիրը,

6. ուսուցչական կադրերի որոշ տոկոսի ոչ բարձր մասնագիտական որակը,

7. ուսուցիչների հոգեբանամանկավարժական գիտելիքների պակասը,

8. չորս լեզուների (հայերեն, ֆրանսերեն, արաբերեն, անգլերեն) միաժամանակյա ուսուցումը:

Մրանք այն հիմնահարցերն են, որոնց լուծումը միայն կտանի ուսուցման արդյունավետության բարձրացման, աշակերտների խոր և հիմնարար գիտելիքներով զինվածության և ավարտական քննությունների բարձր արդյունքների:

Շարունակելով վերլուծել կրթության բովանդակությունը՝ նշենք, որ, ճիշտ է, ճեմարանում (միջնակարգ և երկրորդական բաժիններում) հայերենից հետո հիմնական լեզուն ֆրանսերենն է, սակայն մեծ ուշադրություն է դարձվում նաև արաբերենին և անգլերենին: Երկրորդական բաժնում միաժամանակ ուսուցանվում է 4 լեզու՝ հայերեն, ֆրանսերեն, արաբերեն, անգլերեն:

Պետք է նշել, որ միաժամանակ չորս լեզուների ուսուցումը նույնպես վերոհիշյալ այն դժվարություններից մեկն է, որի առկայությունը վնասում է ուսուցման արդյունավետությանը, այսինքն՝ խախտվում է սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու դիդակտիկական կարևոր սկզբունքը: Ուսուցման գործընթացը կազմակերպելիս հիմք չի ընդունվում յուրաքանչյուր տարիքին բնորոշ նյութի ընկալունակության աստիճանը, հաղորդվող նյութի բարդության չափն ըստ տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների:

Մրանք այն կարևորագույն սկզբունքներն են, առանց որոնց անհնարին է գիտականորեն ճիշտ ու արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը:

Աղյուսակ 5-ում ներկայացնում ենք ճեմարանում դասավանդվող առարկաները՝ ըստ շաբաթական ժամրաբեռնվածության.

Աղյուսակ 5.

	Առարկայի անվանումը	Ժամերը - շաբաթական
1.	Հայերեն	6-7 ժամ
2.	Հայոց պատմություն	2 ժամ
3.	Արաբերեն	6 ժամ
4.	Ֆրանսերեն	6 ժամ
5.	Թվաբանություն-մաթեմատիկա	5 ժամ
6.	Գիտություն-բնագիտություն	2-5 ժամ
7.	Քիմիագիտություն	2-4 ժամ
8.	Բնապատմություն	2-6 ժամ
9.	Ընդհանուր պատմություն-աշխարհագրություն	2-3 ժամ
10.	Փիլիսոփայություն /ֆրանսերեն/	6 ժամ /ֆր./ 6 ժամ /արաբ./
11.	Քաղաքացիական կրթություն	1 ժամ
	Երկրորդականի գրական հոսքում	
12.	Գրաբար	1 ժամ
13.	Մատենագրություն	1 ժամ
14.	Հայ եկեղեցու պատմություն	1 ժամ
15.	Մարզանք	1-2 ժամ
16.	Երգ	1-2 ժամ
17.	Նկարչություն	1-2 ժամ
18.	Չեռքի աշխատանք	1-2 ժամ
19.	8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ դասարաններում նաև՝ համակարգչային ուսուցում	2 ժամ

Եթե ճեմարանի կրթության բովանդակությունը համեմատության մեջ դնենք Մերձավոր Արևելքի մեկ այլ արաբական պետության՝ Սիրիայի կրթական համակարգում գործող մեկ այլ հայկական ճանաչված՝ Քարեն Եփեհե ճեմարանի կրթության բովանդակության հետ, մեզ համար ակնառու կլինի այն հսկայական տարբերությունը, որ գոյություն ունի հատկապես հայագիտական առարկաների նախ՝ սահմանափակումների և հետո՝ նրանց հատկացված ժամաքանակների միջև: Այս համեմատության մեջ, անշուշտ, ազատ ու բավականին արտոնյալ գործունեություն է վարում Բեյրութի Մ. և Հ. Արալանյան ճեմարանը, որտեղ դասավանդվող ուսումնական առարկաների

ցանկում իրենց ուրույն տեղն ունեն հայագիտական առարկաները՝ որոշակի ժամաքանակով: Իսկ Հալեպի Քարեն Եփփեն ճեմարանում պետության կողմից արգելված է հայագիտական առարկաների դասավանդումը, բացի կրոնից և ծիսական լեզվից (հայերենից):

Այստեղ խոսք չի կարող լինել հայոց պատմության, հայ գրականության, գրաբարի, մատենագրության դասավանդման մասին: Սա, իհարկե, խորապես վնասում է սիրիահայ երեխայի հայկական լեզվամտածողությանը և հայեցի կրթությանը, որի բացերը սիրիահայերը ջանում են լրացնել արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքներով:

Վերադառնալով Բեյրութի Մ. և Հ. Արսլանյան ճեմարանին՝ փաստենք, որ դպրոցում առարկայական մեթոդ-միավորումներ չեն գործում: Սակայն նույն առարկան դասավանդող ուսուցիչներն ուսումնական տարվա ընթացքում ժողովներ են գումարում իրենց հուզող խնդիրները քննարկելու համար:

Ճեմարանի ուսուցչական կազմը

Լինելով հայկական կրթօջախ՝ Մ. և Հ. Արսլանյան ճեմարանի որդեգրած նպատակն ու սկզբունքներն են.

1. կրթօջախ ուսանելու ընդունել միայն հայ երեխաների,
2. ճեմարանում իրականացնել հայեցի կրթություն ու դաստիարակություն,
3. հայ երեխային հաղորդակից դարձնել մեր ազգային արժեքների, դրանով իսկ նրանց մեջ սերմանել ազգային ինքնագիտակցության ոգի,
4. ամադարտ պահել մեր ոսկեդենիկ լեզուն՝ որպես պատգամ մեր նախնիներից,
5. նպաստել գաղութում հայ մշակույթի զարգացմանը,
6. իրականացնել հայապահպանության դժվարին գործը:

Եվ այս ամենի կյանքի կոչողը, բնականաբար, պետք է լինի հայ ուսուցիչը: Նա պետք է իր վրա վերցնի հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության պատմական առաքելությունը և իր անձով դրական օրինակ հանդիսանա երեխաների համար:

Ահա այս ոգով են աշխատանքի կոչված Բեյրութի հայկական ճեմարանի հայ ուսուցիչները՝ իրենց գործունեության մեջ դնելով սեր, նվիրում և նախանձախնդրություն:

Նախակրթարանի պարագայում օտարազգի ուսուցիչների թիվը շատ քիչ է՝ 12 հոգի, որոնք հիմնականում դասավանդում են արաբերեն և ֆրանսերեն:

Միջնակարգ և երկրորդական բաժիններում պատկերը մի փոքր փոխվում է: Պատճառն այն է, որ միջնակարգում և երկրորդականում բնագիտական և հասարակագիտական առարկաները դասավանդվում են ֆրանսերենով, և քիչ են այն հայ ուսուցիչները, որոնք կատարյալ տիրապետում են ֆրանսերենին և ունեն համալսարանական կրթություն տվյալ առարկայի գծով, որը պարտադիր է այս կրթական աստիճանների համար: Հետևաբար որակ ապահովելու համար ճեմարանը ստիպված հրավիրում է օտարազգի մանկավարժների՝ վերոհիշյալ տվյալներով: Ահա հիմնականում սրանով է պայմանավորված օտարազգի ուսուցիչների թվի բարձրացումը ճեմարանի կրթական երկրորդ և երրորդ աստիճաններում:

Հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների մի մասը Համազգայինի Բեյրութի հայագիտական բարձրագույն հիմնարկության սաներն են, մյուս մասը՝ Հայաստանի տարբեր բուհերում ուսանած (հիմնականում ԵՊՀ և Խ. Աբովյանի անվան մանկ. համալսարան) մասնագետները:

Այսօր ճեմարանի ուսուցիչներից մի քանիսը սովորում են ԵՊՀ-ի ասպիրանտուրայում: Նրանք իրենց գիտելիքները հայագիտության մեջ խորացնելու նպատակով կատարում են լուրջ գիտահետազոտական աշխատանքներ (հայոց լ. և գր., հայոց պատմ.):

Ճեմարանի ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները (ոչ հայագիտական առարկաների) կատարում է պետությունը՝ պարբերաբար կազմակերպելով վերապատրաստման դասընթացներ:

Իսկ հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստման հարցը դեռևս մնում է չլուծված խնդիր:

Ընդ որում, նշենք, որ մյուս դպրոցների (ազգային վարժարանների) ուսուցիչների վերապատրաստման համար ճեմարանն ինքն է կազմակերպում համապատասխան դասընթացներ:

Այսօր բավականին աշխուժացել են կապերը Հայաստանի և Լիբանանի միջև ինչպես միջպետական, այնպես էլ Հայաստան-գաղթօջախ մակարդակներում:

Հուսանք, որ դրանք կնպաստեն նաև կրթական ոլորտում կուտակված շատ խնդիրների լուծմանը, որոնց թվում և ուսուցիչների վերապատրաստման հարցին:

Դասագրքերի հարցը

Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման համար կարևոր դեր ունեն ուսուցման միջոցները՝ դասագրքերը, որոնց ստեղծումը բավականին բարդ, պատասխանատու և դժվարին գործ է: Հաջողված է համարվում այն դասագիրքը, որի հիմքում ընկած են դասագրքաստեղծման չափորոշիչները, նրանում պահպանված են դիդակտիկական սկզբունքները և հոգեբանամանկավարժական պահանջները:

Հնուտ մանկավարժի ձեռքում լավ դասագիրքը կարող է հրաշքներ գործել, երեխաներին տանել հետաքրքիր երևույթների ու դեպքերի աշխարհ, նրանց փոխանցել ազգային և համամարդկային բազում արժեքներ, նպաստել նրանց աշխարհաճանաչողությանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Մեծ է դասագրքի դերակատարությունը սովորողների անձի ձևավորման գործում: Բոլոր ժամանակներում էլ կարևորվել է լավ դասագրքի ունեցած մեծ ներգործությունը ողջ ուսուցման գործընթացի ճիշտ, գիտական ու արդյունավետ կազմակերպման վրա:

Բեյրութի Մ. և Հ. Արսլանյան ճեմարանում դասագրքերի հարցը դեռևս մնում է չլուծված խնդիր: Խոսքն, իհարկե, վերաբերում է հայագիտական առարկաների դասագրքերին: Իսկ մյուս առարկաների դասագրքերի ընտրություն է կատարվում, քանի որ մեկ ուսումնական առարկայի համար կան պետության երաշխավորած այլընտրանքա-

յին մի քանի դասագրքեր, որոնք բոլորն էլ ընդգրկում են պետական ծրագիրը: Դպրոցներն ազատ են ընտրության մեջ: Ճեմարանն այստեղ ոչ մի խնդիր չունի: Դասավանդվող բոլոր առարկաներն ապահովված են դասագրքերով:

Հայագիտական առարկաների համար ճեմարանում երկար ժամանակ կիրառվում էին Լևոն Շանթի ստեղծած դասագրքերը, որոնց թիվը հասնում էր 18-ի:

Սակայն ժամանակի ընթացքում փոխվում են դասագրքերին ներկայացվող պահանջները: Զգացվում էր նաև անհամապատասխանություն Լ. Շանթի դասագրքերի լեզվի և արդի արևմտահայերենի միջև, որն առաջ էր բերում դժվարություններ:

Այսօր ճեմարանն իր ուսուցիչների ուժերով ստեղծել է միջնակարգի հայոց լեզվի դասագրքերը (VI-VII և VIII դդ.): Հեղինակն է ճեմարանի ուսուցիչ Կարո Առաքելյանը: Դասագիրքն ընդգրկում է քերականության նյութն իր բոլոր բաժիններով: Գիտական-մեթոդական և հրատարակչական առումներով գիրքը հաջողված է: Ուշադրության է արժանի այն փաստը, որ հեղինակն ուսանել է Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետում և այժմ էլ շարունակում է իր ուսումը մույն ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտուրայում: Սրանով է պայմանավորված այն փաստը, որ Կ. Առաքելյանի հայոց լեզվի դասագիրքն իր կառուցվածքով բավականին մոտ է Հովհ. Բարսեղյանի հայոց լեզվի դասագրքին: Հայաստանում ուսանելը, թերևս, ունեցել է իր արդյունավետ ներգործությունը հեղինակի մասնագիտական կայացման վրա: Սա շեշտվում է հատկապես այն նկատառումով, որ սփյուռքում ստեղծված դասագրքերի մեծ տոկոսը չի հենվում դասագրքաստեղծման չափորոշիչների վրա և չի ապահովում դասագրքերին ներկայացվող պահանջները:

Ճեմարանում իրականություն է դարձել Հայաստանի և սփյուռքի մտավորականների համահեղինակությամբ դասագիրք ստեղծելու գործը: Դրա վկայությունն է ճեմարանի «Հայոց պատմություն» (VI դ.) նորաստեղծ դասագիրքը՝ պատմաբան, ակադեմիկոս Վլ. Բարխուդարյանի և պատմաբան-մանկավարժ Երվ. Փամբուկյանի համատեղ աշխատանքը:

Մա Հայաստան-սփյուռք համագործակցության գործնական քայլերից մեկն է կրթության ոլորտում:

Դասագիրքը գրված է բարձր մակարդակով՝ հիմքում ունենալով գիտականության, մատչելիության, հաջորդականության և սիստեմատիկության, զննականության և դիդակտիկական այլ սկզբունքներ: Դասագիրքը մեթոդական և հոգեբանամանկավարժական պահանջների առումով ճիշտ է կառուցված: Դասագրքում ընդգրկված են ինչպես ճանաչողական, այնպես էլ զարգացողական հարցեր:

Սակայն մյուս դասարանների համար հայոց պատմության նոր դասագրքեր դեռ չկան: Նույնը հայ գրականության, հայ մատենագրության վերաբերյալ: Հիմնականում դասավանդող ուսուցիչներն են նյութերը կազմում՝ դաս առ դաս և բազմացնում ու բաժանում աշակերտներին: Ձուգահեռ դեռևս օգտագործվում է Մուշեղ Իշխանի «Հայ գրականության պատմություն» դասագիրքը, որը մեթոդապես լուրջ շտկման կարիք ունի:

Թվաբանության դասագիրքը (հեղինակ Տ. Ջիմբաշյան և ուրիշներ) կազմված է 70-ական թվականներին և, հենց հեղինակի խոստովանությամբ, կարիք ունի լուրջ վերանայման՝ հաշվի առնելով պետական նոր ծրագրի պահանջները:

Վերոհիշյալից կարելի է անել հետևություն, որ ճեմարանում դասագրքատեղծման գործընթացն սկսված է, սակայն այն դեռևս երկար ու դժվարին ճանապարհ ունի անցնելու՝ լուծելու համար շատ խնդիրներ և աշակերտությանը տալու ժամանակի պահանջներին համապատասխան նոր ու արժեքավոր դասագրքեր:

Մեթոդական հարցերը ճեմարանում

Ճեմարանում իրականացվող պետական ծրագիրը բավականին համապարփակ է: Մրան հավելվում են նաև հայագիտական առարկաները՝ հայոց լեզու, հայոց պատմություն, հայ հին գրականություն, հայ մատենագրություն, գրաբար: Արդյունքում շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը հասնում է 40 ժամի: Մինչդեռ պետականորեն նախատեսված է.

նախակրթարանում — 30 ժամ (շաբաթը),

միջնակարգում — 35-36 ժամ

երկրորդարանում — 35-36 ժամ:

Նախակրթարանում որքան ժամ որ տրամադրված է արաբերենին և ֆրանսերենին, նույնքան էլ՝ հայերենին: Մրան ավելանում է հայոց պատմությունը, թվաբանությունը, գիտությունը՝ հայերենով: Մինչև 6-րդ դասարանը հայերենով դասավանդելը նպաստում է նրան, որ բավականին բառամթերք է կուտակվում բնության և հասարակության երևույթների վերաբերյալ, իսկ վերջինս էլ նպաստում է հայկական լեզվամտածողության ձևավորմանը:

Երկու (պետական և հայկական) ծրագրերի համընթաց, զուգահեռ կիրառումը, անշուշտ, բերում է գերծանրաբեռնվածություն և գերհոգնածություն աշակերտների համար, որը, բնականաբար, չի կարող չազդել ուսուցման գործընթացի արդյունավետության և սովորողների առաջադիմության վրա:

Այնուհանդերձ, բազմաթիվ դասալսումները ճեմարանի տարբեր կրթական աստիճաններում դասավանդվող հայագիտական առարկաների ժամերին մեզ հանգեցրին այն եզրակացության, որ ճեմարանում, չնայած վերոհիշյալ գերծանրաբեռնվածությանը, ուսուցման գործընթացը լավ մակարդակի վրա է: Ուսուցիչների հիմնական մասը հմուտ մանկավարժներ են՝ զինված ոչ միայն մասնագիտական բարձր գիտելիքներով, այլ նաև մանկավարժական, մեթոդական հմտություններով ու վարպետությամբ: Մրա վառ ապացույցը մասնագիտական-մեթոդական բարձր մակարդակով վարած այն դասերն էին, որ մենք առիթն ունեցանք ունկնդրելու, անգամ մասնակից դառնալու:

Սակայն հմուտ մանկավարժների արդյունավետ աշխատանքի կողքին ճեմարանում անցկացվում էին դասեր, որտեղ չէին ապահովվում հոգեբանամանկավարժական և դիդակտիկական կարևոր պահանջները, որի արդյունքում ընկնում էր ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

Դրանցից մի քանիսի մասին կցանկանայինք խոսել առավել հանգամանորեն:

1. Առաջին ակնառու խնդիրը դասի կառուցվածքի բացակայությունն է: Տարբեր դասարաններում, տարբեր ուսուցիչների մոտ դասի կառուցվածքի նկատմամբ կան շատ մակերեսային գիտելիքներ. հստակեցված չէ դասի նպատակը, որոշակի չեն դասի խնդիրները, չկա դասի կառուցվածք՝ մուտք-ընթացք-ավարտ (ամփոփում): Ամեն մի ուսուցիչ իր իմացածով ու պատկերացմամբ է վարում դասը: Իհարկե, ուսուցչին վերապահված է ունենալ ստեղծագործական մոտեցում դասին, սակայն դիդակտիկական ամուր հիմքեր ստեղծելուց հետո միայն: Առանց դասանպատակի յուրաքանչյուր դասապրոցես կխարխափի անորոշ «տարածքներում»:

Դասի նպատակը ուղղորդող, կողմնորոշող, առաջնորդող ու «փարոսի» դեր կատարող ուժ է, որին ապավինած, մեթոդապես գինված ուսուցիչը պետք է կազմակերպի իր աշխատանքը:

Դասի նպատակն իր մեջ պետք է ամփոփի ուսուցչի և աշակերտի նպատակները, նրանց միասնացած ուղղվածությունը, որը պետք է իրականություն դառնա դասապրոցեսին:

Այս կարևորագույն խնդրի և ներքոհիշյալ մյուս մեթոդական հարցերի ոչ ճիշտ դրվածքի պատճառը մենք մեկնաբանում ենք ուսուցիչների մանկավարժական-մեթոդական ոչ բավարար պատրաստվածությամբ:

Իհարկե, դասանպատակի ոչ հստակությունից բխում են մանկավարժական-մեթոդական մյուս բացթողումներն ու վրիպումները:

2. Դասի ժամանակ հիմնականում կիրառվում են ոչ ակտիվացնող մեթոդներ: Դասն անցնում է մի քանի աշակերտների մասնակցությամբ, միապաղաղ, անհետաքրքիր:

Այստեղ մեծ դեր են կատարում ուսուցչի ոչ միայն մասնագիտական, այլ նաև անձնային որակները. սառը, անկենդան, չոր դեմքով, միապաղաղ ձայնով, անհաղորդ կեցվածքով ուսուցիչը չի կարողանա հոգեբանական կապ ստեղծել իր և աշակերտների միջև, դասարանը ձգել դեպի իրեն, աշակերտներին դրական լիցքերով տրամադրել դասին: Իսկ առանց այս հիմքերի անհնարին է կառավարել դասարանը և ունենալ հաջողություններ:

3. Ունկնդրած դասերին հիմնականում ուսուցիչն է սուբյեկտը: Աշակերտները պասիվ են: Մինչդեռ հմուտ մանկավարժի դասերին աշակերտները օբյեկտից վերածվում են սուբյեկտների: Ուսուցիչը զարգացնում է նրանց ինքնուրույնությունը, ակտիվացնում գործունեությունը՝ տարբեր ձևերով նրանց մասնակից դարձնում դասապրոցեսին, մղում նրանց նորի որոնմանը, բացահայտմանը, ստեղծագործելուն, դրանով իսկ զարգացնում նրանց ինքնուրույն, ազատ, անկաշկանդ, տրամաբանական մտածողությունը: Այսպիսի մոտեցումը նպաստում է սովորողների անձի ձևավորմանն ու զարգացմանը:

4. Որոշ ուսուցիչներ իրենց դասերին չեն կիրառում համակարգայնության ու հաջորդականության, ներառարկայական և միջառարկայական կապի, տեսության և պրակտիկայի կապի դիդակտիկական կարևորագույն սկզբունքները:

Թվարկած սկզբունքներից առաջինի բացակայությունը վտանգում է սովորողներին համակարգված գիտելիքներ հաղորդելու կարևոր խնդիրը, իսկ հաջորդականության սկզբունքը չկիրառելը հանգեցնում է մանկավարժական կարևորագույն կանոնների խափանմանը՝ պարզից՝ բարդը, հեշտից՝ դժվարը, մոտիկից՝ հեռուն, կոնկրետից՝ վերացականը: Մանկավարժական այս կանոնների պահպանմամբ է պայմանավորված մտքի տրամաբանական զարգացման անխափան ընթացքը: Սա բերում է նյութի հեշտ ընկալում, մտապահում ու հասկացում:

Հաջորդականության սկզբունքի կիրառմամբ է պայմանավորված ներառարկայական կապի սկզբունքի արդյունավետությունը, որը պահանջում է մեկ ուսումնական առարկայի ներսում բաժինների, գլուխների, թեմաների, պարագրաֆների, ենթապարագրաֆների սերտ կապն ու տրամաբանական շարունակականությունն ու զարգացումը, հաջորդ նյութի բաղադրության մեջ նախորդից որոշակի մասի առկայություն՝ որպես հիմք նորի յուրացման համար:

Ցանկացած ուսումնական առարկայի դասագիրք պարտադրաբար իր հիմքում պետք է ունենա վերոհիշյալ դիդակտիկական կարևոր սկզբունքները:

Իսկ ինչ վերաբերում է տեսության և պրակտիկայի կապի սկզբունքի կիրառմանը, ապա հարկ է նշել, որ ոչ բոլոր դասերին էր այն կիրառություն գտնում: Դասի ժամանակ թեկուզ և մեծ հաջողությամբ նյութի հաղորդումը դեռևս ամբողջական հաջողություն չէ ուսուցչի համար, քանի որ աշակերտը կարող է հաղորդած նյութն ընկալել, ըմբռնել, իմաստավորել, հասկանալ, բայց չունենալով կիրառելու կարողություններ ու հմտություններ՝ չկարողանա դրանք ստուգել ու ճշտել գործնականում և չդարձնել դրանք իր սեփականությունը:

Այստեղ միանգամայն տեղին է մեջբերել XIX դարի հայ տաղանդավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանի հետևյալ մտքերը. «Գիտությունն ու կարողությունը այն է մի բան գրել, նկարել, լուծել, վճռել և այլն կարողանալը ինքն ըստ ինքեան ոչինչ արժանատություն չունին, ոչ առանձին անձանց, ոչ էլ հասարակության համար. նոքա մի այդօրինակ նշանակություն են ստանում, երբ ծառայում են կեանքին: Երեխան պիտի սուտրի նաև իր ասածը գործ դնել, նա պիտի գործ դնե այն, որ գիտե և կարող է, եթե հիրախի նորա ձեռք բերածը չպիտի մնայ մի մեռեալ գանձ»⁶⁴:

5. Դասերի ժամանակ քիչ են օգտագործվում դիդակտիկ պարագաներ, այսինքն՝ չի կիրառվում զննականության սկզբունքը:

Մինչդեռ վերջիններս նպաստում են նյութի հեշտ ընկալմանը, հասկացմանը, դասը դարձնում են առավել հետաքրքիր ու բովանդակալից:

Դիդակտիկ պարագաների օգտագործումը հատկապես անհրաժեշտ է նախակրթարանում (տարրականում), քանի որ կրթական այս աստիճանում սովորող երեխաների մտածողությունն առարկայական է. ունի կոնկրետ բնույթ: Ցանկացած երևույթ, ցանկացած առարկայի հատկանիշների վերաբերյալ գիտելիք (տեղեկություն) պետք է ներթափանցի երեխայի գիտակցություն զգայարանների միջոցով: Անհրաժեշտ է նպաստել աշակերտների (հատկապես տարրական դասարանների) դիտողականության զարգացմանը, պետք է բացել նրանց զգայական աշխարհը, որպեսզի նրանք համակողմանիորեն ընկալեն

⁶⁴ Բահաթրյան Ա., Ուղեցույց հայ ուսուցչի, ընդհանուր մեթոդիկա և առաջին տարվա նյութի մշակումը, Թիֆլիս, 1882, էջ 1:

առարկաների և երևույթների էական հատկանիշները:

Ոչ միայն հոգեբանական, այլև փիլիսոփայական տեսանկյունով էր բացատրում զննականության սկզբունքի կարևորությունը հայ հոգեբան-մանկավարժ Առաքել Բահաթրյանը՝ շեշտելով, որ «Մարդու հոգևոր կենաց առաջին պաշարը կազմում է զգայություններից, չկայ ոչինչ խոհականութեան մեջ, որ չի եղել նախ եւ առաջ զգայարանների մեջ, եւ միայն մեր յատուկ զգայարանական տպաւորութեանց միջնորդութեաք է մեր գաղափարական գիտութիւնը ստանում կեանք ու թարմութիւն, որոնք եւ նորան շինում են դրդիչ ու շարժիչ պատճառ մեր մտածութեան, ու գործողութեան համար: Սա վերաբերում է մեր թե՛ տեսական և թե՛ բարոյական խոհականութեան: Ամենալայնածաւալ գիտութիւնն անգամ մի մեռեալ նիւթ է, լոկ անօգուտ բառագիտութիւն, եթէ նա չէ հիմնուած դիտողութեանց վերայ»⁶⁵: Եվ ապա ավելացնում. «Յրաքանչիւր դասատուութիւն պիտի հիմնուի դիտողական ուսման վերայ: Դիտողութիւնը տարրական ուսման մեջ առաջինն է ու կարևորագույնը»⁶⁶:

XIX դարում հայ մանկավարժի արտահայտած այս արժեքավոր մտքերը, կարծում ենք, առայսօր պետք է ուղեցույց դառնան թե՛ Հայաստանի և թե՛ սփյուռքի մեր մանկավարժների համար՝ ուսուցման գործընթացն առավել արդյունավետ ու գիտական կազմակերպելու համար:

7. Թույլ է նաև աշակերտների նկատմամբ անհատականացված մոտեցումը, հիմքում պետք է դնել յուրաքանչյուր սովորողի տարիքային, անհատական և հոգեբանական առանձնահատկությունները, նախասիրությունների, հետաքրքրությունների շրջանակը, ընդունակությունները, հուզականային աշխարհը, հոգեբանությունը, խառնվածքը, բնավորության գծերը, մտածողությունը, վարքագիծը, ընտանեկան դաստիարակությունը և այլն:

Դասալուսման ժամանակ նկատված վերոհիշյալ բացթողումներն ու թերությունները, ըստ մեզ, կարելի է շտկել ու վերանայել ու-

⁶⁵ Բահաթրյան Ա., Ուղեցույց հայ ուսուցչի, ընդհանուր մեթոդիկա և առաջին տարվա նյութի մշակումը, Թիֆլիս, 1882, էջ 3, 54:

⁶⁶ Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսումը տարրական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», 1878 թ., թիվ 4:

սուցիչների հոգեբանամանկավարժական և մեթոդական վերապատրաստման հիմնարար դասընթացների միջոցով, որի կազմակերպումն այսօր կրկին ստանձնել է Հայաստանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը:

Արտադասարանական դաստիարակչական աշխատանքները Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանում

Բնականաբար, Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի ուսումնադաստիարակչական գործունեությունը կամբողջանա, երբ վերջինիս հետ մերդաշնակ միասնության մեջ տեսնենք դպրոցի իրականացրած արտաուսումնական՝ արտադասարանական և արտադպրոցական կրթադաստիարակչական աշխատանքները: Այս աշխատանքները խորապես նպաստում են սովորողների անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը և լիարժեք դաստիարակությանը՝ շեշտը դնելով, իհարկե, հայեցի դաստիարակության վրա:

Ճեմարանի միջնակարգ և երկրորդական բաժինների դասարաններում յուրաքանչյուր օրվա վերջին ժամը տրամադրված է արտադասարանական աշխատանքների համար: Դպրոցում գործում են տարբեր խմբակներ՝ նկարչական, երաժշտական, սպորտային: Աշակերտներն ըստ իրենց նախասիրությունների և կարողությունների ընդգրկվում են այդ խմբակներում և, ստանալով տարբեր բնույթի լրացուցիչ գիտելիքներ ու հմտություններ, իրականացնում են ակտիվ գործունեություն, որը նպաստում է նրանց անձի զարգացմանը:

Բավականին համապարփակ ու արդյունավետ են կազմակերպվում ճեմարանի արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները: Ճեմարանի սաներն ակտիվորեն մասնակցում են միջդպրոցական տարբեր բնույթի մրցումներին՝ առարկայական օլիմպիադաներ, ասմունքի, երգի, պարի, նկարչության, մարմնամարզության մրցումներ, որտեղ ճեմարանականները հանդես են գալիս բավականին բարձր հաջողություններով՝ ստանալով տարբեր պարգևներ ու մեդալներ:

Ճեմարանի կրթամշակութային բավականին հարուստ առօրյայի մի մասն են կազմում նաև տեղացի կամ հայրենիքից ժամանած տարբեր բնագավառների ճանաչված մարդկանց պարբերական այցելությունները կրթօջախ՝ հայ աշակերտներին փոխանցելով իրենց սրտի ջերմությունը, հոգու թրթիռը, մարդկային վեհության, խոհեմության, տոկունության ու արարման դրսևորումները: Այստեղ կուզեինք մեջբերել ճեմարան այցելած հայրենի ճանաչված բանաստեղծ, հասարակական գործիչ Ռազմիկ Դավոյանի՝ ճեմարանի դերն արժեքավորող հետևյալ խոսքերը. «Մզհեր Ծաղկածորի գեղատեսիլ լանջերուն վրայ հայեցի կրթութիւն եւ մշակույթ ճառագայթելու կոչուած այս ճեմարանը փոքրիկ Հայաստան մըն է, որ հետզհետէ ամբողջանալով ու ճոխանալով, իր կարգին իր կարելոր նպաստը պիտի բերէ Մեծ ու Յաւերժական Հայաստանի դարբնումին: Մայր-Հայրենիքը տակաւին շատ պէտք ունի այս հաստատութեան»⁶⁷:

Տարբեր տարեշրջանների ճեմարանականներ, սփռված աշխարհով մեկ, տարբեր մասնագիտությունների ու զբաղմունքի տեր, իրենց հոգու, մտքի ու սրտի ամուր թելերով կապված են հարազատ ճեմարանին՝ տարբեր առիթներով, տարբեր միջոցներով ու ճանապարհներով իրենց աջակցությունն ու օգնությունն են բերում դպրոցին՝ իրենց հայեցի կերտման դարբնոցին, իրենց համար հարազատ օջախ դարձած կրթօջախին՝ դրանով իսկ ցանկանալով իրենց հոգու մի փոքրիկ մասնիկը դնել հայ ճեմարանի անխափան երթն ապահովող գործին:

Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի Նորսիկյան մանկապարտեզը

Չափազանց կարևորելով մանկապարտեզի ունեցած մեծ ու անգնահատելի դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական, մտավոր, բարոյական, աշխատանքային և գեղագիտական կարողությունների զարգացման գործում՝ հարկ

⁶⁷ Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանը եւ Նորսիկյան մանկապարտեզը, տեղեկագիր, Պեյրուք, նոյեմբեր, 1991, էջ 9:

ենք համարում որոշ վերլուծություններ ու արժևորումներ տալ Համագայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի Նորսիկյան մանկապարտեզի իրականացրած կրթադաստիարակչական գործունեության վերաբերյալ:

XIX դարի հոգեբան-մանկավարժ Ա. Բահաթրյանը միանգամայն արդարացիորեն նշում է, որ երեխայի դաստիարակությունը ճիշտ կարող է լինել իր հասակակիցների միջավայրում, միմյանց հետ ունեցած հաղորդակցմամբ, և որ երեխայի բնավորությունը միայն երեխաների մեջ կարող է կազմակերպվել: Նա գրում է. «Լավ կազմակերպուած ընկերական կեանքի մեջ անգուսպ ու կոպիտ բնատրուքիւնները մեղմանում են, եսանլը ճանաչում է ուրիշների արժանատիքիւնները, հպարտը հեզանում է, վասն զի նոքա այստեղ միջոց են ստանում բաղդատել իւրեանց անձն ու գործը իւրեանց ընկերակիցների ու նոցա գործերի հետ. վասն զի երեխան, իբրև մի նորատունկ ծառ, քանի քնքուշ է, շուտով է ուղղվում, իսկ երբ նա մեծանում է ու ամրանում է, այնուհետև դաստիարակութեան ազդեցութիւնը կամ շատ չնչին է լինում, կամ բոլորովին անգոր: Մարդոյս առաքինի ու շարաբարոյ շինողը այն հասարակութիւնն է, որի մեջ նա մեծանում է»⁶⁸:

Այս մտքերն այսօր էլ արդիական են հնչում և չեն կորցրել իրենց արժեքը, քանի որ, իսկապես, ընկերական կյանքը երեխային սուցանում է, որ նա չի կարող անպատիժ գործել, ինչպես ուզում է, որ ճշմարիտ ազատությունը պահանջում է ենթարկվել որոշակի օրենքների և հարգել ուրիշների իրավունքները:

Ընկերական կյանքը երեխային սովորեցնում է նոր արժեքներ, որոնց հիման վրա ձևավորվում են նրա բնավորության գծերը, նա ձեռք է բերում ֆիզիկական, մտավոր, բարոյական, գեղագիտական արժեքներ ու կարողություններ, և որի արդյունքում տեղի է ունենում երեխայի անձի զարգացումը:

Ահա այս կարևոր գործառույթների իրականացման մեծ գործն է ստանձնել Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի Նորսիկյան մանկապարտեզը, որը նույնպես գտնվում է Մզհերի (Ծաղկաձորի)

բարձունքում՝ առանձին տիպային շինությամբ: Նախադպրոցական այս հաստատությունը մտնում է Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանի կառույցի մեջ՝ կազմելով մեկ ամբողջություն:

1989 թ. դեկտեմբերին Նորսիկյան մանկապարտեզը բացեց իր դռները բեյրութահայ մանուկների առջև՝ պատրաստ ջերմացնելու նրանց սիրտն ու հոգին, կոփելու ու զարգացնելու մարմինն ու միտքը:

Նորսիկյան մանկապարտեզի շենքը բացառիկ ինքնատիպ, եվրոպական ոճի ճարտարապետական մի գեղեցիկ կառույց է՝ հատուկ մանկապարտեզի համար նախագծված: Շինության կառուցումը հնարավոր եղավ մի ազնվական օտարուհու՝ Մելի Նորսիկեանի շնորհիվ, որը տասնամյակներ առաջ մահացած իր հայ ու ճեմարանի բարեկամ ամուսնու հիշատակը հարգելու, հավերժացնելու համար մի կարևոր գումար կտակեց ճեմարանին՝ խնդրելով մանկապարտեզն անվանակոչել իր ամուսնու անվամբ: Խնդրանքն ընդունվեց: Հիրավի, նորակառույց մանկապարտեզը բացառիկ մի նվեր էր հայ մանուկներին, որոնց զարգացման և լիարժեք դաստիարակության համար այն կատարում է մանկավարժական արժեքավոր գործունեություն:

Մանկապարտեզի սաներն ըստ իրենց տարիքի ընդգրկված են 4 դասարաններում (մեզ մոտ՝ խումբ), և անվանումները նշված են գույներով.

1. վարդագույն (դասարան) – 3 տարեկան,
2. կապույտ – 4 տարեկան,
3. կանաչ – 5 տարեկան,
4. դեղին – 6 տարեկան:

Լիբանանի մյուս դպրոցների մանկապարտեզների դասարանների անվանումներն են՝ ծիլ (3 տ.), բողբոջ (4 տ.), կոկոն (5 տ.) և ծաղիկ (6 տ.):

Հետաքրքիրն այն է, որ դեռևս XIX դարում հայ ճանաչված մանկավարժ Ա. Բահաթրյանը մանկապարտեզներին նվիրված իր աշխատությունը (1882 թ.), որն ի դեպ առաջին գործն է մեզանում, այդպես էլ անվանել էր՝ «Ծաղկոց կամ մանկանց պարտեզ»: Այս գրքում գետնեղված հիմնարար դրույթների հիման վրա էր, որ 1882 թ.

⁶⁸ Բահաթրյան Ա., Ծաղկոց կամ մանկանց պարտեզը..., Թիֆլիս, 1882, էջ 10–11:

Թիֆլիսում մանկապարտեզային գործի առաջին հայուհի մասնագետ Սոֆյա Բաբայանի ջանքերով ու ղեկավարությամբ բացվեց հայկական առաջին մանկապարտեզը: Այս գործին թե՛ տեսական և թե՛ գործնական իր մեծ աջակցությունը բերեց մահ Ա. Բահաթրյանը՝ հավատարիմ մնալով նախադպրոցական դաստիարակության առաջավոր սկզբունքներին:

Մանկապարտեզի իրականացրած կրթադաստիարակչական գործունեության մեջ առավել կարևորվում է երեխաների խաղային գործունեությունը: Խաղը կենսական անհրաժեշտություն է, դրա համար այն չպետք է թողնել ինքնահուսի, այլ պետք է կազմակերպել նպատակաուղղված: Երեխաները չեն կարող անշարժ, պարասպ մնալ: Նրանք շարժուն են՝ մշտապես ձգտում ունեն գործելու, մի բան անելու: Այստեղ կրկին դիմենք տաղանդավոր հայ մանկավարժի՝ Ա. Բահաթրյանի խոսքին. «Յատնի է, որ խաղը կազմում է բոլոր մանկանց ընդհանուր յատկությունը. իրաքանչիւր, գոնէ առողջ մանուկ խաղում է և պիտի խաղայ, վասն զի սա է այն միայնակ գործողությունը որին նա ընդունակ է: Նա պիտի խաղայ, զի ոչինչ չի զարգանում առանց որևէ գործողութեան»⁶⁹:

Բավականին հետաքրքիր են ճանաչված վրացի մանկավարժ Շ. Ա. Ամոնաշվիլու՝ խաղի վերաբերյալ հետևյալ խոսքերը. «Խաղը ավելորդ էներգիայի պարսպան միջոց չէ, այլ զարգացման գլխավոր, հիմնական ձև, գործող, ֆունկցիոնալ միտման ազատ, ինքնաբերական դրսևորման ձև»⁷⁰:

Խաղային գործունեությունը մանկավարժորեն ճիշտ, արդյունավետ, բազմաբնույթ ու հետաքրքիր է կազմակերպվում Նորսիկյան մանկապարտեզում: Ոչ միայն դասարաններում, այլև բակում ստեղծված են լավագույն պայմանները, կատարված են մանկանց ներաշխարհին բնորոշ ներքին հարդարանքներ ու ձևավորումներ, իրավամբ, ստեղծելով մանուկների մի աշխարհ՝ պահպանելով մարդ-բնություն-կենդանի կապը:

Մանկապարտեզում երեխաներին հնարավորություն է տրված

կատարելու հողի հետ կապված խաղեր, տնկել ծաղիկներ, խնամել կենդանիներ: Մրանք ունեն ճանաչողական մեծ նշանակություն երեխաների անձի զարգացման գործընթացում: Այս ամենը դեռ վաղ տարիքից նրանց մեջ սերմանում է սեր բնության, բուսական և կենդանական աշխարհի նկատմամբ, գթասրտություն և աշխատասիրություն:

Մանկապարտեզում անցկացնում են պարասպունքներ երեխաների տարիքին համապատասխան տարբեր թեմատիկայով, տարվա եղանակներ, բույսեր, կենդանիներ, տոներ, գույներ, շրջապատող իրեր և այլն:

Մանկապարտեզն ունի խաղասրահ, դահլիճ՝ տարբեր հանդեսների ու միջոցառումների համար:

Նորսիկյան մանկապարտեզում իրականացվում է հայերենի գրաճանաչության գործը՝ գրուսուցումը սկսելով դեղին՝ վերջին դասարանում: Իսկ ֆրանսերենի և արաբերենի գրուսուցումը տրվում է նախակրթարանում (տարրական դասարաններում): Իսկ մանկապարտեզում զարգացվում է այդ երկու լեզուներով բանավոր խոսքը: Երեխաները ֆրանսերենով և արաբերենով ծանոթանում են շրջապատող իրերի և երևույթների անուններին, ընտելանում են լեզուների արտասանությանը, հնչեղությանը: Այս ամենը հիմք է հանդիսանում նախակրթարանում ֆրանսերենի և արաբերենի գրաճանաչությունն իրականացնելու համար:

Իսկ ինչ վերաբերում է մանկապարտեզում հայոց լեզվի գրուսուցմանը, կուզենայինք առավել հանգամանորեն կանգ առնել դրա վրա՝ ներկայացնելով կիրառվող գրուսուցման գլոբալ մեթոդի էությունը, նրա թերությունները, կիրառման դժվարությունները և թողած հետևանքները:

Գրուսուցման գլոբալ (globale) մեթոդը ծնունդ է առել Եվրոպայում՝ մասնավորապես Գերմանիայում: Այս մեթոդի ճանաչված մշակողներից է Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր, մանկավարժ Ֆոգելը: Գլոբալ մեթոդը հիմնված է ամբողջի ընկալման սկզբունքի վրա: Գրաճանաչության գլոբալ մեթոդի էությունն այն է, որ գրուսուցումը ոչ թե սկսվում է տառերից, այլ վանկերից: Սկզբում աշակերտներին

⁶⁹ Բահաթրյան Ա., Ծաղկոց կամ մանկանց պարտեզ..., Թիֆլիս, 1882, էջ 4:

⁷⁰ Амонашвили Ш. А., В школу 6 лет, Педагогический поиск., М., 1987, с. 19.

սովորեցնում են վանկերը (միավանկ բառեր, հետո երկվանկ և այլն), հետո վանկերը բաղադրելով անցնում են տառերի ուսուցմանը:

Աշակերտը միավանկ բառերի պատկերն ամբողջի մեջ (գլոբալ) է տեսնում: Սկզբում աշակերտը բառը կարդում է անգիր, ձևականորեն, որովհետև տառերը դեռ ուսուցանված չեն: Այնուհետև անցնում են բառի տարրը կազմող տառը, որից հետո նորից կատարում համադրում:

Ամբողջ աշխարհում կիրառվում է գրուսուցման հնչյունային երեք հիմնական մեթոդ՝ վերլուծական, համադրական, համադրական-վերլուծական: Գոյություն ունեն մասն հնչյունային մեթոդի առանձին տարբերակներ՝ սկսած Վալենտին Իկելզամերից մինչև Ի. Պեստալոցի, Հ. Ստեֆանի: Ֆոգելի մշակած գլոբալ մեթոդը հնչյունային վերլուծահամադրական մեթոդախմբին է պատկանում:

Այսօր Եվրոպայի շատ երկրներում, Ամերիկայում, Մերձավոր Արևելքում կիրառվում է գրուսուցման գլոբալ մեթոդը: Եվ, հետևաբար, վերոհիշյալ երկրներում ձևավորված հայկական գաղթօջախների դպրոցներում, մանկապարտեզներում գրուսուցումը նույնպես իրականացնում են գլոբալ մեթոդով՝ միայն մեկ տարբերությամբ, որ այդ երկրների դպրոցներում գրաճանաչությունը սկսվում է նախակրթարանում (տարրական դպրոցներում) և ոչ թե մանկապարտեզներում, ինչպես դա արվում է հայկական դպրոցներում:

Հայաստան գլոբալ մեթոդը մուտք է գործել XIX դարում, երբ հայ մանկավարժ Ա. Բահաթրյանը Լայպցիգի և Հայդելբերգի համալսարաններն ավարտելուց հետո վերադառնում է Հայաստան և ձեռնամուխ լինում նոր այբբենարանների և ընթերցարանների ստեղծմանը՝ ցանկանալով մեզանում կիրառության մեջ դնել ամբողջ Եվրոպայում արդեն որդեգրված գլոբալ մեթոդը: Այս մեթոդը որոշ մշակման ենթարկելուց հետո Բահաթրյանն այն անվանեց «նորմալ կամ օրինակելի բառերի մեթոդ», որը նույնպես հնչյունային վերլուծահամադրական մեթոդական խմբին է պատկանում: Այս մեթոդով ուսուցման ընթացքում վերցնում են իրարից անկախ, հնչյունային տեսակետից պարզ ու հեշտ ընկալվող բառեր, որոնք գերազանցապես առարկաների անվանումներ են: Աշակերտներին ցույց են տրվում այդ ա-

ռարկաները, որոնց անունները մտել են օրինակելի բառերի մեջ: Այնուհետև երեխաներն այդ առարկաները նկարում են իրենց տեսարանում, ապա պատմում դրանց մասին՝ հիմնվելով տեսածի, ուսուցչի պատմածի և սեփական փորձի վրա: Այդ բոլորից հետո անցնում են բառը կարդալուն՝ տալով նրա հնչյունային վերլուծությունն ու համադրությունը: Ապա ուսուցիչը բառը գրում է գրատախտակին և աշակերտի ուշադրությունը հրավիրում բառի ամբողջական ընկալման և կառուցվածքի վրա: Աշակերտները բառը նախ օդում գրում են շարժումներով և ապա սեղանին՝ մատով: Բառը, փաստորեն, հնչյունային և գրաֆիկական վերլուծության է ենթարկվում, և աշակերտների ուշադրությունը ուղղվում է հնչյունին՝ նրան համադրելով պատկերը, տառը: Հատուկ ուշադրություն է դարձվում նոր հնչյունի, տառի վրա: Նոր հնչյուն պարունակող բառը սովորեցնելուց հետո ուսուցիչն անցնում է այդ բառի գրությանը, առաջարկում կարդալ ձեռագիր և ապա տպագիր տեքստը: Բառերը ոչ միայն կարդալու, այլև գրելու ժամանակ բաժանվում են բաղադրիչների:

Այս մեթոդի մեջ հետաքրքրականն այն է, որ գրուսուցման ժամանակ դիտելը, մտածելը, խոսելը, գրելը, կարդալը կատարվում են միաժամանակ (անբաժան):

Լիբանանում առաջինը Նշան Փալաջյան և Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարաններում է կիրառվել գրուսուցման գլոբալ մեթոդը, հետո այն տարածվել է մյուս դպրոցներում:

Այս մեթոդի կիրառումը շատ նուրբ աշխատանք է պահանջում: Ուսուցչին պետք է տալ մասնագիտական-մեթոդական լուրջ պատրաստություն: Շատ դեպքերում նոր՝ չվերապատրաստված ուսուցիչները սխալ են կիրառում մեթոդը և վտանգի ենթարկում գրաճանաչության կարևոր գործը: Արդյունքում՝

1. աշակերտները լավ չեն յուրացնում գրուսուցումը,
2. դրանից տուժում է և՛ ընթերցանությունը, և՛ գիրը:

Այսպիսի տխուր իրավիճակների մենք ականատես եղանք Բեյրութի մի քանի հայկական դպրոցներում. 3-րդ, 4-րդ դասարանների աշակերտների որոշ տոկոսի մոտ կային գրելու և կարդալու մեծ դժվարություններ: Դասալսումները և ուսուցիչների հետ բազմաթիվ

գրույցները մեզ բերեցին այն համոզման, որ դրանց հիմնական պատճառը գրուսուցման գլոբալ մեթոդն է և ուսուցիչների մեթոդական ցածր պատրաստվածությունը:

Վերադառնալով Նորսիկյան մանկապարտեզին՝ մշենք, որ հայերենի գրաճանաչությունը իրականացվում է Լուսին Մալիքյանի «Փոքրիկ Անին» (I-II մաս) և «Պետիկն ու Գայլը» դասագրքերով, որտեղ գրուսուցումը տրվում է գլոբալ մեթոդով:

Մանկապարտեզի բոլոր դասարաններում՝ աստիճանական զարգացմամբ տրվում են թվաբանական նախնական գիտելիքներ: Նպատակն է՝ այս ճանապարհով երեխաների մեջ ձևավորել հաշվելու և թվաբանական գործողությունների տրամաբանական ըմբռնում: Կիրառվում են մանկապարտեզի թվաբանության ուսուցիչների կազմած «Գույն եւ գիծ», «Ձեւ եւ թիւ» դասագրքերը:

Կարևոր ենք համարում մշել, որ Մելանքթոն և Հայկ Արսլանյան ձեռնարանը կազմակերպում է մանկավարժական-մեթոդական դասընթացներ, որտեղ գլոբալ մեթոդով աշխատող ուսուցիչներ են պատրաստվում մյուս դպրոցների, մանկապարտեզների համար:

Նորսիկյան մանկապարտեզում բավականին լավ հիմքերի վրա է դրված երեխաների ֆիզիկական, աշխատանքային և գեղագիտական դաստիարակությունը՝ հիմք ընդունելով մարմնի և հոգու ներդաշնակ գեղեցկության ու առողջության սկզբունքը:

Նորսիկյան մանկապարտեզը, որպես տիպային նախադպրոցական հաստատություն, թե՛ իր ինքնատիպ ու հարմարավետ շինություններ, թե՛ իրականացրած կրթադաստիարակչական բարձր ու արդյունավետ գործունեությամբ և թե՛ իր նվիրյալ դաստիարակչուհիներով, կատարում է հայրենամովեր ու հայապահպան մեծ աշխատանք՝ դեռ վաղ մանկությունից երեխաների մեջ սերմանելով ազգային ինքնագիտակցության ոգի, փոխանցելով նրանց ազգային արժեքներ, կոփելով նրանց մարմինը, միտքը և հոգին, որպեսզի նրանք օտար միջավայրում մեծամասն հայ՝ պահպանելով իրենց ինքնությունը:

Ազգային Եղիշե Մանուկեան քոլեջ (երկրորդական վարժարան)

Ինչպես ազգային նախակրթարանները, այնպես էլ ազգային միջնակարգ և երկրորդական (քոլեջ) վարժարաններն իրենց կրթադաստիարակչական գործունեությունն իրականացնում են Հայ առաքելական եկեղեցու Լիբանանի թեմի Ազգային առաջնորդարանի հովանու տակ, որի ենթակառույցներից մեկն էլ՝ ուսումնական խորհուրդը, համակարգում է նրանց աշխատանքները:

Եվ քանի որ միջնակարգի և երկրորդականի կրթական աստիճաններ ունեցող բոլոր ազգային վարժարանները գործում են ուսումնական խորհրդի կազմած ընդհանուր ծրագրերով ու դասագրքերով և մշակած աշխատանքային ընդհանուր սկզբունքներով, ապա կրկնություններից խուսափելու համար նախընտրել ենք խոսել երկրորդական վարժարաններից ամենամեծի՝ ազգային Եղ. Մանուկյան քոլեջի մասին՝ մեկնաբանությունների և վերլուծությունների ժամանակ տանելով նաև որոշ աղերսներ կրթական մույն կարգավիճակն ունեցող մյուս դպրոցների հետ:

Դեռևս 1963 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսության նախաձեռնությամբ Անթիլիասի վանքի շրջակայքում բացվում է Մարտիկյան վարժարանը՝ նախակրթարանի (տարրական) բաժնով: Դրանից առաջ դպրոցը կոչվում էր Մեսրոպյան:

Տարեցտարի դպրոցի աշակերտության թիվն ավելանում է: Բացվում են միջնակարգի դասարաններ: Դրականորեն է փոխվում լիբանահայության վերաբերմունքը հայկական վարժարանների նկատմամբ՝ գիտակցելով օտար միջավայրում իրենց երեխաների հայեցի կրթության և դաստիարակության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

1984 թ. դպրոցն արդեն ուներ 400 աշակերտ, և վանքի շրջակայքում գտնվող դպրոցի շենքն այլևս չէր բավարարում եղած պահանջները: Այս իրադրության մեջ դպրոցին ձեռք մեկնեց ազգային բարերար, սփյուռքում կրթական գործին միշտ աջակից, մեծ հայրենասեր Վաչե Մանուկյանը, որի բարեսիրական գործունեությունն այ-

սօր (տարբեր ոլորտներում) ընդգրկում է ոչ միայն սփյուռքի մեր գաղ-
թօջախները, այլ նաև մայր հայրենիքը:

Մեծ բարերարի միջոցներով գնվում է բավականին մեծ կա-
վածք Բեյրութի արաբական թաղամասերից մեկում, և Մարտիկյան
վարժարանը փոխադրվում է այդտեղ:

1985 թ., ի երախտագիտություն Վաչե Մանուկյանի ազգանվեր
քայլին, վարժարանը վերանվանվում է բարերարի հոր՝ մանկավարժ
Եղիշե Մանուկյանի անվամբ:

Այսօր ազգային Եղիշե Մանուկյան վարժարանն աշխատում է
կրթական երեք բաժիններով՝ ներառյալ մանկապարտեզը.

Մանկապարտեզ – նախակրթարան (1–6 դդ.) — միջնակարգ
(7–9 դդ.) – երկրորդական (10–12 դդ.):

Կրթական երեք աստիճաններ ունեցող նմանատիպ դպրոցնե-
րը ֆրանսիական կրթական համակարգով կոչվում են քոլեջ:

Հաջողությամբ համադրվում են պետական պարտադիր և հա-
յագիտական ծրագրերը, որոնց գիտամանկավարժորեն ճիշտ կազ-
մակերպելուց են կախված ողջ ուսումնադաստիարակչական գործու-
նեության արդյունավետությունը և աշակերտների անձի ձևավորման
գործընթացը:

Աղյուսակ 6–ում ներկայացնում ենք ազգային Եղ. Մանուկյան
քոլեջի առաջինից տասներկուերորդ դասարաններում դասավանդ-
վող ուսումնական առարկաները շաբաթական ժամաքանակով.

Աղյուսակ 6.

Եղիշե Մանուկյան քոլեջում դասավանդվող ուսումնական առարկաները

Առարկաներ	Դասարաններ												
	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ճ	ԺԱ	Գտ	ԻԿ
Լեզուներ-գրականություն													
1. Հայերեն	7	7	7	7	7	6	6	6	5	4	4		
2. Արաբերեն	7	7	7	7	7	7	6	6	7	6	6		
3. Անգլերեն	7	7	7	7	8	6	6	6	6	6	6		
4. Ֆրանսերեն						3	3	2	2	2	2		
Թվաբանություն- ուսողություն	6	6	6	7	7	6	6	6	6	6	6	9	
Գիտական նյութեր													
Բայերենով	2	2	2	2	2								
Science						3	3						
Geology								3					
Biology									3	2		5	5
Chemistry									1	3	4	4	
Physics								3	2	4	5	8	3
Համակարգիչ			1	1	1	1	1	2	1				1
Պատմողական													
Կրոն-եկ. պատմություն	1	1	1	1	1	1	1			1			
Հայոց պատմություն	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2	2
Մատենագրություն										2			
Հայ մտքի արժեքներ											1		
Աշխարհագրություն				1	1								
Logic & Ethics												3	3
Psychology													8
General History						1	1	1	1	1	1		1
Ար. պատմություն					1	1	1	1	2		1	2	2
Ար. աշխարհագրություն						1	2	1	1	1	1	2	2
Ար. գիտ. պատմություն												2	
Ար. իմաստասիրություն													6
Մարզանք	1	1	1	1	1	1	1	1	1	1			
Արվեստ													
1. Երգ	2	2	1	1									
2. Նվագ՝	1	1	1	1									
3. Հայկական պար	1	1	1										
4. Չեռային աշխատանք	2	2	2	1	1	1	1						
5. Գծագրություն	1	1	1	1	1	1	1						
6. Ատենամարզանք				1									
7. Լսարանական աշխ.										1	1	1	1
TEST												2	2
	40	40	40	40	40	40	40	40	40	40	40	40	36

Նախակրթարանում ուսուցումը հայերեն է, իսկ միջնակարգում և երկրորդականում գիտական և հասարակագիտական առարկաները դասավանդվում են անգլերենով՝ ավելացրած արաբերեն պատմություն, աշխարհագրություն, իմաստասիրություն և լեզու:

Այս ամենին գումարվում են հայագիտական առարկաները՝ առաջինից 12-րդ դասարաններում՝ աստիճանաբար ժամաքանակի որոշ նվազմամբ:

Ըստ ֆրանսիական կրթական ծրագրի՝ ավարտական դասարաններն են 9-րդը՝ բրյովե և 12-րդը՝ բաքալորեա (1, 2):

Այս դասարանների ավարտական քննությունները պետական են և կազմակերպվում են կենտրոնացված հիմունքներով՝ ապահովելու համար աշակերտների գիտելիքների գնահատման օբյեկտիվությունը: Պետական քննությունները տրվում են անգլերենով (կամ ֆրանսերենով) և արաբերենով:

Անգլերենի և արաբերենի կատարյալ իմացության պահանջը հաճախ պատճառ է դառնում հայ աշակերտների ավարտական քննությունների ոչ բարձր արդյունքների: Չհատելով անցումային շեմը՝ հայ աշակերտները չեն կարողանում շարունակել ուսումը բարձրագույն դպրոցներում, այսինքն՝ չի իրականանում շարունակական կրթության ընթացքը:

Սա հենց այն կարևորագույն պատճառներից մեկն է, որ հայկական դպրոցների գերակշռող մասը, հատկապես միջնակարգ և երկրորդական, չի կարողանում ապահովել կրթօջախը համալսարանական կրթություն ունեցող հայ ուսուցիչներով: Այս պահանջը պարտադրում է պետությունը:

Հայ աշակերտների՝ օտար լեզուների ոչ կատարյալ իմացության պատճառները վերլուծելու համար հանգամանորեն կանգ առնենք առաջին դասարանից (թերևս մանկապարտեզից) 3-4 օտար լեզուների միաժամանակյա ուսուցման հարցի վրա՝ վերհանելով նրա բացասական կողմերը:

Վերևում մենք արդեն ներկայացրել ենք ազգային Եղ. Մանուկյան դպրոցի կրթության բովանդակությունը, ըստ որի՝ առաջինից մինչև հինգերորդ դասարան աշակերտները շաբաթական 7-ական

ժամով անցնում են հայերեն, արաբերեն, անգլերեն, վեցերորդ դասարանից ավելանում է ֆրանսերենը՝ 3-2 ժամով:

Հարց է առաջանում. շաբաթական այսպիսի մեծ ժամաքանակով դասերի առկայությամբ ինչո՞ւ բարձր չեն արդյունքները, ինչո՞ւ կատարյալ չէ լեզուների իմացությունը: Այս հարցերին պատասխանելու համար պետք է քննարկել հավանական (ըստ մեզ՝ հիմնական) հետևյալ պատճառները.

ա. ծրագրերի գերծանրաբեռնվածությունը,

բ. ուսուցման մեթոդների ոչ արդյունավետությունը,

գ. դասազրքերի անկատարությունը, կրթական չափորոշիչներին անհամապատասխանությունը,

դ. ուսուցիչների մասնագիտական ոչ բարձր մակարդակը,

ե. մի քանի լեզուների միաժամանակյա ուսուցման ոչ նպատակահարմարությունը և ոչ ճիշտ կազմակերպումը,

զ. մանկապարտեզներում գրաճանաչության գործի իրականացման աննպատակահարմարությունը և ոչ ճիշտ կազմակերպումը:

Ամբողջի մեջ դիտարկելով վերը թվարկած պատճառները՝ կհանդգնենք, որ մեկը պայմանավորված է մյուսով, մեկը պատճառ է դառնում մյուսի համար: Մի ներքին կապ գոյություն ունի նրանց միջև:

Ուշադիր զննելով յուրաքանչյուր դասարանի և մասնավորապես նախակրթարանի դասաժամերի շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 40 ժամ (պետականորեն 35-36 ժամ), պարզ է դառնում, որ հայ աշակերտները գերծանրաբեռնված են: Չարմանալիորեն տարբերակում չի դրված նախակրթարանի, միջնակարգի և երկրորդականի շաբաթական ծանրաբեռնվածությունների միջև:

Ակնհայտորեն այստեղ խախտված է սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու դիդակտիկական կարևորագույն և հիմնարար սկզբունքը, առանց որի հնարավոր չէ ուսուցման գործընթացի գիտական և արդյունավետ կազմակերպում:

Այո՛, դասաժամերի շաբաթական գերծանրաբեռնվածությունը առաջ է բերում աշակերտների շուտ հոգնածություն, նյարդայնացում, սեփական ուժերի նկատմամբ անվստահություն, թուլացում է

նրանց կենտրոնացվածությունը և կամաժին ուշադրությունը, կորչում է հետաքրքրասիրությունը ուսման նկատմամբ, երևան են գալիս առողջությունը վնասող երևույթներ՝ գլխացավեր, ողնաշարի ծռում, տեսողության վատացում և այլն: Սրան ավելանում են նաև մեծ քանակությամբ տնային առաջադրանքները: Եվ այս ամենն աշակերտների մեջ ստեղծում է բացասական վերաբերմունք դպրոցի նկատմամբ՝ այն դիտելով որպես տանջարան:

Այսպիսի վիճակը, իհարկե, բարենպաստ չէ առաջադիմության ու հաջողություններ գրանցելու համար:

Սրանք ասվում են հարցը տեղում (գաղթօջախում) անմիջականորեն ուսումնասիրելու հիման վրա՝ դասալսումներ, դիտումներ, զրույցներ (աշակերտների, ուսուցիչների, տնօրենների, ծնողների հետ) և հանդիպումներ անցկացնելու արդյունքում:

Մեր կողմից արված այս դիտողությանը դպրոցի տնօրեններն ու ուսումնական խորհուրդը, որոնք նույնպես ընդունում և գիտակցում են աշակերտների ուսումնառության համար ոչ բարենպաստ իրավիճակը, արեցին այն պատճառաբանությունը, թե միայն այս ճանապարհով է հնարավոր համադրել պետական (պարտադիր) և հայկական ծրագրերը: Իսկ շաբաթական ծանրաբեռնվածության թեթևացումը լինելու է միայն հայագիտական առարկաների հաշվին: Այդ քայլին նրանք երբեք չեն դիմի, քանի որ հայկական դպրոցի գերնպատակը, բազմաբնույթ ու բազմաթեք գիտելիքներ հաղորդելով հանդերձ, հայ երեխաներին հայեցի կրթություն ու դաստիարակություն տալն է, իրենց արձատներին ամուր պահելը:

Սա մի անառարկելի պատճառաբանություն է, որի հետ պետք է անվերապահորեն համաձայնվել՝ հաշվի առնելով սփյուռքի հայկական դպրոցների գտնվելու վայրը, գործելու պայմանները, կարգավիճակը և հեռանկարները:

Օտար լեզուների ոչ կատարյալ իմացության երկրորդ պատճառը դասավանդման մեթոդների անարդյունավետությունն է: Այստեղ արդեն պետք է շեշտել ուսուցիչների մեթոդական ոչ բավարար պատրաստվածության և դասապրոցեսի ոչ ճիշտ կազմակերպման մասին:

Հարկ է նշել, որ լեզվի լավ իմացությունը մի բան է, այն մատչելի ու արդյունավետ մատուցելը, ըմբռնել տալն ու սովորեցնելը՝ այլ բան. **նյութը՝ ինչն է, մեթոդը՝ ինչպեսը:**

Հետևաբար, լավ տիրապետելով լեզվին, անհրաժեշտ է զինված լինել նաև աշակերտներին այն ճիշտ ու մատչելի հաղորդելու մեթոդներով՝ սովորողների մեջ ձևավորելու կարողություններ ու հմտություններ՝ լեզվական գիտելիքները գրավոր և բանավոր խոսքում ճիշտ կիրառելու համար: Իսկ դրա համար ուսուցիչներին անհրաժեշտ են մանկավարժական կրթություն, դասավանդման առաջավոր մեթոդիկաների ուսուցում, պարբերաբար վերապատրաստման դասընթացներ:

Հաջորդ կարևոր հարցը, որի վրա պետք է ուշադրություն դարձնել, այն է, որ լեզվի դասավանդման ժամանակ քերականության ուսուցումը չպետք է դիտել որպես նպատակ, ինչպես դա անում են շատ ուսուցիչներ, այլ միջոց՝ լեզվի ուսուցման համար: Որևէ լեզվի քերականության իմացությունն օգնում է այդ լեզվով գրավոր և բանավոր ճիշտ հաղորդակցմանը: Այստեղ տեղին ենք գտնում դիմել հայ դասական մանկավարժ Ա. Բահաթրյանին, որը, հակառակ քերականության ուսուցումը գերազնահատողների և նրա դերն անտեսողների, հավատարիմ մնաց քերականության ուսուցման ազգային (Աղայան), ռուսական (Ուշինսկի) և եվրոպական, մասնավորապես գերմանացի ժողովրդավար-մանկավարժ Ա. Դիստերվեզի գաղափարներին: Բահաթրյանը քերականությունը համարում էր լեզվի արդյունքը, նրա տրամաբանությունը: Նա շեշտում էր, որ այն ոչ թե նպատակ պետք է լինի, այլ լեզուն ճշտությամբ հասկանալու և տիրապետելու միջոց: Նա գրում է. «Տարրականի ուսուցիչն յուր փառքն ու պարծանքը պիտի որոնե ոչ թե նորա մեջ, որ երեխաները գիտեն լեզվի քերականական կանոնները և յուրյանց մատների վրա կարող են թվել բոլոր քերականական նրբությունները, այլ նորա մեջ, որ նոքա լեզվի կանոնները ուղիղ հասկանան և ճշտութեամբ գործ դնեն»⁷¹:

Ուրեմն, բավական չէ միայն գիտենալ, սերտել տեսությունը, այլ անհրաժեշտ է այն կիրառել գործնականում:

⁷¹ Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսումը տարրական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1878, թիվ 4:

Լեզվի ուսուցման ժամանակ կարևորը աշակերտի մտածողության զարգացումն է, որպեսզի նա ուսուցչի ղեկավարությամբ կարողանա գտնել լեզվական միանման երևույթներ, ապա համեմատությունների միջոցով կարողանա արտաբերել կանոնները:

XIX դարի ռուս տաղանդավոր մանկավարժ Դ. Կ. Ուշինսկին նույնպես առանձնահատուկ նշանակություն է տվել քերականությանը՝ «լեզվի տրամաբանությունը հասկանալու, սովորողների մտածողությունը զարգացնելու գործում»⁷²:

Ժամանակակից մանկավարժության և հոգեբանության կատարած ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրտսեր դպրոցականի մեջ ավելի շուտ են դրսևորվում ընդհանրացման ունակությունները, քան կարծում էին:

Աշակերտը, սովորելով տեսությունը, ըմբռնելով նրա էությունը, ինքը կայրպտի և դրանց վերաբերյալ օրինակներ ու ապացույցներ կբերի:

Լեզվի լավ իմացության համար չափազանց կարևոր է դասարանում լեզվական տարբեր իրավիճակների ստեղծումը՝ կիրառելով փոխներգործում մեթոդը՝ երկխոսություններ, դերային ընթերցումներ, կյանքի երևակայական տարբեր իրավիճակներում օտար լեզվով հաղորդակցում, գիտելիքների դրսևորում և ստուգում: Այս ամենը նպաստելու է սովորողների մեջ լեզվական հմտությունների մշակմանը: Այստեղ մեծ դեր է խաղում նաև տարբեր բնույթի ձայնագրությունների ունկնդրումը՝ օտար լեզվի ուսուցման գործում ճիշտ արտասանական տեխնիկային տիրապետելու համար:

Դրական արդյունք ունենալու համար անհրաժեշտ է նվազագույնի հասցնել մայրենի լեզվով բացատրությունների և թարգմանությունների տոկոսը: Նախընտրելի է անձանոթ բառերի և արտահայտությունների բացատրությունները տալ նույն լեզվով՝ ավելի պարզ ու արդեն հայտնի բառերով: Միայն ծայրահեղ դեպքում դիմել թարգմանությունների: Արդյունավետ է դասերին կիրառել տարբեր դիդակտիկ պարագաներ:

Լեզվի իմացության համար չափազանց կարևորվում է բանավոր և գրավոր վարժությունների դերը, որոնք լինում են մարզողական, վերլուծական, կիրառական և ստեղծագործական տեսակների: «Վարժությունների միջոցով է,— գրում է հայ տաղանդավոր մանկավարժ Ա. Բահաթրյանը,— որ աշակերտը պետք է ստուգի և ամրապնդի իր կրթական գիտելիքները»⁷³: Նա կարևորություն էր տալիս ոչ միայն կարդալու տեխնիկայի տիրապետմանը, քերականության գիտակցական յուրացմանը, այլև բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը՝ մեծ տեղ տալով վերջիններիս փոխկապակցություններին:

Միանգամայն արդարացիորեն նա գրում է, որ ուղիղ արտասանությամբ և լիակատար նախադասություններով խոսելը լեզվի զարգողությունն ու կազմությունը զարգացնելու ազդու միջոց է և ամենալավ նախապատրաստումը գրավոր խոսքի համար: Իսկ վերջինս, ըստ նրա, նպաստում է ճիշտ դատողությունների ձևավորմանը, տրամաբանական մտածողության զարգացմանը⁷⁴:

Այստեղից կարելի է ամել ընդհանրացնող մի հետևություն. միայն ճիշտ, ակտիվացնող, լեզվամտածողություն ձևավորող, լեզվական գիտելիքների կիրառման հմտություններ զարգացնող մեթոդների շնորհիվ է հնարավոր իրականացնել լեզուների արդյունավետ ուսուցումը:

Անդրադառնալով լեզվի ոչ լիակատար իմացության գործում 3-րդ պատճառին՝ դասագրքերի անկատարելիությանը և դասագրքաստեղծման չափորոշիչներին նրանց անհամապատասխանությանը, փաստենք, որ սա սփյուռքի հայկական դպրոցների կրթական ամենաբարդ ու չլուծված խնդիրն է առ այսօր:

Սփյուռքում դասագրքեր կան գրված: Գնահատանքի արժանացնենք արդեն նրանց գոյությունն իսկ, քանի որ սփյուռքի հայկական դպրոցների համար հայագիտական առարկաների ուսուցման հարցում դասագիրքը դեռևս մնում է ուսուցման միակ միջոցը:

Իսկ ինչ վերաբերում է օտար լեզուների դասագրքերին, ապա դպրոցները լիովին ապահովված են դրանցով. արաբերենի դասագիր-

⁷² Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, 1981, էջ 246:

⁷³ Բահաթրյան Ա., Ընթերցարանը և նրա նշանակությունը ժողովրդական դպրոցների մեջ, «Մանկավարժական թերթ», Թիֆլիս, 1879, թիվ 7:

⁷⁴ Նույն տեղը:

քը պետական կրթական մարմինն է կազմել, իսկ անգլերենի և ֆրանսերենի դասագրքերը ներմուծված են Անգլիայից և Ֆրանսիայից:

Անգլերենը — Longman, Addison-Wesley,

Ֆրանսերենը — Librairie Antoine.

Վերոհիշյալ դասագրքերի հեղինակները, լինելով տվյալ ազգերի մասնագետները, բնականաբար, բացառել են գրքում որևէ մեկ այլ լեզվով քարգմանությունները, քանի որ դրանք գրված են արաբ, ֆրանսիացի և անգլիացի երեխաների համար, և օրինակներն ու հասկացությունները բերված են այն միջավայրից, ուր ապրում են նրանք:

Այլ է հարցը հայ երեխաների համար: Անհասկանալի բառերի տոկոսը նրանց համար անհամեմատ մեծ է: Եվ այստեղ է, որ ուսուցիչը չպետք է բավարարվի միայն դասագրքերով, չպետք է կիրառի միայն հեղինակների առաջարկած մեթոդները, այլ պետք է դրանց հավելյալ մշակի նոր մեթոդներ ու մոտեցումներ հայ երեխաներին օտար լեզուն հասկանալի և հասանելի դարձնելու համար՝ դիմելով համեմատական լեզվաբանության հրաշալի սկզբունքներին: Իզուր չէ ասված, որ մայրենի լեզվի լավ իմացությունը հիմք է օտար լեզվի ուսուցման համար:

Ամբողջի մեջ հաջողված լինելով հանդերձ՝ օտար լեզուների (անգլ., ֆր.) դասագրքերի աչքի ընկնող թերություններից է, ըստ մեզ, դիդակտիկական որոշ սկզբունքների խախտումը: Դրանցից կնշենք՝ համակարգայնության և հաջորդականության և ներառարկայական կապի սկզբունքների կամ բացակայությունը, կամ ոչ բավարար չափով կիրառումը: Դասերի կառուցվածքը հստակ չէ: Չի երևում նյութերում մտքի տրամաբանական զարգացման ընթացքը: Միևնույն դասարանի դասագրքի նյութերի միջև չկա տրամաբանական կապ: Շատ դեպքերում պահպանված չեն մանկավարժական կանոնները, ծանոթից՝ անծանոթը, պարզից՝ բարդը, մոտիկից՝ հեռուն, հեշտից՝ դժվարը, կոնկրետից՝ վերացականը: Այս բոլորի անտեսումը դժվարացնում է նյութի ընկալումը, հասկացումը և մտապահումը:

Լեզվի ոչ կատարյալ իմացության հարցում կարևոր պատճառներից մեկն է նաև ուսուցիչների մասնագիտական ոչ բարձր մակարդակը: Այս երևույթն արդեն դաժան ներգործություն է ունենում ու-

սուցման գործընթացի վրա, քանի որ հաջողված դասագրքերն ու առաջադիմական մեթոդներն անգամ չեն բերելու հաջողություն, եթե գտնվում են անորակ մասնագետի ձեռքում:

Այս հարցում մեծ է դպրոցի տնօրենի դերը, քանի որ կադրերի ճիշտ ընտրության, վերապատրաստման և աշխատանքից ազատելու իրավասությունները նրան է վերապահված, նա է դպրոցի ուսման որակի պատասխանատուն:

Ուզում ենք առանձնակի կանգ առնել նախակրթարանում մի քանի օտար լեզուների միաժամանակյա ուսուցման ոչ նպատակահարմարության և ոչ ճիշտ կազմակերպման հարցի վրա, քանի որ այս խնդիրը մեր առջև քննարկումների ժամանակ բարձրացնում էին Լիբանանի բոլոր հայկական դպրոցները՝ նախակրթարանից մինչև երկրորդական: Եվ բոլոր տնօրեններն ու ուսուցիչները միանշանակորեն լեզուների ոչ կատարյալ իմացության հիմնական պատճառը համարում էին դրանց միաժամանակյա ուսուցումը:

Այստեղ ճշտենք սկզբունքորեն երկու շատ կարևոր հարց, այնուհետև անցնենք դրանց վերլուծությանը:

Բանն այն է, որ հայկական դպրոցներում մայրենի և երկու օտար լեզուների՝ արաբերենի և անգլերենի (կամ ֆրանսերենի) գրաճանաչությունը սկսվում է մանկապարտեզում («ծաղիկ» դասարանում), որը դպրոց կառույցի մեջ է, իսկ պետական դպրոցներում այդպես չէ. նախակրթարանի (տարրականի) առաջին դասարանում անցնում են արաբերեն (իրենց մայրենի լեզուն), իսկ երկրորդ դասարանում՝ անգլերեն կամ ֆրանսերեն:

Այսպես, անցնենք հարցի վերլուծությանը: Հայկական դպրոցների մեր հարգելի գործընկերները իրենք են մշակել մանկապարտեզում լեզուների միաժամանակյա գրաճանաչություն իրականացնելու հարցը, իրենք են ստեղծել դասագրքեր ու գործածության մեջ դրել: Եվ երբ չեն ստանում սպասված արդյունքը, սկսում են փնտրել այլ պատճառներ, մինչդեռ ամենահիմնական պատճառները, մեր խորին համոզմամբ.

1. երեք լեզուների (մայրենի, արաբերեն, անգլերեն կամ ֆրանսերեն) գրուսուցումն է **մանկապարտեզում**,

2. երեք լեզուների միաժամանակյա և ոչ թե հաջորդաբար ուսուցումն է,

3. գրուսուցման գլոբալ մեթոդի կիրառումն է, փոխանակ հնչյունային:

Նախ հստակեցնենք մի շատ կարևոր հանգամանք: Չգիտես հնչյու, սփյուռքում գործող հայկական մանկապարտեզների գործառույթները խախտված են: Մեր խորին համոզմամբ, մանկապարտեզը, որպես նախադպրոցական կրթադաստիարակաչկան հաստատություն, իր ամբողջ գործունեությանը երեխաներին պետք է նախապատրաստի դպրոցին, դառնա հիմք նրա համար: Իսկ դպրոցին՝ տարրականին, վերապահված է 3-4 շաբաթ հարմարման փուլից հետո գիտական և մեթոդական ճիշտ հիմքերի վրա իրականացնել գրաճանաչության չափազանց դժվարին ու պատասխանատու գործը: Մինչդեռ սփյուռքի մանկապարտեզը վերածված է դպրոցի: Լիբանանի հայկական մանկապարտեզների **գ** (5 տարեկան) և **դ** (6 տարեկան) տարիներին սկսվում է թվաբանության ուսուցումը՝ հայերեն և արաբերեն լեզուներով և հայերենի, արաբերենի, անգլերենի (կամ ֆրանսերենի) գրուսուցումը:

Այստեղ բացահայտորեն խախտված է երեխաների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու դիդակտիկական կարևորագույն սկզբունքը:

Մանկապարտեզային տարիքում, երբ նոր է սկսվում երեխայի մտածողության ձևավորումը, երբ դեռևս հստակ չէ երեխայի խոսքը, երբ դեռ զարգացած չէ նրա ձեռքը, երբ բավականին թույլ է երեխայի կամածին ուշադրությունը, այսպիսի գերծանրաբեռնված ուսումնառություն իրականացնելը, կարծում ենք, անթույլատրելի է՝ և մանկավարժորեն չհիմնավորված:

Միաժամանակ հայերենի, անգլերենի և արաբերենի ուսուցումը, այն էլ այն դեպքում, երբ հայերենը և անգլերենը գրվում են ձախից աջ, իսկ արաբերենը՝ աջից ձախ, մեծ խառնաշփոթություն է առաջ բերում երեխաների գլխում. խառնվում են բառերը, տառերը, արտասանությունը:

Դրան մենք ականատես եղանք, երբ ծաղիկ (6 տարեկան) դասարանում երեխաներին հարցնում էին առարկայի հայերեն անվանումը, նրանք ասում էին անգլերենը, հարցնում էին անգլերենը, ասում էին արաբերենը: Այս խառնաշփոթը վնասում է նաև ընթերցանության գործին: Արդյունքում՝ մենք հանդիպեցինք աշակերտների, որոնք 3-րդ, 4-րդ դասարանում կարդում էին մի կերպ՝ վանկատելով:

Մեր խորին համոզմամբ, հարցի լուծման կարևոր միջոցներից մեկը մանկապարտեզին իրեն բնորոշ գործառույթը վերադարձնելն է: Այն է՝ ճանաչողական, զարգացողական, դաստիարակչական, լեզվական, մտածողության զարգացման (թվաբանական) նախնական գիտելիքներ հաղորդել, զարգացնել երեխայի ձեռքը, ինքնագիտակցությունը, ակտիվությունը: Լեզվական և թվաբանական գիտելիքները հաղորդել բանավոր կարգով՝ խաղային իրավիճակներում:

Մանկապարտեզում հիմնականում հարկավոր է զարկ տալ երեխայի զարգացմանը նպաստող ամենակարևոր գործունեությանը՝ խաղին:

Երեխայի անձի ձևավորման գործընթացը, աշխարհաճանաչողությունը իրականացնել բնության հետ շփմամբ և խաղային գործունեությամբ՝ մարդկանց հետ հաղորդակցման միջոցով:

Այսինքն, մանկապարտեզում ուշադրություն դարձնել բանավոր հաղորդակցմանը, խոսքին, իսկ գրուսուցումը թողնել դպրոցին, որի համար բանավոր խոսքը և մանկապարտեզում տրված գրավորի տարրերը (ուղիղ, կոր, թեք գծեր քաշել) դառնալու են հիմք և օգնելու են գրուսուցման դժվարությունները հեշտությամբ հաղթահարելուն:

Հարցի լուծման երկրորդ միջոցը տարրական դասարաններում (նախակրթարանում) լեզուների հաջորդական և ոչ թե միաժամանակյա ուսուցումն է: Այսպես. մանկապարտեզում արդեն մայրենի և օտար լեզուների որոշակի բառապաշարի ստեղծումը և նախնական որոշ գիտելիքների հաղորդումը, դառնալով հիմք, մեծապես օգնելու են գրավոր խոսքի ուսուցմանը:

Առաջին դասարանում սկսել միայն մայրենի լեզվի գրուսուցման գործընթացը: Մեկ տարի ամբողջացնելուց և երեխաների մեջ հստակ լեզվական համակարգ ստեղծելուց հետո՝ նախակրթարանի

երկրորդ տարում, անցնել արաբերենի՝ որպես տվյալ երկրի պետական լեզվի գրուսուցմանը: Մեկ տարի էլ այն հստակ ամբողջացնելուց հետո, մայրենի լեզուն դիտելով որպես հիմք օտար լեզուների համար, անցնել անգլերենի (կամ ֆրանսերենի) ուսուցմանը, այսինքն՝ առաջարկում ենք լեզուների ուսուցման հաջորդականության մեխանիզմը: Երբ մեկ ամբողջ տարի ուսուցանվում է մեկ լեզու, երեխայի ուշադրությունն ամբողջովին կենտրոնանում է դրա վրա. միտքը, ականջը, աչքը, լեզուն, ձեռքը միասնական աշխատանքով ձեռք են բերում կարողություններ և հմտություններ այդ լեզվում: Այստեղ կարող ենք մի վերապահում թույլ տալ. հաշվի առնելով սփյուռքի հայկական դպրոցների ունեցած երկու ծրագրերի միաժամանակյա իրագործման խնդիրը և շաբաթական գերծանրաբեռնվածությունը՝ միայն հայերենի գրուսուցումը տանել մանկապարտեզ՝ այն էլ միայն ու միայն «Ծաղիկ» դասարանում, իսկ «Կոկոն» դասարանում կատարել դրա նախապատրաստական աշխատանքները:

Այսուհանդերձ, ուզում ենք հստակ ձևակերպել մեր դիրքորոշումը, որ գրաճանաչության գործը պետք է կազմակերպել տեղին ու ժամանակին, լեզուների գրուսուցումն իրականացնել հաջորդաբար, ոչ միաժամանակյա՝ հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ հիմք ընդունելով դիդակտիկական կարևորագույն սկզբունքները, գրուսուցման ճիշտ մեթոդները: Միայն այս դեպքում, մեր խորին համոզմամբ, հնարավոր է ապահովել լեզուների խոր ու հիմնարար իմացություն:

Վերադառնալով ազգային Եղիշե Մանուկյան քոլեջի կրթական հարցերին՝ շեշտենք, որ վերոհիշյալ խնդիրների առկայության պայմաններում անգամ կրթօջախի աշակերտների զգալի մասը և ուսուցիչները գերագույն ճիգերով ու հավելյալ ջանքերով կարողանում են հաղթահարել քննություններում օտար լեզուների անցումային շեղձ արձանագրելով գոհացուցիչ արդյունքներ: Վերջինս շրջանավարտներին իրավունք է տալիս ուսումը շարունակել բարձրագույն դպրոցներում՝ թե՛ Լիբանանում և թե՛ արտասահմանում:

Այսօր ազգային Եղիշե Մանուկյան քոլեջի աշակերտության թիվը հասնում է 650-ի: Աշխատելով վճարովի հիմունքներով՝ այդու-

հանդերձ դպրոցն իր ֆինանսական գործունեությունն իրականացնում է մի քանի օղակներից եկած միջոցներով միայն:

Դրանք են.

ա. Ազգային առաջնորդարան,

բ. բարեսիրական հաստատություններ՝ ԼՕԽ (Լիբանանի օգնության խաչ),

գ. Գյուլբենկյան հաստատություն,

դ. անհատ բարերարներ,

ե. հասութաբեր ձեռնարկներ (ճաշկերույթ, պարահանդես, ուտեստեղենի, ձեռնարկեստի վաճառք),

զ. դպրոցի սրահի վարձակալություն և այլն:

Ըստ դպրոցի տնօրեն տիկ. Բոյաշյանի տվյալների՝ դպրոցի բյուջեի միայն 1/3-ն են տալիս ծնողները (երեխաների ուսման վարձ), որը բոլորովին չի փակում մեկ աշակերտի համար նախատեսված ծախսը:

Այս հարցերի կարգավորման գործը իր վրա է վերցրել դպրոցի խնամակալական խորհուրդը, որը նշանակվում է ուսումնական խորհրդի կողմից: Այս կառույցը դպրոցի պատասխանատու մարմինն է, որին պարբերաբար (1-2 շաբաթը մեկ) հաշվետվություն է տալիս տնօրենը: Չնայած նրան, որ խնամակալական խորհուրդը հիմնականում զբաղվում է դպրոցի բյուջեի, ֆինանսական, տնտեսական հարցերով, այնուամենայնիվ նրան է վերապահված նաև կրթական և կադրային հարցերի հաստատումն ու վավերացումը:

Խնամակալական խորհուրդն ունի երկու տարվա նստաշրջան, ունի իր դիվանը՝ (նախագահությունը) ատենապետը, գանձապետը և այլն:

Ըստ մեր դիտումների՝ բավականին ներդաշնակ ու արդյունավետ են խնամակալական խորհուրդ-տնօրեն համագործակցությունն ու աշխատանքը:

Դպրոցի տարեգրքերի ուսումնասիրությունը, տնօրենի և ուսուցչական կազմի հետ զրույցները հաստատեցին այն փաստը, որ վերջին ժամանակներում նկատվում է դպրոցի աշակերտության թվի նվազում: Այս երևույթը, իհարկե, նկատելի է Լիբանանի գրեթե բոլոր

հայկական դպրոցներում՝ թե՛ նախակրթարան, թե՛ միջնակարգ-երկրորդական: Բնականաբար այս երևույթն ունի իր ծանրակշիռ պատճառները: Դրանք են.

ա. Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետևանքով արտագաղթի ուժգնացումը,

բ. երեխաների բնակության վայրի (թաղի) փոփոխությունը,

գ. երկրի տնտեսական տագնապի հետևանքով ծնողների անվճարունակությունը,

դ. պետական դպրոցների անվճար լինելու հանգամանքը,

ե. ընտանիքի տնտեսական դժվարությունների պատճառով երեխային ժամանակից շուտ աշխատանքի տեղավորումը,

զ. բարձր վարկանիշ ունեցող օտար, վճարովի դպրոցներ հաճախելը (բարձր խավի հայ ընտանիքներում),

է. որոշ ծնողների մտածելակերպի համաձայն երեխաներին հայագիտական նյութերով չծանրաբեռնելու նպատակով պետական դպրոցներում տեղավորելը,

ը. տրանսպորտային ավելորդ ծախսերից խուսափելը (պետական դպրոցի թաղում գտնվելու փաստը),

թ. երեխաներին օտար շրջանակներ, ասպարեզներ դուրս բերելը՝ ապագայի հարցերը լուծելու նպատակով և այլն:

Թերևս բոլոր պատճառներն էլ օբյեկտիվ են ու ըմբռնելի և բխում են ժամանակի պահանջներից և օտար միջավայրում ձևավորված մտածելակերպից ու հոգեբանությունից:

Սակայն անմիջականորեն հարևան պետությունում՝ Սիրիայում, ձևավորված հայկական գաղութում, դարձյալ օտարների շրջապատում, նվազագույնի է հասած օտար դպրոցներում հայ երեխաների թիվը, քանի որ գաղութում գործում է մեկ կարգախոս. «Ոչ մեկ հայ երեխա օտար դպրոցում»: Եվ ամբողջ համայնքը, միավորելով իր տնտեսական-նյութական հնարավորությունները, ջանում է անխափան իրագործել այն:

Թերևս այստեղ կարևոր պատճառ կարող են դիտվել Սիրիայի և Լիբանանի տնտեսավարման տարբեր համակարգերը, ըստ որի՝ Լիբանանը, հատկապես պատերազմից առաջ, չափազանց ազատա-

կանացված երկիր է եղել: Բեյրութն իր վարք ու բարքով համարվել է Մերձավոր Արևելքի Փարիզը: Այստեղ առավել բարձր է կենսամակարդակը, քիչ են պետական սահմանափակումները, ինչպիսիք կան Սիրիայում:

Բնականաբար, ազգային (կրոնական) փոքրամասնությունների համայնքներն էլ ապրում ու զարգանում են երկրի քաղաքական, պետական, սոցիալ-տնտեսական, հասարակական, կրթամշակութային օրենքների ու օրինաչափությունների համաձայն:

Չնայած վերը նշածին՝ Լիբանանի հայկական դպրոցները, այդ թվում և ազգային Եղ. Մանուկյան դպրոցը, իրենց իրականացրած կրթադաստիարակչական, ազգանպաստ, հայրենասիրական, ազգապահպան գործունեությամբ ջանում են հաղթահարել վերոհիշյալ խոչընդոտներն ու դժվարությունները՝ հայ երեխային օտար միջավայրում հայ պահելու մեծ նպատակին ծառայելու համար: Եվ վստահորեն պետք է ասենք, որ նրանց դա հիմնականում հաջողվում է:

Դասագրքերի հարցը ազգային Եղ. Մանուկյան քոլեջում

Պետական ծրագրով նախատեսված բոլոր ուսումնական առարկաների դասագրքերով դպրոցն ապահովված է:

Պետությունն ինքն է կարգավորում դասագրքաստեղծման գործընթացը՝ նույնիսկ ստեղծելով այլընտրանքային մի քանի դասագրքեր մեկ ուսումնական առարկայի համար՝ դպրոցների համար ստեղծելով լավագույնն ընտրելու հնարավորություն:

Ինչ վերաբերում է հայագիտական առարկաների դասագրքերին, ապա այս հարցը լուծված է մասամբ. դասագրքերի հիմնական մասը (հատկապես նախակրթարանի) ապահովված է ուսումնական խորհրդի կողմից, իսկ որոշ մասի նյութերը, հատկապես միջնակարգ և երկրորդական բաժիններում, ուսուցիչներն են կազմում և բազմացնելով բաժանում աշակերտներին:

Դպրոցում գործող հայագիտական առարկաների դասագրքերի պատկերը հետևյալն է.

Նախակրթարան (1-6 դդ.)

1. Հայոց լեզու («Ծիածան», հեղ.՝ Ա. Եղիայան)
2. Հայոց պատմություն (հեղ.՝ Ա. Մարաշլյան)
3. Գիտություն (հեղ.՝ Չեյթունյան)
4. Ընդհ. աշխարհագրություն (հայերեն) և Հայաստանի աշխարհագրություն (հեղ.՝ Կ. Զյուրքչյան)

Միջնակարգ և երկրորդական

1. Հայոց լեզու (ընթերցարան, հեղ.՝ Հ. Զյուրքչյան)
Զերականական որոշ նյութեր պատրաստում են ուսուցիչները:
2. «Արդի հայ գրականություն» (հեղ.՝ Մուշեղ Իշխան)
3. «Հայոց պատմություն» (հեղ.՝ Երվ. Փամբուկյան և Վլ. Բարխուդարյան)

4. Մատենագիտության դասագիրք չկա, նյութերը ուսուցիչներն են պատրաստում:

5. Հայոց պատմություն (նոթեր, հեղ.՝ Փաստրմաջյան)
6. Հայ հեղափոխական շարժումը մինչև Հ.Յ.Դ.-ի ծնունդը (հեղ.՝ Հր. Տասնապետյան)

Կրոնի դասագիրքը պատրաստված է Բերիոյ թեմի առաջնորդարանի կողմից:

Վերոհիշյալ հեղինակների դասագրքերի մի մասի վերաբերյալ մենք արդեն ներկայացրել ենք մեր կարծիքը՝ դրանք արժեքավորելով և առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ մի քանի դիտողություններ անելով: Այստեղ ուզում ենք համաձայնել ազգային Եղ. Մանուկյան քոլեջի տնօրենի հետ՝ Ա. Մարաշլյանի «Հայոց պատմության» շարքի վերաբերյալ, ըստ որի՝ վերջինս բավականին հնաբույր է, նյութերը հետաքրքիր ձևով չեն ներկայացված, նկարագարողումը կաղում է, գիրքը գրավիչ չէ և կարիք ունի լուրջ վերակառուցման, վերախմբագրման, գրքում զետեղված հարցերի վերանայման, ուսուցման մեթոդների թարմացման, արդիականացման՝ հաշվի առնելով դիդակտիկական ժամանակակից պահանջները: Դասագրքում խախտված է մատչելիության սկզբունքը, հաշվի չեն առնվել սովորողների տարիքային առանձնահատկությունները: Գիրքը գրված է բարդ լեզվով:

Մեծ մտահոգություն է պատճառում միջնակարգում հայոց պատմության դասագրքերի բացակայությունը, որը մեծ դժվարություն է ստեղծում ուսուցիչների համար՝ գիտականորեն ու արդյունավետ կազմակերպելու ուսուցման գործընթացը: Հուսանք, որ մոտ ապագայում տեղի և Հայաստանի պատմաբանները համատեղ ջանքերով կլրացնեն այս բացը:

Չափազանց մեծ է նաև դպրոցի ուսուցիչների և աշակերտների դժգոհությունը գործող դասագրքերի վերաբերյալ: Ըստ ուսուցիչների կարծիքների և մեր ուսումնասիրության՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի պահանջվող ծրագրային նյութն ամբողջությամբ չի ընդգրկված դասագրքում: Շատ հնացած են վարժությունների նյութերը, դրանց մեծ մասը նյութի պարզ վերարտադրողական և ստուգողական բնույթ ունի: Պակասում են զարգացողական, ստեղծագործական, ինքնուրույն մտածողության զարգացումը խթանող բնույթի վարժությունները:

Ըստ աշակերտների կարծիքների՝ նյութերը դժվար են, անհետաքրքիր, գիրքը չի գրավում, չի կլանում, չի խոստում աշակերտի հետ, չի խթանում ցանկություն ու հետաքրքրություն այն սովորելու համար:

Աշակերտության և ուսուցիչների միանգամայն օբյեկտիվ ու տեղին դիտողությունները հանգեցնում են այն եզրակացության, որ գործող դասագրքերում չեն պահպանված դասագրքաստեղծման չափազանց կարևոր չափանիշները, որոնց հիմքում ընկած են դիդակտիկական կարևորագույն սկզբունքներն ու կանոնները. գիտականության, մատչելիության, զմնականության, համակարգայնության և հաջորդականության, ներառարկայական կապի, սովորողների ակտիվությունը և ինքնուրույնությունը զարգացնող, տեսության և պրակտիկայի կապի, սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելու, ուսումը կյանքի հետ կապելու սկզբունքները, ինչպես նաև պարզից՝ բարդը, ծանոթից՝ անծանոթը, հեշտից՝

դժվարը, կոնկրետից՝ վերացականը, մոտիկից՝ հեռուն մանկավարժական կանոնները:

Անհրաժեշտ է, որ վերոհիշյալ դասագրքերի վերահրատարակման ժամանակ հեղինակները հաշվի առնեն սրանք և միշտ հետադարձ կապ պահեն ուսուցիչների և աշակերտների հետ՝ հաճախակի դասախոսումներ և զրույցներ անցկացնելով նրանց հետ, քանի որ ուսուցիչը, կյանքի կոչելով այս կամ այն հեղինակի դասագիրքը, ուսուցման գործընթացում անմիջականորեն նկատում է դասագրքի ուժեղ և թույլ կողմերը: Իհարկե, ստեղծագործող ու ազատ մտածողության տեր պրոֆեսիոնալ ուսուցիչը տեղում սրբագրում է եղած թերություններն ու բացերը՝ այն աշակերտներին ներկայացնելով ճիշտ ու ստեղծագործաբար, սակայն ինչպե՞ս վարվի սկսնակ ուսուցիչը, որը դեռևս չունի համապատասխան փորձ ու զինված չէ բազմաբնույթ ու ժամանակակից ակտիվացնող մեթոդներով: Հետևաբար, հեղինակն իր հաճախակի հանդիպումներով կարող է նաև մեթոդական օգնություն ցույց տալ ուսուցիչներին:

Ազգային եղ. Մանուկյան քոլեջի ուսումնադաստիարակչական գործունեությունը (առօրյան)

Բացի տնօրենից, որը քոլեջի ուսումնադաստիարակչական, ֆինանսական, վարչատնտեսական և կարգապահական բոլոր հարցերի պատասխանատուն է, դպրոցը յուրաքանչյուր կրթական աստիճանի համար ունի նաև իր վարչակարգապահական պատասխանատուն (փոխտնօրենը):

Դպրոցում առարկայական հանձնախմբեր (մեր դպրոցների մեթոդմիավորմանը համարժեք) չեն գործում: Պարզապես յուրաքանչյուր առարկայի փորձառու, վաստակաշատ մի ուսուցիչ տնօրենի հանձնարարությամբ համակարգում ու համադրում է նույն առարկայի մյուս ուսուցիչների աշխատանքը: Այն ունի իր ենթակառույցը նաև մանկապարտեզում:

Ըստ մեզ՝ որոշ տարբերությամբ, այնուամենայնիվ, առարկաների մեթոդական աշխատանքներ դպրոցում կատարվում են, և ուսուցիչների աշխատանքը մասնագիտական հսկողության տակ է:

Քոլեջում գործում է գիտելիքների գնահատման 20 միավորի (բալային) համակարգը: Սակայն այստեղ ուզում ենք շեշտադրել մի շատ հետաքրքիր հանգամանք. ուսումնական առարկաներն ըստ պետական հրահանգի բաժանված են երկու արժեքի (unit)՝ 1 արժեք ներկայացնողները գնահատվում են 20 միավոր, երկու արժեք ներկայացնողները՝ 40 միավոր:

Սա թերևս կատարված է տվյալ կրթական աստիճանում որոշ առարկաների կարևորությունն ու նշանակությունը հաշվի առնելու հանգամանքով: Այսպես.

նախակրթարանում

լեզուները, ուսողությունը, թվաբանությունը – 40 միավոր (երկու արժեք),

իսկ՝ պատմությունը, աշխարհագրությունը – 20 միավոր

բարձր դասարաններում

գիտական նյութերը – 40 միավոր,

մնացածները – 20 միավոր:

Ուշադրություն դարձնենք մեկ հանգամանքի վրա ևս. այն, որ դասարանից դասարան տեղափոխվելիս սա ունի իր դերակատարությունը, այսինքն, եթե աշակերտը չի հատել անցումային շենը 1 արժեք (20 միավոր) ունեցող առարկայից, նա փոխադրվում է հաջորդ դասարան, իսկ եթե երկու արժեք ունեցող (40 միավոր) առարկայից՝ կրկնում է դասարանը: Սա պետության կողմից ներկայացված պահանջ է, որը ենթակա է պարտադիր կատարման:

Ոչ քննական դասարաններում անցումային միջը 10-ն է, քննական դասարանում՝ 12-ը, իսկ հոսքային դասարաններում համապատասխան ճյուղի հիմնական առարկայի անցումայինը 14 միավորն է, օրինակ, ավարտական դասարանի մաթեմատիկայի ճյուղում մաթեմատիկա առարկայի անցումային միավորը 14-ն է: Սա գիտելիքների գնահատման տարբերակված մոտեցում է՝ հիմք ընդունելով ուսումնական առարկայի, գիտելիքների բարդությունը, ինչպես նաև ավագ

դասարաններում հոսքային ուսուցման ժամանակ ընտրված մասնագիտության վրա մեծ ուշադրությունը, կենտրոնացվածությունը, նրան տրված մեծ նշանակությունը: Կարծում ենք, նման մոտեցումը հիմնականում նպաստում է աշակերտների ինքնաճանաչմանը, ինքնագնահատմանը, սեփական ուժերի ու կարողությունների նկատմամբ վերաբերմունքի և հոգեբանության մշակմանը և վերջապես մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը:

Այնուամենայնիվ, այստեղ ուզում ենք անել մեկ վերապահում: Հատկապես ցածր և միջին դասարաններում, որտեղ չի իրականացվում հոսքային ուսուցում, առարկաների նմանատիպ տարբերակված արժեքավորումը աշակերտների մեջ կարող է ձևավորել կարևոր (զլխավոր) և ոչ կարևոր (երկրորդական) առարկաներ հասկացողությունը, որը, ըստ մեզ, կարող է խորապես վնասել ցածր արժեքավորված առարկաների ուսուցման գործընթացի ճիշտ կազմակերպմանն ու ակնկալվող դրական արդյունքներին:

Մեր խորին համոզմամբ՝ դպրոցներում (յուրաքանչյուր կրթական աստիճանում) դասավանդվող, կրթության բովանդակության մեջ ընդգրկված բոլոր ուսումնական առարկաների ուսուցումը մեծապես նպաստում է աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը, գիտական աշխարհայացքի ձևավորմանը և լիարժեք դաստիարակությանը: Իսկ ուսումնական առարկաների նկատմամբ խտրական մոտեցումը կարող է վնասել սովորողների անձի ձևավորման կարևորագույն գործընթացին:

Ուսումնադաստիարակչական գործընթացի հաջող կազմակերպման, միջանձնային փոխհարաբերությունները (աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-սնօրեն, ուսուցիչ-ուսուցիչ) կարգավորող մի կարևոր հանգամանք ենք համարում քոլեջում այցելու հոգեբանի գոյությունը, նրա հոգեբանական գործունեությունը: Ըստ մեր դիտումների՝ հոգեբանն օգնում է դժվարություններ ունեցող աշակերտներին, լուծում է ծագած տարաբնույթ հակասությունները աշակերտ-ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, նաև ուսուցիչ-ուսուցիչ փոխհարաբերություններում: Հոգեբանը կատարում է նաև աշակերտների վարքագծային շեղումների և ուսումնադաստիարակչական գործունեության

կտրուկ փոփոխությունների հոգեբանամանկավարժական ախտորոշում՝ հիմք ընդունելով պատճառահետևանքային կապը: Նա աշակերտության շրջանում անցկացնում է տարբեր նպատակներ հետապնդող ու խնդիրներ պարունակող թեստեր՝ ծառայած խնդիրների վերաբերյալ առավել օբյեկտիվ պատկերացում կազմելու համար: Հաճախակի են անհատական գրույցներն աշակերտների հետ՝ ամփոփական, անկեղծ ու անբռնազրոս շփումները՝ հոգեբանական կապ ստեղծելու համար: Այս ամենը, իհարկե, արվում է հարցի մեջ խորամուխ լինելու, պատճառները գտնելու և երևույթների նկատմամբ օբյեկտիվ ու ճիշտ եզրակացություններ կատարելու և տեղին խորհուրդներ ու օգնություն ցույց տալու համար:

Արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները քոլեջում

Ազգային Եդ. Մանուկյան քոլեջի գործունեության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար չենք կարող չանդրադառնալ դպրոցում իրականացվող բազմաբնույթ դաստիարակչական աշխատանքներին, որոնք կազմում են քոլեջի կյանքի օրգանական ու անբաժանելի մասը:

Դպրոցում գործում են խմբակներ՝ առարկայական, մշակութային, մարզական, որոնց մասնակցում են քոլեջի բոլոր աշակերտները՝ ըստ իրենց նախասիրությունների և ունակությունների:

Դպրոցում լույս է տեսնում «Խաչբուռ» աշակերտական պարբերաթերթը՝ զետեղելով աշակերտների տարբեր բնույթի ստեղծագործություններ:

Ամեն ուրբաթվա վերջին դասաժամը մշակութային է: 9-րդից բարձր դասարանների համար լսարանային ժամ է, աշխատանք է տարվում խմբակներում՝ էկոլոգիական, հայագիտական, գրական:

Դրանց զուգահեռ գործում են նաև բասկետբոլի, ֆուտբոլի, մարմնամարզության խմբակները: Մեծ ակտիվությամբ են աշակերտները մասնակցում մշակութային խմբակներին՝ պարային հանույթ, երգչախումբ, նվագախումբ (նախակրթարանում):

Դպրոցն ունեցել է նաև թատերախումբ, որը, սակայն, դադարեցրել է իր գործունեությունը նյութականի պատճառով:

Երեք շաբաթը մեկ դպրոց են հրավիրվում (նաև Հայաստանից) տարբեր թատերախմբեր, նվագախմբեր, ասմունքողներ, դասախոսներ, որոնք մի ինքնատիպ կամուրջ են դառնում կրթության և մշակույթի, սփյուռքի և հայրենիքի միջև:

Մրան ավելանում է նաև քոլեջի ակտիվ մասնակցությունը միջդպրոցական առարկայական օլիմպիադաներին, մշակութային և մարզական մրցումներին: Աշակերտությունը բազմաթիվ այցեր է կատարում պատմական և մշակութային վայրեր:

Այս ամենը վկայում է այն մասին, որ ազգային Եղ. Մանուկյան քոլեջում պատշաճ մակարդակով են կազմակերպվում ոչ միայն ուսուցման գործընթացը, այլ նաև արտասուսմնական բազմաբնույթ դաստիարակչական աշխատանքները, որոնք խորապես նպաստում են սովորողների մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, գեղագիտական, բարոյական, էկոլոգիական դաստիարակությանը և լիարժեք զարգացմանը:

Չափազանց իրատեսական, բայց միաժամանակ լավատեսական են հնչում դպրոցի տնօրեն տիկ. Բոյաջյանի խոսքերը սփյուռքի հայկական դպրոցի ապագայի մասին. «Սփյուռքին մեջ մենք հակահոսանք է, որ կթիավարենք: Իրապաշտ ըլլալով՝ դժվար, բայց պետք է հարմարինք կացութեանը, առանց կորսնցնելու մեր սկզբունքները, Հայրենիքը դպրոցեն ներս միշտ ներկա տեսնելով»⁷⁵:

Ազգային արհեստից վարժարան

Ազգային առաջնորդարանի հովանու տակ գործող հայկական ամենօրյա դպրոցների շարքը լրացնում է Ազգային արհեստից վարժարանը, որը հիմնադրվել է 1992 թ. Բեյրութում՝ նույն փակահին լուծարված ազգային Արամյան վարժարանի շենքում: Արհեստից վարժարանի ստեղծման հիմնական մտահոգությունն ու նպատակը հայկական ամենօրյա դպրոցներում չառաջադիմող և ուսումը երկրորդա-

կան վարժարաններում շարունակել չկարողացող երեխաներին փոփոցից կտրելն ու նրանց հետագա կենսագործունեության համար վճռորոշ ու կարևոր դեր կատարող որևէ արհեստ, մասնագիտություն սովորեցնելն է, ինչպես նաև երեխաներին հայկական շրջանակներում պահելը՝ ապահովելով նրանց հայեցի կրթության և դաստիարակության գործի շարունակականությունը:

Արհեստից վարժարանն իր կարգավիճակով համապատասխանում է Հայաստանում գործող պրոֆտեխնիկական ուսումնարաններին, որոնց ցանցը, ցավոք, մեզանում արդեն մարում է, իսկ դրա փոխարեն հանրակրթական դպրոցների ավագ դասարաններում բացվում է առանձին հոսք՝ արհեստից դասարան, որը ծրագրով նախատեսված հանրակրթության հետ մեկտեղ աշակերտներին սովորեցնում է տվյալ դպրոցի որդեգրած արհեստների այս կամ այն տեսակը:

Նման հոսքային դասարանների գոյությունը խորապես նպաստում է սովորողների մասնագիտական կողմնորոշմանը և արդյունաբերության և արհեստագործության ոլորտների համար պատրաստում գրագետ կադրեր:

Վերադառնալով Բեյրութի արհեստից վարժարանին՝ նշենք, որ այսօր այն գործում է 5 մասնագիտությունների ուղղությամբ: Դրանք են՝

1. համակարգիչ, 2. էլեկտրոնիկա, 3. մեխանիկա, 4. ներքին հարդարում, բարեկարգում, 5. սառնարանի ջեռուցիչ:

Դպրոցն աշխատում է պետական ծրագրով: Լիբանանի կրթական համակարգում դպրոցը գրանցված է արտոնագրով և ունի պետության հովանավորությունը: Արհեստից վարժարանում ուսման տևողությունը երեք տարի է՝ ընդգրկելով բաքալոթեայի Ա, Բ, Գ դասարանները: Այստեղ ուսանելու են գալիս հայկական ամենօրյա դպրոցների 9-րդ դասարանի շրջանավարտները՝ պետական ավարտական՝ բրյուվեի վկայականով: Մուտքն առանց քննության է: Լինում են դեպքեր, երբ դպրոց են ընդունում նաև 9-րդի ավարտական քննություններում ձախողվածներին: Նպատակը հստակ է. ամեն կերպ աջակցել, որպեսզի հայ երեխան մնա հայկական շրջանակում, շփվի

⁷⁵ Հարցազրույց ազգ. Եղ. Մանուկյան քոլեջի տնօրեն տիկ. Բոյաջյանի հետ, Բեյրութ, 1998, ապրիլ:

հայ երեխաների հետ՝ նրանց մեջ ազգային արժեքների սերմանումն ապահովելու համար:

Վարժարանի ավարտական քննություններն անցկացվում են նախարարության հսկողությամբ՝ ապահովելու համար սովորողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների օբյեկտիվ ստուգումն ու գնահատումը:

Վարժարանում շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը 35 ժամ է՝ պետական 25-ի համեմատ, քանի որ պետական պարտադիր ծրագրին համադրվում է հայկական ծրագիրը: Ծաբաթը 2 ժամ դասավանդվում է հայերեն: Բնագիտամաթեմատիկական առարկաները, ինչպես նաև արվեստագիտությունն ու մնացած մասնագիտական առարկաները դասավանդվում են անգլերեն լեզվով: Իսկ ընկերային գիտությունները, իրավագիտությունը, Լիբանանի պատմությունը, աշխարհագրությունը, միջազգային պատմությունն ուսուցանվում են արաբերենով: Սրան ավելացրած երեք լեզուներ՝ անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն:

Բացի հայերենի դասագրքից (Քյուրքչյան), մնացած բոլոր առարկաների դասագրքերն առաջարկում է պետությունը:

Այստեղ շեշտենք մի կարևոր հանգամանք: Արհեստից վարժարանի ուսուցչական կազմը համալրված է հայ մասնագետներից՝ բոլորն էլ համալսարանական կրթությամբ, որը պարտադիր կերպով պահանջվում է պետության կողմից:

Վարժարանում ուսուցման գործընթացում ակնհայտ է տեսության և պրակտիկայի կապի դիդակտիկական սկզբունքը, որը նպաստում է սովորողների մեջ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: Յուրաքանչյուր դասանյութ ունի երկու բաժին. առաջին բաժինն ընդգրկում է տեսական նյութը, երկրորդ բաժինը՝ կիրառականը:

Գիտելիքների գնահատման 100 միավորանոց (կան A, B, C) համակարգն է գործում վարժարանում, որի անցումային շեմը 50 միավորն է:

Դպրոցում աշխատում են առարկայական հանձնախմբեր՝ կառույցներ, եռամսյա հանդիպումներով՝ մասնագիտական և մեթոդա-

կան տարաբնույթ հարցերի քննարկման նպատակով: Դպրոցի գործունեության անխափան ընթացքին (ֆինանսատնտեսական) իր աշխատանքային կազմակերպչական օժանդակությունն է բերում հոգաբարձուների խորհուրդը, վերջինիս իրավասության շրջանակների մեջ է մտնում դպրոցին վերաբերող բոլոր հարցերի մասին որոշումներ ընդունելը և վավերացնելը: Դպրոցի խնդիրներին առնչվող պարբերական հաշվետվություններով հոգաբարձուների խորհրդի առջև հանդես է գալիս վարժարանի տնօրենը:

Իր գործունեության կարճ ժամկետում ազգային արհեստից վարժարանը տվել է շրջանավարտներ, որոնք իրենց ուսումը շարունակել են համալսարաններում:

Դպրոցում գործում է շրջանավարտների միություն, որի ձեռնարկած միջոցառումները ոչ միայն նպաստում են աշակերտների ազգանվեր դաստիարակությանը, այլև ֆինանսական աջակցություն բերում վարժարանին:

Ազգային արհեստից վարժարանն իր ընդհանուր-մասնագիտական (արհեստներ), կրթադաստիարակչական արդյունավետ գործունեությամբ խորապես նպաստում է հայ պատանիների ու աղջիկների կրթության շարունակականության, մասնագիտական կողմնորոշման ու ձեռքբերման և հայապահպանության կարևոր ու պատասխանատու գործին:

Նույն առաքելությամբ իրենց գործունեությունն են իրականացնում նաև հայ կաթողիկե Մեսրոպեան արհեստների վարժարանը և ՀԲԸՄ-ի արհեստագիտական քոլեջը:

ՀԲԸՄ-ի դպրոցները Լիբանանում

Հայ առաքելական համայնքի շրջանակներում գործում են Հայ բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հոգածության տակ գտնվող դպրոցները: Դրանք են. Դարուիի Հակոբյան, Հովակիմյան-Մանուկյան՝ 1993-ին միավորված երկրորդական վարժարանները և Պողոս Կարմիրյան, Լևոն Նազարյան նախակրթարանները (ներառյալ մանկապարտեզը):

Բոլորովին նպատակ չհետապնդելով այստեղ ներկայացնել ՀԲԸՄ-ի ամբողջական պատմությունը՝ այնուամենայնիվ, ուզում ենք նշել, որ միության ծավալած լայն, համապարփակ, բազմաբնույթ ու չափազանց ընդգրկուն գործունեության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն կրթական ծրագրերը, որոնք իրականացվում են աշխարհի տարբեր ծայրերում ստեղծված հայկական գաղթօջախներում՝ բացելով հայկական մանկապարտեզներ, դպրոցներ, ակումբներ, հովանավորելով մանկապատանեկան ու երիտասարդական մարմնակրթական, մշակութային, հասարակական միությունների, որոնց գոյությամբ է, իրավամբ, պայմանավորված օտար միջավայրում հայ երեխային հայ պահելու գործի հաջողությունը:

Այսօր ՀԲԸՄ-ի գործունեության աշխարհագրությունն ընդարձակվել է՝ ընդգրկելով նաև մայր հայրենիքը, որի բարգավաճմանն ու հզորացմանն է միտված միության բազմաճյուղ առաքելությունը: Հայաստանում ՀԲԸՄ-ն իրականացնում է մեծամասշտաբ ներդրումներ. Համահայկական հիմնադրամ, հայկական ֆիլիարմոնիկ, ճանապարհների կառուցում, գործարաններ, նվիրատվություններ եկեղեցուն, մշակութային կենտրոններին, կրթօջախներին և այլն:

Այս ամենն ապացույց է համահայկական հիմնահարցերի նկատմամբ ՀԲԸՄ-ի մեծ մտահոգության թե՛ հայրենիքում և թե՛ սփյուռքում:

Աշխարհի 22 երկրներում ՀԲԸՄ-ն ունի իր մասնաճյուղերը, որոնք էլ տեղում իրականացնում են հայանպաստ, հայապահպան, բազմաճյուղ գործունեություն՝ ինչպես կառուցողական, զարգացողական, այնպես էլ բարեգործական բնույթի: Ծավալած գործունեության մեջ իրենց առանձնահատուկ տեղն ունեն կրթամշակութային ձեռնարկները:

Այստեղ հարկ ենք համարում փաստել մի շատ կարևոր հանգամանք. ՀԲԸՄ-ը Լիբանանում մինչև իր դպրոցներն ունենալը գաղութում իր կրթական գործունեությունն իրականացնում էր՝ օժանդակելով ազգային վարժարաններին՝ նյութապես և կադրերով:

Իսկ 1939 թ. արդեն ՀԲԸՄ-ն բացում է իր առաջին դպրոցը՝ երկրորդական վարժարանը՝ շնորհիվ Հակոբյան գերդաստանի մեծ նվիր-

րատվության: Եվ ի գնահատումն դրա՝ դպրոցը կոչվում է Դարուհի Հակոբյանի անվամբ: Ի դեպ, նշենք, որ այն աղջկանց դպրոց էր (միասեռ) և ուներ միջնակարգի և երկրորդականի կրթական աստիճանները:

Իսկ 1947 թ. սեպտեմբերին ՀԲԸՄ-ի Լիբանանի շրջանակային հանձնաժողովի, կրթական հանձնախմբի և միության Եգիպտոսի կենտրոնական հանձնաժողովի նախաձեռնությամբ Բեյրութում բացվում է երկրորդ դպրոցը՝ «ՀԲԸ միութեան մանչերու բարձրագույն վարժարան» անվամբ: Վերջինս դարձյալ միասեռ դպրոց էր և ուներ միջնակարգի և երկրորդականի բաժինները:

1951 թ. դպրոցը վերանվանվում է «ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարան»՝ կրթօջախին ֆինանսական մեծ օժանդակություն ցուցաբերած վերոհիշյալ բարերարների հիշատակը հավերժացնելու նպատակով:

1993 թ. Դարուհի Հակոբյան (աղջկանց) և Հովակիմյան-Մանուկյան (մանչերու) երկու վարժարանները միավորվում են՝ դառնալով մեկ կառույց՝ երկսեռ երկրորդական վարժարան՝ միջնակարգի և երկրորդականի լրիվ բաժիններով:

Միացյալ վարժարանի տնօրենի պատասխանատու գործն արդեն 15 տարի է, ինչ իր վրա է վերցրել սփյուռքում, ինչպես նաև Հայաստանում ճանաչված մտավորական, գրականագետ, կրթական գործի մշակ Ժիրայր Դանիելյանը, որը, ի դեպ, նաև Բեյրութում լույս տեսնող «Շիրակ» գրական ամսագրի հիմնադիրն ու պատասխանատու խմբագիրն է: Մանկավարժորեն ճիշտ ու արդարացված են տնօրեն Դանիելյանի այն խոսքերը, թե տնօրենը՝ որպես ղեկավար ու կառավարիչ, պատասխանատու է դպրոցում իրականացվող կրթադաստիարակչական, մեթոդական, մշակութային, ֆինանսատնտեսական գործերի համար, սակայն նա պետք է միշտ մնա ուսուցիչ-ուսուցչապետ, պետք է մտնի դասարան որպես ուսուցիչ, քաջածանոթ լինի ուսուցման գործընթացին, նրա օրինաչափություններին՝ ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում հոգեբանական կապ ստեղծելու նպատակով: «Հայ մշակույթի պատմություն» (բարձր դասարաններում) ուսումնական առարկայի ուսուցիչ Ժ. Դանիելյանն այս առիթով ասում է.

«Դասաւանդումը առիթ կուտա ինձի, որպէսզի մեր շրջանաւարտներուն հետ անձնական շփում հաստատեմ նախքան դպրոցը աւարտելը, անոնց ճանչնալու և հասկանալու համար: Դասերին աշակերտութեանը կփոխանցեմ հայ մշակույթի պատմական գործերը (գանձերը): Աշակերտութեան հետ կխոսիմ անոնց արժեքներու մասին, շեշտելով, թէ ինչ հարուստ մշակույթի տեր ժողովուրդ եղած ենք, եւ մեր գոյութիւնը, թերեւս ալ, այդ արժեքներով է, որ կըրցած ենք շարունակել»⁷⁶:

Դասաւարտեցեալն այսպիսի մտտեցումը աշակերտութեան մեջ սերմանում է ազգային ինքնագիտակցութեան ոգի՝ նպաստելով նրանց ինքնաճանաչմանը՝ որպէս հայ ժողովրդի զավակ. ով է ինքը, ինչպիսին է ինքը, որտեղից է եկել և ուր է գնում: Ամեն մի ուսումնական առարկա, իր դասանյութերով պետք է նպաստի հայ երեխաների հայեցի դաստիարակութեանը: Դրանով միայն, իրավամբ, նրանք կարող են պահպանել իրենց ինքնությունը և ազգային դիմագիծը: Ահա այսպիսի մտտեցում է ընկած ՀԲԸՄ-ի Դարուի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների կրթադաստիարակչական գործունեության հիմքում:

Այսօր վերոհիշյալ երկու երկրորդական վարժարանները գաղութի ճանաչված, լավագույն վարժարանների շարքում են: Դպրոցն ունի 300 աշակերտ՝ միջնակարգը և երկրորդականը միասին՝ ընդգրկելով 6-րդ-ից մինչև 12-րդ դասարանները, այսինքն՝ կրթօջախում գործում են բաքալորեայի երկու դասարաններն էլ:

Միացյալ վարժարանները Լիբանանի կրթական համակարգի կազմում են: Նրանք, ինչպէս ազգային բոլոր վարժարանները, նույնպէս պարտադիր կերպով իրականացնում են պետական կրթական ծրագիրը՝ վերջինիս համադրելով հայկականը: Վարժարանի աշակերտութեան թիվը, տնօրենի հիմնավորմամբ, հիմնականում լիբանանյան պատերազմի պատճառով կիսով չափ նվազել է: Նույնը վերաբերում է ամբողջ գաղութի հայ աշակերտութեանը, որի թիվը մինչև պատերազմը եղել է 20000, իսկ հետո՝ 10000:

Աշակերտութեան թվի նվազման պատերազմի հիմնական

⁷⁶ Հարցազրույց ՀԲԸՄ-ի Դարուի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների տնօրեն Ժ. Դանիելյանի հետ, Բեյրութ, մայիս, 1998:

պատճառից անհնար էր ուրիշ պատճառներ. զավակի կյանքի ապահովության համար ծնողը նրան տեղավորում է շրջապատին մոտ դպրոցում: Արդյունքում բարձրանում է թաղային դպրոցների կարևորությունը:

Սակայն շեշտենք, որ հայ երեխաների՝ օտար դպրոցներ հաճախելու պատճառը միայն պատերազմը չէ: Կան նաև տնտեսական պատճառներ, որոնց մասին արդեն խոսել ենք ազգային վարժարանների համապատասխան հարցը շոշափելիս:

Այս երևույթի հիմքում ընկած այլ պատճառների մասին են խոսում Ժիրայր Դանիելյանի հետևյալ մտքերը. «Օտար վարժարաններ հաճախելու երեւոյթը հիմեն կուգա, նոր չէ: Սակայն այս վերջին տասնամեակին շեշտած է: Միայն ապահուագրական պատճառներուն չենք կրնար վերագրել: Կան նաև տնտեսական և այլ պատճառներ: Դժբախտաբար մեր բարեկեցիկ դասակարգին մոտ է առաւել տարածուած ասիկա: Անոնք են, որ իրենց զաւակները օտար դպրոց կղնեն: Խաւ մը կայ մեզ մոտ, որ մեր դպրոցներուն արտաքին տեսքն իսկ հաճելի չէ: Աւելի սուղ վճարելով անգամ, օտար վարժարան կղնէ յուր զաւակը: Անոնք կուգեն իրենց զաւակները տեսնել դասընկեր այնպիսի ընտանիքներու զաւակներու հետ, որոնք հետագային կրնան նախարար, երեսփոխան, նույնիսկ նախագահ ըլլալ: Անոնց նպատակը սա է»⁷⁷:

Նմանատիպ մտահոգ մտքեր հայտնեցին նաև մյուս դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները: Այստեղից կարելի է անել հետևություն, որ սփյուռքահայության շրջանում կա մի որոշակի խավ, որը, հեռանալով իր արմատներից, առավել տուրք տալով նյութապաշտությանը, մողայամոլությանն ու փառասիրությանը, կորցնում է իր ազգային դիմագիծը, գնում է ուծացման ճանապարհով՝ դրանով՝ իսկ վտանգելով իր զավակի ինքնությունը՝ նրան դարձնելով արմատներ չունեցող արհեստական մի տնկի: Գաղութի հետագա զարգացման և հայապահպանության գործը վտանգող հիմնական գործոնը, ըստ մեզ, այս երևույթն է, որը, ցավոք, Լիբանանում արդեն շոշափելիորեն նկատելի է: Մրան ավելանում են նաև խառն ամուսնությունները, ո-

⁷⁷ Հարցազրույց Դարուի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների տնօրեն Ժիրայր Դանիելյանի հետ, Բեյրութ, մայիս, 1998:

րոնք հետևանք են օտար միջավայրերում հայ երիտասարդների ընդգրկման ու ծավալած գործունեության:

Համենատեղով սիրիահայ գաղութի հետ կարող ենք վստահաբար փաստել, որ այստեղ վերոհիշյալ երևույթը չնչին տոկոս է կազմում: Սիրիահայության մեջ գործում է «Ոչ մեկ հայ երեխա օտար դպրոց» կարգախոսը և տալիս շոշափելի դրական արդյունքներ:

ՀԲԸՄ-ի Լիբանանում գործող վարժարանների ծավալած կրթադաստիարակչական գործունեությունը համակարգում է ՀԲԸՄ-ի Լիբանանի շրջանային հանձնաժողովին ենթակա կրթական հանձնախումբը, որն ունի իր ատենապետը, դիվանը և անդամները, որոնք հիմնականում կրթական գործին մոտ կանգնած մարդիկ են: Կրթական հանձնախումբը զբաղվում է ուսումնական ծրագրերով, դասագրքերով, ուսուցչական և վարչական կադրերով (ընտրություն, ազատում), դպրոցի ֆինանսատնտեսական խնդիրներով:

Դպրոցի տնօրենը, որին նշանակում է կրթական հանձնախումբը, պարբերաբար հաշվետվություն է տալիս նրան դպրոցում իրականացվող աշխատանքների և ծառայած դժվարությունների մասին:

Կրթական հանձնախումբը կազմել է մի ծրագիր-կանոնագիրք, որտեղ հստակորեն անրագրված են յուրաքանչյուրի իրավասություններն ու պարտականությունները.

1. կրթական հանձնախմբի և տնօրինության փոխհարաբերություններում,

2. տնօրինության և ուսուցչական կազմի հարաբերություններում,

3. տնօրինության և աշակերտության փոխհարաբերություններում,

4. տնօրինության և ծնողների փոխհարաբերություններում:

Այս փաստաթղթի գոյությունն արդեն խոսում է այն մասին, թե ինչպես կանոնակարգված ու իրավաբանորեն ճիշտ հիմքերի վրա են դրված վարժարաններում միջանձնային փոխհարաբերությունները, որոնց ճիշտ կառուցումից է ուղղակիորեն կախված նրանց ողջ գործունեության արդյունավետությունը:

Ուշադրության է արժանի Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների կրթության բովանդակությունը, որտեղ համադրված են պետական պարտադիր և

հայագիտական առարկաները, որի արդյունքում բավականին ավելացել է շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը՝ 40 ժամ՝ պետական 33-35-ի փոխարեն:

Այստեղ փաստենք մի հանգամանք ևս. դպրոցում ուսումնական առարկաները դասավանդվում են անգլերեն և արաբերեն: Ի դեպ, նշենք, որ վարժարանները անգլերենի խորացված ուսուցմանը դպրոցներ են: Մա է պատճառը, որ 6-րդից 9-րդ դասարաններում անգլերեն լեզվին շաբաթական տրամադրված է 7 ժամ, 10-րդում և 11-րդում՝ 6 ժամ, միայն 12-րդ դասարանում՝ 3 ժամ:

Արաբերենին շաբաթական տրված է՝ 6-րդից 9-րդ դասարաններում՝ 6 ժամ, 10-րդում՝ 4 ժամ: Իսկ բոլոր հայագիտական առարկաներին միասին հատկացված է 8 ժամ՝ հայերեն (5-3 ժամ), հայոց պատմություն (2-1 ժամ), կրոն՝ 1 ժամ: Կրոնն էլ դասավանդվում է միայն 6-րդ և 7-րդ դասարաններում, մյուս դասարաններում՝ հայոց պատմության հետ միայն:

Հետաքրքրություն են ներկայացնում վարժարաններում դասավանդվող մի քանի ուսումնական առարկաներ, որոնք այսօր չեն ուսուցանվում Հայաստանի դպրոցներում: Դրանք են՝ փիլիսոփայություն, հոգեբանություն, հայ մշակույթի պատմություն, Հայ առաքելական եկեղեցու պատմություն (կրոն), ինչպես նաև մեքենագրություն, քարտային գիտելիքներ, տոմարակալություն, նամակագրություն: Նշենք, որ եթե թվարկած ուսումնական առարկաներից փիլիսոփայությունը, հոգեբանությունը, հայ մշակույթի պատմությունը և կրոնը խորապես նպաստում են սովորողների անձի ձևավորման, նրանց համակողմանի զարգացման, գիտական աշխարհայացքի ձևավորման գործին, ապա երկրորդ մասում ընդգրկվածները սովորողների մեջ ձևավորում են կյանքի հմտություններ, կարողություններ՝ անկաշկանդ ու ազատ կենսագործունեություն իրականացնելու համար:

Վերոհիշյալ վարժարանների կրթության բովանդակության մասին ամբողջական ու համապարփակ պատկերացում ունենալու համար աղյուսակ 7-ում ներկայացնում ենք 6-րդից 12-րդ դասարանների ուսումնական առարկաների շաբաթական ժամաքանակը.

Աղյուսակ 7.

ՀԲԸՄ-ի Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների շաբաթական դասաժամերը

Առարկա-դասարան	Ա	Բ	Գ	Դ	Ե Ա	Ե Պ	Զ Ա	Զ Պ	Է Գիտ	Է Ուսող
Ա. Հայերենով										
Հայերեն		5	5	4	4	4	3	3		
Հայ մշակույթի պատմ.							1	1		
Հայոց պատմ.		1	1	1	1	1	1	1		
Կրոն		1								
Բ. Արաբերենով										
Արաբերեն		6	6	6	4		4			
Արաբ. գրակ.						6		6		
Պատմ.		1	2	2		1		1	1	1
Աշխարհագր.		1	1	2		1		1	1	1
Քաղ. կրթ.		1								
Փիլիսոփ.									2	2
Գ. Օտար լեզուներ										
Անգլերեն		7	7	7	6	3	6	3	3	3
Անգլ. գրակ.						3		4		
Ֆրանսերեն		2	2		2	2	2			
Դ. ԸՆԿԵՐ. Գիտ. Անգլ./										
Պատմություն		1	1	1	1	1	1			
Աշխարհագր.		1	1	1	1	1	1			
Հոգեբանութ.		1			1		1			
Փիլիսոփ.									2	2
Ե. Ուսողություն /Անգլ./										
Թվարանություն		2			1					
Գրահաշիվ		2	3	3	2	4	2	3		4
Երկրաչ.-Եռանկյ.		3	4	4	2	3	2	4	9	9
Զ. Գիտություն /Անգլ./										
Բնագիտութ.			1	2	2	3	2	6	8	8
Տարրաբանութ.				2		3		3	5	5
Կենսաբանութ.			3	3		1		1	5	
Ընդհ. գիտութ.		3			3		3			
Է. Առևտրակ. նյութեր /Անգլ./										
Մեքենագրութ.										
Քարտ. գիտելիք.					1		1			
Տոմարակալութ.					2		2			
Նամակագրութ.					1		1			

Ը. Առևտրակ. նյութեր /Արաբ./										
Մեքենագրութ.								1		1
Քարտ. գիտելիք.								1		1
Տոմարակալութ.								1		1
Նամակագրութ.									1	
Թ. Զանազանք										
Երաժշտություն		1								
Գիծ										
Սարգանք		1	1	1	1	1	1	1	1	
Համակարգիչ		1	1	1	1	1	1	9	1	1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐ										
		40	39	40	40	39	40	39	37	36

Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների ուսուցչական կազմի 15 % օտարազգի է: Դրանք հիմնականում այն ուսուցիչներն են, ովքեր արաբերենով և անգլերենով դասավանդում են մաթեմատիկա, գրականություն, պատմություն, աշխարհագրություն, ուսողություն, գիտություն, հոգեբանություն, փիլիսոփայություն, ինչպես նաև անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն: Այստեղ, իհարկե, մեծ դեր է խաղում ոչ միայն համալսարանական կրթությունը (մասնագիտությունը), այլ նաև արաբերենի և անգլերենի կատարյալ իմացությունը՝ վերոհիշյալ ուսումնական առարկաներն այդ լեզուներով դասավանդելու համար: Սակայն հայ ուսուցիչներից շատերը չեն կարողանում ապահովել նշված երկու կարևոր չափանիշները, որի պատճառով էլ հայկական դպրոցում բարձրանում է օտարազգի ուսուցիչների թիվը: Ամենևին չցանկանալով կասկածի տակ առնել օտարազգի ուսուցիչների մասնագիտական որակը՝ ուզում ենք փաստել մեկ կարևոր հանգամանք, այն է. օտարազգի մեծ թվով ուսուցիչների մասնակցությունը հայ երեխաների կրթադաստիարակչական գործընթացին կարող է վնասել նրանց հայերենի դաստիարակության գործին, քանի որ նրանք իրենց անձնական օրինակով, մտածողությամբ, հոգեբանությամբ, սովորույթներով, մշակույթով, լեզվով և վերջապես վարքագծով կամա թե ակամա, նպատակալաց թե տարերայնորեն ազդում են հայ աշակերտների վրա՝

բողմենով այս կամ այն որակի և մեր ազգային առանձնահատկություններին ոչ հարիր հետևանքներ, որոնք էլ հետագայում կարող են վնասել հայ երեխաների ինքնության ձևավորմանը: Հետևաբար հայկական երկրորդական վարժարաններն այս հարցում ունեն բավականին մեծ խնդիր՝ լուծել հայազգի որակյալ և օտար լեզուների կատարյալ իմացությամբ ուսուցիչներով դպրոցն ապահովելու հարցը:

Հայագիտական առարկաների դասավանդման հարցում առավել է կարևորվում հայ ուսուցիչների և՛ մասնագիտական, և՛ անձնային որակների ներդաշնակությունը: Պարզաբաններ միտքը. քանի որ հայերենը պետական քննություն չէ, և համալսարան ընդունվելու համար նրա միավորը չի հաշվվում, ապա ինչպես աշակերտների, այնպես էլ ծնողների մեջ որոշ վերապահություն կա հայագիտական առարկաների հանդեպ՝ դրանք դիտելով որպես երկրորդական առարկաներ: Հետևաբար հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչներից պահանջվում է ունենալ առավել բարձր վարպետություն, հոգեբանամանկավարժական գիտելիքներ, մեթոդական լավ զինվածություն, աշակերտների հետ հոգեբանական կապ ստեղծելու, դասարանը կառավարելու, առարկայի նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու մեծ ունակություն, առավել ներդրամտություն ու հանդուրժողականություն, դասապրոցեսին աշակերտների՝ որպես սուբյեկտների դերը բարձրացնելու կարողություն՝ ապահովելու համար նրանց ակտիվ, ինքնուրույն ու արդյունավետ գործունեությունը դասին: Անհրաժեշտ է հիմնական աշխատանքը կատարել դասարանում, չժանրաբեռնել չափից ավելի տնային հանձնարարություններով՝ գերհոգնածություն, մտավոր ու ֆիզիկական ուժերի լարվածություն, անկարողության բարդույթ և հիասթափություն չառաջացնելու համար:

Հատկապես բարձր դասարաններում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել աշակերտների մտածողության և խոսքի (բանավոր և գրավոր) զարգացմանը և ոչ թե լեզվի քերականական նյութի սերտմանը: Վերջինս պետք է լինի միջոց լեզվի իմացության համար:

Դասագրքերը

Դարուհի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան վարժարաններում պետական ծրագրով նախատեսված ուսումնական առարկաների դասագրքերի խնդիր չկա: Դրանք ապահովում է պետությունը՝ նույնիսկ այլընտրանքային տարբերակներով: Դպրոցին տրված է ընտրության մեծ իրավունք: Սակայն նույնը չենք կարող ասել հայագիտական առարկաների՝ հայոց լեզվի, հայ գրականության, հայոց պատմության, հայ մշակույթի պատմության վերաբերյալ:

Այստեղ վարժարաններն ունեն մեծ դժվարություններ. որոշ դասարաններ ընդհանրապես դասագրքեր չունեն, եղածների մի մասն էլ իր բովանդակությամբ, մտածողությամբ ու նաև լեզվով բավականին բարդ է և չի համապատասխանում դասագրքի ժամանակակից պահանջներին: Երկրորդական բաժնում դա Հակոբ Օշականի դասագիրքն է, որը կարիք ունի լուրջ վերակառուցման ու վերամշակման:

Գործածության մեջ է Մուշեղ Իշխանի գրականության դասագիրքը (3 հատոր), որը, ընդհանուր առմամբ հաջողված լինելով հանդերձ, դարձյալ կարիք ունի լուրջ վերանայման՝ բովանդակային, դիդակտիկական և մեթոդական առումներով:

Երկրորդականում հայոց պատմության դասագրքեր չկան: Ուսուցիչներն իրենք են նյութերը պատրաստում և բաժանում աշակերտներին:

Իսկ միջնակարգում կիրառվում է Հարություն Քյուրքչյանի «Հայրենի աղբյուր» հայոց լեզվի դասագիրքը: Այն, ինչպես նշել ենք, գործածվում է նաև ազգային վարժարաններում: Իսկ հայոց պատմության համար գործածվում են Մխիթարյանների և Հայկ Հովհաննիսյանի կազմած դասագրքերը: Կրոնի դասագիրքը կազմել է Բերիոյ թեմի առաջնորդարանը:

Ինչպես տեսնում ենք, հայագիտական առարկաների դասագրքերի հարցն անմխիթար վիճակում է և լուրջ մտահոգության տեղիք է տալիս: Չնայած այսօր կրթական մոր տեխնոլոգիաների կիրառման հարցը չափազանց կարևորվում է ուսուցման գործընթացի ար-

դյունավետության բարձրացման գործում, այնուամենայնիվ և հատկապես սփյուռքի հայկական դպրոցների համեստ հնարավորությունների և տեխնիկական ոչ այնքան լավ զինվածության պայմաններում ուսուցման հիմնական միջոցն առայժմ մնում է դասագիրքը, որի որակից, դասագրքաստեղծման չափանիշների ապահովումից է կախված ուսման որակը: Իհարկե այստեղ չնոռանանք նշել ուսուցման առաջադիմական մեթոդների և դրանք կիրառության մեջ դնող ուսուցչի մանկավարժական վարպետության դերը:

Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան վարժարանների գործունեությունները համակարգող կրթական հանձնախմբի առաջարկությամբ վաստակաշատ ուսուցիչները, իրենց տարիների փորձառության վրա հիմնվելով, գրավոր պատրաստում են յուրաքանչյուր դասարանի դասանյութը՝ եղած առարկայական ծրագրին համապատասխան: Իսկ նյութի մատուցումը տրվում է ուսուցման առավել արդիական ու ակտիվացնող մեթոդներով և լատենտողական միջոցներով:

Դպրոցի առօրյան

Մեր դիտումներն ու գրույցները և տնօրենի խոսքերը միասնաբար հանգեցնում են այն եզրակացության, որ, հիրավի, վարժարաններում տիրում է շատ ջերմ ու հոգեհարազատ մթնոլորտ: Հաջողված են տնօրեն-ծնող, ուսուցիչ-ծնող փոխհարաբերություններն ու համագործակցությունը: Դպրոցն ունի տիկնանց միություն և ծնողական հանձնախումբ, որոնք, խորապես մտահոգված լինելով դպրոցի հոգսերով, իրենց ձեռնարկած միջոցառումներով ոչ միայն նյութական, այլ նաև բարոյա հոգեբանական մեծ աջակցություն են բերում դպրոցներին՝ թողնելով դաստիարակչական խոր ներգործություն:

Չափազանց ընդգրկուն, կազմակերպված, բազմաճյուղ ու բազմաբնույթ են վարժարաններում կատարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքները: Դպրոցի տնօրինությունը մեծ ուշադրություն է դարձնում դրանց՝ վերջիններս դիտելով աշա-

կերտների հայեցի դաստիարակության իրականացման կարևոր գրավական:

Դպրոցն ունի հարուստ գրադարան: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում աշակերտական պատի թերթերը (դասարան առ դասարան), որոնց միջոցով սովորողները կարողանում են դրսևորել իրենց ունակությունները, բացահայտել իրենց հնարավորությունները և ազատորեն կարծիքներ ու տարաբնույթ մտորումներ արտահայտել դպրոցի կյանքի, նրա բազմաթիվ խնդիրների շուրջ:

Ամեն ուրբաթ դպրոցում ատենամարզանքի օր է: Վերջին դասաժամին մի դասարան հանդես է գալիս որևէ ձեռնարկով: Դա կարող է լինել գրական, մշակութային, թատերական, երաժշտական միջոցառում, հիշատակի օրերի ոգեկոչում, եկեղեցական և քաղաքացիական տոների նշում և այլն:

Ոչ պակաս աշխույժ են մարզական բնույթի միջոցառումները: Երկու վարժարաններն էլ իրենց ակտիվ մասնակցությունն են բերում մարմնամարզության, ֆուտբոլի, վազբի, ձիավարության միջոցառողական մրցումներին՝ ցուցաբերելով լավագույն տվյալներ:

Այս բոլոր միջոցառումները խորապես նպաստում են վարժարանների աշակերտության ինչպես մտավոր, այնպես էլ ֆիզիկական, գեղագիտական և բարոյական դաստիարակությանը, նրանց անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:

Ամեն երկուշաբթի դասերից առաջ աշակերտությունն ունկնդրում է օրվա խորհուրդը: Դպրոցի տնօրենը 15 րոպեի շրջանակներում տարբեր թեմաներով բարոյախրատական ու հայրենասիրական խոսք է հղում աշակերտությանը՝ ցանկանալով նրանց մեջ սերմանել ու վառ պահել մարդասիրական, բարոյական և հայրենասիրական վեհ ու ազնիվ զգացումներ ու հատկանիշներ:

Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան վարժարանների կրթության որակի ի ապացույց պետք է փաստենք շրջանավարտների գերակշռող մասի ուսումնառությունը Լիբանանի ինչպես ամերիկյան, այնպես էլ Հայկազյան համալսարաններում:

Հայկազյան համալսարանը Լիբանանի պետության կողմից ճանաչված հայկական բարձրագույն ուսումնական հաստատություն

է, որի ուսանողության հիսուն տոկոսը հայ երիտասարդներ են: Ուրպես կայացած բուհ՝ Հայկազյան համալսարանը կրթական բարձր որակ է ապահովում հատկապես «Կառավարման գործ» (Business administration), «Կրթություն» (Education) և «Համակարգչագիտություն» (Computer science) բաժիններում, ուր և ուսանելու են գալիս Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան վարժարանների շրջանավարտները:

Վերադառնալով վարժարաններին՝ նշենք, որ նրանց շրջանավարտներն այսօր աշխարհի բոլոր ծայրերում տարբեր բնագավառներում իրենց աշխատանքային արդյունավետ ու հայանպաստ գործունեությամբ փաստում են իրենց հարազատ դպրոցների բարձր վարկանիշը և հայապահպան առաքելությունը:

Լ. Նազարյան նախակրթարան

Լիբանանում ՀԲԸՄ-ի իրականացրած կրթական գործունեության մասին ամբողջական պատկերացում չի ստեղծվի, եթե չխոսվի Լ. Նազարյան նախակրթարանի (ներառյալ մանկապարտեզը) գործունեության մասին: Նախակրթարանը (տնօրեն՝ Ուրֆայյան), ըստ էության, Դարուիի Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարանների համար ծառայում է որպես հիմք, ուր իրականացվում են սովորող երեխաների անձի ձևավորման, գրաճանաչության, տրամաբանական մտածողության, խոսքի զարգացման կարևորագույն գործընթացները:

Հենց Լ. Նազարյան նախակրթարանի շրջանավարտներն են հիմնականում իրենց ուսումը շարունակում Դ. Հակոբյան և Հովակիմյան-Մանուկյան երկրորդական վարժարաններում: Նրանք իրենց ներդաշնակ գործունեությամբ, կարծես, միասնացած լինեն մեկ ամբողջի մեջ և ապահովում են սովորողների շարունակական կրթության գործընթացը:

Լևոն Նազարյան մանկապարտեզ-նախակրթարանը հիմնվել է 1962 թ.: Պետականորեն ճանաչված են և իրականացնում են պետական կրթական ծրագրերը:

Նախակրթարանը մանկապարտեզի հետ միասին ունի 300 աշակերտ: Մանկապարտեզն ունի՝ **ծիլ-բողոք**, (2.5-3-4), **կոկոն** (4 տարեկան) և **ծաղիկ** (5 տարեկան) անվանումներով խմբերը:

Ի տարբերություն ազգային վարժարանների մանկապարտեզների, ուր իրականացվում է մի քանի լեզուների գրաճանաչության գործը, Լ. Նազարյան մանկապարտեզում այն պարտադրված չէ: Շեշտը դրվում է հայերենի, արաբերենի, անգլերենի բանավոր խոսքի զարգացման վրա, այսինքն՝ տրվում է ծանոթություն այդ լեզուներով իրերի, երևույթների մասին, ուշադրություն է դարձվում արտասանությանը: Դրանք կատարվում են խաղերի, երգերի միջոցով: Պետությունը կազմել է գրքեր անգլերենի և արաբերենի համար: Իսկ հայերենի նյութերը (տարբեր բնույթի) կազմում են դաստիարակները:

Միանգամայն համամիտ լինելով Լ. Նազարյան նախակրթարանի մանկապարտեզի գրաճանաչության նկատմամբ մոտեցմանը՝ ուզում ենք կրկին անգամ շեշտել, որ մանկապարտեզի՝ որպես նախադպրոցական հաստատության դերի և գործառույթի մեջ ամփոփվում են երեխաներին բոլոր առումներով դպրոցին նախապատրաստելը, նրա համար հիմքեր ստեղծելը և ոչ թե դպրոցի գործառույթներ որդեգրելը՝ հաշվի չառնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները:

Լ. Նազարյան նախակրթարանում աշխատելու համար համալսարանական կրթությունը պարտադիր է. պետք է ունենալ կամ բակալավրիատի (BA), կամ էլ մանկավարժականի (normale diplom) վկայականներ: Սա պարտադրում է պետությունը պետական ծրագրերում ընդգրկված ուսումնական առարկաներ դասավանդող ուսուցիչների համար: Հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչների հարցը թողնված է դպրոցի հայեցողությանը:

Նախակրթարանում կան արաբ ուսուցիչներ՝ թվով 3 հոգի: Իսկ մանկապարտեզում արաբ դաստիարակչուհու կողքին կա հայ օգնական:

Խոսելով նախակրթարանի դասագրքերի մասին՝ նշենք, որ արաբերենի և արաբերենով դասավանդվող առարկաների դասա-

գրքերն ապահովում է պետությունը, իսկ անգլերենի և անգլերենով ուսուցանվող առարկաների դասագրքերը բերվում են ԱՄՆ-ից:

Ինչ վերաբերում է հայագիտական առարկաներին, նշենք, որ 1-2 դասարաններում հայոց պատմության դասագրքեր չեն գործածվում: Ուսուցիչը դասանյութը պատմում է, երեխաները լսում են, կրկնում, հարցեր տալիս ու սովորում դասարանում: Սա արվում է երկու պատճառով.

1. հայերենի ոչ բավարար իմացություն 1-2 դասարաններում,

2. հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները (1-2-րդ դասարաններ), նրանց չժանրաբեռնելու և գերհոգնածություն չստեղծելու նպատակով:

Երկրորդ դասարանից արդեն տրվում է դասագիրք: Նյութը մատուցվում է տարբեր մեթոդներով՝ այն առավել հեշտ ընկալել և հասկանալ տալու համար: Առաջարկվում է աշակերտներին երբեմն նույնիսկ ուսուցչին ունկնդրել փակ աչքերով՝ առավել լավ ընկալելու և ապրելու պատմածը:

Նախակրթարանում կրոնին տրվում է կարևորություն: Դասերը սկսվում են աղոթքով: Կրոնը պարտադիր դասաժամ է՝ շաբաթը 1 ժամ: Կրոնի ուսուցման ժամանակ հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Այստեղ ուզում ենք հատկապես փաստել մի շատ կարևոր հանգամանք: Ի տարբերություն ազգային նախակրթարանների, որտեղ ուսուցումը տարվում է հայերեն, Լ. Նազարյան նախակրթարանում՝ արաբերեն և անգլերեն, քանի որ դպրոցն աշխատում է անգլերենի խորացված ուսուցմամբ ծրագրով: Առավել ամբողջական պատկերացում կազմելու համար աղյուսակ 8-ում ներկայացնում ենք ՀԲԸՄ-ի Լ. Նազարյան նախակրթարանի (ներառյալ մանկապարտեզը) կրթության բովանդակությունը՝ ուսումնական առարկաների շաբաթական ծանրաբեռնվածությամբ:

Աղյուսակ 8.

ՀԲԸՄ-ի Լ. Նազարյան նախակրթարանի և մանկապարտեզի շաբաթական ծանրաբեռնվածությունը

Նյութ	Դասարաններ						
	Ա.	Բ.	Գ1.	Գ2.	Դ.	Ե.	Զ.
Հայերեն	6	6	6	6	6	5	5
Հայոց պատմ.	2	2	2	2	2	2	2
Կրոն	1	1	1	1	1	1	1
Արաբերեն	7	7	7	7	7	7	7
Արաբ. պատմութ.	1	1	1	1	1	1	1
Արաբ. աշխ.	1	1	1	1	1	1	1
Արաբ. քաղաք.	1	1	1	1	1	1	1
Անգլերեն	7	7	6	6	6	7	7
Անգլ. գիտություն	2	2	3	3	3	3	3
Անգլ. ուսողություն	5	5	5	5	5	5	2
Անգլ. երկրաչափություն	-	-	-	-	-	-	1
Անգլ. գրահաշիվ	-	-	-	-	-	-	2
Արաբ. գեղագրություն	1	1	1	1	1	-	-
Մարզանք	2	2	2	2	2	2	2
Գծագրություն	1	1	1	1	1	1	1
Երաժշտություն	1	1	1	1	1	1	1
Համակարգիչ	1	1	1	1	1	1	1
Ֆրանսերեն	-	-	-	-	-	1	1
Ատենամարզանք	1	1	1	1	1	1	1
	40	40	40	40	40	40	40

Նյութ	ՄԱ	ՄԲ	ՄԳ
Վիդեո	1	1	1
Երգ	6	6	6
Ձեռային	2	2	3
Ռիթմիկ	1	2	2
Անգլերեն	5	5	5
Արաբերեն	5	5	5
Գիտություն	-	-	3
Ուսողություն	-	4	4
Գիր	-	-	5
Հայերեն	-	5	5
Կենտրոնական նյութ	5	5	-
Գրաֆիզմ	5	4	-
	30	39	39

Կրթության բովանդակության վերաբերյալ պատկերը հանգեցնում է մի լուրջ մտահոգության: Այն է. շաբաթը 25 ժամ օտար լեզվի ունկնդրումը, աշխարհաճանաչողությանը և տրամաբանական մտածողության ձևավորմանը նպաստող ուսումնական առարկաների՝ օտար լեզվով ուսանելը վնասում են հայերեն լեզվամտածողության ձևավորմանը: Իսկ վերջինս, ըստ մեզ, հիմք է հայեցի կրթության ու դաստիարակության համար: Սրա մասին հարկ է, որ մտորեն դպրոցի ղեկավարները, հատկապես, որ պետությունն այս հարցում ոչ մի արգելք չի դնում:

Հայ առաքելական համայնքում ընդգրկված այլ դպրոցներ

Ինչպես նշել ենք, հայ առաքելական համայնքում, բացի ազգային վարժարաններից, որոնք անմիջականորեն գտնվում են առաքելական եկեղեցու Լիբանանի թեմի առաջնորդարանի հոգաժության տակ, ընդգրկված են նաև կուսակցությունների, բարեգործական և մշակութային միությունների հովանավորությամբ գործող դպրոցներ: Դրանց թվին են պատկանում ինչպես ՀԲԸՄ-ի դպրոցները, որոնց մասին արդեն խոսվել է, այնպես էլ Թեքեյան մշակութային միությանը պատկանող «Վահան Թեքեյան միջնակարգ վարժարանը» և Հնչակյան կուսակցության «Սահակյան-Լ. Մկրտիչյան» քոլեջը:

Ստորև կներկայացնենք վերջին երկու կրթօջախները:

Վահան Թեքեյան միջնակարգ վարժարան

Թեքեյան մշակութային միության նախաձեռնությամբ 1951 թ. Բեյրութում բացվում է Վահան Թեքեյան միջնակարգ վարժարանը: Այն ունի մանկապարտեզի, նախակրթարանի և միջնակարգի բաժինները՝ աշակերտության ընդհանուր թիվը՝ 250: Դպրոցը նույնպես Լիբանանի կրթական համակարգի կազմում է և, բնականաբար, գործում է պետական ծրագրով: Վարժարանն աշխատում է անգլերենի խորացված ուսուցմամբ ծրագրով, հետևաբար ուսուցումը տարվում է անգլերեն: Դպրոցում դասավանդող ուսումնական առարկաների շաբաթական ծանրաբեռնվածությունն ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 9.

	Առարկա	Ժամաքանակ
1.	Հայերեն	6-8 ժամ
2.	Անգլերեն	6-8 ժամ
3.	Արաբերեն	6-8 ժամ
4.	Ֆրանսերեն	2 ժամ
5.	Մաթեմատիկա	6-8 ժամ
6.	Գիտություն /բնագիտություն/	6-8 ժամ
7.	Հայոց պատմություն	2 ժամ
8.	Ընդհանուր պատմություն	2 ժամ
9.	Քաղաքացիական կրթություն	2 ժամ
10.	Մարզանք	1 ժամ

Ուսուցչական կազմի 90 % հայերն են: Դպրոցն ունի կրթական մարմին, որը կազմակերպում ու վերահսկում է կրթօջախի կրթադաստիարակչական աշխատանքները: Դպրոցի տնտեսական խնդիրներին իր աջակցությունն է բերում հոգաբարձուների խորհուրդը:

Վահան Թեքեյան միջնակարգ վարժարանում, ի տարբերություն Բեյրութի մի շարք դպրոցների, գործում են առարկայական-մեթոդական հանձնախմբեր, որոնք իրենց պարբերական հավաքներում քննարկում են ծրագրամեթոդական խնդիրներին վերաբերող հարցեր:

Այսօր դպրոցի դժվարին ու դեռևս չլուծված խնդիրներից են դասագրքերի և ուսուցչական կադրերի (հայագիտական) հարցերը, որոնք, ինչպես արդեն նկատել ենք, Լիբանանի գրեթե բոլոր հայկական դպրոցների համար էլ մնում են չլուծված:

Այնուամենայնիվ, չափազանց լավատեսական են հնչում Վահան Թեքեյան վարժարանի հոգաբարձության հետևյալ խոսքերը. «Պիտի քալենք ինքնավստահ եւ բարձրաճակատ, նախ՝ որպէս Հայ եւ յետոյ՝ որպէս Թեքէեանցիներ: Ահա այս հաւատքով, Վարժարանի հոգաբարձութիւնը որպէս նշանաբան ընդունեց՝ ռեւէ հայ աշակերտ նիւթական նկատառումներով չզրկել ուսումնառութենէ»⁷⁸:

⁷⁸ Վահան Թեքեյան վարժարան — 40, Պեյրութ, 1991, էջ 18:

Սահակյան — Լ. Մկրտիչյան քոլեջ

Լիբանանում կրթական գործին ի նպաստ գործունեություն են ծավալում ոչ միայն եկեղեցիները, բարեսիրական, հայրենակցական և մշակութային միությունները, այլ նաև կուսակցությունները: Դրանք քվին է պատկանում Հնչակյան կուսակցությունը, որի նախածեռնությամբ 1923 թ. Բեյրութում բացվում է լիբանանահայ գաղութի ամենաառաջին կրթական հաստատություններից մեկը՝ Սահակյան լիցեյը: Շնորհիվ բարերար Լևոն Մկրտիչյանի արժեքավոր դրամական օժանդակության՝ 1975-ին դպրոցը տեղափոխվում է Բեյրութի Սին էլ Ֆիլի շրջանում գտնվող նորակառույց շենք: Եվ ի երախտագիտություն հայ բարերարի այդ մեծ նվիրատվության՝ դպրոցը վերանվանվում է Սահակյան-Լ. Մկրտիչյան երկսեռ քոլեջ:

Կրթօջախն ունի մանկապարտեզի, նախակրթարանի և միջնակարգի բաժինները: Առաջիկայում նախատեսվում է նաև բացել բաքալորեայի դասարաններ: Չափազանց հուսադրող ու լավատեսական են հնչում հայանպաստ առաքելություն որդեգրած Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջի տնօրեն Հակոբ Կերկերյանի հետևյալ խոսքերը. «Մենք կը տանինք ազգային, բարոյական եւ մտքի պայքար: Միշտ լատեսութեամբ կը գործենք, որովհետեւ կը հաւատանք, որ եկող ժամանակները բարգաւաճելու նոր առիթներ պիտի տան մեզի: Չգաստութիւնը եւ արդար աշխատանքը չի կրնար կորստեան մատնուիլ. անոր պտուղը մի քանի տարիէն անպայման կը կրնանք քաղել: Ահա այս նպատակասլաց աշխատանքով՝ միշտ կ' առաջնորդուինք, յուսալով, որ ապագան աւելի արդիւնաւետ է»⁷⁹:

Այսպիսի նպատակասլաց ու լավատեսական տրամադրվածությամբ է աշխատում քոլեջի ողջ ուսուցչական կոլեկտիվը և իրականացնում հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործը:

Կրթօջախին աջակցում և հովանավորում է Հայկական կրթական բարեսիրական միությունը, որի ստեղծած խնամակալական

մարմինն էլ ղեկավարում է դպրոցը՝ գործադիր տնօրենի հետ միասին: Խնամակալական մարմինը զբաղվում է դպրոցին վերաբերող բոլոր հարցերով, ներառյալ նյութական: Ինչպես Լիբանանի բոլոր հայկական դպրոցները, այնպես էլ Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջը աշխատում է պետական ծրագրով և ընդգրկված է երկրի կրթական համակարգում:

Դպրոցում ուսուցումը տարվում է անգլերենով: Սրան ավելանում են հայագիտական առարկաները՝ հայոց լեզու, պատմություն, աշխարհագրություն, կրոն, մատենագրություն և օտար լեզուներ՝ արաբերեն, անգլերեն և ֆրանսերեն: Աղյուսակ 10-ում ներկայացնում ենք Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջի շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը.

Աղյուսակ 10.

Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջի շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը

	Միջ.Ա	Միջ.Բ	Միջ.Գ	Միջ.Դ		
Հայերեն	4	4	3	3	14	18
Հայ պատմ.	1	1	1	1	4	
Արաբերենով առարկաներ	12	12	12	11	47	47
Անգլերեն	7	7	6	7	27	76
Թվաբանություն	7	6	6	8	27	
Կենսաբանություն	-	3	2	2	7	
Քիմիա	-	1	2	2	5	
Ֆիզիկա	-	1	2	3	6	
Ընդհանուր գիտություններ	4	-	-	-	4	
Ֆրանսերեն	1	1	1	-	3	
Գծագրություն	1	1	1	-	3	
Երգ	1	1	1	-	3	
Մարզանք	1	1	1	-	3	
Համակարգիչ	1	1	1	1	4	
Ատենամարզանք						

⁷⁹ Հարցազրույց Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջի տնօրեն Հ. Կերկերյանի հետ, Բեյրութ, մայիս, 1998:

Աղյուսակ 11.

Նախակրթարանի շաբաթական ուսումնական ծանրաբեռնվածությունը

	Ա դաս	Բ դաս	Գ դաս	Դ դաս	Ե դաս		
Կրոն	1	1	1	1	1	5	49
Հայերեն	6	6	7	7	7	33	
Հայ պատմ.	2	2	2	2	2	10	
Աշխ.	1	-	-	-	-	1	
Արար. առարկաներ	8	9	7	7	7	38	38
Անգլերեն	6	6	7	7	7	33	73
Թվաբանություն	6	6	6	6	6	30	
Ընդ. գիտություններ	2	2	2	2	2	10	
Երաժշտություն	1	1	1	1	1	5	
Մարզանք	1	1	1	1	1	5	
Գծագրություն	1	1	1	1	1	1	
Ատենամարզանք	35	35	35	35	35		

Նախակրթարանում հայագիտական առարկաներին տրամադրված է 9–10 ժամ, իսկ միջնակարգում նվազում է՝ 4–3 ժամ: Հայերեխաների մեջ հայկական լեզվամտածողության ձևավորման և հայոց լեզվի (գրավոր և բանավոր) զարգացման համար միջնակարգում հատկացված 4–3 ժամը չափազանց քիչ է, եթե փաստենք, որ մնացած բոլոր առարկաները դասավանդվում են անգլերեն և արաբերեն՝ շաբաթը 22 ժամ: Այս խնդրին մենք անդրադարձել ենք մյուս հայկական կրթօջախների մասին խոսելիս:

Ըստ դպրոցի տնօրենի ներկայացրած փաստերի՝ ուսուցչական կազմը, որի 92%-ը հայեր են, համալսարանական կրթություն ունի: Նույնիսկ կան ուսուցիչներ, որոնք ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (PH. D):

Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասնագետ ուսուցչի հետ աշխատում է նաև առարկան համադրող պատասխանատուն (coordinator): Իսկ բոլոր ուսուցիչների ուսումնադաստիարակչական գործունեությունը ղեկավարողն ու վերահսկողը քոլեջի տնօրենն է, որը դպրոցում իրականացվող աշխատանքների կազմակերպողն ու պատասխանատուն է: Դպրոցի տնօրենն իր մտածողությամբ, աշխարհայացքով, ղեկավարման ոճերով, անձնային և մասնագիտական որակ-

ներով, հոգեբանությամբ, սկզբունքայնությամբ, նպատակասլացությամբ ու լավատեսությամբ մեծ ներգործություն է թողնում դպրոցական կյանքի, առօրյայի, զարգացման ընթացքի ու ձեռքբերումների վրա:

Դեպի զարգացում տանող արդյունավետ աշխատանքի ոգով են տոգորված դպրոցի տնօրենի հետևյալ խոսքերը. «Մնայուն արժեքներ ստեղծելու համար, մէկ տարին հաւանաբար բաւարար չէ, սակայն մեր նպատակներուն եւ իրագործումներուն ճամբուն վրայ, կրնայ անկիւնաքար մը հանդիսանալ: Հիմնականը՝ սկսուած աշխատանքը առանց ընկրկելու շարունակելն է, եւ զոհողութիւններ յանձն առնելով՝ առաջնակարգին ձգտիլը»⁸⁰:

Քոլեջի սովորողների համար ճանաչողական, զարգացողական և դաստիարակչական նշանակություն ունի «Արևիկ» աշակերտական հանդեսը, ուր զետեղված են աշխարհճանաչողությանն ի նպաստ բազմաբնույթ տեղեկատվական նյութեր: Բացի դրանից, քոլեջի աշակերտությանը հնարավորություն է տրված իրենց ստեղծագործություններով, դպրոցական կյանքին վերաբերող քննադատական հոդվածներով հանդես գալ հանդեսում:

Սրանով պաշտպանվում է երեխաների խոսքի ազատության իրավունքը: Հանդեսում ընդգրկված են նաև գեղագիտական ճաշակ և տրամաբանական մտածողություն ձևավորող, ինքնաճանաչմանը նպաստող հոդվածներ ու ստեղծագործություններ:

Դպրոցն ունի Պարույր Սևակի անվան մատենադարան և քիմիայի լաբորատորիա: Դպրոցում գործում են՝ ծնողական վարչություն, «Արհեստասիրաց տիկնանց համախմբում», «Շրջանավարտից միություն» (իսկ ԱՄՆ-ում՝ Սահակյանի Սանուց միություն), որոնք իրենց մտահղացումներով և առանձին հասութաբեր ձեռնարկումներով մեծ աջակցություն են բերում քոլեջին:

Կազմակերպված ուսուցման գործընթացին զուգահեռ դպրոցում արդյունավետ են ընթանում արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները, որոնցում ընդգրկված են դպրոցի բոլոր աշակերտները:

⁸⁰ Հարցազրույց Սահակյան-Լ. Սկրտիչյան քոլեջի տնօրեն Հակոբ Կերկերյանի հետ, Բեյրութ, մայիս, 1998:

Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջը նույնպես շաբաթը մեկ ունի ատենամարզանքի օր, որի ժամանակ դասարանները հերթականությամբ դպրոցի առջև հանդես են գալիս որևէ միջոցառմամբ: Դրանք կարող են լինել ասմունք, հիշատակի օրվան կամ քաղաքացիական և եկեղեցական տոներին նվիրված ձեռնարկներ, ինչպես նաև գեղարվեստական, երաժշտական, թատերական ներկայացումներ և այլն: Դպրոցն ունի երգչախումբ, որը պարբերաբար հանդես է գալիս հայկական երգերի գեղեցիկ կատարումներով: Այս միջոցառումների շարքը լրացնում են մարզական, միջդասարանական և միջդպրոցական ֆուտբոլի ու բասկետբոլի մրցումները:

Վերը թվարկվածները վկայում են այն մասին, որ Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջում հաջողությամբ է իրականացվում հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործը՝ աշխատելով նրանց մեջ սերմանել ազգային ինքնագիտակցության ոգի և ազգային բարձր արժեքներ, որոնք խորապես նպաստելու են օտար միջավայրում հայ մնալուն:

Խորհմաստ են ՀԿԲՄ-ի ատենապետ Փարամազ Տոնիկյանի Սահակյան-Լ. Մկրտիչյան քոլեջի շրջանավարտների վկայականների բաշխման տարեվերջյան հանդիսության ժամանակ արտասանած հետևյալ խոսքերը. «Կունենանք հաջողութիւններ, քանի մենք կը հաւատանք, որ դպրոցական յարկի տակ է, որ կը դարբնուի հայ լեզուն, իսկ հայրենակերտումով՝ հայ ազգը...»⁸¹:

Լիբանանում գործող հայկական այլ դպրոցներ

Բացի հայ առաքելական համայնքի շրջանակներում գործող հայկական ամենօրյա դպրոցներից, Լիբանանում կրթադաստիարակչական ակտիվ գործունեություն են ծավալում հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքների հովանու տակ գտնվող հայկական ամենօրյա դպրոցները:

Դպրոցների այսպիսի բաժանումը, ինչպես վերը նշել ենք, գալիս է այն հանգամանքից, որ Լիբանանը համայնքային երկիր է, և

⁸¹ «Արարատ», 4 յուլիսի, 1997:

այնտեղ ապրող ազգերն ու ազգությունները պետության կողմից ճանաչված են ըստ իրենց դավանանքի (հավատքի): Ելնելով սրանից՝ հայերը Լիբանանում ներկայացված են հայ առաքելական, հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքներով: Հայկական ամենօրյա մեծաթիվ դպրոցներ ընդգրկված են հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքներում և ազգային վարժարանների հետ ընդհանուր եզրեր ունենալով հանդերձ, իրենց կարգավիճակներով, կրթության բովանդակությամբ, ուսումնական ծրագրերով, ստեղծված դասագրքերով, հայագիտական առարկաներին տրամադրված ժամաքանակով, դասավանդման մեթոդներով, մանկավարժական կադրերով բավականին տարբերվում են միմյանցից:

Ահա սրանք համեմատական կարգով ներկայացնելու և վերլուծելու նպատակով ստորև ուզում ենք անդրադառնալ նաև հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքներին պատկանող հայկական ամենօրյա դպրոցներին՝ լիբանանահայ գաղութում հայ կրթական գործի մասին ամբողջական ու համապարփակ պատկերացում տալու համար:

Հայ ավետարանական համայնքին պատկանող դպրոցներ

Հայ ավետարանական եկեղեցու հոգևոր համապարփակ գործունեության կարևոր բաղկացուցիչ մասն է կազմում կրթական հարցը, որը դիտվում է որպես հավատացյալների հոգու ու մտքի զարգացման կարևորագույն գործոն:

Հայ ավետարանական եկեղեցին իր հիմնադրությունից (1846 թ.) ի վեր աշխարհի տարբեր երկրներում ծավալում է հայանպաստ ու հայապահպան գործունեություն:

Այսօր հայ ավետարանական եկեղեցին՝ որպես Հայ առաքելական եկեղեցու քույր եկեղեցի, իր ակտիվ գործունեությունն է ծավալում նաև Հայաստանում՝ սերտ համագործակցելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Հայեցի կրթությունն ու դաստիարակությունը դիտելով որպես հայապահպանության կարևոր գործոններից մեկը՝ Հայ ավետարա-

նական եկեղեցին Լիբանանում բացում է դպրոցներ և աջակցում դրանց անխափան գործունեությանը:

Այսօր լիբանանահայ գաղութում գործում են հայ ավետարանական յոթ դպրոցներ, որոնցից մի մասն ունի նախակրթարանի, մյուս մասը՝ միջնակարգի և երկրորդականի կրթական բաժինները: Դրանք գործում են ինչպես Բեյրութում, այնպես էլ Լիբանանի մյուս հատվածներում: Դրանք են. Հայ ավետարանական քոլեջ (մանկապարտեզից երկրորդական), Հայ ավետարանական կենտրոնական բարձրագույն վարժարան (մանկապարտեզից երկրորդական), Շամլյան-Թաթիկյան (միջնակարգ), Փիթր և Էմմա Թորոսյան (միջնակարգ), Հայ ավետարանական երկրորդական վարժարան (Այնճարում), Հայ ավետարանական նախակրթարան և Կեյթմենյան (նախակրթարան) կրթօջախները:

Վերոհիշյալ բոլոր դպրոցներն ընդգրկված են Լիբանանի կրթական համակարգում և պարտադրաբար իրականացնում են պետական կրթական ծրագիրը, հաջողությամբ համադրում են հայկական ծրագիրը՝ նպատակ ունենալով հայ երեխաների մեջ սերմանել ու դաստիարակել հայի ինքնությունը, աննկուն ոգին ու հոգեբանությունը՝ անխափան պահելով ազգային դիմագիծը:

«1915-ին փորձեցին հայ ժողովուրդը արմատեն կացինահարել, բայց չյաջողեցան. ծիլերը վերընձիղեցան եւ աճեցան վերստին: Սկզբնական դժուարութիւններէ ետք՝ սփիւռքահայութիւնը շուտով տէրը եղաւ իր ճակատագրին, եկեղեցիներու կողքին կանգնեցան դպրոցներ՝ ջամբելու համար այն դաստիարակութիւնը, որուն կենսագործման ճանապարհին ինկան անգերեզման մնացած նահատակները: Անոնց կեանքերը ի գուր վատնուած պէտք չէ ըլլան, պէտք է կենսագործել անոնց կտակը, հաւատարիմ մնալ հաւատքին ու ազգային ակունքներուն: Հայ Աւետարանական գոլէճը շեշտը կը դնէ հոգեւոր ու բարոյական անժամանցելի արժէքներու վրայ, որոնք մեզի փոխանցուած են Աստուծոյ խօսքէն՝ Աստուածաշունչի ճամբով: Հ.Ա.Գ.-ը շեշտը կը դնէ հայկական ոգիի տիրացման նպաստող ուսումնառութեան՝ մայրենի լեզուի ու ազգային պատմութեան լաւ գիտակցութեան ճամբով, որպէսզի կեանքի մէջ ոչ միայն այդ ոգիով լե-

ցուն ըլլան իր աշակերտները, այլ այդ ցոլացնեն նաեւ իրենց յետդպրոցական կեանքին մէջ»⁸²: Հայ ավետարանական քոլեջի տնօրեն Ջավեն Մարյանի հայաշունչ մտքերով էլ ուզում ենք շարունակել մեր խոսքը վերոհիշյալ կրթօջախի իրականացրած կրթադաստիարակչական գործունեության մասին:

Մեծ եղեռնին հաջորդող Կիլիկիայի աղետալի դատարկումից հետո գաղթականության շատ համեստ պայմաններում ուսումնասեր ու նպատակասլաց վերապրողների ճիգերով հիմնադրվում է Հայ ավետարանական քոլեջը, որը մինչ ներկայիս անվանումը գործել է տարբեր անունների տակ: 1922-ին հիմնադրված Հայ ավետարանական երկրորդ նախակրթարանից 1923 թ. ծնունդ է առել Հայ մանչերու ավետարանական բարձրագույն վարժարանը: 1930-31 թթ. սկսել է գործել նախակրթարանի բաժինը: 1933-ին Հայ մանչերու ավետարանական բարձրագույն վարժարանի և Հայուհեաց ամերիկյան վարժարանի միացումով կազմվում է Հայ ավետարանական բարձրագույն երկսեռ վարժարանը: 1943-ից այն դարձավ Հայ ավետարանական Ա. եկեղեցու սեփականությունը: Իսկ 1950-ից առ այսօր կոչվում է Հայ ավետարանական քոլեջ: 1961 թ. հիմնվում է բաքալորեայի ք դասարանը (12դդ.):

Այսօր Հայ ավետարանական քոլեջն ունի մանկապարտեզի, նախակրթարանի, միջնակարգի և երկրորդականի բոլոր բաժինները:

Մեր ուսումնասիրած նյութերից և բազմաթիվ գրույցներից մեզ համար պարզ դարձավ այն իրողությունը, որ Հայ ավետարանական քոլեջն իր գոյության տարիներին ծառայել է ոչ միայն իրեն հիմնող համայնքին, այլ նաև համայն լիբանանահայությանը՝ առանց գաղափարական խտրության: Քոլեջի նպատակն է եղել և է՝ «...սասարել իր աշակերտներուն մտային, բարոյական եւ հոգևոր զարգացման»: Այս նպատակին ի հետամուտ նա ոչ միայն հայ ուսումնաստենչ երիտասարդների ճանապարհել է բարձրագույն ուսումնական հաստատություններ, այլև կերտել է պարկեշտ նկարագրի տեր հայ քրիստոնյաներ:

⁸² Հայ Աւետարանական գոլէճի «Միփան» տարեգիրք, 1996, Պեյրութ, էջ 1:

Դպրոցի աշակերտության ընդհանուր թիվը (բոլոր բաժիններով) մոտ 150 է: Ուսուցչական կազմի 48 անդամներից 34-ը համալսարանական կրթություն ունեն, կան նաև գիտությունների թեկնածուներ: Սա ապացույց է այն բանի, որ դպրոցն ապահովված է որակյալ մասնագիտական կադրերով, որոնց աշխատանքի որակից է կախված ուսուցման գործընթացի արդյունավետությունը:

Պետական ծրագրերով նախատեսված ուսումնական առարկաներին զուգահեռ, դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում հայագիտական առարկաների՝ Մուրբ գրքի, հայոց լեզվի և գրականության, հայոց պատմության դասավանդմանը, քանի որ դպրոցի նպատակը ոչ միայն պետական ուսումնական ծրագրի կատարումն է, այլ նաև հայ աշակերտներին հայեցի կրթություն ու դաստիարակություն տալը:

Հայ ավետարանական քոլեջը, հավատարիմ իր հիմնական նպատակին, մասնավոր կարևորություն է տալիս նաև դպրոցի հոգևոր կյանքին՝ աշակերտության մեջ քրիստոնեական նկարագիր կերտելու համար: Այդ նպատակով կրոնի կամ սուրբգրային դասեր հաստատված են ինչպես նախակրթարանի, այնպես էլ երկրորդական բաժնի բոլոր դասարանների համար: Ավելին, երկրորդական բաժինը և նախակրթարանը շաբաթը երեք անգամ, իսկ մանկապարտեզը շաբաթը հինգ անգամ հավաքական պաշտամունքի ժամեր ունեն:

Սրանք ապացույց են, թե Հայ ավետարանական քոլեջում մեծ ուշադրություն է դարձվում երեխաների կրոնական դաստիարակությանը՝ ընդհուպ այն սկսելով դեռ մանկապարտեզից և անընդմեջ տանելով մինչև քոլեջի վերջին դասարանը: Ըստ մեզ՝ հայ երեխաներին հոգևոր արժեքներին հաղորդակից դարձնելն ամբողջացնում է նրանց հայեցի ու համակողմանի դաստիարակության գործը:

Կյանքում ինքնուրույն ու ակտիվ գործելու, հասարակական պատասխանատվություն ստանձնել կարողանալու և համագործակցության մղելու են ծառայում դպրոցում գործող աշակերտական ակումբները:

Դրանք երեքն են՝ Աստվածաշնչի, Հայկական և Պատմության: Դրանցից երկուսը՝ Պատմության և Հայկական ակումբները ունեն ի-

րենց պարբերաթերթերը՝ աշակերտների բազմաբնույթ գրություններով: Պատմության ակումբինը կրում է «Անի», իսկ Հայկականինը՝ «Գառնի» խորագիրը:

Հայ ավետարանական քոլեջն ունի նաև «Սիփան» անունով տարեգիրք, որտեղ համակողմանիորեն ամփոփված են դպրոցական կյանքին վերաբերող բոլոր հարցերը: Սա մի յուրատեսակ հաշվետվություն է քոլեջի գործերի, ձեռքբերումների ու դժվարությունների մասին՝ ընդգրկելով ուսումնական, արտասուսումնական-դաստիարակչական, կադրային, ֆինանսական, կազմակերպչական և այլ հարցեր:

Քոլեջում գործում են քիմիայի և կենսաբանության-բնագիտության գիտաշխատանոցներ-լաբորատորիաներ: Այստեղ իրենց ուսումնասիրություններն են կատարում և՛ ուսուցիչները, և՛ երկրորդական բաժնի աշակերտները: Սա խորապես օգնում է աշակերտներին իրենց տեսական գիտելիքները գործնականում ճշտելու և ստուգելու համար, այսինքն՝ քոլեջում ուսուցման գործընթացում հաջողությամբ կիրառվում է տեսության և պրակտիկայի կապի դիդակտիկական սկզբունքը: Աշակերտության դպրոցական և արտադպրոցական զարգացմանը նպաստող, ինչպես նաև հայկական ժառանգության հանդեպ սեր ու հետաքրքրություն սերմանելու մի շատ կարևոր միջոց է քոլեջի հարուստ գրադարանը, ուր գետնդրված է հայերեն, անգլերեն և արաբերեն լեզուներով առարկայական և գեղարվեստական հարուստ գրականություն (18900 կտոր): Արտադասարանական և արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումներով են հարստանում ու ամբողջանում քոլեջի աշակերտության զարգացման ու դաստիարակության գործընթացները: Ամեն ուրբաթ երկրորդականի բաժինը և ամեն չորեքշաբթի նախակրթարանի բաժինը վերջին դասաժամին ունեն ատենամարզանքի ժամ, որի ընթացքում աշակերտներն իրենց թաքուն ձիթերն են երևան հանում՝ ասմունքով, երգով, թատերգություններով և ընդհանուր զարգացման մրցումներով:

Ազգային տոները, հիշատակի օրերն իրենց արձագանքն են գտնում քոլեջի ատենամարզանքի գործունեության մեջ: Դրանց իրենց մասնակցությունն են բերում լիբանանահայ մտավորականներ

և արվեստագետներ, Հայաստանից ժամանած հյուրեր, ինչպես նաև ուսուցչական կազմն ու աշակերտությունը:

Մրան ավելանում են նաև մարզական ոլորտի ներդրողական և միջոցառական միջոցառում-մրցումները, որոնց միջոցով իրականացվում է աշակերտների ֆիզիկական դաստիարակությունը:

Վստահորեն պետք է փաստել, որ Հայ ավետարանական քոլեջում տարվող ուսումնադաստիարակչական, կրթամշակութային, գիտամանկավարժական աշխատանքները նպաստում են սովորողների անձի ձևավորմանը, համակողմանի զարգացմանն ու հայեցի դաստիարակությանը, իսկ վերջինս էլ՝ հայապահպանությանը:

Առավել ամբողջական ու խոսուն են տնօրեն Ջավեն Մսրյանի քոլեջի՝ առաքելության մասին ասված խոսքերը. «Հայ Ավետարանական Գոլեճին նպատակը եղած է միանգամայն սատարել իր աշակերտներուն մտային, ֆիզիքական, բարոյական եւ հոգեւոր զարգացման: Այդ առաջադրութեամբ ալ իր 75 տարիներու գոյութեան շրջանին, ան լոյս ջանքած է բազմահազար հայորդիներու, կերտելով անոնց մէջ քրիստոնէական նկարագիր եւ կենցաղ: Իբրեւ Հայ Ավետարանական Ա. Եկեղեցոյ մէկ հաստատութիւնը՝ վարժարանս ջանացած է օրուան պահանջներուն պարտադրած ուսումնական պատրաստութեան համընթաց՝ եւ անկէ առաջ, իրեն յանձնուած նոր սերունդին տալ հայադրոշմ տոհմիկ դաստիարակութիւն եւ մանաւանդ բարոյական եւ հոգեւոր արժէքներու նկատմամբ՝ անսահման խանդաղատանք: Այսօր ալ ան կը շարունակէ անշեղ կերպով հետեւիլ նոյն լուսատր ուղիին, որուն հանդէպ իր հաւատքը կը մնայ աւելի խոր եւ հաստատ քան երբէք, որովհետեւ ան համոզուած է, թէ միայն այդ կերպով կարելի է պատրաստել ազգին, մարդկութեան եւ Աստուծոյ հանդէպ իր պարտաւորութեանց գիտակից անհատներ»⁸³:

Հայ կաթոլիկ համայնքին պատկանող դպրոցներ

Հայ կաթոլիկ համայնքը և հատկապես նրա միաբանությունը Լիբանանում շուրջ երեք դարերի պատմություն ունի:

XVIII դարի սկզբից Լիբանանը, հատկապես Բեյրութը, դառնում է գաղթահայության կենտրոններից մեկը: Դա կապված էր օսմանյան կայսրության մեջ հայ լուսավորչականների և կաթոլիկների միջև ծավալված դավանաբանական սուր պայքարի հետ, որի հետևանքով մի խումբ կաթոլիկներ բնակություն են հաստատում Բեյրութում: Այստեղ 1749 թ. հիմնվում է հայտնի Չմմառի վանքը: «Չմմառեան կաթողիկոսական Միաբանութիւնը, բազմադիմի կոչումով օժտուած այս հաստատութիւնը, անոր առաքելութիւնը, կրոնի ու հաւատքի լոյսը տարածելով հանդերձ ժողովուրդի հոգիներուն մէջ, հոգի տուած են մշակոյթի աւանդը պահպանելու ու արժարժելու համար անոնց մտքերուն մէջ», — ասում է Մեսրոպ Եպս. Թերզյանը⁸⁴:

Ճշմարտության մեծ բաժին կա Մեսրոպ Եպս. Թերզյանի այն խոսքերի մեջ, թե գրականությունն ու հավատքը միասին են ծնունդ առել, և որ գրականության ռահվիրանները եկեղեցականներ են եղել:

Հիրավի հայ վանքերը հավատքի լույսի հետ մշակույթի սերն են ճանապարհել հայազգի զավակներին: «Վկայ՝ Սփիտոքի մէջ ցիրուցան կրթական հաստատութիւնները, ուր անոնք, իբր անխոնջ ու համեստ մշակներ, հայ դեռատի սերունդները դաստիարակած են կրօնքի եւ հայրենիքի սիրոյն մէջ», — գրում է Մեսրոպ Եպս. Թերզյանը:

Այսօր Լիբանանի Հայ կաթոլիկ եկեղեցու հովանավորությամբ ստեղծվել է հայկական դպրոցների մեծ ցանց՝ թվով 13 դպրոց, որոնցից երկուսը որբանոց-վարժարան է, երկուսն էլ՝ ընծայարան: Հայ կաթոլիկ դպրոցների ցանցում ընդգրկված են Հռիփսիմեանց, Մեսրոպեան, Մխիթարեան (Հազմիէ), Սբ. Խաչ, Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Սբ. Ազնէս, Սբ. Շուշան վարժարաններ, Կաթողիկէ քոյրերու վարժարան (Այնճար), Աղաճանեան Սանուց տուն (Այնճար), Չմմառու աղջկանց որբանոց, Կաթողիկէ քոյրերու վարժարան (Չահլէ), Մխիթարեան Ընծայարան (Չմմառ):

⁸³ Հարցազրույց Հայ Ավետարանական քոլեջի տնօրեն Ջավեն Մսրյանի հետ, Բեյրութ, մայիս, 1998:

⁸⁴ Մեսրոպ Եպս. Թերզյան, Չմմառեան կաթողիկոսական Միաբանութիւնը, Չմմառ, 1983, էջ 5:

Հայ կաթոլիկ դպրոցների ցանցի անբաժանելի մասն են կազմում վերջին երկու կրոնական հաստատությունները՝ ընծայարանները: Սրանք, չնայած որ ունեն հատուկ առաքելություն՝ պատրաստել հայ կղերականներ, հոգևոր հովիվներ, այնուամենայնիվ, որդեգրել են միջնակարգ և երկրորդական վարժարանների կրթական ծրագրերը՝ անշուշտ կրոնական դաստիարակության հետ առնչվող առանձնահատկություններով: Սրան ավելացնենք նաև այն հանգամանքը, որ այս հաստատությունների աշակերտների գերակշռող մասը գալիս է լիբանանահայ գաղութից: Այս պատճառով է, որ սրանք ընդգրկված են լիբանանահայ վարժարանների ցանկում:

Հայ կաթոլիկ համայնքի դպրոցները հետևում են ֆրանսիական համապատասխան դպրոցների ծրագրերին: Այդ իսկ նպատակով դպրոցներում առավել ուշադրություն է դարձվում ֆրանսերենի դրվածքին: Ավելին, հայ կաթոլիկ դպրոցներում ուսուցումը տարվում է ֆրանսերեն, այսինքն՝ պետական ծրագրով նախատեսված ուսումնական բոլոր առարկաները դասավանդվում են ֆրանսերենով: Սրան ավելանում են հայագիտական առարկաները՝ հայոց լեզու, հայոց պատմություն, կրոն և արաբերեն ու անգլերեն:

Հայ կաթոլիկ վերոհիշյալ վարժարաններից մեկը միայն նախակրթարան է, 8-ը ունեն մինչև միջնակարգի, երկուսը՝ մինչև երկրորդականի բաժինները:

Այստեղ ուզում ենք փաստել մի հանգամանք, որ հայ կաթոլիկ դպրոցները, ի համեմատություն ազգային վարժարանների, միշտ էլ առավել ապահովված ու բարվոք վիճակում են եղել: Սրան ավելացնենք նաև այն, որ Լիբանանի համար դժվար տարիներին (պատերազմ), երբ հայկական որոշ դպրոցներ նույնիսկ փակվեցին, իսկ գրեթե բոլոր դպրոցներում էլ (թե՛ ազգային, թե՛ ավետարանական, թե՛ բարեգործական ընդհանուր միության և ուրիշ) զգալիորեն նկատվում էր աշակերտության թվի կտրուկ նվազում, հայ կաթոլիկ վարժարաններում նույնիսկ արձանագրվում էր աշակերտության աճ: Կարծում ենք, որ սա շատ բնութագրական և խոսուն փաստ է հայ կաթոլիկ վարժարանների հեղինակության, նրանց իրականացրած կրթադաստիարակչական գործունեության որակի և նրանց գործի հանդեպ համայնքի մեծ վստահության մասին:

Հայ կաթոլիկ վարժարանների ցանցում, թերևս, ամենամեծն ու իր իրականացրած կրթադաստիարակչական և հոգևոր-մշակութային առավել ընդգրկուն գործունեությամբ առանձնանում է Հայ կաթոլիկ Մեսրոպյան բարձրագույն վարժարանը: Վարժարանի մեծավոր տնօրեն Հ. Գեորգ Վրդ. Եղիայեանի աշակերտությանն ուղղված ինքնատիպ բառերով էլ շարունակենք խոսքը. «Քու Վարժարանդ՝ Մեսրոպեան, իր դասերուն կուտակումով, իր առօրեայ ծանր պարտականութիւններով, իր լուրջ խստապահանջ դասընթացներով եւ ուսումնական ծրագիրներով, իր գիտական, պատմական, ընկերաբանական, աշխարհագրական, թուաբանական, հոգեբանական, գրական եւ հոգեւոր պրպտումներով եւ պահանջքներով Նախագաւիթն է, այն անծայրածիր գիտական եւ մարդկային բնաշխարհին, որուն՝ քաջութեամբ, գիտակցութեամբ եւ խիզախութեամբ կը պատրաստուիս մուտք գործելու: Ինքնավստահ թեւակոխել այդ սեմերը, սուզուել այդ հորիզոններուն մէջ, առ գրիչդ, քու կարգիդ, դուն ալ գրել պատմութիւն մը նոր նուաճումներու, նոր տեսութիւններու, նոր երագներու... Փառք քու Հայկազեան Ազգիդ, Պատիւ համայն Մարդկութեան եւ Զեզի»⁸⁵:

Հայ կաթոլիկ Մեսրոպյան բարձրագույն վարժարանը հիմնադրվել է 1939 թ. Հայ կաթոլիկ եկեղեցու նախաձեռնությամբ: Սկզբում այն ունեցել է միայն նախակրթարանի բաժինը՝ 1-ից 5-րդ դդ., այնուհետև բարձրացել է մինչև միջնակարգ՝ 9-րդը ներառյալ: Միայն 28 տարի առաջ է, որ դպրոցը բացել է նաև երկրորդականի բաժինը՝ 10-12-րդ դդ.: Դպրոցի աշակերտության ընդհանուր թիվը հասնում է 900-ի:

Տասը տարի առաջ դպրոցի երկրորդականի դասարաններում՝ 10-րդ, 11-րդ և 12-րդ, բացվել է տեխնիկական բաժին, որտեղ ուսանում են ոչ միայն Մեսրոպյանի աշակերտները, այլ նաև ուրիշ դպրոցներից եկածները: Սրանով հանդերձ աշակերտության ընդհանուր թիվը հասնում է 1300-ի:

Ամբողջ վարժարանը Լիբանանի պետական կրթական համակարգի մեջ է և իրականացնում է պետական կրթական ծրագիրը:

⁸⁵ Հայ կաթ. Մեսրոպեան բարձր. վարժարանի աշակերտական տարեգիրը, Գիտութեան ճանապարհին, Պեյրուս, 1999, թիւ 1, էջ 1:

Վարժարանի նախակրթարանը պետական է, որի համար էլ նրան տրվում է որոշակի նպաստ: Սա գալիս է այն հանգամանքից, որ Լիբանանում պարտադիր ուսումը նախակրթարանն է:

Մեսրոպյան վարժարանին բոլոր հարցերով հովանավորում է Հայ կաթոլիկ եկեղեցու պատրիարքարանը: Նա է նշանակում դպրոցի տնօրենին, որն ի դեպ, հոգևորական է, և նրան էլ հաշվետու է տնօրենը՝ վարժարանի բոլոր գործերի համար՝ ունենալով, իհարկե, գործելու լայն իրավասություններ:

Մեսրոպյան վարժարանի ուսուցչական կազմի 50 տոկոսն է միայն հայ, մնացածը արաբներ են: Սա բացատրվում է նրանով, որ դպրոցում առաջին դասարանից մինչև 12-րդը ուսուցումը տարվում է ֆրանսերեն: Միայն առաջին և երկրորդ դասարաններում են հիմնականում հայ ուսուցիչները դասավանդում՝ ուսուցման մատչելիությունն ապահովելու և լեզվական արգելքներն ու դժվարությունները հաղթահարելու համար:

Հայագիտական առարկաների՝ հայոց լեզվի, հայոց պատմության և կրոնի շաբաթական ծանրաբեռնվածության պատկերը հետևյալն է.

նախակրթարանում

– I դ. – 7 ժամ,

II – 8 ժամ,

III, IV, V – 6 ժամ:

միջնակարգում մի քիչ նվազում է – 3 ժամ՝ լեզու,

2 ժամ – կրոն,

1 ժամ – պատմություն:

Երկրորդականում — 4 ժամ ընդհանուրը:

Դպրոցում գործում է գիտելիքների գնահատման 20 բալային (միավորի) համակարգը, որից 12-ը՝ անցումային շեմն է: Մակայն ըստ առարկաների շաբաթական ժամաքանակի՝ այն կարող է փոխվել 40 միավորի (արաբերեն, թվաբանություն, պատմություն, գիտություն):

Դպրոցում հայագիտական առարկաների դասագրքերի հարցը դեռևս չլուծված խնդիր է մնում, իսկ պետական ծրագրում ընդգրկված առարկաների դասագրքերով դպրոցն ապահովված է:

Դպրոցում աշխատող մանկավարժների մասնագիտական որակի, մեթոդական զինվածության և ուսուցման գործընթացի բարձր արդյունավետության մասին է խոսում այն փաստը, որ Մեսրոպյան վարժարանի շրջանավարտների 90 % կարողանում է իր ուսումը շարունակել Լիբանանի տարբեր համալսարաններում՝ ֆրանսիական, ամերիկյան և այլ:

Այստեղ պետք է շեշտենք այն հանգամանքը, որ այսպիսի արդյունքի գրավականներից մեկն էլ այն է, որ դպրոցի բոլոր ուսուցիչները տարին մեկ մասնակցում են պետության կազմակերպած հոգեբանամանկավարժական և մեթոդական վերապատրաստման դասընթացներին: Այդպիսի դասընթացներ է կազմակերպում նաև Բեյրութի ֆրանսիական համալսարանը:

Խոսելով վարժարանի արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների մասին՝ նշենք, որ դրանք բավականին բազմաճյուղ ու ընդգրկուն բնույթ ունեն: Դպրոցում գործում են աշակերտական թատերախումբ, երգչախումբ և պարախումբ: Անցկացվում են ասմունքի, գծագրության և մարզական մրցումներ: Կազմակերպվում են աշակերտների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ:

Դպրոցում լույս է տեսնում «Գիտութեան ճանապարհին» աշակերտական տարեկան տեղեկագիրը, ուր ամփոփվում են աշակերտների ձեռք բերած հաջողություններն ուսման մեջ, կատարած գործերը, ստեղծագործությունները, դպրոցում կազմակերպված արտադասարանական, ինչպես նաև արտադպրոցական բոլոր միջոցառումները, որոնց մասնակցել են աշակերտները, մի խոսքով, «Գիտության ճանապարհին» աշակերտական տեղեկագիրը դպրոցի աշակերտության, ինչու չէ, նաև ուսուցիչների տարեկան ինքնատիպ մի հաշվետվություն է վարժարանում ընթացող կյանքի մասին, որը խորապես նպաստում է հայ երեխաների անձի ձևավորմանը, զարգացմանը, նրանց կյանքին նախապատրաստելու և ազգային ինքնության պահպանմանը:

Մեսրոպյան վարժարանում առանձնակի ուշադրություն է դարձվում սովորողների կրոնական դաստիարակությանը: Կրոնը ու-

սուցանվում է առաջին դասարանից՝ իհարկե, հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները: Ավելին, ամեն հինգշաբթի պատարագի օր է:

Սա վարժարանի ավանդական սովորություններից է: Ամեն հինգշաբթի օրվա հինգերորդ ժամը տրամադրված է սուրբ պատարագին, որի ժամանակ աշակերտությունը հետևում և մասնակցում է ս. պատարագի երգեցողությանն ու շարականներին: Ինչպես նաև կատարվում է խոստովանություն, և աշակերտները մոտենում են ս. հաղորդության:

Մերոպյան վարժարանը շատ է կարևորում այս ժամը, քանի որ այն ուղղակիորեն նպաստում է նոր սերնդի հոգևոր և քրիստոնեական դաստիարակությանը, որը հայապահպանության կարևոր գործոններից մեկն է:

Այսպիսով, Լիբանանի երեք՝ հայ առաքելական, հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքներում գործող հայկական ամենօրյա դպրոցները, որոշակի դժվարություններ հաղթահարելով, իրականացնում են իրենց բարձր առաքելությունը՝ սփյուռքահայ երեխաների հայեցի կրթության և դաստիարակության պատասխանատու գործը՝ դրանով իսկ նպաստելով լիբանանահայ գաղութի զարգացմանն ու հայապահպանությանը:

Գլուխ հինգերորդ

ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱՆՆԵՐԸ

§ 5.1. Սիրիայի հայկական գաղութը: Սիրիահայության դերը երկրի Կնյուսության և հասարակության զարգացման գործում

Սիրիայի հայկական գաղթօջախը Մերձավոր Արևելքի հայահոծ գաղութներից է, ուր հաշվվում է մոտ 120 հազար հայ: Սիրիան Մերձավոր Արևելքի և ընդհանրապես արաբական երկրների շարքում մեծ կշիռ ունեցող և ռազմապես ուժեղ պետություններից է: Բնակչության գերակշիռ մասը արաբներ են և հատկապես մուսուլման արաբներ, որոնք ներկայացված են իրենց հավատքի՝ իսլամի 3 ճյուղով՝ շիա, սյունի և ալաուի: Վերջիններս, չնայած երկրում փոքրամասնություն են կազմում, բայց 1967 թ-ից առ այսօր անփոփոխ ղեկավարում են Սիրիայի պետությունը: Նրանք իշխանության գլուխ անցան ԲԱՍՍ կուսակցության հաղթանակով, որը երկրում իրականացրեց սոցիալ-տնտեսական բարեփոխումներ: Երկրի տնտեսության մեջ ստեղծվեց պետական սեկտորը: Կատարվեց արդյունաբերական հիմնարկների և բանկերի ազգայնացում: Տեղի ունեցավ հասարակության ժողովրդավարացում:

Սիրիան շատ ծանր ժառանգություն էր ստացել ոչ միայն տնտեսության, այլ նաև կրթության բնագավառում, որն արդյունք էր երկար տարիների գաղութատիրական ռեժիմի (Թուրքիայի և Ֆրանսիայի): Մրա արդյունքում Սիրիայի բնակչությունն ամբողջովին մնացել էր անգրագետ: Օսմանյան բռնապետության տարիներից Սիրիայում գործում էին միայն կրոնական և միսիոներական դպրոց-

ներ: Աշխարհիկ մասնավոր և պետական դպրոցները ի հայտ եկան միայն XIX դարի սկզբին: Օսմանյան իշխանությունը պետական դպրոցներում ուսուցումը տանում էր թուրքերեն:

Ֆրանսիական մանդատի տարիներին (1920–1944 թթ.) երկրում մտցվեց կրթության ֆրանսիական համակարգը:

Անկախ Սիրիայի Հանրապետության կրթական համակարգը որոշակիացվեց 1944 թ-ի դեկտեմբերի 21-ին ընդունած թիվ 121 օրենքով, ըստ որի՝ որդեգրվում էր հետևյալ կրթական համակարգը. տարրական, ոչ լրիվ միջնակարգ, միջնակարգ և բարձրագույն: Միջնակարգը որոշվեց 6 տարի, ոչ միջնակարգը և միջնակարգը՝ 3, միջնակարգ մասնագիտական կրթությունը՝ դարձյալ 3 տարի, մանկավարժական և մյուս ինստիտուտներում՝ 4, իսկ համալսարանում՝ 4–7 տարի:

1950 թ. ընդունած Սահմանադրության համաձայն «Տարրական դպրոցի կրթությունը» ընդունվեց որպես պարտադիր: 1944-ից արգելվեց տարրական դպրոցներում ուսուցումը տանել օտար լեզվով: Փակվեցին ֆրանսիական դպրոցները:

Բացի հանրակրթական դպրոցներից, երկրում գործում են նաև միջնակարգ մասնագիտական բարձրագույն դպրոցներ: Ուսուցիչներ պատրաստում են մանկավարժական քոլեջներում և Դամասկոսի համալսարանի մանկավարժության ֆակուլտետում: Մանկավարժական ինստիտուտի շրջանավարտներին տրվում է բակալավրի աստիճան, նրանք կարող են ուսուցիչ աշխատել ոչ լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում:

Սիրիայում գործում է երկու պետական համալսարան՝ Դամասկոսի և Հալեպի: Շրջանավարտներին տրվում է առաջին՝ բակալավրի աստիճանը և բարձրագույնը՝ (կամ II աստիճան) մագիստրոսի և դոկտորի:

Սիրիան կրթական համագործակցություն ունի մյուս արաբական երկրների հետ, ուր ուսանելու է գնում Սիրիայի երիտասարդության որոշ տոկոսը: Սիրիացի ուսանողներ սովորում են նաև եվրոպական մի քանի երկրներում՝ հատկապես Գերմանիայում և Իտալիայում: Այս ուսանողության թվի մեջ ընդգրկված են նաև հայ երիտասարդներ, որոնք իրենց բարձրագույն կրթությունը ցանկանում են

ստանալ եվրոպական համալսարաններում և հաղորդակցվել համամարդկային արժեքներին:

Սիրիայում հայերը, դասվելով ազգային փոքրամասնությունների շարքին, միշտ էլ վայելել են ու շարունակում են վայելել արաբների հյուրընկալությունը, հարգանքն ու վստահությունը: Իսկ այս հանգամանքը չափազանց կարևոր է հայ համայնքի գոյության ու նրա զարգացման համար:

Իհարկե, այս գլխում մեր նպատակը չէ հանգամանալից ներկայացնել ու վերլուծել Սիրիայի հայկական գաղութի ամբողջական պատմությունը: Դա արել են ու շարունակում են անել մեր պատմաբանները, սակայն մեր հետազոտության հիմնական նպատակին հասնելու և մեր առջև դրված խնդիրներն ամբողջական լուծելու և մտքի տրամաբանական զարգացման ընթացքն ապահովելու համար նպատակահարմար ենք գտնում համառոտակի ներկայացնել սիրիահայության պատմությունը, գաղութի ձևավորումը, զարգացումը և նրա ծավալած գործունեությունը, որը ծառայել է ու շարունակում է ծառայել սիրիահայության գոյապահպանության, սիրիահայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության համար:

Սիրիայի հայկական գաղութը ձևավորվել է դեռ շատ հին ժամանակներից՝ պատմական տարբեր ժամանակաշրջաններում կրելով տվյալ երկրում տեղի ունեցող իրադարձություններին համապատասխան կառուցվածքային, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային փոփոխություններ:

Ա. Ալպոյաճյանն իր «Պատմություն հայ գաղթականության» գրքում գրում է. «Արևելքի երկիրներում գալով Ե դարեն մինչև ԺԱ, Սուրիա, Միջագետք, Պաղեստին, Եգիպտոս, Պարսկաստան, Կեղդոնական Ասիա և այլն, Հայաստանի հետ, արաբ տիրապետութեան տակ էին մեծ մասամբ: Այդ երկրները հայ գաղթականին համար անձանոթ չէին, քանի որ այդ տեղերը գոյութիւն ունեցած էին գաղութներ, որոնք պատահած վերիվայրումներու հետևանքով թերևս ցրված էին, սակայն տեղ-տեղ ալ իրենց գոյութիւնը պահած»⁸⁶: Սիրիայի միջնադարյան հայկական գաղթավայրերից նոր ժամանակներում մնացած է ե-

⁸⁶ Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, Ա. հատոր, էջ 344:

ղել Հալեայր: Հալեայում հայերը հիմնականում զբաղվում էին առևտրով և արհեստներով՝ կոշկարարություն, դերձակություն, ջուլիակություն, ոսկերչություն, դարբնություն, ատաղձագործություն և այլն:

Սիրիայի պատմության մեջ տարբեր ժամանակներում հայերը զգալի հետք են թողել: Նրանք, Սիրիան ընդունելով իրենց երկրորդ հայրենիքը, արաբների հետ կողք կողքի լծվել են երկրի վերականգնման և զարգացման գործին՝ ընդգրկվելով հիմնականում գյուղատնտեսության, առևտրի և արհեստագործության ոլորտները:

Հալեայի հայ գաղութի մասին Ա. Սուրմեյանը գրում է. «Հալեայի, Սուրիական անապատին մեջ ցցվող այս «օվազսահին» հայ գաղութը իսկապես որ մեծ դեր խաղացած էր երկրին առևտուրին, արհեստներուն ու մշակոյթին մեջ և որքան որ Հալեայ հայութեան համար կարևոր կեղղոն մը չէր, ինչպես էին, զոր օրինակ, Վան, Կարին, Սեբաստիա, Կեսարիա և այլն, բայց և այնպես ունեցած էր ավելի քան վեց դարերու բնավ շրնդմիջված հայ-ազգային կեանք մը, ու Հալեայի պարիսպներեն մերս հայութիւնը կրցած էր պետական ու միջազգային գնահատութեանց ճոխ կեանք մը ապրիլ... Հալեայի հին հայութիւնը սկզբեն մինչև այսօր պահած էր իր այս դիմագիծը, ըլլալով խառնուրդ մը շատ մը քաղաք ու գյուղերու հայութեան, առանց բնորոշ նկարագրի, առանց նոյն սովորութեանց, բարիքներու ու նոյնատիպ մշակոյթի»⁸⁷: Հետաքրքիր տվյալներ է փաստում Հ. Թովուլյանն իր «Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն» գրքում, թե «Հալեայի հայերեն ձեռագրերի և եկեղեցիներին նվիրաբերված տարբեր իրերի հիշատակարաններից, ինչպես և հնօրյա տապանաքարերից երևում է, որ այդ քաղաքում ապրում էին Ջուղայից, Երևանից, Ղարաբաղից, Երզրումից, Երզնկայից, Բաղեշից, Սեբաստիայից, Ալանից, Մալաթիայից, Սասունից, Արաբկիրից, Ամիդից, Մարդինից, Ուրֆայից և այլ վայրերից գաղթած ամենատարբեր զբաղմունքի հայեր: Հալեայի հայկական գերեզմանատանը XVI դարից պահպանված 14 տապանաքարերից 13-ը Հին Ջուղայից գաղթած և Հալեայում «Ղարիպ մնացած» խոջաներինն են»⁸⁸:

⁸⁷ Սուրմեյան Ա., Պատմութիւն Հալեայի հայոց, Ա. հատոր, Հալեայ, էջ 6:

⁸⁸ Թովուլյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Երևան, 1986, էջ 32:

Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Սիրիայում հայ կյանքն աստիճանաբար թուլանում է, որովհետև արագընթաց կերպով տեղի էր ունենում ուծացման պրոցես: Նվազեց հայերի թիվը Սիրիայում, որոնք այլևս զգալի դեր չէին խաղում երկրի կյանքում:

1915–1916 թթ. հայկական դաժան ողբերգությունների հետևանքով «հայ բնակչության հոծ զանգվածները,— գրում է Ս. Գասպարյանը,— ապաստան են գտնում Սիրիայում: Ցրվելով երկրի քաղաքներում ու գյուղերում և օրհասական պայքար մղելով սովի և մասսայական հիվանդությունների դեմ, հաղթահարելով այլևայլ դժվարություններ՝ հայ աշխատավորական մասսաները սկսում են կառուցել իրենց նոր օջախները, հայթայթել ապրուստի միջոցներ, հիմք դնել դպրոցների ու մշակութային հաստատությունների: Հայ աշխատավորական զանգվածների համար չափազանց ծանր այդ շրջանում նրանք արժանացան արաբ աշխատավորական խավերի հյուրընկալ վերաբերմունքին»⁸⁹:

Եվ ի պատասխան իրենց հանդեպ արաբների բարյացակամ վերաբերմունքի՝ հայերը կանգնեցին նրանց կողքին երկրի և ժողովրդի համար դժվարին պահերին: Հայերն իրենց ակտիվ մասնակցությունը բերեցին անգամ արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին՝ տալով շատ զոհեր:

Սիրիայի հանրապետության նախագահ Շյուքրի Բյուֆթալին, բարձր գնահատելով հայերի դիրքը արաբ ժողովրդի ազատագրական շարժումներում, հայտարարել է. «Չափազանց զգացված են հայերու հավատարիմ կեցվածքեն... Մեր հարգանքը և վստահությունը հայերու հանդեպ համոզումի մը ուժ ունի: Դուք, որ այս երկրի հպատակներն եք 20–25 տարիներն ի վեր միայն, կվայելեք և պիտի վայելեք այն բոլոր իրավունքները, զոր արաբ ժողովուրդն ունի այս երկրի մեջ»⁹⁰:

Հետագա տարիներին և հիմա էլ սիրիահայությունը զգալի դեր է խաղում երկրի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքում:

⁸⁹ Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962, էջ 168:

⁹⁰ Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ Հատոր, Երևան, 1967, էջ 27–28:

Միրիայի հայկական գաղութը լավ կազմակերպված բնույթ ունի: Այն մի կուռ ամբողջություն է՝ ամուր կանգնած իր սկզբունքներին, հետամուտ իր որդեգրած նպատակներին՝ հանուն գաղութի զարգացման ու հայապահպանության:

Ինչպես բոլոր հայկական գաղթօջախներում, այնպես էլ Միրիայում, հայերն առաջին հերթին եկեղեցի են կառուցել՝ այն դիտելով որպես հայապահպանության կարևորագույն գործոններից մեկը:

Հայկական եկեղեցին գաղթօջախներում հայկական կյանքը կազմակերպող, ընկերային, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային խնդիրները կարգավորող և հոգևոր լույսը վառ պահող կառույց է եղել և է՝:

Միրիայում ազգային փոքրամասնությունների դավանանքը հարգվում է հավուր պատշաճի՝ ազատ թույլատրելով յուրայինների շրջանում կրոնական քարոզչություն, ծիսակատարություններ և կրոնի պատմության ուսուցում:

Ինչպես Լիբանանի, Միրիայի պետական կառույցներում նույնպես հայերը ներկայացված են ըստ կրոնական համայնքների՝ Հայ առաքելական, Հայ ավետարանական և Հայ կաթոլիկ եկեղեցիների հովանավորությամբ ու ղեկավարությամբ:

Հայկական երեք համայնքներն ունեն իրենց համապատասխան կառույցները՝ իրենց առաջնորդներով ու հավատացյալներով: Համայնքների միջև հաղորդակցության եզրեր անշուշտ կան, չնայած, ըստ մեզ, դա բավարար համարել չի կարելի, քանի որ երեք համայնքների ոչ բավարար համագործակցությունը կարող է տարանջատել ու ջլատել Միրիայի հայությանը և վնասել հայկական գաղթօջախի ամբողջականությանը, նրա կենսագործունեությանը և, թերևս, հետագա զոյության հարցին: Մեր խորին համոզմամբ սփյուռքահայությունը կարող է գոյատևել ու բարգավաճել միասնականության ու համագործակցության պայմաններում միայն, հակառակ պարագայում այն կկանգնի լուրջ ու, թերևս, անլուծելի խոչընդոտների ու դժվարությունների առջև:

Օտար հողի վրա հանգրվանելուց հետո, ինչպես վերը նշեցինք, հայության առաջին քայլը հայկական եկեղեցի կառուցելն է եղել, ո-

րին անմիջապես հաջորդել է եկեղեցուն կից հայկական դպրոցի բացումը՝ որպես մեր մայրենի լեզվի պահպանման, մատաղ սերնդին հայեցի կրթություն և դաստիարակություն տալու, նրանց մեջ ազգային ինքնագիտակցության բարձր ոգի սերմանելու և գիտության լույսը հարատև պահելու գրավական:

Մենագրության այս գլխի նպատակն է առավել հանգամանալից ներկայացնել Միրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցների պատմությունը և ներկան, նրանց ծավալված կրթամշակութային գործունեությունը՝ հանուն հայապահպանության:

Մեր նպատակներից է նաև սիրիահայության ստեղծած արժեքներին հաղորդակից դարձնել թե՛ սփյուռքի և թե՛ Հայաստանի ներկա և ապագա սերունդներին, որպեսզի դրանք գնահատվեն ըստ արժանվույն:

Բնականաբար, Միրիայի հայկական ամենօրյա դպրոցների մասին մեր գիտավերլուծական խոսքը կազմված կլինի ըստ կրոնական համայնքների՝ տալով նրանց գործունեության թե՛ ընդհանրությունները և թե՛ տարբերությունները:

§ 5.2. Միրիայի հայկական ամենօրյա դպրոցները. գործունեության առանձնահատկությունները

Միրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցների թիվն այսօր հասնում է 32-ի: Դրանք գործում են Միրիայի մայրաքաղաք Դամասկոսում, հայկական գաղթօջախի սիրտը համարվող Հալեպում, Լաթաքիայում, Յագուսիեում, Քամիշլիում, Ռաքքայում, Հասիչեում, Ռաս էլ Այնում, Թերիքում, Քեսարում: Մեկօրյա դպրոց կա նաև Դեյր էլ Չոր քաղաքում:

Վերը նշված 32 դպրոցներից 14-ը գործում է Հալեպում:

Դպրոցները գտնվում են հայկական երեք՝ Հայ առաքելական, Հայ ավետարանական, Հայ կաթոլիկ հարանուն եկեղեցիների, ազգային կուսակցությունների, բարեսիրական, մշակութային, հայրենակցական միությունների հովանու տակ: Ամենահին դպրոցները՝

Ազգային Հայկազյան վարժարանը և Հայ ավետարանական Նահատակաց միացեալ վարժարանը, թվագրվում են 1852 թվականին: Ազգային Հայկազյան վարժարանը բացվել է Հալեպում Հայ առաքելական եկեղեցու առաջնորդարանի ջանքերով, իսկ Հայ ավետարանական Նահատակաց միացեալ վարժարանը՝ Քեսաբում՝ հայ ավետարանական համայնքի կողմից: Հաջորդ դպրոցը՝ Ս. Գր. Լուսավորիչ ճեմարանը, բացվել է 1910 թվականին՝ Հայ կաթոլիկ եկեղեցու հովանավորությամբ, դարձյալ Հալեպ քաղաքում: Սրանց հետևում են Հայ քույրերի Անարատ հղության վարժարանը (1913 թ., Հալեպ), Կիլիկյան ճեմարանը (Հնչակյան կուսակցություն, Հալեպ), Սրբոց Նահատակաց վարժարանը (1922 թ., Լաթաքիա), Հայ ավետարանական (Բեթել) վարժարանը (1923 թ., Հալեպ), Ազգային Սահակյան վարժարանը (1927 թ., Հալեպ), Մխիթարյան վարժարանը (Մխիթարյան միաբանություն, 1938 թ., Հալեպ), Քարեն Եփփե ճեմարանը (1947 թ., Հալեպ), Գյուլբենկյան-Նաջարյան երկրորդական վարժարանը (ՀԲԸՄ, 1954 թ., Հալեպ) և այլ դպրոցներ Սիրիայի տարբեր քաղաքներում, ուր ապրում ու արարում է հայությունը:

Սիրիայում գործող հայկական ամենօրյա դպրոցները կրթական երեք աստիճան ունեն.

- I. Նախակրթարան՝ 1-6-րդ դդ. (մեր տարրական դպրոցն է),
- II. Միջնակարգ՝ 7-9-րդ դդ. (մեր հիմնական դպրոցն է),
- III. երկրորդական՝ 10-12-րդ դդ. (մեր ավագ դպրոցն է):

Բոլոր դպրոցները Սիրիայի կրթական համակարգի կազմի մեջ են և պարտադիր իրականացնում են պետական կրթական ծրագիրը: Բոլոր հայկական դպրոցները Սիրիայում վճարովի են, սակայն սիրիահայության մեջ անխափան գործում է մի կարգախոս՝ «Ոչ մի հայ երեխա չպետք է դուրս մնա հայկական դպրոցից կրթաթոշակի (ուսման վարձ) պատճառով»: Սոցիալապես անապահով և ոչ վճարունակ ընտանիքների երեխաները սովորում են ուսումնական վարձի ամբողջական կամ կես զեղչով: Նրանց ուսման ծախսերն իրենց վրա են վերցնում թե՛ եկեղեցիները, թե՛ բարեսիրական (ՍՕԽ, ՀԲԸՄ), մշակութային (Համագգային), հայրենակցական միությունները և թե՛ անհատ բարերարները: Մի խոսքով, ամբողջ հայ համայնքն է շա-

հագրգոված ու մտահոգված հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության խնդրով ու ամեն ճիգ ու եռանդ գործադրում է դրա լուծման համար: Սիրիահայությունը մեծ նվիրումով, միաժամանակ բարձր պատասխանատվությամբ ու հրաշալի կազմակերպվածությամբ է իրականացնում Սիրիայում ապրող հայ երեխաներին հայեցի կրթություն և դաստիարակություն տալու գործը:

Սիրիայի հայկական գաղթօջախում անձամբ լինելու ժամանակահատվածում մեր անմիջական շփումներն ու ուսումնասիրությունները սիրիահայության տարբեր բնագավառների ներկայացուցիչների՝ մտավորականների, քաղաքական, հասարակական, կրթական, մշակութային գործիչների, հոգևորականների, արհեստավորների հետ հանգեցրին այն եզրակացության, որ սիրիահայությունը, այլակրոն ժողովրդի շրջապատում գտնվելով և ապրելով հանդերձ, ամուր կապված է իր ազգային արմատներին, հավատարիմ իր ազգաշահ գաղափարներին ու նվիրումներին, նրանցում ուժեղ է ազգային ոգին, անսահման՝ անձնանվիրումը հայրենանվեր ու ազգապահպան գործերին՝ հանուն աճող սերնդի երջանիկ ապագայի:

Մինչև 1967 թ. Սիրիայի հայկական դպրոցներն ազատ էին իրենց գործունեության մեջ: Չկային որոշակի սահմանափակումներ հայազիտական առարկաների՝ հայոց լեզվի, հայ գրականության, հայ ժողովրդի պատմության և կրոնի ուսուցման գործում: Ավելին, բոլոր հայկական դպրոցների տարրական դասարաններում (նախակրթարաններում՝ իրենց մոտ) բոլոր առարկաների ուսուցումը տարվում էր հայերենով՝ ավելացրած արաբերենը և արաբերեն թվաբանությունը:

Սակայն 1967 թվականին, երկրում ռեժիմի փոփոխման հետ կապված, տեղի ունեցան լուրջ արգելքներ ու սահմանափակումներ մաս կրթական ոլորտում՝ հատկապես ազգային փոքրամասնությունների հանդեպ:

Երկրում հաստատվում են տնտեսավարման սոցիալիստական համակարգ, խիստ կարգուկանոն, նոր սկզբունքներ ու նորմեր, որոնց անհրաժեշտ էր անվերապահորեն ենթարկվել: Դրանց ենթարկվեցին մաս ազգային բոլոր փոքրամասնությունները, այդ թվում և հայերը:

Միրիահայությունը տազնապալից օրեր ապրեց: Վտանգի էր ենթարկված հայկական դպրոցների գոյությունը. կա՛ն պետք էր ենթարկվել բոլոր սահմանափակումներին, կա՛ն փակվել:

Ի՞նչ էին իրենցից ներկայացնում նոր ռեժիմի բերած արգելքներն ու սահմանափակումները կրթության ասպարեզում ազգային փոքրամասնությունների համար.

Առաջինը՝ բոլոր դպրոցներն անցան պետության ենթակայության տակ՝ արաբերեն անվանումներով:

Երկրորդ՝ բոլոր դպրոցներում նշանակվեցին արաբ տնօրեններ:

Երրորդ՝ արգելվեցին հայագիտական բոլոր առարկաների (հայոց լեզու, հայ գրականություն, հայ ժողովրդի պատմություն) դասավանդումը դպրոցներում, բացի կրոնից:

Չորրորդ՝ արգելվեց տարրական դասարաններում (նախակրթարանում) ուսուցումը կազմակերպել հայերենով:

Հինգերորդ՝ պարտադրվեց առաջինից մինչև 12-րդ դասարան ուսուցումը կազմակերպել արաբերեն, ընդհուպ մինչև կրոնի (քրիստոնեության) պատմության ուսուցումը 9-րդ դասարանում, որն ավարտվում է պետական քննությունով:

Վեցերորդ՝ պետականորեն սահմանվեց աշակերտների ուսման վճարը:

Յոթերորդ՝ բոլոր դպրոցները պետությունից ստանում են որոշակի ֆինանսավորում, ուսուցիչների վարձատրման չափը նույնպես որոշում է պետությունը:

Ութերորդ՝ բոլոր դպրոցներին պարտադրվեց պետական կրթական ծրագրերի անխափան կատարում:

Հայկական շատ դպրոցներ (նրանց ղեկավարությունները) չցանկացան ենթարկվել վերոհիշյալ սահմանափակումներին և որոշ ժամանակով փակվեցին:

Անհրաժեշտ էր տվյալ ժամանակի համար խելացի ու ճկուն քաղաքականություն վարել՝ իրավիճակից նվազագույն վնասով դուրս գալու համար: Մշակվեցին նոր մոտեցումներ և ժամանակի ոգուն համապատասխան գործելակերպ՝ հիմք ընդունելով «որոշ մասը

կորցնելով՝ ամբողջը պահպանելու» սկզբունքը: Այս տիպի առաջին քայլը կատարեցին ազգային վարժարանները՝ կտրականապես դեմ կանգնելով դպրոցները փակելու վտանգավոր գաղափարին: Որոշվեց խուճապի չենթարկվել և թույլատրված գործունեության շրջանակներում շարունակել և, ինչ գնով էլ լինի, իրականացնել հիմնական նպատակը՝ մատաղ սերնդի հայեցի կրթությունն ու դաստիարակությունը:

Երկարատև ու համառ բանակցությունների շնորհիվ հնարավոր եղավ ձեռք բերել հայկական դպրոցներում մայրենի լեզվի ուսուցման թույլտվությունը՝ այս անգամ կրթության բովանդակության մեջ այն ընդգրկելով որպես ծիսական լեզու, այսինքն՝ լեզու, որով իրականացվում են կրոնական ծիսակատարությունները, աղոթքներն ու երգերը: Ծիսական լեզվի ուսուցմանը տրամադրվեց 4 ժամ, ևս 4 ժամ՝ կրոնի համար: Սա, իհարկե, արդեն որոշակի հաղթանակ էր տվյալ բարդ իրադրության պայմաններում, սակայն շատ չնչին՝ կորցրածի համեմատ:

Ինչևէ, առաջին քայլն արված էր, անհրաժեշտ էր մտածել հետագա անելիքների, կորցրածը կամաց-կամաց հետ վերադարձնելու մասին: Ու ազգային վարժարանները, չնայած բարդ իրավիճակին, շարունակեցին իրենց կրթադաստիարակչական գործունեությունը՝ աշխատելով հայ երեխաներին, որքան հնարավոր է, պահել հայկական շրջանակներում, նրանց շուրջը ստեղծել հայկական մթնոլորտ՝ նպատակաուղղելով նրանց դեպի ազգային արժեքները՝ նրանց մեջ ազգային ինքնագիտակցության ոգին բարձր պահելու նպատակով:

Կարճատև դադարից հետո հայկական փակված դպրոցները՝ նրանց ղեկավարությունը, գիտակցելով իրենց քայլի ոչ ճշմարտացիությունը, կորցրածի չափը և ազգային վարժարանների չափազանց ճկուն ու խելացի կեցվածքը, որոշեցին վերաբացվել՝ եղած հնարավորությունների սահմաններում իրականացնելու իրենց կրթադաստիարակչական և մշակութային գործունեությունը:

Այսպիսով, Միրիայի հայկական դպրոցների գործունեությունը (պայմանները, պահանջները, սահմանափակումները) էապես տար-

բերվում է Լիբանանի հայկական դպրոցների գործունեությունից՝ այդուհանդերձ ունենալով նույն նպատակներն ու խնդիրները:

Սիրիայում գործող բոլոր հայկական դպրոցները համարվում են արաբական դպրոցներ՝ իրենց արաբական անվանումներով և ընդգրկված են Սիրիայի կրթական համակարգի մեջ:

Այստեղ հարկ ենք համարում փաստել մի հանգամանք: Սիրիայի բոլոր հայկական դպրոցներում ամեն երկուշաբթի առավոտյան դասերը միշտ սկսվում են դրոշակի արարողությամբ, այն է՝ դպրոցի ամբողջ աշակերտության, ուսուցչական կազմի, արաբ և հայ տնօրենների ներկայությամբ ավագ տեսչի հրահանգով բարձրացվում է Սիրիայի պետական դրոշը, և բոլորը երգում են պետական հիմնը: Մրանով իսկ հավաստվում է Սիրիայի Հանրապետության նկատմամբ նրա քաղաքացիների սերը, հավատարմությունը և պատրաստակամությունը նրան ծառայելու՝ ի փառս նրա ծաղկման ու բարգավաճման (հիմնի տեքստի հիմնական բովանդակությունն է): Դրանից հետո խոսք են վերցնում արաբ և հայ տնօրենները: Արաբ տնօրենը հիշեցնում է աշակերտներին իրենց պարտականությունների, դպրոցի կարգուկանոնի մասին: Հայ տնօրենը խոսում է շաբաթվա ընթացքում նախատեսված անելիքների, միջոցառումների մասին՝ խոսքի մեջ դնելով մեծ խորհուրդ ու նվիրում: Այս ամբողջ արարողակարգն ավարտելուց հետո միայն սկսվում են դասերը:

Նախակրթարանի դասարաններում (1-6-րդ դաս.) դասերը սկսվում են աղոթքով, որոշ դպրոցներում աղոթում են բակում: Երեքշաբթի օրվանից մինչև ուրբաթ առավոտվա արարողակարգը սահմանափակվում է միայն երկրի հիմնը կատարելով: Իսկ շաբաթ օրը դասերից հետո կատարվում է դրոշակը վայր իջեցնելու արարողությունը, երգվում է հիմնը: Շաբաթվա աշխատանքների արդյունքների մասին իրենց ամփոփիչ խոսքն են ասում երկու տնօրենները: Եվ սրանով ավարտվում է ուսումնական շաբաթը՝ ընդգրկելով հայության հեքը, ճիգերը, ջանքերը, փայփայած իղձերն ու երազանքները:

Հայկական դպրոցների բոլոր աշակերտները պարտավոր են լինել երկրում գործող (դպրոցներում՝ պարտադիր) աշակերտական կազմակերպությունների անդամ՝ կրելով համապատասխան փող-

կապներ ու նշաններ (դրանք, ըստ դասարանների, տարբեր գույնի են): Պարտավոր են մասնակցել նրանց համաքաղաքային հավաքներին, շքերթներին ու տոնակատարություններին՝ պահպանելով և իրականացնելով կազմակերպության դրույթները:

Սա մտովի հիշեցնում է Խորհրդային Միությունում (Հայաստանում ևս) գործող պիոներական և կոմերիտական, աշակերտական և երիտասարդական կազմակերպությունները, որոնց նմանատիպն այսօր գործում է Սիրիայում: Սա քաղաքականացված հասարակության ու պետության պահանջն է՝ տիրող գաղափարախոսությունը դեռ վաղ տարիքից աճող սերնդի մեջ սերմանելու և նրան որպես իրավահաջորդ պատրաստելու համար:

Հայկական դպրոցները պարտավոր են մասնակցելու կրթության նախարարության և քաղաքային կրթական մարմինների բոլոր միջոցառումներին. ուսուցչական հավաքներ, մեթոդական սեմինարներ, օլիմպիադաներ և այլն:

Կրթության նախարարության բոլոր ուսումնական հրահանգներն ու որոշումները պարտադիր են հայկական դպրոցների համար:

Հայկական դպրոցներն ունեն նույն կրթական աստիճանները, ինչ Սիրիայի պետական դպրոցները՝ ըստ Սիրիայի կրթության մասին օրենքի:

Միջնակարգ դպրոցի ավարտական 9-րդ դասարանի՝ բրյովեի (կրթական երկրորդ աստիճան) և երկրորդական վարժարանի (երրորդ աստիճան) ավարտական 12-րդ դասարանի՝ բաքալորեայի քննություններն անցկացնում է պետությունը՝ կենտրոնացված համակարգով: Ավարտական քննությունները կազմակերպում են քաղաքների պետական կրթական մարմինները՝ իրենց ընտրած մասնագետների միջոցով (ըստ առարկաների), պետական ծրագրերի շրջանակներում:

Բրյովեի քննության ձախողման դեպքում աշակերտը չի կարող շարունակել ուսումը երկրորդական վարժարանում (10-12-րդ դր.), իսկ բաքալորեայի քննությունը չհանձնելու դեպքում աշակերտը զրկվում է պետական ավարտական վկայականից (սերտիֆիկա-

տից), որով և շրջանավարտի առջև փակվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների դռները:

Սակայն մեկ տարի անց աշակերտին դարձյալ տրվում է հնարավորություն՝ ձախողված քննությունը վերահանձնելու: Երկրորդ անգամ անհաջողության դեպքում՝ դարձյալ թույլատրվում է երրորդ փորձը: Բայց չորս տարի անցնելուց հետո շրջանավարտին թույլատրվում է հանձնել ավարտական քննությունը՝ վերջին դասարանը կրկնելու դեպքում միայն: Սա լուրջ բարդություններ է առաջացնում շրջանավարտների շրջանում՝ տարիքային մեծ տարբերության և ստացիոնար ուսուցման դժվարությունների պատճառով: Իսկ սա վնասում է հայ երեխաների շարունակական կրթության ընթացքը և չիրականացված թողնում նրանց շատ իդձեր ու երազանքներ:

Սա է պատճառը, որ այսօր Սիրիայում բաքալորեայի և համալսարանական կրթություն ունեցողների թիվը բավականին քիչ է, որի հետևանքով էլ դպրոցներում խիստ զգացվում է կրթական բարձր աստիճաններ ունեցող կադրերի պակաս: Որակյալ, պրոֆեսիոնալ կադրերի պակասն էլ ինքնին բերում է դպրոցներում կրթության որակի անկում՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Այս ամբողջ մտահոգությունը բերել է նրան, որ սիրիահայության մեջ նույնպես արմատավորվել է մեզանում արդեն գործող երկուսը՝ բարձր դասարաններում (ավարտական) աշակերտների մասնավոր պարապմունքների հաճախումը՝ (կրկնուսույցների մոտ) որպես քննությունները հաջող հանձնելու գրավական: Սա բերում է աշակերտների մտավոր խիստ ծանրաբեռնվածության, դպրոցի վարկանիշի անկման, հայկական միջավայրում (ձեռնարկներ, հավաքներ, մշակութային կենտրոններ, մարզական խմբակներ) քիչ լինելու վտանգ, որի արդյունքում տուժում են հայ երեխան, նրա հայեցի դաստիարակությունը:

Նախակրթարանի կրթական աստիճան ունեցող բոլոր դպրոցներն ունեն իրենց առանձին համազգեստը: Միջնակարգ և երկրորդական վարժարաններում պետությունը պարտադրում է միասնական զինվորական համազգեստ (տղա, թե աղջիկ):

Բոլոր հայկական դպրոցների գործունեության ամենամեծ հաղթանակը, չնայած վերը նշված սահմանափակումներին, արգելքներին ու հսկողությանը, նրանցում տիրող ազգային բարձր ոգին է, հայ ուսուցիչների մեծ նվիրումը երեխաների հայեցի դաստիարակության դժվարին ու պատասխանատու գործին, այն էլ այն դեպքում, երբ գրեթե բոլոր դպրոցներում առկա են ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ուղեցույցների և մանկավարժական կադրերի մեծ խնդիրներ:

Ցավալի է, բայց փաստ, որ Սիրիայի հայկական դպրոցներում չեն գործում միասնական ուսումնական ծրագրեր և դասագրքեր, իսկ եղած դասագրքերի զգալի մասը չի համապատասխանում դասագրքերին ներկայացվող չափանիշներին, մի մասն էլ կարիք ունի հոգեբանամանկավարժական և մեթոդական լուրջ մշակումների:

Դասագրքերի մասին առավել հանգամանորեն կխոսվի, երբ դպրոցները ներկայացվեն ըստ կրոնական համայնքների պատկանելության:

Ինչպես արդեն նշել ենք, հայությունը Սիրիայում ներկայանում է կրոնական երեք համայնքներով՝ հայ առաքելական, ավետարանական և կաթոլիկ: Երեք համայնքներն էլ իրենց կառույցներով, ծրագրերով ու խնդիրներով, ընկերային ու կրթական հարցերի նկատմամբ մոտեցումներով բավականին տարբեր են՝ որոշ ընդհանրություններով հանդերձ:

Հայ առաքելական եկեղեցին Սիրիայում ունի իր թեմը՝ Բերիոյ թեմը, իր առաջնորդարանով, որը գտնվում է Հալեպ քաղաքում՝ սրբազան առաջնորդ գերաշնորհ Սուրեն արքեպիսկոպոս Գաթարոյանի գլխավորությամբ: Սրբազան առաջնորդը պատասխանատու է հայ առաքելական ամբողջ համայնքի համար՝ հոգևոր, ընկերային, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային բոլոր հարցերով հանդերձ: Դրանց համապատասխան էլ առաջնորդարանն ունի որոշակի կառույցներ՝ խորհուրդներ. հոգևոր, ընկերային, դատական, տնտեսական, կրթական, մշակութային և այլն: Դրանք բոլորը կոորդինացնում և ղեկավարում է թեմի սրբազան առաջնորդը:

Ազգային առաջնորդարանին են պատկանում Սիրիայում գործող 32 հայկական դպրոցներից 16-ը, որոնցից 6-ը գտնվում է Հալեպում: Հալեպում եղած 6 դպրոցներից մեկը ճեմարան է (Քարեն Եփփե), ունի միջնակարգի և երկրորդականի (ավագ դպրոց) կրթական աստիճանները, իսկ 5-ը՝ նախակրթարաններ են (տարրական դպրոցներ):

Հայ առաքելական եկեղեցու հովանու տակ գործող ազգային բոլոր վարժարանների կրթադաստիարակչական գործունեության, ուսումնական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական սեմինարների, ուսուցչական և վարչական կադրերի ընտրության ու վերապատրաստման, ուսուցման գործընթացների վերահսկողության բոլոր հարցերի կարգավորողն ու կազմակերպողն առաջնորդարանի կրթական ենթակառույցն է՝ ուսումնական խորհուրդը: Խորհրդի կազմն ու ատենապետին ընտրում է առաջնորդարանը, որին պարբերաբար հաշվետու է ուսումնական խորհուրդը:

Ուսումնական խորհուրդը համակարգում է նաև աշխատանքներն ու հարաբերությունները Սիրիայի կրթական մարմինների հետ՝ հայկական դպրոցներում պետական ծրագրերի անխափան իրականացման նպատակով: Մեկ խոսքով, սփյուռքում ուսումնական խորհուրդը, կարծես թե, կատարում է կրթության նախարարության գործառույթներ:

Ազգային առաջնորդարանի հովանավորությամբ բացված առաջին դպրոցը Ազգային Հայկազյան վարժարանն է, որը հիմնադրվել է 1852 թ., Հալեպում: Հայկազյան վարժարանը նաև Հալեպի առաջին հայկական դպրոցն է: Մինչև 1852 թ. Հալեպում եղել են հայեր՝ հիմնականում վաճառականներ, որոնց նախնիները դեռ 300 տարի առաջ են եկել Հալեպ: Գաղութի ստեղծման ու գոյության կարևոր նախադրյալներն են դիտվում հայությունը, եկեղեցին, դպրոցը: Մրանք նաև համայնքի ազգային նկարագիրը պահպանող գործոններն են, որ Սիրիայում եղել են դեռ անցյալ հարյուրամյակում և պահպանվել մինչև օրս:

Ազգային Հայկազյան վարժարանը գտնվում է Քառասուն Մանուկ եկեղեցու հարևանությամբ ու հովանավորությամբ՝ Հալեպի հին թաղամասերից մեկում:

Վարժարանն ունի միայն նախակրթարանի բաժին (տարրական-1-6-րդ դաս)՝ ներառյալ մանկապարտեզը: Աշակերտության ընդհանուր թիվը հասնում է 270-ի: Բոլոր աշակերտները հայեր են, միայն 3 երեխա՝ խառն ամուսնական ընտանիքներից:

Դպրոցում արաբ ուսուցիչներ չկան: Նախակրթարանի 1-6-րդ դասարաններում դասավանդվող բոլոր առարկաները (բացի հայոց լեզվից և կրոնից) ուսուցանվում են արաբերենով: Դասավանդողները հայ ուսուցիչներ են, որոնք կրթություն են ստացել հայկական միջնակարգ և արաբական բարձրագույն դպրոցներում:

Կրթության բովանդակության մեջ հայոց լեզվին, որպես ծիսական լեզու, հատկացված է 4 ժամ, 2 ժամ էլ կրոնի ուսուցման համար, մինչդեռ շաբաթական 21 ժամ հայ երեխայի ականջը լսում է արաբերեն (ավելացրած դրսի միջավայրը): Հետևաբար, հայ ուսուցիչներից գերագույն ճիգ ու տիտանական աշխատանք է պահանջվում 6 ժամվա ընթացքում և դասերից դուրս հայ երեխայի մեջ հայկական լեզվամտածողություն ձևավորելու համար, որն ազգային ինքնագիտակցության և ազգային ոգու պահպանման կարևորագույն գրավականներից է:

Ազգային Հայկազյան վարժարանի հայ տնօրենը վաստակաշատ մանկավարժ, Սիրիայում ճանաչված կրթական, հասարակական գործիչ օր. Ֆիմի Տեր-Հակոբյանն է: Քնքուշ ու նուրբ կնոջ մեջ ներդաշնակված են ուժեղ կամքը, բարձր կազմակերպչական հատկանիշները, նպատակասլացությունը, մարդկանց հետ վարվելու բարձր կուլտուրան: Տնօրեն-ուսուցչապետը օժտված է նաև աշակերտներին դեպի ուսումը գերելու, հաղորդած գիտելիքների հանդեպ մեծ հետաքրքրություն առաջացնելու, «կախարդական փայտիկի» միջոցով երեխաներին դասի աշխարհը խորասուզելու մեծ կարողությամբ ու վարպետությամբ:

Այս հատկանիշների տեր կի՛նը միայն, իր պրոֆեսիոնալիզմով հանդերձ, կարող է անընդմեջ 28 տարի ղեկավարել հայկական կրթո-

ջախը՝ նվիրումի, պարտքի ու պատասխանատվության բարձր զգացումներով:

28 տարվա փորձառու տնօրենը և վաստակաշատ մանկավարժն անդուլ կերպով զբաղվում է իր ինքնակրթությամբ ու զարգացմամբ: Դրա վառ օրինակը նրա ակտիվ մասնակցությունն էր Համագրայինի Սիրիայի շրջանային վարչության նախաձեռնությամբ Հալեպում բացված հայագիտական կենտրոնի դասընթացներին: Երիտասարդ ուսուցչուհիների հետ կողք կողքի նա ուսումնասիրում ու խորացնում էր իր գիտելիքները հայոց լեզվի, հայ գրականության, հայ ժողովրդի պատմության, մանկավարժության, հոգեբանության և այլ բնագավառներում: Օր. Ֆիմի Տեր-Հակոբյանն իր ամբողջ կյանքը, էությունն ու հոգին նվիրել է հայ երեխայի հայեցի կրթության ու դաստիարակության գործին, հայապահպանության գաղափարին:

Դպրոցում տիրում է կատարյալ կարգապահություն: Աշակերտությունն օրը 2 անգամ՝ դասերից առաջ և հետո, լսում է իր հարագատ տնօրենի խոսքը, նրա բարի խրատները, վայելում նրա ժպիտն ու սերը: Դպրոցում տիրում են աշակերտ-տնօրեն ջերմ հարաբերություններ ու հրաշալի համագործակցություն՝ ազատ, անկաշկանդ, փոխադարձ սիրով, վստահությամբ ու հարգանքով:

Մեկ րոպե անգամ տնօրենի աշխատասենյակի դուռը չի փակվում: Նրա խորհրդին, օգնությանն ու աջակցությանն են դիմում բոլորը՝ ուսուցիչ, աշակերտ, ծնող: Հանձնարարությունները տրվում են հստակ, պարզ՝ իրենց մեջ կրելով պահանջի, խրախուսանքի, հավատի և լավատեսության երանգներ:

Եկեղեցին և դպրոցը կարծես միասնացած լինեն: Երեխաները դեռ փոքր տարիքից սովորում են աղոթել, շարականներ երգել: Նույնիսկ շատ աշակերտներ երգում են նաև դպրաց դասում պատարագի ժամանակ:

Դպրոցում կրոնի ուսուցմանը տրված է 2 ժամ: Սակայն այս 2 ժամվա ընթացքում երեխաներին ծանոթացնում են նաև հայոց պատմության հիմնական ու կարևորագույն անցքերի (ղրվագների) հետ՝ ցանկանալով ինչ-որ ձևով լրացնել այն մեծ բացը, որ առաջացել է Սիրիայում հայոց պատմության դասավանդման արգելքի պատճառով:

Կրոնի պատմության դասագրքերը պատրաստել և գործածության մեջ է դրել Ազգային առաջնորդարանը: Կրոնն ուսուցանում են Քառասուն Մանուկ եկեղեցու քահանաները:

Ծիսական լեզվի (հայոց լեզվի) ուսուցման գործում Հայկազյան վարժարանը, ինչպես և Սիրիայի բոլոր հայկական դպրոցները, ուսուցչական կադրերի մեծ խնդիր ունեն: Իհարկե, դպրոցում կան երկար տարիների վաստակ ունեցող փորձառու ուսուցիչներ, սակայն մեծ մասը երիտասարդներ են, որոնք չունեն մանկավարժական բարձրագույն կրթություն (համալսարանական) և աշխատանքային փորձ: Շատ է երկրորդական վարժարան (միջնակարգ դպրոց) ավարտածների թիվը, նույնիսկ կան ուսուցիչներ, որոնք չեն ավարտել անգամ բաքալոբեան: Հետևաբար, նրանցում մանկավարժական գործի հանդեպ սեր ու նվիրում լինելով հանդերձ, պակասում է մասնագիտական համապատասխան գիտելիքներ, կրթական աստիճան, դասավանդման մեթոդիկա և մանկավարժական հմտություն ու վարպետություն: Իսկ սրանք այն կարևոր գործոններն են, որոնց բացակայության դեպքում վտանգվում է կրթության որակը, ուսուցման գիտականությունը: Իսկ վերջիններս անհրաժեշտ են աշակերտներին խոր ու կայուն գիտելիքների հաղորդման, նրանց աշխարհայացքի ձևավորման, անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար:

Հայոց լեզուն դպրոցում դասավանդվում է սփյուռքահայության շրջանում ճանաչված ու մեծ հեղինակություն ունեցող մտավորական, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ, բանասեր ու մանկավարժ Հակոբ Չոլաբյանի «Հայերենի դասագիրք» գրքով: Գիրքը գրված է նախակրթարանի (տարրական) 1-6-րդ դասարանների համար: Ի դեպ նշենք, որ Չոլաբյանի դասագիրքը գործածության մեջ է ոչ միայն ազգային վարժարանների, այլև Սիրիայի մյուս հայկական դպրոցների նախակրթարաններում: Չափազանց կարևոր և ուրախացնող է այն փաստը, որ սփյուռքի մանկավարժները լրջորեն զբաղվում են դասագրքաստեղծման գործով, քանի որ միանշանակ կարևոր է դասագրքի՝ դպրոցում

ուսուցման հիմնական միջոցի մեծ դերն ուսուցման գործընթացի գիտական ու արդյունավետ կազմակերպման համար:

Մեր մանրագնին ուսումնասիրություններից և հեղինակի հետ բազմաթիվ հանդիպումներից ու քննարկումներից մեզ համար պարզ դարձավ շատ կարևոր, բայց և միաժամանակ բավականին արտասովոր մի երևույթ:

Հ. Չոլաքյանի դասագիրքը նախատեսված է նախակրթարանների (տարրական) 1–6–րդ դասարանների մայրենի լեզվի դասավանդման համար: Սակայն, որպես առարկայական դասագիրք, այն չի համապատասխանում պահանջվող չափանիշներին, քանի որ դասագրքում, բացի մայրենի լեզվից, ընդգրկված են նաև արաբական պետական դպրոցների 1–6–րդ դասարաններում դասավանդվող առարկաների (թվաբանություն, անատոմիա, բուսաբանություն, աշխարհագրություն, կենդանաբանություն, երկրաչափություն) ծրագրերին համապատասխան գիտելիքներ հայոց լեզվով՝ հայերեն եզրույթներով: Չոլաքյանը, իր դասագրքում ընդգրկելով տարբեր առարկաներից տվյալ տարիքին համապատասխան գիտելիքներ, նպատակ է ունեցել եղած հնարավորության սահմաններում մայրենի լեզվի ժամերին լրացնել այն հսկայական բացը, որ առաջացել է տարրական դասարաններում բոլոր առարկաների ուսուցումը մայրենի լեզվով կազմակերպելու արգելքից: Հետևաբար, չափազանց դժվարին կացության պայմաններում, երբ հայ երեխան գրկված է իր օրգանիզմի, շրջապատող բնության (բուսական, կենդանական աշխարհ), երկրաչափական մարմինների, գույների, թվերի, չափերի, զգայարանների, աշխարհագրական հայկական անունների և այլ կարևոր գիտելիքների մասին հայերենով գաղափար ունենալու և արտահայտվելու հնարավորությունից, Չոլաքյանի այս քայլի նպատակը արդարացուցիչ է և կատարածի բացատրությունը՝ հիմնավոր ու համոզեցուցիչ: Այսինքն՝ Հ. Չոլաքյանը ցանկացել է լուծել հայ երեխայի մեջ հայկական լեզվամտածողություն ձևավորելու հարցը, որը բնականաբար, ընկած է գիտական աշխարհայացքի հիմքում և մեծ դեր է խաղում ազգային ինքնագիտակցության հարցում:

Հ. Չոլաքյանի «Հայերենի դասագիրք»-ը նման է մի փոքրիկ հանրագիտարանի, ուր հայ երեխան կարող է գտնել իր համար չափազանց հետաքրքիր նյութեր, որոնք նպաստում են նրա համակողմանի զարգացմանը:

Ի դեպ, նշենք, որ առաջին դասարանի դասագիրքը սկսվում է գրաճանաչությամբ՝ կիրառելով գրուսուցման հնչյունային մեթոդը՝ երեխաների համար պարզ, տրամաբանական ու մատչելի: Թերևս այստեղ դեր է խաղացել Հ. Չոլաքյանի ուսումնառությունը Հայաստանում (ԵՊՀ-ում), որտեղ որդեգրված է գրաճանաչության հնչյունային մեթոդը՝ մասից դեպի ամբողջը տրամաբանական ընթացքով:

Մինչդեռ սփյուռքում գործող գրեթե բոլոր հայկական մանկապարտեզներում (ընդ որում մանկապարտեզներն ընդգրկված են դպրոցի կառույցի մեջ), որտեղ կոկոն և ծաղիկ դասարաններում երեխաներին տրվում է հայերենի գրաճանաչություն, գրուսուցումն իրականացվում է գլոբալ մեթոդով, որի հիմքում ընկած է ամբողջի ընկալման սկզբունքը՝ ամբողջից դեպի մասը ընթացքով: Գրուսուցման այս մեթոդի մասին ընդհանրապես և հայկական տարբերակի մասին մասնավորապես արդեն խոսել ենք և մեր սեփական կարծիքն ենք արտահայտել չորրորդ գլխում՝ մանկապարտեզների բաժնում: Միայն ուզում ենք ընդգծել, որ մանկապարտեզներում գրուսուցումը գլոբալ մեթոդով կազմակերպելուց հետո դպրոցում հնչյունային մեթոդին անցնելը երեխաների մեջ առաջ է բերում խառնաշփոթություն, ուսուցման որակի անկում, որի ընթացքում վտանգվում է գրաճանաչության չափազանց կարևոր գործը: Մրա արդյունքին մենք ականատես եղանք՝ անձամբ հայկական դպրոցների տարրական դասարաններում պարբերաբար դասալսումներ կատարելով: Չարմանալի և տխրեցնող էր այն փաստը, որ 3–5–րդ դասարանների աշակերտները կարդում էին մեծ դժվարությամբ, նույնիսկ վանկատելով: Սա շատ էր հոգնեցնում ու միաժամանակ վանում ու հիասթափեցնում երեխաներին հայերեն ընթերցանությունից, այն էլ այն դեպքում, երբ հայերենին շաբաթական ընդամենը 4 ժամ է տրամադրված:

Գրաճանաչության կարևոր գործի նկատմամբ այսպիսի հակասական մոտեցման և նրա բացասական արդյունքների մասին մեր մտահոգությունն ու անհանգստությունն ենք հայտնել Սիրիայի հայկական դպրոցների ուսուցիչների մեծ հավաքին Հալեպում և առաջարկել մանկապարտեզներում գրուսուցումը կազմակերպել հնչյունային մեթոդով (միայն «ծաղիկ» դասարանում), որը, մեր կարծիքով չի հակասի դպրոցի որդեգրած մեթոդին և կտա առավել դրական արդյունքներ:

Վերադառնալով Հ. Չոլաքյանի դասագրքին՝ կցանկանայինք ներկայացնել նրա բովանդակությունը և կառուցվածքը: Նախակրթարանի (տարրական) առաջին դասարանի «Հայերենի դասագիրք»-ը սկսվում է գրուսուցմամբ, ընդգրկում է նաև ընթերցարանը: Գրքում զետեղված է քերականական նյութ՝ եզակի և հոգնակի թիվ, խոնարհում, դերանուն և այլն: Գիրքը կազմված է հայրենասիրական, դաստիարակչական փոքրիկ, մատչելի ու հետաքրքիր տեքստերից:

4-րդ դասարանի «Հայերենի դասագիրք»-ը ընդգրկում է ինչպես հայ պատմիչների (Խորենացի), այնպես էլ արևելահայ (Շիրազ, Վ. Դավթյան), արևմտահայ և սփյուռքահայ (Վիլյամ Սարոյան, Մուշեղ Իշխան) ճանաչված գրողների գործերը:

Գրքի կառուցվածքը՝ (1 դասի օրինակով)

1. տեքստ (ծովանկարիչ Այվազովսկին).
2. բառեր և բացատրություններ.
3. հարցումներ, հրահանգներ (քերականական).
4. ալ խմբի բայերի խոնարհումը (քերականություն), որից հետո գալիս են տարբեր բնույթի նյութեր, այսպես.
5. համեր և մարդիկ.

բուն իմաստով փոխաբերական իմաստով

կծու պղպեղ կծու խոսք

6. թվաբանություն՝ հանում,

փոքրիկ ծիծաղաշարժ պատմություն և հանման ձևակերպում, որից հետո տալիս է թվով՝ 5-2=3:

Բացի թվաբանությունից, գիրքն ընդգրկում է նաև նյութեր՝ կենդանիների, միջատների, մարմնի անդամների, երկրաչափական մարմինների, աշխարհագրության, մարդու հինգ զգայարանների մասին: Չետեղված են նաև առածներ և ասացվածքներ:

6-րդ դասարանի «Հայերենի դասագիրք»-ում ընդգրկված տեքստերը դարձյալ կազմված են հայ մեծանուն գրողների ստեղծագործություններից (Չարենց, Իսահակյան, Համաստեղ, Մուշեղ Իշխան, Շիրազ, Բաֆֆի, Չոհրապ, Ահարոնյան և այլոք):

Դասի կառուցվածքը՝

1. Տեքստ (Համաստեղ)
2. Բառեր և բացատրություններ
3. Հարցումներ և հրահանգներ
4. Քերականություն՝ **ածական**
5. Վարժություններ

Այս ամենին հաջորդում են նյութեր՝ թանկագին քարերի տեսակների, հնագիտական նյութերի, կրոնական տոների, աշխարհագրության, կենդանիների, կշռի, չափի և այլնի մասին:

Հ. Չոլաքյանի դասագրքում կրկնողական, վերարտադրողական, ճանաչողական վարժությունների կողքին անհրաժեշտ է ավելի շատ զետեղել զարգացողական, ինքնուրույն մտածողություն ձևավորող վարժություններ, որոնք կնպաստեն սովորողների տրամաբանության, վերլուծահամադրական մտածողության և ինքնուրույն աշխատանք կատարելու ունակության ձևավորմանը:

Ըստ Ազգային Հայկազյան վարժարանի տնօրեն օր. Ֆինի Տեր-Հակոբյանի՝ «ուսուցիչները չպետք է միայն հիմնվեն Չոլաքյանի դասագրքի վրա, այլ պետք է նյութի ընդլայնում կատարեն, խորանան դրա մեջ, ինչպես նաև օգտվեն Չոլաքյանի հեղինակած ուսուցչի ձեռնարկից (մեթոդական ուղեցույցից)»⁹¹:

Մեր ունեցած տվյալների համաձայն դասագրքի հեղինակը պարբերաբար Հալեպում, Դամասկոսում և այն քաղաքներում, որտեղ կան հայկական դպրոցներ, անցկացնում է մեթոդական սեմին-

⁹¹ Հարցազրույց Ազգային Հայկազյան վարժարանի տնօրեն Ֆինի Տեր-Հակոբյանի հետ, Հալեպ, մարտ, 1999.:

նարներ ուսուցիչների համար՝ օգնելով նրանց ճիշտ ճանապարհով, արդյունավետ ու ակտիվացնող մեթոդներով կազմակերպելու մայրենի լեզվի ուսուցումը: Անցկացնում է նաև օրինակելի դասեր: Ուսուցիչների հետ հետադարձ կապի պահպանումը, նրանց արած դիտողություններն ու առաջարկություններն օգնում են Չոլաքյանին՝ գիրքը վերանշակելու ու հղկելու գործում:

Իր ունեցած թերություններով հանդերձ (անհամապատասխանություն դասագրքին ներկայացվող չափանիշներին), Հ. Չոլաքյանի նախակրթարանի (տարրականի) 1–6–րդ դասարանների համար կազմած «Հայերենի դասագիրք»-ն ընդհանուր առմամբ հաջողված դասագիրք է, որը գրելիս հեղինակը հաշվի է առել Սիրիայի ներկա քաղաքական իրավիճակը, հայ համայնքի դրությունը, կրթական համակարգում տեղի ունեցած պետական սահմանափակումներն ու արգելքները, սիրիահայ երեխայի առանձնահատկություններն ու հոգեբանությունը և որդեգրած մեծ նպատակի կարևորությունը:

Ուսուցչական կադրերի հարցը Հայկազյան վարժարանում

Ընդհանրապես Սիրիայում գործող մասնավոր դպրոցներում բոլոր առարկաների համար թույլատրված է աշխատել բաքալորեայի կրթական աստիճան ունեցող ուսուցիչներին:

Հայկական դպրոցներում ուսուցիչներին աշխատանքի են ընդունում սկզբում փորձնական մեկ տարվա ժամկետով՝ որպես ուսուցչի օգնական: Մեկ տարի հաջող աշխատելու դեպքում ուսուցչի հետ կնքվում է պայմանագիր:

Հայկազյան վարժարանի ուսուցիչների մեծամասնությունը Հալեպի Քարեն Եփփե ճեմարանի շրջանավարտներն են, որոշ մասը պետական երկրորդական (միջնակարգ) վարժարանների կամ էլ պետական ուսուցչական բոլեջների, ինչպես նաև Համազգայինի Սիրիայի շրջանային վարչության Հալեպի հայագիտական կենտրոնի ունկնդիրներ և շրջանավարտներ:

Հայկազյան վարժարանում աշխատող բոլոր առարկաների ուսուցիչները հայեր են: Այս հարցում պետության կողմից պարտադ-


րանք չկա: Սակայն պահանջվում է ունենալ կրթական համապատասխան աստիճան: Տեսուչները, տնօրենը հսկում են պետական պարտադիր ծրագրի կատարումը: Ուսուցչին աշխատանքի ընդունում և ազատում է հայ տնօրենը՝ դպրոցի հոգաբարձուների խորհրդի հետ համաձայնեցնելով, նաև տեղյակ պահելով արաբ տնօրենին: Ուսուցչին աշխատանքից հեռացնելու հարց կարող է դնել նաև արաբ տնօրենը կամ կրթական մարմնի տեսուչները՝ դասալսումների հիման վրա: Այս պարագայում հայ տնօրենը պարտավոր է հարցին լուծում տալ: Դպրոցի փորձառու, վաստակաշատ մանկավարժների անցկացրած դասերը մեզ հիացրին թե՛ իրենց արդյունավետությամբ, թե՛ ուսուցչի պրոֆեսիոնալիզմով, հմտությամբ ու վարպետությամբ և թե՛ դասերի հայրենասիրական, դաստիարակչական մեծ նշանակությամբ, ազգային բարձր ոգով ու շնչով:

Արաբերենով դասավանդվող առարկաների ուսուցիչների վերապատրաստման հարցերով զբաղվում է Սիրիայի կրթության նախարարությունը՝ ժամանակ առ ժամանակ տեսամեթոդական սեմինարներ, դասընթացներ կազմակերպելով, որտեղ ուսուցիչներին ծանոթացնում են առարկայական նորություններին և դասավանդման արդյունավետ նոր մեթոդներին ու հնարներին: Այս ամենին նույնպես մասնակցում են հայ ուսուցիչները (ոչ հայագիտական առարկաների): Մեծ խնդիր ու դժվարություն ունեն հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչները (հայոց լեզու, կրոն): Վերջին տասը տարիների ընթացքում բոլորովին չէին գործում Հայաստանում ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները: Սփյուռքը մնացել էր մենակ ու անօգնական այս հարցում: Հետևաբար, ուսումնական խորհուրդը ինքն էր կազմակերպում մեթոդական սեմինարներ՝ փորձառու և վաստակաշատ ուսուցիչների ջանքերով: Եղած բացը լրացնում է նաև Համազգայինի Հալեպի հայագիտական կենտրոնը:

Ազգային Հայկազյան վարժարանի շրջանավարտներից գրեթե բոլորը շարունակում են ուսումը Քարեն Եփփե ճեմարանում: Փոքրաթիվ աշակերտներ, որոնց ուսման առաջադիմությունը շատ ցածր է, չեն շարունակում ուսումը ճեմարանում: Սակայն այստեղ ծագում է լուրջ հիմնախնդիր. չկարողանալով ուսումը շարունակել հայկական

ճեմարանում կամ հայկական երկրորդական մեկ այլ վարժարանում (Հալեպում, բացի Քարեն Եփփե ճեմարանից, գործում են ևս երկու երկրորդական վարժարաններ՝ Կիլիկյան ճեմարանը (Հնչակյաններին) և ՀԲԸՄ-ի Նաջարյան-Գյուլբենկյան կենտրոնական վարժարանը)՝ 12 տարեկան հայ երեխան, ինչպես շեշտեց տնօրեն Ֆիմի Տեր-Հակոբյանը, ստիպված հաճախում է արաբական պետական դպրոց, որտեղ, անկախ առաջադիմությունից, ընդունում են հայ երեխաներին՝ որպես իրենց երկրի քաղաքացի: Ի դեպ, այդ դպրոցներում ուսումն անվճար է: Արդյունքում, հայ երեխան հայտնվում է արաբական միջավայրում 12 տարեկանում՝ երեխայի անձի ձևավորման ու զարգացման համար ամենաբուռն ու չափազանց կարևոր մի ժամանակահատվածում: Հեռանալով հայկական միջավայրից՝ երեխան հեռանում է իր արմատներից, չի կարողանում հաղորդակցվել ազգային արժեքներին, չի շփվում իր տարիքի հայ երեխաների հետ: Իսկ արաբ երեխաների հետ ամենօրյա շփումները նրա մեջ սերմանում են օտար սովորույթներ ու վարքագիծ, օտարի հոգեբանություն, արաբական լեզվամտածողություն: Սա արդեն բացահայտ տանում է ծուլման (լեզվի, հավատքի կորուստ, խառն ամուսնություններ):

Հետևաբար, գտնում ենք, որ ճեմարանի և մյուս երկրորդական վարժարանների ղեկավարությունը հայապահպանության մեծ գաղափարը (նպատակը) պետք է գերադասի հայ երեխաների ուսման ցածր առաջադիմությունից՝ գնալով որոշ զիջումների՝ հայ երեխային պահելով հայկական միջավայրում: Հայկական միջավայրում գտնվելը, հայկական դպրոցում ուսանելը հայ երեխայի համար հայ մնալու, հայեցի կրթություն և դաստիարակություն ստանալու ամենակարևոր ու ամենաառաջնային պայմանն է ու գրավականը, փրկության օղակը: Հետևաբար, հայ ուսուցիչները պետք է ամեն ճիգ ու եռանդ ներդնեն՝ օգնելու երեխաներին՝ հաղթահարելու բոլոր այն դժվարությունները, որ առաջ են գալիս ուսուցման գործընթացում, սովորեցնեն սովորել, նրանց մեջ սեր և հետաքրքրություն սերմանեն ազգային և համամարդկային արժեքների նկատմամբ: Դրա համար «ամենակարևորը, — ինչպես իրավացիորեն ասել է երջանակահիշատակ Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսը, — ուսուցչի




Մեծ բարերար
ԳԱԼՈՒՄՍ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ




Ազգային Զայկազյան վարժարան
Յալեպ, Սիրիա



Ազգային Սահակյան վարժարան
Հալեպ, Սիրիա




Ազգային Մեսրոպյան վարժարան
Հալեպ, Սիրիա




Կրթասիրաց
վարժարան
Հալեպ, Սիրիա



Ազգային Եփրատ
միջնակարգ վարժարան
Քանիշլի, Սիրիա



Ազգային Ազատություն
վարժարան
Թերիք (Մելքիե), Սիրիա



Քարեն եփիւն ճեմարան
Հալեպ, Սիրիա

անսահման սերն ու նվիրումն է գործին, որն իր մեջ ներառում է հետևյալ բաղադրատարրերը. 1) ապրում, 2) նախանձախնդրություն, 3) ազգային շահի գիտակցում»⁹²:

Ցավոք, այսօր թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում հայ ուսուցիչներից շատերն ընթացիկ շուկայական-սպառողական կյանքի հարցերով ավելի են տարվել: Պակասել է նվիրումը, կատարած գործի կարևորության ու մեծության ապրումը, չկատարածի համար ցավելը, անհաջողության դեպքում վշտանալը:

Միանգամայն տեղին են հնչում Վեհափառ հայրապետի մտահոգությունն արտահայտող հետևյալ խոսքերը. «Հայ ուսուցիչը այսօր դարձեր է արհեստաւոր: Կը սպասէ զանգակին, որ հնչէ, որպէսզի երթայ ուսուցչարան եւ խօսի թէ այդ օրը ինչ նորոյթ կայ շուկայի մէջ: Դասարանէն դուրս ուսուցչութիւնը մեծաւ մասամբ եւ իր հարագատ կոչումով չապրուիլի մեր կեանքին մէջ: Այսօր մենք փայլը կը փնտռենք — լոյսը մոռցած ենք, շպարը կը փնտռենք — ներքին գեղեցկութիւնը մոռցած ենք, կեղելը աւելի կը խօսի, քան աւիշը, երեւնալը աւելի կ'արժէ, քան ըլլալը»⁹³: Սրանք խոսքեր են, որ այսօր բնութագրում են մեր ռեալ իրականությունը, մեր մատաղ սերնդի վաղվա օրը կերտելու, նրան հայեցի կրթություն ու դաստիարակություն տալու սուրբ գործի իրական պատկերը:

Սակայն հայ ժողովուրդը նյութականի մեջ երբեք չի գտել իր գերագույն արժեքը, քանի որ նա միշտ գիտակցել ու ամեն ինչից վեր է դասել գիրն ու գրականությունը, եղել է և է՝ արարող ու մնայուն արժեքներ ստեղծող ժողովուրդ:

Իսկ այդ գործում հայ ուսուցչությունը, հայ գրագետներն իրենց պատմական առաքելությամբ վճռորոշ դեր են խաղացել՝ պահպանելով մեր ազգային ինքնությունը, մեր մայրենին ու մեր հոգու գորությունը:

Հուսանք, որ ներկայիս դժվարությունները թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում ի գորու չեն լինի խամրեցնելու հայ ուսուցիչների այն բոցավառ ջահը, որի կենարար լույսը դարեր շարունակ ճիշտ ճանա-

⁹² Հարցազրույց Գարեգին Առաջին Ամենայն հայոց կաթողիկոսի հետ, Ս. Էջմիածին, 16 օգոստոսի, 1997:

⁹³ Գարեգին Ա. Ամենայն հայոց կաթողիկոս, Խորիէ և մտիր. Ս. Էջմիածին, 1995, էջ 254:

պարհի ուղեցույց է եղել մեր երիտասարդ սերունդների համար՝ ոսկեպսակ ունենալով մեր հայոց մշտադալար լեզուն, դարերի վրա անպատմելի սխրագործություններ կատարած լեզուն:

Արաբ և հայ տնօրենները հայկական դպրոցներում

1967 թվականից կրթական սահմանափակումներին զուգահեռ, պետությունը հսկողություն է սահմանում ազգային փոքրամասնությունների մասնավոր դպրոցների վրա: Այսօրվա դրությամբ հայկական դպրոցներում արաբ տնօրենների ներկայությունն արդեն դրավառ ապացույցն է:

Արաբ տնօրենը կրթության նախարարության նշանակած ներկայացուցիչն է՝ չորս տարի ժամանակով: Տնօրենները մեծամասամբ ԲԱԱՍ կառավարող կուսակցության անդամներ են, երկրի քաղաքական կուրսն իրականացնողները: Արաբ տնօրենը հսկում է հայկական դպրոցներում պետական կրթական ծրագրերի անխափան կատարումը և ուսուցիչների ուսումնամեթոդական աշխատանքները: Նա պատասխանատու է դպրոցում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների համար:

Ուսուցման գործընթացի անխափան աշխատանքի և ուսուցիչների մեթոդական պատրաստվածության հարցերով զբաղվում են նաև պետական կրթական մարմինների տեսուչները (բոլոր առարկաների գծով), որոնք պարբերաբար (շաբաթը մեկ, ամիսը 3–4 անգամ) դասալսումներ են կատարում հայկական դպրոցներում դասավանդվող պետական պարտադիր (ծրագրային) առարկաների ուսուցման որակն ուսումնասիրելու և անխափան ուսուցումն ապահովելու համար:

Փաստորեն հայկական դպրոցների բոլոր իրավասություններն արաբ տնօրենի ձեռքին են: Նա է ուսումնական, կազմակերպական, կարգապահական բոլոր հարցերի վերջնական որոշում ընդունողը և համապատասխան փաստաթղթերի վավերացնողը:

Իսկ ինչպիսի՞ն է հայ տնօրենի դերը դպրոցում, որո՞նք են նրա գործառույթներն ու իրավասությունները դպրոցում ընթացող ուսումնադաստիարակչական աշխատանքներում:

Պետական կրթական մարմիններում հայ տնօրենը դիտվում է որպես սեփականատիրոջ ներկայացուցիչ, այսինքն՝ քանի որ բոլոր հայկական դպրոցների շենքերը, նրանցում եղած գույքը պատկանում են որևէ հայկական եկեղեցու առաջնորդարանին կամ որևէ կուսակցության բարձրագույն մարմնին և կամ բարեսիրական, հայրենակցական միություններին, հետևաբար, որպես սեփականության (դպրոցական շենքերի) տիրոջ ներկայացուցիչ հանդես է գալիս դպրոցի հայ տնօրենը:

Սակայն, ելնելով մեր անմիջական շփումներից, տեսածից ու վերլուծություններից, մենք հանգեցինք այն եզրակացության, որ, չնայած իրավաբանորեն դպրոցի տնօրենն է արաբ պետական ներկայացուցիչը, բայց, փաստորեն, իրականում կրթադաստիարակչական բոլոր աշխատանքները համակարգում ու ղեկավարում է հայ տնօրենը՝ ունենալով մեկ գերագույն նպատակ՝ դպրոցում սովորող հայ երեխաների համար ապահովել հայեցի կրթություն ու դաստիարակություն, փոխանցել նրանց ազգային արժեքներ՝ սերմանելով նրանց մեջ ազգային ինքնագիտակցության բարձր ոգի:

Եվ այսպես, Սիրիայի հայկական դպրոցներում տիրում է երկտնօրինության իրավիճակ: Իսկ ինչպե՞ս է տեղի ունենում նրանց համատեղ աշխատանքը, ինչպիսի՞ փոխհարաբերությունների մեջ են տնօրենները, համագործակցության ինչպիսի՞ ձևեր ու եղանակներ են գործում:

Հայկական դպրոցների տնօրենների հետ՝ ունեցած գրույցներից մեզ համար պարզ դարձավ, որ արաբ և հայ տնօրենները հրաշալի համագործակցում են: Արաբ տնօրենները քաջ գիտակցում են, որ իրենք գտնվում են էությամբ ու ոգով հայկական դպրոցներում, ուր սովորողների 99%-ը հայ երեխաներ են, ուր ուսուցչական կազմի 100%-ը նախակրթարանում կամ 80%-ը՝ ճեմարանում, երկրորդական վարժարանում հայ մանկավարժներ են, վարչատնտեսական և տեխնիկական աշխատողների 100%-ը հայեր են (քարտուղարուհի,

հաշվապահ, գանձապահ, վարորդ, հավաքարար, պահակ): Այնտեղ տիրում է հայկական մթնոլորտ, հայկական ոգի, հայկական մշակույթ, քրիստոնեական հավատք, որոնք անառարկելի գործոններ են:

Նրանք հրաշալի հասկանում են դպրոցի որդեգրած նպատակներն ու խնդիրները՝ որպես իրենց երկրում ազգային փոքրամասնությունների գոյապահպանության հիմքեր:

Ուսուցչական կազմը, աշակերտությունն իրենց հուզող բոլոր հարցերը լուծում են հայ տնօրենի հետ, իհարկե, չանտեսելով արաբ տնօրենին: Հայոց լեզվից (ծիսական լեզու) և կրոնից բացի մյուս բոլոր առարկաների ուսուցման պատասխանատվությունն արաբ տնօրենի վրա է: Հետևաբար այս, ինչպես նաև կարգապահական որոշ հարցերով հայ տնօրենը և ուսուցչական կազմը խորհրդակցում են արաբ տնօրենի հետ և նրանից ստանում համապատասխան հրահանգներ և թույլտվություն:

«Ուսուցչական կազմում և աշակերտության շրջանում ծագած այս կամ այն խնդիրների, հարցերի հիմնական լուծում տվողը հայ տնօրենն է,— շեշտում է օր. Ֆիմի Տեր—Հակոբյանը: Հայ ուսուցիչներն ու աշակերտները առաջին հերթին նրան են դիմում խորհրդի կարգով, օգնության ակնկալիքով: Իսկ խնդիրն ինքնուրույն լուծելու իրավասությունը չունենալու դեպքում, հայ տնօրենը հարցն ինքն է քննարկում ու լուծում արաբ տնօրենի հետ: Իսկ արաբերեն լեզվի կամ պետական ծրագրերի հետ կապված հարցերով ուսուցիչները կարող են անմիջականորեն դիմել արաբ տնօրենին»⁹⁴:

Հայագիտական առարկաների դասավանդման վիճակի, արդյունքների, ուսուցման մեթոդների, դասագրքերի, ծագած դժվարությունների, ինչպես նաև արտադասարանական և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների (միջոցառումներ, խմբակներ, պատի թերթեր, հավաքներ, արշավներ, օլիմպիադաներ, ասմունքի, երգի, մարզական մրցումներ) հարցերով հիմնականում զբաղվում է հայ տնօրենը՝ ողջ ուսուցչական կազմի հետ միասին:

⁹⁴ Հարցազրույց Հայկազյան վարժարանի տնօրեն օր. Ֆիմի Տեր—Հակոբյանի հետ, Հալեպ, մարտ, 1999:

Օտար մարդկանց՝ հյուրերի դպրոց այցելելու մասին անպայման տեղյակ է պահվում արաբ տնօրենին: Մենք դա իմացանք հայկական դպրոցներ այցելելու ժամանակ, երբ արաբ տնօրենները ցանկություն էին հայտնում տեսնել ու գրուցել մեզ հետ՝ իմանալու համար այցի նպատակը: Որոշ տնօրեններ էլ բավարարվում էին հայ տնօրեններից ստացած տեղեկատվությամբ: Սա ևս մեկ անգամ հավաստում է այն փաստը, որ Սիրիայի հայկական դպրոցները պետության խիստ հսկողության տակ են գտնվում՝ մասնավոր լինելով հանդերձ: Նրանք (դպրոցները) գործադրում են գերագույն ճիգեր՝ նմանատիպ պայմաններում չթուլանալու, չընկճվելու և հայապահպանության գործը չվտանգելու համար:

Դպրոցում իրականացվող ցանկացած կրթական, մշակութային, մարզական միջոցառում անպայման պետք է նախապես համաձայնեցվի արաբ տնօրենի հետ, որն էլ դրանց մասին տեղյակ է պահում պետական մարմիններին: Դրական պատասխանի դեպքում միայն տնօրենը արտոնում է դրանց անցկացումը:

Ի դեպ, նշենք, որ կրոնի հետ կապված որևէ ձեռնարկի արտոնություն չի վերցվում արաբ տնօրենից, քանի որ կրոնի և ծիսական լեզվի ուսուցումը թույլատրված է կրթության նախարարության կողմից: Ավելին, առաջնորդարանը տարվա սկզբին պետությանը նախապես ներկայացնում է կրոնական տոնացույց՝ կրոնական տոները, ծեսերը կատարելու, հիշատակի օրերը (եղեռնի օրը) նշելու թույլտվություն ստանալու համար:

Իհարկե, վերը նշվածը բերում է ավելորդ լարվածություն՝ սխալ քայլ չանելու, հակասություններ չստեղծելու և որդեգրած նպատակից չեղվելու համար: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է, որ հայ տնօրենները լինեն բանիմաց, փորձառու, հավասարակշիռ, եթե անհրաժեշտ է՝ նաև դիվանագետ: Մեր անմիջական հանդիպումներն ու գրույցները Հալեպի, Դամասկոսի և Քեսաբի հայկական դպրոցների տնօրենների հետ մեզ բերեցին այն համոզման, որ նրանք բոլորն էլ իրենց գործի համար ճիշտ ընտրված կադրեր են: Հայկական դպրոցների գրեթե բոլոր տնօրենները վաստակաշատ մանկավարժներ են,

Սիրիայում ճանաչված քաղաքական, կրթական ու հասարակական գործիչներ:

Ուզում ենք միանշանակ ու համոզված շեշտել, որ հայկական դպրոցների գոյության և նրա կրթադաստիարակչական անխափան ու արդյունավետ գործունեության հարցում իրենց ծանրակշիռ մասն ունեն հայ տնօրենները՝ իրենց հայրենամանկեր ու ազգաշահ աշխատանքով: Հայ տնօրենն ապրում է դպրոցի կյանքով ու առօրյայով՝ ուսուցչական կազմի և եկեղեցու հետ միասին հնարավորին չափ պահպանելով հայկական մթնոլորտը. պարբերաբար հայրենասիրական, մշակութային, դաստիարակչական տարբեր բնույթի ձեռնարկների կազմակերպում, ազգային ավանդույթների պահպանում, ազգային արժեքների փոխանցում, (գրականություն, պատմություն, մշակույթ), քրիստոնեական հավատքի սերմանում (անմիջական կապը եկեղեցու հետ), սերտ համագործակցություն հայ ընտանիքների, համայնքի կյանքի հետ ներդաշնակության պահպանում՝ դառնալով նրա բաբախող սիրտն ու շունչը:

Ազգային վարժարաններում մեծ ուշադրություն է դարձվում կրոնական դաստիարակությանը: Կրթության բովանդակության մեջ կրոնի ուսուցումը դիտվում է որպես առանձին ուսումնասիրման առարկա և դասավանդվում է առաջին դասարանից՝ շաբաթը երկու ժամ: Մինչև 9-րդ դասարան կրոնի ուսուցումը տարվում է մայրենի լեզվով, իսկ 9-րդ դասարանում՝ կրոնի պատմությունը՝ արաբերենով, քանի որ ուսումնական տարեվերջին նախատեսված է պետական քննություն:

Բոլոր ազգային վարժարաններում երեխաների հոգևոր դաստիարակության գործն իրականացնում է Հայ առաքելական եկեղեցին իր առաջնորդարանով: Դա առավել համակարգված տեղի է ունենում դպրոցում կրոնին հատկացված ժամերին, որի ընթացքում երեխաներին ծանոթացնում են Հիսուս Քրիստոսի կյանքին, նրա քարոզներին, եկեղեցական տոներին, ծեսերին, սովորեցնում աղոթքներ, երգեր: Քանի որ Հայ առաքելական եկեղեցու պատմությունը միասնացած է հայ ժողովրդի պատմության հետ, դառնալով ազգային եկեղեցի, հետևաբար կրոնի դասերին երեխաներին ծանոթացնում են

նաև հայ ժողովրդի պատմության կարևոր դեպքերին ու դրվագներին, որտեղ իրենց անձնուրաց մասնակցությունն են բերել նաև հայ հոգևորականներն ու նրանց հովիվները: Երեխաներին ներկայացվում է հայկական եկեղեցու մեծ դերը հայապահպանության, մայրենի լեզվի, հայոց պատմության ու հայ մշակույթի լավագույն արժեքների ստեղծման ու պահպանման գործում:

Ազգային Հայկազյան վարժարանում ամեն ուրբաթ ժ. 8.00-ին (առաջին դասին) դպրոցի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարանների աշակերտները միասին գնում են դպրոցի հարևանությամբ գտնվող Քառասուն Մանուկ եկեղեցի, որտեղ նրանց համար տրվում է պատարագ (կրճատ ձևով): Մա դպրոցում անվանում են աշակերտական պատարագ, որին անմիջականորեն մասնակցում են նաև աշակերտները. երգում են շարականներ, օգնում են պատարագիչ քահանային:

Բացի կրոնի ուսուցումից, դպրոցում դասերից հետո երեխաներին սովորեցնում են նաև շարականներ: Դրա փորձերից մեկին ակամատես եղանք նաև մենք և նկատեցինք, թե ինչպիսի մեծ ոգևորությամբ էին երեխաները երգում շարականները՝ կարծես հոգու փոքրիկ մի մասնիկ դնելով դրանց մեջ:

Դպրոցում տիրում է իդեալական կարգապահություն: Դրան նպաստում են ոչ միայն յուրաքանչյուր դասարանի հսկիչը, նրա ամեն վայրկյանի աշխուրջ աշխատանքը, այլ նաև դպրոցի ընդհանուր հսկիչը (նրա պաշտոնը համապատասխանում է մեր դպրոցների դաստիարակչական գծով փոխտնօրենի պաշտոնին), տնօրենը և ողջ ուսուցչական կազմը: Նրանց միասնական ու ընդհանուր աշխատանքի շնորհիվ հայկական դպրոցում տիրում է բարձր կարգապահություն, որը, մեր կարծիքով, կրթադաստիարակչական աշխատանքների հաջողության կարևոր գրավականներից մեկն է: Այստեղ տեղին է մեջբերել չեխական հայտնի ասացվածքը. «Դպրոցն առանց կարգապահության մնան է ջրաղացի՝ առանց ջրի»: Այս ասացվածքի իրականացման կարիքն այսօր առավել շատ ունեն Հայաստանի դպրոցները, որտեղ վերջին տարիներին զգալիորեն պակասել է դպրոցն անխափան աշխատեցնող անհրաժեշտ կարգապահությունը:

Ազգային Հայկազյան վարժարանում բավականին հաջող ու արդյունավետ է համագործակցությունը ընտանիքների հետ: Միրիա-հայությունն առանձնակի ուշադրություն է դարձնում և նույնիսկ կյանքի նպատակ է դիտում երեխաների հայեցի կրթության ու դաս-տիարակության հարցը: Միրիահայ ծնողը, լինի մտավորական, թե արհեստավոր, գնում է ամեն զոհողության, որպեսզի իր զավակը մե-ծանալով պահպանի իր ազգային ինքնությունը, իր ազգային դիմա-գիծը: Իսկ դրա համար առաջնային պայմանը հայկական դպրոց հա-ճախելն է, որի անխափան ընթացքի համար անհրաժեշտ է պահել ու պահպանել, աջակցել ու օգնել հայկական դպրոցներին, ամուր կապ պահպանել նրանց հետ, քանի որ դրանք կոչված են իրականացնելու իրենց մեծ ու վսեմ և նվիրական երազանքներն ու նպատակները: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը չի սահմանափակվում միայն ծնողական ժողովներով, ինչպես դա ընդունված է մեզանում: Ամեն շաբաթ ծնողների հետ հանդիպում են դասարանների հսկիչնե-րը (դասղեկները)՝ ծնողներին ծանոթացնելով իրենց երեխաների ուս-ման առաջադիմությանը, միասին քննարկում դրա անկման պատ-ճառները և շտկման ուղիները: Տեղեկացնում են երեխաների վար-քագծի, կարգապահության, դրանց շեղումների և վերականգման հարցերի մասին: Միաժամանակ ծնողների հետ քննարկվում են նաև դպրոցին հուզող հիմնախնդիրները, նյութական դժվարությունները՝ դրանց լուծման հարցում ծնողների հնարավոր մասնակցությունը:

Դասարանների ծնողական հավաքներին մասնակցում է նաև դպրոցի տնօրենը՝ դպրոցի աշակերտների ընտանիքներին ավելի մո-տիկից ճանաչելու և արդյունավետ համագործակցության եզրեր ու ձևեր գտնելու նպատակով:

Բոլոր ծնողները՝ մտավորական, արհեստավոր, թե մեծահա-րուստ, անմիջական մասնակցություն ունեն դպրոցի առօրյա կյան-քին, տարբեր բնույթի ձեռնարկներին՝ ամեն մեկն իր չափով ու իր ձևով ներդրում կատարելով նրա անխափան ու նպատակասլաց գոր-ծունեությանը: Բավականին հաճախակի են դպրոցի տնօրենի ան-հատական զրույցները (թե՛ հեռախոսով և թե՛ անձամբ) ծնողների հետ: Լինում են դեպքեր, երբ ծնողներն իրենք են դիմում ուսուցիչնե-

րին ու տնօրենին խորհրդի կարգով՝ ընտանիքում ծագած դժվարու-թյունների, խնդիրների և դրանց ճիշտ լուծման հարցերով:

Հայկազյան վարժարանը, տնօրենի խոսքերով, սերտորեն հա-մագործակցում է նաև բոլոր շահախնդիր կազմակերպությունների և միությունների հետ, որոնք իրենց օժանդակությամբ մեծապես օգնում են դպրոցի զարգացմանը: Հայկազյան վարժարանին մշտական օգ-նություն են ցույց տալիս Ազգային առաջնորդարանը, Գյուլբենկյան ֆոնդը, Միրիայի օգնության խաչը (ՍՕԽ), հայրենակցական միու-թյունները և անհատ բարերարները:

Դպրոցում հայագիտական առարկաների դասավանդման ար-գելքի պատճառով հայոց լեզվի, հայ գրականության և հայոց պատ-մության լավագույն արժեքների հաղորդման պակասը լրացնում են սկաուտական մարմնակրթական մանկապատանեկան և երիտա-սարդական միությունները, որոնք իրենց կազմակերպած հավաքնե-րով, դասախոսություններով, մտավորականության հետ հանդիպում-ներով, հայրենասիրական միջոցառումներով կարողանում են առա-ջին հերթին հայ երեխային պահել հայկական միջավայրում՝ նրա մեջ սերմանելով ազգային ինքնագիտակցության բարձր ոգի, կամք, նպատակասլացություն, համախմբվածություն, օգնելու ունակու-թյուն, գրասրտություն և հանդուրժողականություն:

Սկաուտական մարմնակրթական միության գործունեությանը մասնակցում են դեռ շատ փոքր տարիքից՝ նույնիսկ երեք տարեկանից: Ըստ տարիքային պարբերաբաժանման՝ նրա անդամները գտնվում են տարբեր ջոկատներում, որոնք կրում են տարբեր անվանումներ, ունեն տարբեր արտահագուստներ և իրենց նշանաբանը: Շատ փոքրերը կոչ-վում են մրջնակներ, մինչև պատանեկան տարիքը՝ աղջիկները՝ արծ-վիկներ, տղաները՝ գայլիկներ, պատանեկան տարիքում՝ սկաուտ արի (տղա) և արիանուշ (աղջիկ):

Երեխաների մտավոր, ֆիզիկական, աշխատանքային, բարո-յական, գեղագիտական դաստիարակության իրականացման իսկա-կան օրրան է սկաուտական մարմնակրթական մանկապատանեկան միությունը: Նա իր գործունեությամբ խորապես նպաստում է հայ ե-

րեխայի անձի ձևավորմանն ու զարգացմանը և լիարժեք դաստիարակությանը:

Ազգային առաջնորդարանի ջանքերով 1927 թ., Հալեպում բացվում է երկրորդ նախակրթարանը՝ Ազգային Սահակյան վարժարանը: Դպրոցը գտնվում է Հալեպի հայահոծ Նոր Գյուղ թաղամասում, ուր հիմնականում ապրում են հայ արհեստավորները: Սահակյան վարժարանին հաջորդեցին Ազգային Գյուլբենկյան վարժարանը՝ 1930 թ., Ազգային Չավարյան վարժարանը՝ 1936 թ., Ազգային Մեսրոպյան վարժարանը՝ 1937 թ.: Ազգային առաջնորդարանը դպրոցներ է բացում ոչ միայն Հալեպում, այլ նաև Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում՝ Ազգային միացյալ վարժարան՝ 1929, Լաթաքիայում՝ Ս. Նահատակաց վարժարան (1922), Քամիշլիում՝ Ազգային Եփրատ վարժարան (1932), Յագուպիեում՝ Ազգային Վերածնունդ վարժարան (1929), Քեսաբում՝ Ուսումնասիրաց վարժարան (1926), Թերիքում՝ Ազգային Ազատության վարժարան (1952), Ռաս էլ Այնում՝ Ազգային Նահատակաց վարժարան (1927), Ռաքքայում՝ Ազգային Նուբարյան վարժարան (1924), Հասիչեում՝ Ազգային Մեսրոպյան վարժարան (1953), Թել Ապիատում՝ Ազգային Խորենյան վարժարան (1926):

Բոլոր այս վարժարանները նախակրթարաններ են (տարրականներ), բացի Քամիշլիի Ազգային Եփրատ վարժարանից, որն ունի նաև միջնակարգի կրթական աստիճան: Վերոհիշյալ նախակրթարանները մտնում են Սիրիայի կրթական համակարգի մեջ, նրանցում նույնպես գործում են կրթական նույն օրենքներն ու սահմանափակումները: Հայկական այս վարժարանների գործունեությունը կրթադաստիարակչական աշխատանքները համակարգում է Ազգային առաջնորդարանի ուսումնական խորհուրդը, որը գտնվում է Հալեպում: Ուսումնական խորհրդի ատենապետն ու անդամները պարբերաբար լինում են այդ դպրոցներում, տեղում ծանոթանում դպրոցի դժվարություններին ու խնդիրներին և դրանք քննարկում ուսումնական խորհրդի նիստերում:

Բոլոր նախակրթարաններում մայրենի լեզվի և կրոնի դասավանդումը տեղի է ունենում միասնական ծրագրերով, որոնք կազմում ու գործածության մեջ է դնում դարձյալ ուսումնական խորհուրդը:

Վերը թվարկած բոլոր նախակրթարաններում մայրենի լեզուն դասավանդվում է Հ. Չոլաքյանի «Հայերենի դասագիրք»-ով, իսկ կրոնը՝ Ազգային առաջնորդարանի կազմած գրքով:

Դասագրքերի ստեղծման, հեղինակների ընտրության, նրանց հետ աշխատանքային պայմանագրերի կնքման, գրքերը տպագրության երաշխավորելու, տպագրելու և դրանցով Սիրիայի բոլոր ազգային վարժարաններն ապահովելու աշխատանքներն իրականացնում է ուսումնական խորհուրդը:

Տարբեր քաղաքների ազգային վարժարանների հայոց լեզվի ուսուցիչների առարկայական, մանկավարժական և մեթոդական պատրաստության և վերապատրաստության հարցերը կազմակերպում է դարձյալ ուսումնական խորհուրդը՝ երկու ճանապարհով. կամ ուսուցչական սեմինարները կազմակերպում է Հալեպում (կենտրոնացված), կամ էլ դասագրքերի հեղինակների, վաստակաշատ մանկավարժների ուժերով սեմինարներն անցկացնում է տեղում՝ համապատասխան քաղաքում (Քամիշլի) կամ գյուղում (Քեսաբ)՝ ապահովելով ուսուցիչների և դասագրքի հեղինակների անմիջական կապն ու արդյունավետ համագործակցությունը:

Ազգային բոլոր վարժարաններում կա ուսուցչական ազգային մվիրյալների մի բանակ, որը խորությամբ գիտակցում է իր առաքելության նպատակը, կարևորությունն ու մեծ պատասխանատվությունը՝ հանդես ածող սերնդի, իր ժողովրդի ու իր հայրենիքի:

Բոլոր Ազգային վարժարաններն ունեն մեկ միասնական նպատակ՝ հայ երեխաներին տալ հայեցի կրթություն և դաստիարակություն, նրանց մեջ վառ պահել ազգային ինքնագիտակցության ոգին, ծառայել հայապահպանության գործին: Մեր անմիջական դիտումներն ու ուսումնասիրությունները հստակեցրին եղած իրական պատկերը. բոլոր վարժարանները՝ առանձին-առանձին և միասնաբար, ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում, օտար հողի վրա, այլակրոն ժողովրդի մեջ, խիստ ռեժիմի տակ, որոշակի արգելքների ու

սահմանափակումների ներքո անում են անհնարինը, գնում են գոհողությունների, որպեսզի հայ երեխաներն օտար միջավայրում մեծանան հայ՝ կապված իրենց արմատներին, հայրենիքի սիրո ու կարոտի անդուլ զգացումը միշտ վառ պահելով սրտերում և հոգիներում:

Սիրիայում պարտադիր ուսուցումը նախակրթարանն է՝ մինչև 6-րդ դասարանը: Սիրիայի կրթական համակարգում բավականին խիստ ու յուրովի է դրված երկտարեցիության հարցը:

Այսպես, եթե աշակերտը որևէ դասարանում արաբերենի տարեվերջյան քննությունից ստանում է 50 միավորից ցածր, ուրեմն ձախողված է և պարտավոր է կրկնել դասարանը: Ի դեպ, նշենք, որ Սիրիայում գործում է գիտելիքների գնահատման 100 միավորի համակարգը: Սակայն ուսումնական տարբեր առարկաների համար անցումային միավորը տարբեր է: Ինչպես վերը նշեցինք, արաբերենի համար անցումային միավորը 50-ն է, դրանից ցածր տվյալների դեպքում (40, 30 և այլն) առաջ է գալիս երկտարեցիության հարցը: Իսկ եթե աշակերտը 50-ից ցածր միավոր (40, 30) է ստացել, ասենք, անգլերենից, քվարանությունից, գիտությունից, դասարանը չի կրկնում, իհարկե, եթե մեկ առարկա է: Երեք առարկայի դեպքում անպայման կրկնում է դասարանը: Առարկաների նկատմամբ այսպիսի տարբերակված մոտեցումը, կարծում ենք, թուլացնում է երեխաների պատասխանատվությունը, զգոնությունը, աշխատասիրությունը, հետաքրքրությունն ուսման նկատմամբ:

Վերադառնալով ազգային Սահակյան վարժարանին՝ նշենք, որ այնտեղ մեծ ուշադրություն է դարձվում կրոնական դաստիարակությանը, և կրոնի ուսուցումը սկսվում է դեռ մանկապարտեզից:

Մանկապարտեզում փոքրիկները, իհարկե, չգիտեն, որ դա կրոնի դաս է, սակայն նրանց տարիքին մատչելի փոքրիկ պատմություններով, օրինակներով անուղղակի տրվում է կրոնական դաստիարակություն: Իսկ նախակրթարանում, ինչպես վերը նշեցինք, կրոնն իր դասաժամն ունի՝ ուսումնական խորհրդի պատրաստած ու հաստատած դասագրքերով: Այս դասագրքերը պատրաստված են պետական ծրագրի քրիստոնեական դասերի հետ համապատասխանեց-

ված: Պետությունը քրիստոնյա արաբ երեխաների համար արաբերենով կրոնի դասագիրք ունի պատրաստած:

«Պոտիկը առաջին դասարանին մեջ,— ըստ Սահակյան վարժարանի տնօրեն Ժիրայր Ռեիսյանի,— Մուրբ Գիրքը չի կրնար ըմբռնել, բայց կրնա հասկնալ, եթե հոն տեղ գտած շատ մը պատմությունները երբեմն մեր առօրեայ կեանքին մեջ դրված պատկերներու վերածված մատուցվի իրեն՝ Վաչիկ անունով մանկական հերոսի, անոր ընթացքին հետ համեմատեցված: Այս ձևով կրնանք իրականացնել կրոնա-բարոյական դաստիարակություն»⁹⁵:

Նախակրթարանի բարձր դասարաններում երեխաներին սովորեցնում են Հայ առաքելական եկեղեցու տոները, ծեսերը, պատարագի կարգը, նրա խորհուրդը, աղոթել, շարականներ երգել: Դպրոցներում կրոնը հիմնականում դասավանդում են քահանաները, ինչպես նաև աշխարհիկ ուսուցիչներ, որոնք կրոնն ուսուցանում են նաև կիրակնօրյա դպրոցներում՝ ունենալով համապատասխան կրթություն (բաքալորեա կամ կրոնական դասընթացների ունկնդրում):

Նախակրթարանի աշակերտների համար աշակերտական պատարագ մատուցելու գաղափարը և առաջարկը եղել է Ազգային Սահակյան վարժարանի տնօրինության կողմից: Շաբաթը մեկ անգամ՝ ուրբաթ օրերին, դպրոցի չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դասարանների աշակերտների համար կարճ տևողությամբ և մատչելի լեզվով տրվում է պատարագ: Աշակերտական պատարագի ժամանակ երեխաները հանգիստ, խաղաղ պայմաններում կարողանում են ըմբռնել ու հասկանալ պատարագի խորհուրդը՝ իրենց երգերով ու աղոթքներով անմիջական մասնակցություն ունենալով նրան: Աշակերտական պատարագի մասին կազմված են գրքույկներ: Աշակերտական պատարագները մատուցվում են ազգային բոլոր վարժարանների համար՝ նրանց կից գործող եկեղեցիներում, բացառությամբ Հայկազյան (մանչերու) ազգային վարժարանի, որի աշակերտության համար աշակերտական պատարագը մատուցվում է դպրոցի սրահում պատրաստած մատուռում և Մարաշի Ազգային Մեսրոպյան

⁹⁵ Դպրոցաբարոյց Ազգային Սահակյան վարժարանի տնօրեն պ. Ժիրայր Ռեիսյանի հետ, Դալեպ, մարտ, 1999:

վարժարանի, որի աշակերտությունը դասերը սկսելուց առաջ առավոտյան միասնաբար աղոթում է դպրոցի բակում («Հայր մեր» և «Առավոտ լուսո»):

Կրոնի դասավանդումը նպաստում է երեխաների հոգևոր և բարոյական առողջացմանը, նրա անձի ձևավորմանը: Կրոնի ուսուցման ժամանակ դեռ փոքր տարիքից երեխայի մեջ սերմանվում և դաստիարակվում են մարդասիրական, խաղաղասիրական և բարոյական այնպիսի զգացումներ, ինչպիսիք են բարությունը, խաղաղությունը, սերը, հավատը, գթասրտությունը, ցավակցումը, կամեցողությունը, հանդուրժողականությունը, փոխօգնությունը և այլն: Բոլոր ազգային վարժարանները (նախակրթարաններն ու Քարեն Եփփե ճեմարանը) տոնում են եկեղեցական տոները՝ Սուրբ Ծնունդը, Տեառն ընդառաջը, Վարդանանցը, Սուրբ Չատիկը և Վարդավառը:

Դպրոցի տնօրենները կամ հոգևոր հայրերը տոնակատարությունից առաջ հանդես են գալիս ելույթներով, որի ժամանակ նրանք հանգամանալից ներկայացնում ու բացատրում են երեխաներին այդ տոների էությունը, պատմությունը, ունեցած խորհուրդն ու արարողակարգը: Այս ամենը մոտիկից ծանոթացնում է երեխաներին մեր եկեղեցու պատմությանը, նրա տոներին, որոնք մեզ՝ հայերիս համար դարձել են արդեն ազգային տոներ և նշվում են ազգովի:

Ազգային Սահակյան վարժարանում մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, որին նպաստում են ինչպես դասարանային, այնպես էլ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներն ու պարապմունքները: Դասերից հետո աշակերտներին սովորեցնում են նվագել երաժշտական որևէ գործիքի վրա: Դպրոցն ունի իր նվագախումբը՝ լավագույն կատարող-աշակերտներից կազմված (թվով՝ 30 հոգի):

Դպրոցում հաճախակի կազմակերպվում են արվեստի տարբեր նյութերով աշակերտական ցուցահանդեսներ՝ նկարներ, քանդակներ, ձեռագործեր և այլն: Սրանք նպաստում են դեռ վաղ տարիքից երեխայի մեջ տեսնել ու զարգացնել նրա ունեցած ժառանգական այս կամ այն հատկանիշը՝ պայմաններ ստեղծելով դրանց հետագա կատարելագործման համար:

Արտադպրոցական տարբեր հետաքրքրությունների զարգացման նպատակով երեխաներին թույլ է տրվում զբաղվել տարբեր իրերի և նյութերի հավաքածուներով (մետաղադրամ, դրոշմանիշ և այլն), որի վերաբերյալ նույնպես դպրոցը կազմակերպում է ցուցահանդեսներ՝ որպես կատարած գործի գնահատում և խթան: Սրանք զերծ են պահում երեխաներին վտանգավոր զբաղմունքներից և արարքներից:

Դպրոցում ֆիզիկական դաստիարակության իրականացման համար, բացի ֆիզկուլտուրայի դասաժամերից, աշակերտությանը հնարավորություն է տրված արտադպրոցական ժամերին զբաղվել սպորտի այս կամ այն ձևով: Դպրոցում գործում են ֆուտբոլի, բասկետբոլի և մարմնամարզության խմբակներ: Անցկացվում են նաև միջդպրոցական սպորտային մրցումներ, որոնք խորապես նպաստում են երեխաների առողջության պահպանմանը՝ սերմանելով նրանց մեջ ճկունություն, տոկունություն, աշխատասիրություն, մրցակցություն, ընկերասիրություն, առավել լավին ու բարձրին ձգտելու ունակություն, վտանգը դիմագրավելու կարողություն:

Բավականին լուրջ հետաքրքրություն են ներկայացնում ազգային Սահակյան վարժարանում դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը: Դրանք չեն սահմանափակվում միայն պարտադիր ծնողական ժողովներով՝ կիսամյակը մեկ կամ երկու անգամ: Դպրոցի դռները մշտապես բաց են ծնողների առջև՝ ցանկացած հարցի կապակցությամբ, լինի դա երեխայի առօրյային վերաբերող թե՛ դպրոցում և թե՛ դպրոցից դուրս: Հաճախակի են ծնողների անհատական հանդիպումները դասավանդող ուսուցիչների, դասարանի հսկիչի (դասուցի) և տնօրենի հետ: Ժամանակ առ ժամանակ ծնողների համար դպրոցում կազմակերպվում են դասախոսություններ տարբեր թեմաներով՝ բժշկական, կրոնական, ծնող-երեխա փոխհարաբերության և այլն: Հրավիրվում են մասնագետ-ակնաբույժներ «Տեսողական հարցն աշակերտների մոտ» թեմայով դասախոսությունների: Նրանք ընդհանուր գծերով ներկայացնում են տեսողական շեղումները, բարդությունները, հիվանդությունները և մասնավորապես աշակերտների տեսողական դժվարությունները և բացատրում ծնողների

դերն այդ դժվարությունները հաղթահարելու գործում: Հրավիրվում են մանկաբույժներ, որոնք ծնողներին սպառիչ բացատրություններ են տալիս մանկական վարակիչ հիվանդությունների մասին:

Ծնողները տիկնանց միության հետ միասին կազմակերպում են տարբեր միջոցառումներ, որոնց հասույթը տրամադրվում է դպրոցի հոգսերին:


Ազգային Սահակյան վարժարանի տնօրեն պ. Ժիրայր Ռեիսյանը լավատեսորեն է տրամադրված սփյուռքի հայկական դպրոցների ապագայի հանդեպ՝ գտնելով, որ սիրիահայությունն առ այսօր բավականին զորեղ է ու կանգուն, չնայած դիմագրաված բազմաթիվ դժվարություններին, քանի որ նրանց մեջ ուժեղ է հույսն ու հավատը հայ ժողովրդի ապագայի, մայր հայրենիքի զորացման ու բարգավաճման նկատմամբ՝ հիմքում ունենալով Հայաստան-սփյուռք ամուր կապն ու համագործակցությունը՝ որպես մեկ ազգ և մեկ ժողովուրդ:

Սիրիահայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործում իր ներդրումն է բերում նաև Մարաշի ազգային Մեսրոպյան վարժարանը՝ տնօրեն Բաֆֆի Չաղլասյան (բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում): Դպրոցը հիմնադրվել է 1937 թ. մարաշցիների նախաձեռնությամբ և օժանդակությամբ՝ Հալեպի Սուրբ Խաչ եկեղեցու բակում: Հիմնադրման օրից դպրոցն ունեցել է մանկապարտեզ և նախակրթարան (կրթական առաջին աստիճանը): Առ այսօր պահպանվել է կրթական այդ մակարդակը: Դպրոցն ունի 210 աշակերտ (ներառյալ մանկապարտեզը), որից 15-ը՝ արաբ են (քրիստոնյա): Ուսուցչական կազմում կա երկու արաբ ուսուցչուհի, որոնք արաբերեն են դասավանդում 5-րդ և 6-րդ դասարաններում, երբ հայ երեխան արդեն բավականին տիրապետում է արաբերենին և կարող է հասկանալ և ազատ հաղորդակցվել նրանց հետ:

Մեսրոպյան վարժարանի ուսուցիչների մեծամասնությունն ունի բաքալորեայի (միջնակարգի) վկայական, սակայն մասնագետներ չունենալու պատճառով աշխատում են նաև բրյովեն ավարտածները (մեր ութամյա կրթությունը):



ՔԱՐԵՆ ԵՓՓԵՆ՝
հայ ժողովրդի մեծ բարեկամը
Չալեպ, Սիրիա



Քարեն Եփփե ճեմարանի աշակերտները քիմիայի լաբորատորիայում
Չալեպ, Սիրիա




Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ կաթողիկոսի հանդիպումը Չալեպի Քարեն Եփեմ ճեմարանի աշակերտության հետ



Քարեն Եփեմ ճեմարանի աշակերտները համակարգչային սենյակում
Չալեպ, Սիրիա



Քարեն Եփեմ ճեմարանի աշակերտները գրադարանում
Չալեպ, Սիրիա



Միսիթարյան վարժարան
Հալեպ, Սիրիա

«Վաստակաշատ ուսուցիչները մեր դպրոցի ամուր սյուներն են, նրանց փորձը, գիտելիքները, հմտությունը, խոհեմությունն ուսանելի են երիտասարդ ուսուցիչների համար»,— ասում է դպրոցի տնօրեն Բաֆֆի Չաղլասյանը ⁹⁶:

Դպրոցի շրջանավարտների միայն 30%-ն է շարունակում ուսումը Զարեն-Եփփե ճեմարանում: Մնացած մասը կամ գնում է պետական դպրոց, կամ ուսումնարաններ՝ արհեստներ սովորելու համար:

Մեսրոպյան վարժարանը աշակերտական պատարագ չունի: Այս դպրոցում նախքան դասերի սկսվելը բակում բոլոր աշակերտները միասին աղոթում են «Հայր մեր»-ը և «Առավոտ լուս»-ն: Տարին երկու անգամ դպրոցի աշակերտները հաղորդվում են եկեղեցում՝ Սուրբ Ծննդյան և Հարության տոներին:

Դպրոցն ունի հոգաբարձուների խորհուրդ, որի իրավասություններից են՝ տնօրեն նշանակել ու ազատել, տնօրենի ներկայացրած ուսուցիչների թեկնածությունները վավերացնել, հոգալ դպրոցի ֆինանսական հարցերը (դպրոցի տարբեր բնույթի ծախսեր, ուսուցիչների աշխատավարձ, աշակերտների կրթաթոշակի զեղչերի մարում և այլն): Դպրոցի տնօրենը հաշվետու է հոգաբարձուների խորհրդի առջև՝ կատարած աշխատանքների և դպրոցի վիճակի մասին:

Հոգաբարձուների խորհրդի կազմում ընդգրկված են և՛ մասնագետներ, և՛ հոգևորականներ, և՛ գործարար-բարերարներ, որոնց նվիրյալ աշխատանքի և միասնական ջանքերի շնորհիվ է պահվում հայկական դպրոցը՝ երկրի սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում:

Մեսրոպյան վարժարանում մեծ է անվճար կամ զեղչով սովորող աշակերտների թիվը, որոնց կրթաթոշակի վճարն իր վրա է վերցնում դպրոցը: Այսպես, դպրոցի աշակերտության 40%-ը սովորում է անվճար, 40%-ը՝ զեղչով, վճարում է ընդամենը 20%-ը: Դպրոցն այս բացը լրացնում է բարերարների օժանդակության, նվիրատվությունների, կազմակերպած տարբեր միջոցառումներից եկած հասույթների միջոցով: Օգնում է նաև եկեղեցին:

⁹⁶ Հարցազրույց Մարաշի Ազգային Մեսրոպյան վարժարանի տնօրեն պ. Բաֆֆի Չաղլասյանի հետ, Հալեպ, մարտ, 1999:

Դպրոցն ունի տիկնանց հանձնախումբ, որը նույնպես աջակցում է դպրոցին: Տիկնանց միության անդամներ են և՛ ծնողները, և՛ դպրոցի շրջանավարտները: Տիկնանց հանձնախումբը կազմակերպում է տարբեր բնույթի ձեռնարկներ՝ Ամանորի տոնախմբություն, պարահանդեսներ, ճաշկերույթներ, ցուցահանդես-վաճառքներ, որոնցից եկած ամբողջ հասույթը տրամադրվում է դպրոցին: Բոլոր այս միջոցառումները խորապես նպաստում են ընտանիք-դպրոց համագործակցությանը:

Մեսրոպյան վարժարանի տնօրեն պարոն Բաֆֆի Չաղլասյանը դեմ է մանկապարտեզում երեք լեզուների գրաճանաչությանը՝ հայոց լեզու, արաբերեն և անգլերեն կամ ֆրանսերեն: Նա դեմ է մանկապարտեզի կոկոն դասարանում երեխաներին (4 տարեկան) գրել ուսուցանելուն, ավելին՝ նրանց տնային հանձնարարություններով ծանրաբեռնելուն: Մենք լիովին կհսում ենք պ. Չաղլասյանի կարծիքը, և մեր տեսակետն ու խնդրո առարկայի վերլուծությունը ամենայն մանրամասնությամբ ու խորությամբ ներկայացրել ենք 4-րդ գլխում: Միայն այստեղ հարկ ենք համարում շեշտել, որ մանկապարտեզներն իրենց դերով ու գործառույթներով կոչված են իրականացնելու երեխաների անձի ձևավորման, զարգացման և դաստիարակության գործընթացները՝ նախապատրաստելով նրանց դպրոցին, որին էլ վերապահված է կազմակերպելու երեխաների կրթադաստիարակչական նպատակալաց ու համակարգված դժվարին և պատասխանատու գործը:

Պ. Չաղլասյանը, դեմ լինելով մանկապարտեզում գրուսուցմանը, չի կարողանում այն արգելել, որովհետև մյուս բոլոր դպրոցներում դա իրականացվում է, կրում է ընդհանուր բնույթ:

Խորհրդային տարիներին Մեսրոպյան վարժարանը գործածել է Հայաստանից ուղարկված սփյուռքի համար գրված հայոց լեզվի դասագրքերը: Անկախացումից հետո Հայաստանը դադարեցրել է դասագրքերի առաքումը՝ մեզ բոլորիս հայտնի պատճառներով:

Դպրոցում դասարանների միջև կազմակերպվում են առարկայական, մարզական ու զարգացողական մրցումներ:

Երեխաները դպրոցից հետո մասնակցում են սկաուտական

մարմնակրթական միության գործունեությանը՝ «Վասպուրականի» (մարաշցիների) խմբում: Այստեղ տարբեր դասախոսություններով ու միջոցառումներով լրացվում է երեխաների դաստիարակության շատ հարցեր, որոնք չի կարողանում լուծել դպրոցը:

Դպրոցի բոլոր աշակերտները, ինչպես վերը նշել ենք, պարտադիր կերպով անդամ են Միրիայում պետականորեն գործող մանկական-աշակերտական միությունների (պիոներական կազմակերպության մի տեսակը):

Երկրորդական վարժարաններում, ճեմարաններում աշակերտներն անդամակցված են պատանեկան կազմակերպության շարքերը (կոմերիտական կազմակերպության մի տեսակը): 7-րդ դասարանից մինչև 12-րդ դասարանի բոլոր աշակերտները՝ տղա թե՛ աղջիկ, կրում են զինվորական արտահագուստ:

Համալսարաններում գործում է ուսանողական երիտասարդական կազմակերպությունը: Մրանք բոլորը երկրում իշխող ԲԱԱՍ կուսակցության օղակներն են, որտեղ պատրաստվում ու թրծվում են կուսակցության ապագա մարտիկները:

Մարաշի հայրենակցական միության և ազգային Մեսրոպյան վարժարանի տնօրինության կողմից, ինչպես նշեց պ. Չաղլասյանը, նախատեսված էր կապեր ստեղծել Երևանի Մարաշի միջնակարգ դպրոցի հետ, սակայն Հայաստանի համար ծանր ժամանակները հնարավորություն չտվեցին իրականացնելու այս համագործակցությունը՝ դառնալու քույր դպրոցներ: Սա Հայաստան-սփյուռք կրթության ոլորտում համագործակցության մի ձև է, որը հնարավորություն կտա մոտիկից ճանաչելու կրթական համակարգերը և ծանոթանալու այն արժեքներին, որ տարիներ շարունակ ստեղծվել են թե՛ Հայաստանում և թե՛ սփյուռքում:

Դեռ խորհրդային տարիներին սիրիահայ շատ երիտասարդներ (մի քանի սերունդ) իրենց ուսումը ստացել են Հայաստանի տարբեր բուհերում, մասնավորապես Երևանի պետական համալսարանում, պոլիտեխնիկական ինստիտուտում (ներկայիս ճարտարագիտական համալսարան), բժշկական ինստիտուտում և Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում: Հայրենի բարձրագույն

կրթօջախներում ձեռք բերելով նախասիրած մասնագիտությունները, գինվելով խոր ու կայուն գիտելիքներով, ներշնչվելով հայրենիքի ոգով, խանդավառված ու ոգևորված՝ նրանք վերադարձել են Սիրիա՝ այնտեղ իրենց գիտելիքներն ու կարողություններն ի սպաս դնելու հայ համայնքի բարգավաճմանը, երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության և հայապահպանության գործին:

Ազգային վարժարաններից (նախակրթարաններից) շենքային բացառիկ պայմանների մեջ է գործում ազգային Գյուլբենկյան վարժարանը՝ տնօրեն պ. Վահե Ժամագործյան (բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում):

Գյուլբենկյան վարժարանը հիմնադրվել է 1930 թ. Հալեպում լոնդոնահայ ազգային բարերար Ներսես Գյուլբենկյանի հովանավորությամբ: Դպրոցն անվանակոչվել է Ներսես Գյուլբենկյանի որդու՝ Պողոս Գյուլբենկյանի հիշատակին:

1940 թ. վարժարանն անցնում է Ազգային առաջնորդարանի հովանավորության տակ՝ ստանալով նրա գորակցությունն ու աջակցությունը:

1949–50 թթ. դպրոցը տեղափոխվում է Հալեպի Սուլեյմանիե թաղամաս: 1936–45 թթ. դպրոցի ներսում գործում է Սերովբե Գյուլբենկյանի արհեստից վարժարանը: 1997 թ. հուլիսին Սուլեյմանիե թաղամասում կատարվում է Գյուլբենկյան վարժարանի նորակառույց արդիական շենքի բացումը, որին անձամբ մասնակցում էր Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Առաջին կաթողիկոսը:

Շենքն ունի կրթօջախի համար բոլոր հարմարությունները, նաև մանկապարտեզային մասնաշենք:

Պ. Գյուլբենկյան ազգային վարժարանն ունի նախակրթարանի կրթական աստիճանը՝ 1–6-րդ դասարաններ, ներառյալ մանկապարտեզը: Աշակերտության ընդհանուր թիվը հասնում է 390-ի:

Դպրոցի աշակերտությունն ամբողջովին հայեր են: Սովորում են նաև խառն ամուսնությունների երեխաներ: Նրանց համար նույնպես պարտադիր է բոլոր հայագիտական առարկաների դասերին մասնակցելը:

Դպրոցի ուսուցչական կազմը ամբողջապես հայեր են: Արաբներն և արաբերենով դասավանդվող բոլոր առարկաները հայ ուսուցիչներն են ուսուցանում: Ուսուցչական կադրերի ընտրության հարցերով հիմնականում զբաղվում է Ազգային առաջնորդարանի ուսումնական խորհուրդը՝ խորհրդակցելով դպրոցի տնօրենի հետ: Ուսուցչին աշխատանքի ընդունելու հստակ կարգ է մշակված, որոշակիացված են չափանիշները: Ընտրված կադրերին ուսումնական խորհուրդն ուղարկում է տնօրենի մոտ՝ զրույցի: Դրական կարծիքի դեպքում տվյալ անձնավորությանը մեկ տարով՝ որպես փորձնական շրջան, վերցնում են աշխատանքի՝ որպես ուսուցիչ: Տնօրինությունը և ուսումնական խորհուրդը կատարում են դասալսումներ: Մեկ տարի հաջող աշխատելու դեպքում միայն տվյալ ուսուցչին վերցնում են հիմնական աշխատանքի:

Ուսուցիչը նախակրթարանում, ինչպես նշում է տնօրեն պ. Վահե Ժամագործյանը, նվազագույնը պետք է բաքալորեայի (միջնակարգի) վկայական ունենա: Համալսարանական մասնագիտական և մանկավարժական վկայականներ ունենալու դեպքում, իհարկե, նախապատվությունը տրվում է նրանց: Գյուլբենկյան վարժարանի ուսուցչական կազմում չորսն ունի համալսարանական, իսկ մնացածը՝ բաքալորեայի վկայականներ:

Դպրոցն ունի հոգաբարձուների խորհուրդ, որի անդամները գաղութի ճանաչված անձնավորություններ են, որոնք կրթական գործին նվիրված կամավորներ են: Հոգաբարձուների խորհրդի ժողովներին տնօրենը պարբերաբար զեկուցում է դպրոցի խնդիրների, աշխատանքների ու կարիքների մասին:

Դպրոցն ունի նաև ծնողական խորհուրդ: Վարժարանի տնօրեն Վահե Ժամագործյանի խոսքերով՝ «Ծնողական խորհուրդն իր առաջարկություններով ոչ միայն նպաստում է դպրոցի զարգացմանն ու վերելքին, այլև իր անմիջական ներդրումը բերում դպրոցի բոլոր միջոցառումներին՝ սկսած մանկապարտեզի սննդի մատակարարման ծրագրերից, տնտեսական խնդիրներից մինչև համակարգիչների աշխատանքների հարցերը»⁹⁷:

⁹⁷ Հարցազրույց Ազգային Գյուլբենկյան վարժարանի տնօրեն Վահե Ժամագործյանի հետ, Հալեպ, մարտ, 1999:

1999 թ- ի նոր տարվա նախօրյակին ծնողական խորհուրդը հրատարակել էր մի գրքույկ, որտեղ զետեղված են վարժարանի բոլոր ծնողների անվանացանկը, նրանց տվյալներն ըստ մասնագիտությունների, հեռախոսի համարները: Գրքույկի սկզբում զետեղված են հետևյալ խոսքերը. «Երբ մեկս միուսիս օգտակար դառնանք, անպայմանորեն օգտակար դարձած կըլլանք մեր վարժարանին և մեր հավաքականութանը»⁹⁸:

Գյուլբենկյան վարժարանի կրթության բովանդակությունը և ուսումնական ծրագրերը նույն են, ինչ մյուս ազգային վարժարաններում (նախակրթարաններում): Այստեղ նույնպես հայոց պատմությունը դասավանդվում է կրոնի և մայրենի լեզվի դասաժամերին (իհարկե հատվածաբար): Իսկ բաց թողած նյութերը լրացվում են արտադասարանական և արտադպրոցական ձեռնարկների ժամանակ:

Դպրոցն ունի ծրագիր՝ կրթության բովանդակության մեջ «Համակարգչի ուսուցումը» մտցնել որպես առանձին առարկա: Ըստ տնօրենի՝ համակարգչային ուսուցումը կարելի է սկսել նույնիսկ առաջին դասարանից (ներկել, խաղեր):

Դպրոցում հետաքրքիր միջոցառումներ են կազմակերպվում, որոնք, նպաստում են հայ երեխաների զարգացման և դաստիարակության գործին: Վարժարանում անցկացվում են մրցումներ հայոց այբուբենի լավագույն հնչողի հայտնաբերման համար: Սա նպաստում է ոչ միայն գրաճանաչությանը, այլ նաև ուղղագրությանը, քանի որ տառի ճիշտ հնչեցնելը ճիշտ գրության նախապայմանն է: Հաղթողին մրցանակով պարգևատրում է ուսումնական խորհուրդը:

Ներդպրոցական մակարդակով կազմակերպվում են աշակերտական ցուցահանդեսներ, որտեղ ներկայացվում են աշակերտների ամհատական հավաքածուները: Արտադասարանական միջոցառումների մի ամբողջ շարք է տեղի ունենում դպրոցում՝ ասմունքի, երգի, պարի մրցումներ, Նոր տարվա հանդես՝ դասարան առ դասարան: Իսկ ասմունքի և երգի միջդպրոցական մրցումները կազմակերպում է ուսումնական խորհուրդը, որին մասնակցում են 4-6-րդ դասարանների աշակերտները:

⁹⁸ Ազգային Գյուլբենկեան վարժարան, Հալեպ, դեկտեմբեր, 1999:

Գյուլբենկյան վարժարանում գոյություն ունի հատուկ մատյան, ուր գրանցված են բոլոր աշակերտների նախասիրությունները: Դպրոցը որդեգրել է մի սկզբունք. յուրաքանչյուր աշակերտ, ըստ իր նախասիրության ու ցանկության, պետք է ընդգրկված լինի որևէ խմբում, պետք է իր օգտակար զբաղմունքն ունենա. մեկը՝ մարզանք, մյուսը՝ երգչախումբ, երրորդը՝ համակարգիչ և այլն:

Դպրոցը լավ սովորողի, լավ մարզիկի, լավ նկարողի համար ունի հատուկ խրախուսանքներ՝ մրցանակներ: Նկարչական լավ ձիրք դրսևորած աշակերտները հաճախում են Համազգայինի Արշիլ Գորկու անվան արվեստանոց՝ ունեցած տվյալները խորացնելու համար: Համազգայինը, բացի նկարչանոցից, ունի նաև պարախումբ, երգչախումբ (Մեսրոպ Մաշտոց) և երաժշտանոց (երաժշտական դպրոց):

Ազգային Գյուլբենկյան վարժարանն իր քայլերն է կատարում նաև Հայաստան-սփյուռք համագործակցության գործում: Դպրոցի աշակերտությունը նամակագրական կապ ունի Հայաստանի դպրոցների աշակերտների հետ:

Արցախյան ազատամարտի տարիներին դպրոցի աշակերտները մեծ խանդավառությամբ ու հոգածությամբ Արցախի երեխաներին են առաքել խաղալիքներ և գրեճական պիտույքներ:

Միանգամայն ճշմարտացի են հնչում ազգային Գյուլբենկյան վարժարանի տնօրեն Վահե Ժամագործյանի հետևյալ խոսքերը. «Սփյուռքի մեջ ապրող, մտածող պատանին ասելիք ունի այսօրվա Հայաստանին, ներդրվող ուժ ունի նրան տալու: Նրան պակասողն այսօր լազերային ճառագայթների նման Հայաստան-սփյուռք կապն է՝ Երևանից սկսած մինչև բոլոր գաղթօջախները: Եթե մենք կարողանանք՝ ամրացնել այդ կապը, աշխարհի ամենահզոր պետություններից մեկը կլինենք: Յուրաքանչյուր հայ ապագայի նկատմամբ տեսիլք պետք է ունենա»⁹⁹:

Միրիահայ երեխաների հայեցի կրթության և դաստիարակության գործում իր արժեքավոր ներդրումն ունի ազգային Չավարյան

⁹⁹ Հարցազրույց Ազգային վարժարանի տնօրեն Վահե Ժամագործյանի հետ, Հալեպ, մարտ, 1999:

վարժարանը (տնօրենն վաստակաշատ մանկավարժ, համայնքում ճանաչված ազգային, կրթական գործիչ Հովհաննես Մուշեղյան):

Վարժարանը հիմնադրվել է 1925 թ. Հալեպի Բամատանիեթ քաղամասում՝ վարժու տան մեջ: Սկզբում դպրոցն անվանվել է Ներսիսյան վարժարան: 1932-ին վարժարանը փոխադրվել է Հալեպի Նոր Գյուղ քաղամասի Չափահաս Որբերի Կայանը: 1936 թ. ազգայինների կողմից դպրոցը վերահաստատվել է որպես Չավարյան վարժարան՝ Հայ հեղափոխական դաշնակցության հիմնադիրներից մեկի՝ Սիմոն Չավարյանի անունով:

Սկզբում դպրոցը եղել է հողաշեն: 1964-ին սկսվել է դպրոցի նոր շենքի կառուցումը: 1965-ին տեղի է ունեցել դպրոցի նոր շենքի բացումը, ուր առ այսօր հայեցի կրթություն ու դաստիարակություն են ստանում հազարավոր հայ երեխաներ: Դպրոցն ունի նախակրթարանի կրթական աստիճանը՝ 1-6-րդ դասարան: Դպրոցի աշակերտության ընդհանուր թիվը, ներառյալ մանկապարտեզը, հասնում է 490-ի, իսկ միայն դպրոցը՝ 310-ի: Յուրաքանչյուր դասարանում աշակերտության թիվը հասնում է 28-30-ի:

Տնօրեն Հովհաննես Մուշեղյանի խոսքերով վերջին հինգ տարիների աշակերտության թիվը կայուն է, զգացվում է որոշ աճ՝ 10-20 աշակերտով: Կտրուկ փոփոխություններ չկան: Իսկ 10-15 տարի առաջ, երբ հայ ընտանիքները բազմազավակ էին (4-5 երեխա՝ յուրաքանչյուր ընտանիքում), դպրոցի աշակերտության թիվը նույնիսկ հասել է 570-ի: Աշակերտության թվի որոշակի նվազումը բացատրվում է հայ ընտանիքներում ծնելիության պակասով:

Ազգային Չավարյան վարժարանում, ինչպես Ազգային առաջնորդարանի մյուս նախակրթարաններում, շաբաթական 7 ժամ դասավանդվում են հայագիտական առարկաներ՝ հայոց լեզու (ծիսական) և կրոն, իսկ մնացած 29 ժամը՝ արաբերենով պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, աշխատանք, հիգիենա, երգ, ֆիզկուլտուրա և արաբերեն:

Առաջին և երկրորդ դասարաններում – 4 ժամ հայոց լեզու, 2 ժամ կրոն:

Երրորդից վեցերորդ դասարաններում – 4 ժամ հայոց լեզու և 3 ժամ կրոն:

Հայոց լեզուն ուսուցանվում է Հակոբ Չոլաքյանի «Հայերենի դասագիրքս»-ով, որի մասին արդեն հանգամանալից խոսվել է: Արաբերենով դասավանդվող բոլոր առարկաների դասագրքերի տպագրությունը պետությունն է իրականացնում և չնչին վճարով բաժանում դպրոցներին:

Վարժարանում կազմակերպվում են համակարգիչների ուսուցման դասընթացներ՝ որպես առանձին ուսումնական առարկա 5-6-րդ դասարաններում:

Դպրոցն ունի հարուստ գրադարան, ուր զետեղված է մեծաքանակ գրականություն և՛ արևելահայերենով, և՛ արևմտահայերենով:

Ազգային Չավարյան վարժարանն էլ, մյուս նախակրթարանների մնան, ունի արաբ տնօրեն՝ պետության ներկայացուցիչը դպրոցում, որի գործունեության, դպրոցում ունեցած դերի, կատարած գործառույթների, նրա և հայ տնօրենի փոխհարաբերության և համագործակցության մասին արդեն հանգամանորեն խոսվել է մյուս նախակրթարանները ներկայացնելիս:

Պետական կրթական մարմինների առարկայական տեսուչները (մանկապարտեզների համար նույնպես) պարբերաբար (շաբաթը կամ 15 օրը մեկ անգամ) ստուգում են դպրոցում ուսուցման գործընթացի արդյունավետությունը և պետական ծրագրերի կատարումը: Դասալսումների ժամանակ տրվում են նաև մեթոդական ցուցումներ և խորհուրդներ: Նրանց հետ դասալսումներին մասնակցում է նաև արաբ տնօրենը:

Դպրոցի աշակերտական ողջ կազմը հայեր են: Կան նաև խառն ամուսնությունների երեխաներ: Այս երեխաները պարտադիր մասնակցում են հայոց լեզվի և կրոնի դասերին:

Ուսուցչական կազմը նույնպես ամբողջովին հայեր են: «Հինգ-վեց տարի առաջ, — նշում է տնօրենը, — ուսուցիչների ընտրութեան, աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու հարցերով կզբաղվեին դպրոցի հոգաբարձուների խորհուրդը և տնօրենը

միասնաբար: Արդեն վեց տարի է, ինչ ուսումնական խորհուրդը ստանձնած է այս պարտականությունը»¹⁰⁰:

Իսկ դպրոցի տնօրենին նշանակում է Ազգային առաջնորդարանը, անձամբ սրբազան հայրը:

Դպրոցն ունի հոգաբարձուների խորհուրդ, որի անդամներին դարձյալ ընտրում և նշանակում է Ազգային առաջնորդարանը: Խորհրդի կազմում ընդգրկված են մանկավարժներ, բժիշկներ, տնտեսագետներ, գործարար մարդիկ, որոնք հոժարաբար իրենց ուսերին են վերցնում դպրոցի հոգսերը լուծելու, դպրոցը կանգուն պահելու պատասխանատու գործը:

Ըստ պարոն Մուշեղյանի՝ գործում է տնօրեն-հոգաբարձուների խորհուրդ ներդաշնակ ու արդյունավետ համագործակցություն: Ըստ դպրոցի ունեցած վերջին տասը տարիների վիճակագրական տվյալների՝ շրջանավարտների երկու երրորդն է ուսումը շարունակում երկրորդական վարժարանում՝ հիմնականում Քարեն Եփփե ճեմարանում և Գյուլբենկյան-Նաջարյան երկրորդական վարժարանում, իսկ մեկ երրորդը բավարարվում է նախակրթարանով: Շատ չնչին է պետական միջնակարգ դպրոցներում ուսումը շարունակողների թիվը՝ տարին 3-4 և հիմնականում էլ խառն ամուսնությունների երեխաները: Երբեք Սիրիայում նյութականը պատճառ չի հանդիսացել հայ երեխայի պետական դպրոց հաճախելուն:

Համայնքն ամեն ճիգ գործադրում է հայ երեխաներին հայկական միջավայրում, հայկական մթնոլորտում պահելու, ազգային դիմագիծը պահպանելու և ազգային ոգի սերմանելու համար՝ նույնիսկ իր վրա վերցնելով սովորող երեխաների մեծամասնության ուսման ծախսերը: Մա ևս մեկ անգամ վկայում է, որ սփյուռքահայ մեր հայրենակիցների մեջ չափազանց գորեղ է ազգային ոգին, բարձր՝ ազգային ինքնագիտակցությունը, ազգային մտածողությունն ու հոգեբանությունը, ամուր է մեր արմատներին ունեցած կապվածությունը, որոնք սրբորեն փոխանցվում են մոր սերունդներին՝ նրանց տալով հայեցի կրթություն և դաստիարակություն:

¹⁰⁰ Հարցազրույց Ազգային Չավարյան վարժարանի տնօրեն Դով. Մուշեղյանի հետ, Հալեպ, մարտ, 1999:

Ազգային Չավարյան վարժարանում չի գործում աշակերտական պատարագը: Երեխաները եկեղեցի են գնում կիրակի օրերը՝ մասնակցելով ընդհանուր պատարագին: Իսկ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին երեխաները դասարաններով գնում են եկեղեցի՝ հաղորդություն ստանալու համար: Առաջին հաղորդությունը Ս. Ծնունդի արձակուրդից առաջ է, երկրորդը՝ Հարության (Չատիկի) տոնի առթիվ: Երեխաները աղոթում և հաղորդություն են ստանում չարությունները սրբազրելու, գործած սխալները խոստովանելու և դրանք կրկին չգործելու համար:

Ազգային Չավարյան վարժարանն ակտիվորեն մասնակցում է ուսումնական խորհրդի կազմակերպած ասմունքի, երգի, գծագրության, մարզանքի միջոցառված մրցումներին, որոնց մասնակցում են դպրոցների 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտները:

Չավարյան վարժարանի տնօրեն պ. Հովհ. Մուշեղյանը մեծ լավատեսությամբ է տոգորված Սիրիայում գործող հայկական դպրոցների ապագայի հանդեպ՝ որպես հիմք ունենալով հայության ձուլման շատ փոքր տոկոսը, սիրիահայության ուժեղ հայաշունչ ոգին, կուռ ամբողջությունն ու կազմակերպվածությունը և խառն ամուսնությունների փոքր թիվը:

Մեթոդական հարցեր

Սիրիայի հայկական դպրոցներում հայագիտական առարկաների դասավանդմանը մոտիկից ծանոթանալու նպատակով բազմաթիվ դասալսումներ ենք կատարել, գրույցներ ունեցել ուսուցիչների հետ մանկավարժական-մեթոդական խնդիրների շուրջ:

Չնայած կատարվող հսկայական աշխատանքին, այնուամենայնիվ, հայկական վարժարաններում ամենամեծ խնդիրներից մեկը մնում է ուսուցիչների ոչ բավարար մեթոդական զինվածությունը: Իհարկե, սա ունի իր հիմնարար պատճառները:

Առաջին՝ Սիրիայում երկար տարիներ չի եղել ուսուցչական կադրեր պատրաստող հայագիտական կենտրոն, ինչպիսին կա Բեյրութում՝ Համազգայինի հայագիտական բարձրագույն հիմնարկը՝ բանասիրության և պատմության բաժիններով: Միայն վերջերս է

սկսել գործել Համազգայինի՝ Սիրիայի շրջանային վարչության Հալեպի հայազիտական կենտրոնը, որը փորձում է լրացնել եղած բացը:

Երկրորդ՝ չեն գործում ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ: Հայաստանն էլ վերջին 10 տարիների ընթացքում անուշադրության էր մատնել սփյուռքի մանկավարժների վերապատրաստման գործը, որը հսկայական մեթոդական օգնություն էր նրանց՝ միաժամանակ նպաստելով Հայաստանի և սփյուռքի մանկավարժների հաղորդակցմանը, փորձի փոխանակմանը և արդյունավետ համագործակցությանը:

Միայն վերջերս այդ աշխատանքները վերականգնեց «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, որի մասին արդեն խոսվել է առաջին գլխում:

Ազգային վարժարաններում անցկացրած բազմաթիվ դասալսումներից մեզ համար ակնհայտ դարձան մեթոդական հետևյալ թերություններն ու վրիպումները.

1. Նախակրթարանում (տարրական դպրոցում) ուսուցման գործընթացի ժամանակ ավելի շատ կիրառվում էր պատմելու մեթոդը, քան բացատրելու և զննական մեթոդները: Չկային զննական-դիդակտիկական-ուսուցողական նյութեր, որոնք չափազանց նպաստում են դասանյութի հեշտ ընկալմանն ու ամրակայմանը, քանի որ նախակրթարանում երեխաների մտածողությունն առարկայական է, և աշխարհընկալումն էլ տեղի է ունենում զգայարանների միջոցով:

2. Չգիտես ինչու, ուսուցիչների գրեթե մեծամասնությունը դասը սկսում էր նոր նյութի հաղորդմամբ: Մինչդեռ մտքի տրամաբանական զարգացման ընթացքը և ներառարկայական կապի դիդակտիկական սկզբունքը պահանջում են դասը սկսել հին նյութի հարցմամբ, կրկնությամբ ու ամրակայմամբ, որից հետո, հենվելով հնի վրա, կատարել նոր նյութի հաղորդում: Դասի վերջում հարցերի և վարժությունների միջոցով կատարել նոր նյութի ամրակայում:

Իհարկե, կարելի է և ցանկալի ստեղծագործական մոտեցում ցուցաբերել դասի նկատմամբ՝ միայն թե չվնասելով այն, հաշվի առնելով մի քանի հանգամանքներ.

ա) դասարանի տարիքային առանձախատկությունները,

բ) դասարանի հոգեբանորեն տրամադրվածությունը դասին,

գ) նյութի հեշտությունը, բարդությունն ու ծավալը,

դ) նյութի ընկալման աստիճանը,

ե) նյութի հաղորդման մատչելիությունը,

զ) ուսուցման տարբեր մեթոդների ու հնարների, միջոցների կիրառումը դասի ընթացքում:

Յուրաքանչյուր ուսուցիչ դասի ժամանակ կարող է ներդնել իր մանկավարժական ձիրքը, նոր մեթոդները, հնարները, միայն թե դրանք նպաստեն նյութի հեշտ ընկալմանը, հասկացմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

3. Որոշ դասերի ժամանակ ուսուցիչները շատ են խոսում, աշակերտները՝ քիչ: Անընդհատ լսվում է ուսուցչի ձայնը: Անհրաժեշտ է խթանել աշակերտների ակտիվությունը, նրանց շատ խոսեցնել, աշխուժացնել, ընդգրկել ամբողջ դասարանը՝ զարգացնելով նրանց ինքնուրույն մտածողությունը, ինքնուրույն գործելակերպը:

4. Դասի ժամանակ չպետք է միշտ հարցնել ձեռք բարձրացնող, պատասխանել ցանկացող աշակերտներին: Պետք է ակտիվացնել նաև ոչ համարձակներին, ամաչկոտներին, քանի որ շատ դեպքերում նրանց պասիվության պատճառը չիմացությունը չէ, այլ խառնվածքն ու բնավորության գծերը: Հետևաբար կամաց-կամաց նրանց մեջ պետք է սերմանել համարձակություն, սեփական ուժերի նկատմամբ վստահություն: Այս ամենի նախաձեռնողը պետք է լինի դիտողունակ, փորձառու և հոգեբան ուսուցիչը: Նա աչքաթող չպետք է անի նաև թույլերին, ծույլ ու անկարգ աշակերտներին: Ընդհակառակը, նա նրանց պետք է պահի ուշադրության կենտրոնում, հաճախակի հարցումներով անընդհատ ներգրավի դասին:

5. Պատասխանի ժամանակ չի կարելի շտապեցնել աշակերտին, քանի որ, ինչպես իրավագիտորեն նշում է XIX դարի մանկավարժ-հոգեբան Առաքել Բահաթրյանը. «ուսուցիչը միշտ պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ գոյություն ունեն դանդաղ մտածող, բանավոր խոսքը դժվար կառուցող երեխաներ»¹⁰¹: Հետևաբար հապաղելը, դանդաղելը չպետք է դիտել որպես նյութի չիմացում: Մե-

¹⁰¹ Բահաթրյան Ա., Ուղեցույց հայ ուսուցչին, Թիֆլիս, 1882, էջ 20:

կը կարող է դանդաղ մտածելով ճիշտ ու հիմնավոր, խելացի պատասխան տալ, իսկ մյուսն արագ մտածելով՝ հապճեպ, մակերեսային ու սխալ: Լինում են, իհարկե, և՛ արագ, և՛ ճիշտ: Ուրեմն, հետևություն. ուսուցիչը պետք է լավ ճանաչի յուրաքանչյուր աշակերտի անհատական և հոգեբանական առանձնահատկությունները և, ըստ այդմ էլ, նրա հանդեպ դրսևորի անհատական մոտեցում:

6. Ամբողջ դասարանը դասին մասնակից դարձնելու, նրանց պատրաստվածության աստիճանը որոշելու, դասի նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու, ճիշտն ու սխալը տարբերակելու, ստեղծագործական-տրամաբանական մտածողությունը զարգացնելու նպատակով նախընտրելի է պատասխանող աշակերտի սխալը ուղղել սկզբում աշակերտների միջոցով: Սակայն ինչպես գտնում է Ա. Բահաթրյանը, երկու աշակերտի սխալ պատասխանի դեպքում արդեն անհրաժեշտ է ուսուցչի ուղղումը (միջամտությունը), «որպեսզի հետագա անհաջող պատասխանը ճնշիչ ներգործություն չունենա աշակերտների վրա»¹⁰²: Ցանկալի է և արդյունավետ, եթե պատասխանող աշակերտին հարցեր ուղղեն դասընկերները, քանի որ հարց տալ, նշանակում է նախ՝ նյութի իմացություն, հարց կազմելու, այն իմաստային և լեզվական առումներով ճիշտ կառուցելու ունակություն, համարձակություն, ինքնուրույնության դրսևորում, ազատ ու անկաշկանդ մտածելու կարողություն: Անհրաժեշտ է խելացի ու ճիշտ հարցեր տվող աշակերտներին խրախուսել ու գնահատել: Դա նրանց հետագա գործունեության համար նոր խթան կհանդիսանա:

7. Դասերի ժամանակ քիչ է ուշադրություն դարձվում զարգացողական վարժություններին՝

ա) նախադասություններ կազմել պահաջվող բառը գործածելով,

բ) տեքստի վերաբերյալ համապատասխան հարցեր կազմել,

գ) պատկերային-երևակայական տեսարաններ ստեղծել,

դ) «իսկ դու որ լինեիր, ինչպե՞ս կվարվեիր...» (շարունակել),

նման բնույթի իրավիճակների առաջադրում և այլն:

¹⁰² Բահաթրյան Ա., Ուղեցույց հայ ուսուցչին, Թիֆլիս, 1882, էջ 20:

8. Մանկավարժական կանոններին հակասում է դասարանում ուսուցիչների անընդհատ պտույտները կամ վերջում կանգնելն ու նստելը: Սրանք շեղում են աշակերտների ուշադրությունը, ցրում կենտրոնացվածությունը: Ուսուցիչը միշտ պետք է լինի դեմքով դեպի դասարանը՝ հայացքով ընդգրկելով բոլորին: Միայն անհրաժեշտության դեպքում, կարճատև ժամանակով, նա կարող է մեջքով (այն էլ կիսաթեք) դառնալ դասարանին. գրատախտակին խնդրի պայմանները գրելու, սխեմաներ գծելու, անձանոթ բառերի ճիշտ ուղղագրությունը բացատրելու (գրավոր), քարտեզի վրա որևէ տեղանք, վայր ցուցադրելու և այլնի ժամանակ: Եվ սակայն դրանք էլ նա կարող է անել աշակերտների օգնությամբ ու մասնակցությամբ:

9. Հատկապես նախակրթարանում (տարրականում) երեխաներին չպետք է ծանրաբեռնել տնային համաձայնարություններով: Չափից ավելի տնային առաջադրանքները, եթե հաշվի չեն առնվում երեխաների տարիքային առանձնահատկությունները, վնասում են նրանց առողջությանը (ուղեղի լարում, ողնաշարի սեղմում կամ ծռում, նյարդայնացում, տեսողության լարում), հոգնեցնում, ծանձրացնում և նույնիսկ ատելություն առաջացնում դպրոցի նկատմամբ՝ այն դիտելով որպես իրենց տանջող մի վայր: Սա շատ վտանգավոր երևույթ է և հղի է շատ բացասական հետևանքներով, ինչպիսիք են՝ դպրոցից հրաժարվելը, հիասթափվելը, անկարողությունը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը, որոնք էլ հանգեցնում են ուսման նկատմամբ հետաքրքրության պակասին, առաջադիմության անկմանը, անտարբերությանը և պասիվությանը:

§ 5.3. Հալեպի Քարեն Եփփե ճեմարանը

Սիրիահայության կյանքի մեջ, ընդհանրապես, և կրթության ասպարեզում, մասնավորապես, իր խիստ հատկանշական, ծանրակշիռ ու կարևոր դերակատարությունն ունի Քարեն Եփփե ճեմարանը, որը Սիրիայի գլխավոր ու պատմական քաղաքներից մեկի՝ Հալեպի մեջ, հայաշատ Նոր Գյուղի գլխավոր ճա-

նապարհի վրա 1947 թվից ի վեր իր դռներն է բացել հալեպահայ աշակերտության և բովանդակ Սիրիայի հայ նոր սերնդի առջև:

Քարեն Եփփե ազգային ճեմարանն իր գոյությամբ նոր շրջադարձային փուլ բացեց ոչ միայն սիրիահայության կրթամշակութային կյանքում, այլև անգնահատելի ներդրում ունեցավ հայապահպանության գործում:

1947 թ. հոկտեմբերի 26-ին մեծ հանդիսավորությամբ բացվում է Քարեն Եփփե ազգային ճեմարանը, որի հիմնադիրը Սուրիոյ Բերիոյ թեմի առաջնորդ, հետագայում Մեծի Տանն Կիլիկիոյ երջանկահիշատակ Չարեհ Ա. կաթողիկոսն էր: Նրա գլխավորությամբ էր, որ ձեռնարկվեց հայկական երկրորդական վարժարանի հիմնումը՝ գլխավոր դրամագլուխ ունենալով հայ ժողովրդի ուսման անհազ ծառավը և որպես պատվանդան՝ հայասեր դամիացի մեծ բարերարուհու, հանգուցյալ օր. Քարեն Եփփեի հաջորդների՝ հալեպահայությանը նվիրած այն ընդարձակ հողը, որի վրա օրեցօր աճում ու զարգանում է համանուն ճեմարանը:

Կարճ պատմական ակնարկով նշենք, որ մինչև 1947 թ. Սիրիայում եղել է երկրորդական վարժարաններ ստեղծելու փորձ: Դեռ մինչև երկրորդական վարժարանների բացումը, 1918-ից հետո (Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո), մեկը մյուսի հետևից Սիրիայի ամբողջ տարածքով մեկ վերաբացվում են հայկական այն դպրոցները, որոնք գոյություն ունեին դեռ պատերազմից առաջ: Իսկ 1922 թ. հետո բացվում են հարյուրավոր նախակրթարաններ (տարրական): Ինչպես իրավացիորեն նշում է սփյուռքահայ մտավորական Հակոբ Չոլաքյանը. «Սուրիական հողին վրա հարիւրաւոր հայ դպրոցներու՝ ծաղկոցներու, միջին ու բարձր նախակրթարաններու հաստատումը մեր ժողովրդի հրաշալի յարութիւնն էր իր իսկ նահատակութեան բեմ հանդիսացած այս հողերուն վրայ»¹⁰³:

Նախակրթարանների բացումից հետո, բնականաբար, կարիք է զգացվում նաև միջնակարգ և երկրորդական վարժարանների, որտեղ «հայ մարդու տիպարը կը կերտուի, ուր հայ տղան ու աղջիկը կը

հակին հայ լեզուի գանձարաններուն ու հայոց պատմութեան լուսադրուագ էջերուն վրայ, անոնցմէ առնելով իրենց վաղուայ դիմագծութիւնը, հոգին, նկարագիրը»¹⁰⁴:

Եվ այսպես, 1922 թ. ի վեր Սիրիայի տարբեր քաղաքներում բացվում են միջնակարգ և երկրորդական վարժարաններ.

1923 թ. — Հայ ավետարանական մանչերու բարձրագույն վարժարանը: 1936-ին այն կոչվում է ամերիկյան քոլեջ:

1922-36 թթ. — Հայ ավետ. աղջկանց բարձրագույն վարժարանը, որը 36-ին միանում է ամերիկյան քոլեջին:

1927 թ. — Ուսումնահայ մարդասիրական երկրորդական երկսեռ վարժարան:

1935 թ. — Յիսուսեան հայրերու Սրբոյ Վարդանանց վարժարանը:

1936 թ. — Մխիթարեան վարժարանը:

Իսկ դեռ անցյալ դարի երկրորդ կեսից գործում է Հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանը (փակվել է 1967-ին): Միջնակարգ և երկրորդական վերոհիշյալ վարժարանների գոյությամբ հանդերձ հայկական նախակրթարանների (սրանց ցանցը շատ մեծ էր) շրջանավարտների մեծամասնությունն իր ուսումը շարունակում էր օտար երկրորդական վարժարաններում: Փաստորեն, վտանգվում էր հայ երեխայի հայեցի շարունակական կրթության ու դաստիարակության կարևորագույն գործը, հանուն որի են կոչված հայկական դպրոցները:

Սիրիայի հայկական դպրոցների շատ քիչ շրջանավարտներ են կարողանում իրենց ուսումը շարունակել Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանում, Անթիլիասի և Երուսաղեմի դպրեվանքերում և Կիպրոսի Մելքոնյան վարժարանում:

Վերոհիշյալ ծանրակշիռ փաստարկումներն էլ պատճառ դարձան խորհելու Հալեպում ազգային ճեմարան (երկրորդական քոլեջ) բացելու հարցի շուրջ:

¹⁰³ Չոլաքեան Յ., Յիսնամեակ Քարեն Եփփե ազգային ճեմարանի, Գալէպ, 1997, էջ 19:

¹⁰⁴ Տասնապետեան Էդուարդ, Մինչեւ որ բացուին իրաւ հայրենիքին դռները, «Արևելք», Գալէպ, հոկտ., 1947:

Մեծ նպատակապայտությունը, հարցի լրջության գիտակցումը, համառ ջանքերն ու տքնաջան աշխատանքները տվեցին իրենց պտուղները: 1947 թ. հոկտեմբերին հալեպահայությունը մեծ բախտավորություն ունեցավ ականատես լինելու Քարեն Եփփեն ճեմարանի՝ ազգային ոգին մարմնավորող կրթամշակութային միջնաբերդի բացմանը:

Իսկ ո՞վ էր Քարեն Եփփեն, որի անունն էր կրում ազգային երկրորդական վարժարանը՝ հայկականության օրրանը:

1895 թ. համիդյան ջարդերի և 1915–18 թթ. եղերական ոճրագործությունների աննեղ զոհ դարձած միլիոնավոր հայերի նահատակությանն ականատես և միաժամանակ հայ հերոսամարտերի անմիջական վկա, մարդկային բարձր արժանիքների տեր դանիացի մի ազնվափայլ օրիորդ էր Քարեն Եփփեն, որն իր ամբողջ գիտակցական կյանքն անմնացորդ նվիրեց հայ ժողովրդին, նրա ֆիզիկական, հոգևոր–բարոյական վերականգնմանը:

Նա բողոքի իր ձայնն էր բարձրացնում հայ ժողովրդի նկատմամբ կատարվող եղեռնի ոճրագործությունների դեմ ոչ միայն իր հայրենիքում՝ Դանիայում, այլև տարբեր երկրներում՝ ընդհուպ մինչև Ազգերի լիգա: Նա միաժամանակ օգնության կոչ էր անում աշխարհի ժողովուրդներին՝ կործանումից փրկելու թուրքական յաթաղանից մազապուրծ եղած հայ տարագիրներին, որոնք իրենց հանգրվանն էին գտել աշխարհի տարբեր երկրներում և մասնավորապես հարևան Սիրիայում և Լիբանանում:

Քարեն Եփփեն ծնվել է Դանիայի Լյուսբերգ քաղաքում՝ ուսուցչի ընտանիքում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո նա մեկնում է Կոպենհագեն ուսումը շարունակելու բժշկության ոլորտում: Դա այն տարիներն էին, երբ հայ ժողովրդի արյունն էր հոսում համիդյան ջարդարարների ձեռքերով: Ամբողջ աշխարհի մամուլը հեղեղված էր սրտաճնկիկ ու սոսկալի լուրերով, որտեղ կոչեր էին հնչում օգնության ձեռք մեկնել դժբախտ հայերին: Օրիորդ Քարեն Եփփեն սոսկումով է ընդունում այդ դաժան լուրերը և ուսումը կիսատ թողնելով՝ անդամակցում է գերմանացի դոկտոր Հովի. Լեպսիուսի Գերմանական

արևելյան առաքելական կազմակերպությանը, որն արդեն որբահավաքի գործ էր կատարում Ուրֆայում:

Ազնվագարմ օրիորդի և գթասիրտ մարդու համար միանգամայն պարզ դարձավ, որ երազներից բացի կա նաև կյանքի դաժան իրականությունը, ու գիտակցեց, որ իր կյանքի սրբազան նպատակը թշվառներին օգնելն է: Եվ, չնայած ծնողների արգելքին, ընդամենը 27 տարեկան, նա 1903 թ. մեկնում է Ուրֆա, ուր և անմիջապես ձեռնամուխ է լինում հայ որբերի խնամքին ու դաստիարակությանը: Որբ երեխաների աղետալի ու թշվառ վիճակը հոգեցնեց Քարեն Եփփենին, և նա դարձավ նրանց համար մայր՝ հանդես բերելով անասիման սեր, գուրգուրանք, հոգատարություն և բարոյություն: Նա հայ որբերի համար եղավ ոչ միայն գուրգուրող մայր, այլև խորհրդատու և ուսուցիչ:

Հայ երեխաներին ավելի լավ հասկանալու ու նրանց հետ սերտորեն հաղորդակցվելու նպատակով Քարեն Եփփեն սովորում է հայերեն: Նրա ուսուցիչները փոքրիկներն էին: Եվ մեկ տարի հետո Քարեն Եփփեն հիանալի հայերեն էր խոսում՝ դանիերենի առողջանությամբ: Որբանոցում բոլորը նրան հայ էին ասում, և նա ուրախությամբ ու հպարտությամբ էր ընդունում դա: Նա ականատեսն էր Ուրֆայի հերոսամարտի, երբ քսանհինգ օր համարյա անգեն հայ կտրիճները դիմագրավեցին թշնամու կամոնավոր գորքերին, խուժանի ահավոր գրոհներին:

Այդ օրերին գթասիրտ ու քնքուշ աղջկա մեջ ցայտուն դուստրվեց նաև հերոսականը: Նա կրակոցների տարափի տակ որբանոցից կերակուր ու դեղորայք էր հասցնում թշվառ ծերերին ու հիվանդներին, որի համար էլ նրան հեռացնում են որբանոցից ու ուզում են արտաքսել երկրից: Մեփական աչքերով տեսած դաժան արհավիրքներից չի դիմանում գեղանի օրիորդը և հիվանդանում է:

1917 թ. Քարեն Եփփեն հիվանդ վիճակով վերադառնում է Դանիա: Ապաքինվելուց հետո անարատ ու բարի հոգու տեր «հայր» 1920 թ. գալիս է Սիրիա՝ Հալեպ, այս անգամ էլ այստեղ իր օգնությունն ու նպաստը բերելու հայ որբերի խնամքի և դաստիարակության գործին:

Պատերազմն ավարտվել էր: Հալեպն այդ ժամանակ վերածվել էր անապատից վերադարձող մազապուրծ հայերի առաջին հանգրվանի: Ստեղծվել էր Ազգերի լիգա, որն էլ Քարեն Եփփեին ընտրում է իր ներկայացուցիչը Հալեպում՝ գաղթական հայերի, մասնավորապես որբ երեխաների և թշվառ կանանց ու աղջիկների ապաստանի ու խնամքի հարցերով զբաղվելու համար:

Միրիայի սահմանամերձ շրջաններում ստեղծվում են կայաններ՝ հայ կանանց ու աղջիկներին գերությունից ազատելու համար:

Գաղթական հայերի տեղավորման ու նրանց օգնության նպատակով Ազգերի լիգան Քարեն Եփփեին որոշակի գումար է տրամադրում: Նա այդ միջոցներն օգտագործում է Միրիայի տարբեր վայրերում, մասնավորապես գյուղերում, իր գործունեության կայաններ բացելու համար, որտեղ մեծ աշխատանք էր տարվում հայ գաղթականներին տեղավորելու և նրանց նյութապես օգնելու գործում:

Քարեն Եփփեն շրջում էր ամբողջ Միրիայով՝ գյուղ առ գյուղ՝ հայ որբերի ու անօգնական այրի կանանց փնտրելու ու հավաքելու նպատակով: Իր գթառատ ու հայապաշտպան գործունեությանն աջակցում էր նաև Դանիայում ստեղծված «Հայ բարեկամների դանիական ընկերությունը»:

Քարեն Եփփեն որոշում է պաշտոնականացնել այրի կանանց և նրանց որբերի խնամքի իր սկսած գործը և հիմնում է հաստատություն, որն անվանում է «Կանանց և մանուկների պաշտպանության գործ»՝ դրան ծառայեցնելով Ազգերի լիգայի տրամադրած գումարները: Սկզբում այդ հաստատությունը գործում է Թիլելում, իսկ 1924 թ. նա Հալեպի Մեյդան կոչվող թաղամասում գնում է 10000 մ² հողատարածություն և այդտեղ կառուցում ինը միհարկանի տներ, տաղավարներ՝ 80 սենյակով, և դրանցում բնակեցնում հայ այրի կանանց՝ իրենց 200 որբ երեխաներով:

Որպեսզի հայ կանայք կարողանան ապահովել իրենց գոյությունն աշխատանքով, Քարեն Եփփեն նրանց համար Թիլելում բացում է ասեղնագործության աշխատանոց (գործատեղի), որը հոգում էր նրանց ապրուստի միջոցները: Տարագիր հայ կանանց ձեռքերով վերականգնվում է հայկական նշանավոր ձեռագործը, որը մեծ հա-

մարում ուներ նաև Եվրոպայում: Քարեն Եփփեն իր ձեռնարկած հայանպաստ գործունեության ընթացքում միշտ համագործակցել է Հայ առաքելական եկեղեցու, նրա առաջնորդարանի հետ: Նա հետամուտ էր մի կարևոր նպատակի՝ հայ որբերին հանձնել հայկական եկեղեցու և հայկական դպրոցների հոգածությանն ու դաստիարակությանը, որպեսզի նրանք շարունակեն հայ մեծանալ հոգով ու մտքով, որպեսզի չկորչեն օտար միջավայրում, օտարների ձեռքի տակ: Օտարազգի կիևը տեսնում ու քաջ գիտակցում էր հայությանը սպառնացող երկրորդ վտանգը՝ ուծացումը, որի դեմ 20-ական թվականներին անգամ նա արդեն պայքար էր տանում՝ հայ որբերին կապելով հայկական միջավայրին, այդ ժամանակվա հայապահպանության կարևոր պատվարին՝ եկեղեցուն:

Քարեն Եփփեի աջակցությամբ ու օգնությամբ Մեյդան թաղամասում 1927 թ. իր այրիանոցի կողքին կառուցվում է Սահակյան ազգային նախակրթարանը, ուր մեսրոպյան տառերն էին հնչեցնում հայ երեխաները, որը մեծ հրճվանք և ուրախություն էր պատճառում հայասեր դանիացուն, քանի որ նա քաջ գիտակցում էր մի պարզ ճշմարտություն. քանի դեռ հայ պատանու շուրթերը հնչեցնում են մեսրոպյան այբուբենը, հայը կա ու կլինի հավերժ:

Քարեն Եփփեի հայանպաստ ու մարդասիրական մեծ ծառայություններն իր կոնդակով բարձր է գնահատում Սահակ Կաթողիկոսը, իսկ Դանիան նրան շնորհում է Պատվո լեգեոն առաջին կարգի շքանշան:

1934-ին Քարեն Եփփեն ծանր հիվանդանում է: Սակայն մինչև իր կյանքի վերջին տարիները նա մնում է Հալեպում, հայության շրջանակներում՝ իր ամբողջ կյանքն անձնուրաց կերպով նվիրաբերելով հայ ժողովրդին ու նրա զավակներին, կիսելով նրանց վշտերն ու տառապանքները, բայց և միաժամանակ հիանալով նրանց ոգու արիությամբ ու կորովով, անկոտրում կամքով՝ մեծ հավատով ու լավատեսությամբ:

Հոգով հայացած դանիացին մարդկային բարձր ու բացառիկ հատկանիշների մարմնացումն էր, մարդկության խտացված խիղճը, որ հեռավոր Դանիայից եկավ Հալեպ ու իր ունեցած ամենաթանկ

բանը՝ կյանքը, նվիրեց հայությանը ու հավերժ անմահացավ նրանց սրտերում և հոգիներում:

1934 թ. հուլիսի 7-ին՝ 58 տարեկան հասակում, վախճանվում է դանիացի Քարեն Եփփե մեծ մարդասերը, հայության մեծագույն բարեկամն ու իսկական Հայը:

Քարեն Եփփեի պայծառ հիշատակը հայության մեջ հավերժացնելու մի գեղեցիկ ու բարձր գնահատանքի արժանի քայլ էր 1947 թ. Հալեպում բացած ազգային ճեմարանը նրա անունով կոչելը՝ սերունդներին փոխանցելով նրա պայծառ կերպարի պատմությունը:

«Օրիորդ Քարեն Եփփե Դանիայեն եկաւ Հալէպի անապատները, — ասում է առաջնորդ Չարեհ Սրբազանը ճեմարանի բացման իր ճառում, — խառնուեցավ բախտագուրկ հայութեան բեկորներուն ու անոնց ֆիզիքական թէ բարոյական գոյութեան համար զոհաբերեց իր կեանքը, մինչեւ վերջին շունչ: Սրտի թագուհի մըն էր, որուն յիշատակը յաւերժացնելու համար մենք պիտի չզոհանանք տարուէ տարի հոգեհանգստեան պատարագի մը մատուցումով: Պիտի ուզենք, որ ան խառնուի հալէպահայութեան եւ հայ ժողովուրդի կեանքին, յալիտենապէս, դառնալով խորհրդանիշ մը սրտի եւ մտքի ազնուութեան, հոգեկան եւ բարոյական սկզբունքներու»¹⁰⁵:

Ազգային ճեմարանը բացվում է Քարեն Եփփեի այրիանոցի տաղավարներում (տներում) ընդամենը 23 աշակերտով (երկսեռ), որոնք բոլորն էլ ազգային նախակրթարանների շրջանավարտներ էին: Ճեմարանն իր գործունեությունը սկսում է 6-րդ դասարանով:

Ճեմարանի բացման արարողությանն արտասանած իր ճառում առաջնորդ Չարեհ Սրբազանն ասել է. «Այսօր Հալէպի մէջ շատ կան երկրորդական վարժարաններ, անգլիական, ամերիկեան եւ ֆրանսական կրթարաններ, սակայն անոնք չեն պատրաստեր ճշմարիտ եւ գիտակից հայ հանրային մարդը, որուն այնքան պէտք ունի այսօր գաղթահայութիւնը, ազգային իր գոյութիւնը անաղարտ ու ապահով պահելու համար հազար ու մէկ յորձանքներու, փոթորիկներու դէմ: Հայ ծնողներու վրայ կը ծանրանայ պարտականութիւնը գի-

տակցելու այն անփոխարինելի դերին, զոր կոչուած է կատարելու Հայ երկրորդական վարժարան մը, վաղուան հայ մայրերն ու հայերը պատրաստելու համար»¹⁰⁶:

Հայը կրթական կյանքի և գործունեության մեջ է տեսել իր ազգի գոյատևման ու բարգավաճման ուղիղ ու արդյունավետ ճանապարհը: Եվ պատմությունը վկայում է, որ հայապահպանության կարևոր կռվաններից մեկն է եղել հայկական դպրոցը, հանուն որի հայը չի խնայել ոչինչ:

Ճեմարանի բացման լուրը լայն արձագանք գտավ նաև հայկական մյուս գաղթօջախներում, որտեղ սրտի թրթիռով, մեծ հպարտությամբ ու սփյուռքում հայի ապագայի նկատմամբ չխամրող լավատեսության զգացումով ընդունեցին հալէպահայության այս մեծ հաջողությունը:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի հունվարյան համարի խմբագրականում ասվում է. «Հայաստանի մէջ ապրող հայուն համար նախակրթարանի մը տուած կրթութիւնն իսկ բաւական է, որ ան հայ մնայ եւ հայ մեռնի: Արտասահմանի մէջ սակայն Հայը, որ շարունակ ստույգ վտանգներով է շրջապատուած, որպէսզի հայ մնայ, չկորսուի, պէտք է ստանայ հայկական երկրորդական վարժարանի մը կրթութիւնը: Նման վարժարաններն են, որ անհատին մէջ ցեղի կնիքը կը դնեն եւ զայն ամրօրէն կը կապեն իր սեփական ժողովուրդին: Այս տեսակէտէն Պեյրութի ճեմարանը հրաշքներ գործեց մեր մէջ. անիկա հասցուց հայ մտաւորականներու գեղեցիկ սերունդ մը, որ այսօր հայապահպանման գործին է նուիրուած: Նույն դերը պիտի կատարէ Հալէպի ճեմարանը եւ Սուրիոյ հայութեան մէջ, որը կրթասէր եւ ուսումնասէր է:

Մեր գաղութահայ տխուր կեանքին մէջ Հալէպի Քարեն Եփփե Գուլէճը մխիթարական երեւոյթ մըն է»¹⁰⁷:

Քարեն Եփփե ճեմարանի բացումով հայապահպանության գործը մտավ մի նոր շրջան՝ օտարության մեջ հայի համար դառնալով վաղվա օրվա հույս ու ապավեն:

¹⁰⁵ «Արևելք», Գալեպ, հոկտ., 1947:

¹⁰⁶ «Արևելք», Գալեպ, 26 հոկտ., 1947:

¹⁰⁷ «Հայրենիք», Դոստոն, 8 Յունուար, 1948:

Քարեն Եփփե ճեմարանն իր ուսումնական գործունեությունն սկսում է՝ որդեգրելով երկրում գործող սիրիական բաքալորեայի ծրագիրը: Սակայն այն ընդամենը երկու տարվա կյանք է ունենում: Հաջորդ քայլը ֆրանսիական բաքալորեայի գիտական ճյուղին անցնելն էր: Գործում էր նաև հայագիտական բաժինը:

Ըստ ֆրանսիական բաքալորեայի՝ բոլոր առարկաները դասավանդվում էին ֆրանսերենով, ավելացրած, իհարկե, արաբերենը:

1952 թ., սակայն, Սիրիայի նորանկախ պետությունը հստակություն է ստացնում իր ազգային դաստիարակության և ուսման ծրագրի մեջ, ըստ որի՝ երկրում գործող բոլոր դպրոցները, այդ թվում և մասնավոր, վերանայեցին իրենց կրթական ծրագրերը՝ հիմք ընդունելով պետական արաբական ծրագիրը՝ որպես այդ երկրում շարունակական կրթության երաշխիք: Այդ իսկ նպատակով 1952 թ. մարտի 17-ին Սիրիայի կառավարությունն իր երկրում գործող մասնավոր վարժարանների վերաբերյալ ընդունում է հատուկ կանոնադրական հրամանագիր՝ թիվ 175, ըստ որի նախատեսվում էին մասնավոր դպրոցների գործունեությունը սահմանափակող լուրջ փոփոխություններ: Այս հրամանագիրը մեծ տազնապ ու անհանգստություն առաջացրեց հայ համայնքում գործող կրթօջախներում: Լուրջ խորհրդակցություններից հետո 1953 թ., ելնելով հրամանագրի պահանջներից, ճեմարանում փակվում է ֆրանսիական բաքալորեան, և նրա փոխարեն կիրառվում է արաբականը, որը նախատեսում է պետական կրթական ծրագրով դասավանդվող բոլոր առարկաների ուսուցումն արաբերենով, իսկ ֆրանսերենը՝ որպես օտար լեզու՝ շաբաթական 4 ժամ: Երկրի կառավարության հետ հայ համայնքի ներկայացուցիչների երկարատև բանակցությունների արդյունքում հայերենը չի դիտվում որպես օտար լեզու, և պահպանվում է ճեմարանում հայագիտության բաժինը: Սակայն այն նույնպես երկար չի գոյատևում: 1957–58 ուստարին վերջինը եղավ հայագիտական կենտրոնի համար:

Ճեմարանի խնամակալությունն այն բացատրում է հետևյալ մեկնաբանությամբ. «Ճեմարանի հայագիտական ճիւղի վկայականը ճանջուած չըլլալով պետութեան կողմէ, ընթացաւարտներուն առջեւ բաց կը թողու միայն հայ վարժարաններու մէջ ուսուցչական ասպա-

րեզը եւ այս ալ միայն այն պարագային, երբ ենթակաները ի ձեռին ունենան նուագագույնը պետական պրովէն: Շատ բնականաբար այս պայմաններու մէջ հայագիտական ճիւղը հրապտրիչ պիտի չդառնար հայ աշակերտներուն եւ այս պատճառաւ ալ անոնք նախընտրաբար կը հետեւին Սուրիական պաքալորիայի ծրագրին»¹⁰⁸:

Քարեն Եփփե ճեմարանի հայագիտական բաժնի փակումը դժգոհություն առաջացրեց հայության շրջանակներում, քանի որ նրա գոյությունը դիտվում էր որպես ազգային-բարոյական գաղափարաբանության իրագործում. «Մեր ազգային խղճմտանքին եւ ցեղային լինելութեան պայմաններուն հաւատարիմ այս դասընթացքը կը խոստանար սփիւռքահայութեան կարգ մը կենսական կարիքները դիմատրել. կը պատրաստէր իր հետետորդները ուսուցչական ասպարեզին կամ հասարակական կեանքին մէջ կարելոր դիրքեր գրաւելու: Այս դասընթացքը, որ ամէնէն աւելի կարդարացնէր ճեմարանի դերն ու գոյութիւնը, եթէ տուկաւին մեծ նվաճումներու չէր հասած, ազգային տեսակէտով մեծապէս կը յուսադդէր իր բացած հեռանկարով»¹⁰⁹:

Դժգոհությունների ալիքը ծնեց նաև հիասթափություն հայկական դպրոցների գործունեության հանդեպ՝ հիմք ընդունելով այն միտքը, որ կրթական յուրաքանչյուր ծրագիր պետք է ստորադասվի հայեցի դաստիարակության հիմնական նպատակին: Հնչում էին նաև երևույթը մեղմացնող խոսքեր, որոնք առավել սթափ էին գնահատում իրավիճակը, պարտադրված պայմանները և Սիրիայում ապրող հայ երեխայի շարունակական կրթությունն ապահովելու կարևոր հանգամանքը: Իսկ վերջինս կղիտվի անհնարին արաբական բաքալորեան շուսանելու դեպքում, քանի որ հայագիտական բաժինը պետականորեն ճանաչված չէր, և նրա վկայականը հիմք չէր կարող լինել հետագա ուսման համար: Որոշվեց հայագիտականի փակմանն ի հակակշիռ՝ գորացնել դասավանդվող հայագիտական առարկաները, բարձրացնել նրանց արդյունավետությունը՝ ներարկելով նրանցում ազգային շունչ և ոգի: Իսկ կրթական ծրագրից դուրս կիրառել գանազան միջոցներ ու ձեռ-

¹⁰⁸ Չոլաքեան Յակոբ, Յիսնամեակ Քարեն Եփփե ազգ. ճեմարանի, Գալեպ, 1997, էջ 160:

¹⁰⁹ Չոլաքեան Յակոբ, Յիսնամեակ Քարեն Եփփե ազգ. ճեմարանի, Գալեպ, 1997, էջ 162 (Արեգ Սրբազանի խոսքը):

նարկներ՝ երեխաների հայեցի դաստիարակության անխափան ընթացքն ապահովելու համար (բանախոսություն, հանդեսներ, ասուլիսներ, թատրոն, հայ երգի ու պարի համույթներ, հավաքներ):

Դիմագրաված դժվարություններով հանդերձ՝ ճեմարանը շարունակում էր իր որդեգրած ուղին՝ ջանալով այն պահել անսասան ու անդառնալի:

Մինչև 1959 թ. Սիրիայում նախակրթարանները հնգամյա էին, հետևաբար, ճեմարանը սկսում է գործել 6-րդ դասարանից:

Այդուսակ 12-ում տալիս ենք տվյալներ ճեմարանում դասավանդվող հայագիտական առարկաների վերաբերյալ ¹¹⁰:

Աղյուսակ 12.

Քարեն Եփեհ ճեմարանում դասավանդվող հայագիտական առարկաների ցանկը (1957-58 թթ.)

Դաս.	Ուսումնական առարկաներ	Ծանոթություն
VI դաս.	1) Հայերեն ա) քերականություն բ) բացատրական ընթերցանություն գ) ուղղագրություն դ) շարադրություն 2) Հայոց պատմություն (հին շրջանից մինչև արաբների արշավանքը)	Սրանցից յուրաքանչյուրին տրվում է առանձին դասաժամ: Դասագրքեր Բ.Թաշեանի «Հայկարամ»-ը, Գազանճեանի քերականությունը:
VII դաս.	1) Հայերեն ա) քերականություն բ) բացատրական ընթերցանություն գ) ուղղագրություն դ) շարադրություն 2) Հայոց պատմություն (Արաբական տիրապետության շրջան և Բագրատունիների ժամանակաշրջան)	Դասագրքեր Բ.Թաշեանի «Հայկարամ»-ը, Գազանճեանի քերականությունը: Դասագիրք չկա, օգտագործվում են ուսուցչի պատրաստած նյութերը:
VIII դաս.	1) Հայերեն ա) գրականության պատմություն (զարթոնքի սերունդ և վիպապաշտ գրողներ) բ) բացատրական ընթերցանություն գ) քերականություն դ) ուղղագրություն ե) շարադրություն 2) Գրաբար 3) Հայոց պատմ. (մինչև Լևոն Սեծագործ)	Յուրաքանչյուրի համար առանձին դասաժամեր: Դասագրքեր Մ.Թեյշեյան - «Դար մը գրականութիւն», Ա.Տիրազան - «Համադրույթ հայ գրականութեան պատմութեան»: Իսկ քերականությունը ուսուցիչների կազմած նյութերով: Դասագիրք չկա:

Դաս.	Ուսումնական առարկաներ	Ծանոթություն
IX դաս.	1) Հայերեն ա) գրականության պատմություն բ) բացատրական ընթերցանություն գ) քերականություն դ) շարադրություն 2) Գրաբար 3) Հայոց պատմություն (արաբ իշխանությունից մինչև Կիլիկիայի անկումը)	Դասագիրք «Դար մը գրականութիւն», «Համադրույթ հայ գրականութեան պատմութեան»: Իսկ քերականությունը և ուղղագրությունը՝ ուսուցիչների կազմած նյութերով:
X դաս.	1) Հայերեն ա) բացատրական ընթերցանություն բ) ուղղագրություն գ) քերականություն դ) շարադրություն 2) Գրաբար 3) Հայոց պատմություն 4) Եկեղեցական պատմություն (հայ եկեղեցին, եւթյունը, ծագումը, քրիստոնեությունը և նրա պետականացումը) 5) Մատենագրություն (եղիչե, Փարպեցի, Փալստոս, Ազաթանգեղոս)	Դասագրքեր «Դար մը գրականութիւն», «Համադրույթ հայ գրականութեան պատմութեան»: Նյութը՝ Քիփարյանի դասագրքից:
XI դաս.	Գիտական բաժին 1) Հայերեն ա) հայ գրականություն բ) շարադրություն	

¹¹⁰ Նույն տեղը էջ 164-165:

Դաս.	Ուսումնական առարկաներ	Ծանոթություն
XI դաս.	<p>Հայագիտական բաժին</p> <p>1) Հայերեն (գրականության պատմություն և գրականության վերլուծություն)</p> <p>2) Գրաբար (թարգմանություններ)</p> <p>3) Հայոց պատմություն (հայ ազատագրական շարժումը)</p> <p>4) Եկեղեցական պատմություն</p> <p>5) Հայաստանի աշխարհագրություն (բնակ. և քաղ. աշխարհագրություն)</p> <p>6) Մատենագրություն (Նարեկացի, Շնորհալի, Զուչակ, Ֆրիկ, Սայաթ-Նովա)</p> <p>7) Բարոյագիտություն (կյանք, մարդկային զգացումներ, գթություն)</p> <p>8) Մանկավարժություն (ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություն, ուսուցման մեթոդիկա):</p>	

1959 թ. Սիրիայի կրթության նախարարությունն ընդունում է որոշում, ըստ որի՝ երկրում գործող բոլոր նախակրթարանները (տարրականները), այդ թվում և մասնավոր, դառնում են վեցամյա: Բոլոր մասնավոր դպրոցները պետք է կիրարկեն պետական վարժարանների ծրագիրը, այդուհանդերձ նրանց թույլատրվում է նաև ունենալ մասնավոր ծրագիր՝ հայագիտական առարկաների դասավանդման համար: Ըստ այս որոշման՝ պարտադրվում է արաբերենով դասավանդել կրոնը, արաբական աշխարհի պատմությունը, աշխարհագրությունը, քաղաքացիական կրթությունը:

Հայ համայնքի վարած խելացի քաղաքականության ու բանակցությունների շնորհիվ հայկական դպրոցներում պահպանվեց կրոնի, թվաբանության և գիտության ուսուցումը հայերենով, իսկ «Հայոց պատմություն» և «Հայաստանի աշխարհագրություն» առարկաները պետք է դասավանդվեին «Հայ մշակույթի դասեր» անվան տակ: Սա տվյալ իրավիճակում դիտվեց մեծ արտոնություն տրված հայկական դպրոցներին:

Նախակրթարաններում ուսման տևողության մեկ տարով ավելանալը հանգեցրեց նրան, որ ճեմարանն իր կրթական գործունեությունը սկսեց 7-րդ դասարանից՝ միջնակարգը՝ 7-9 դասարաններ, իսկ երկրորդականը՝ 10-12 դասարաններ:

Սիրիայում կրթական այս աստիճաններն անփոփոխ պահպանվել են մինչև օրս, իհարկե, կրթության բովանդակության մեջ դարձյալ կրելով լուրջ փոփոխություններ: Դա 1967 թ. էր, երբ նախակրթարաններում արգելվեց հայերենով դասավանդել որևէ ուսումնական առարկա, բացի կրոնից (4 ժամ), իսկ հայերենի ուսուցումը թույլատրվեց միայն որպես ծիսական լեզու (4 ժամ): Սրա մասին արդեն խոսվել է գլխի առաջին մասում, երբ ներկայացվում էին Սիրիայի կրթական համակարգի առանձնահատկությունները:

Առաջին 15 տարիների ընթացքում Քարեն Եփփե ճեմարանը գործում էր այդիանոցից մնացած տաղավարներում, որոնք չէին կարող բավարարել օրեցօր աճող ու զարգացող ազգային պահանջները:

Հայության համահավաք ջանքերով և մասնավորապես Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության նվիրատվությամբ 1965 թ. ճեմարանը, որպես մեծ նվեր, ստանում է առաջին մասնաշենքը, որը քարաշեն, երկհարկանի ու լրիվ արդիական մի կառույց էր և կարող էր բավարարել 500-ից ավել աշակերտություն ունեցող կրթօջախի:

1980-ական թվականներին արդեն Քարեն Եփփե ճեմարանի աշակերտության թիվն անցնում էր հազարից: Յուրաքանչյուր սիրիահայ, մասնավորապես հալեպահայ, հանձինս ճեմարանի՝ օրեցօր առավել հստակ էր տեսնում հայկականության հեքն ու շունչը և ազգային ոգու վերազարթոնքը:

Սփյուռքահայության ուշադրությունը բևեռված էր Քարեն Եփփե ազգային ճեմարանի վրա՝ քայլ առ քայլ հիացմունքի և ուրախության այքերով հետևելով նրա զարգացման ընթացքին, անմիջական նյութական և բարոյական աջակցություն ցույց տալով նրան:

1973 և 1986 թվականներին, գրեթե յուրաքանչյուր տասը տարին մեկ, ճեմարանը հարստանում է նորակառույց մասնաշենքերով՝ կրթօջախին անհրաժեշտ բոլոր հարմարություններով՝ լուսավոր ու

հարմարավետ դասասենյակներ, քիմիական լաբորատորիա, սրահ (դահլիճ), մարզադաշտ:

Ճեմարանի գլխավոր մուտքի մոտ տեղադրված են Սիրիայի նախկին նախագահ Հաֆեզ էլ Ասադի, երջանկահիշատակ Չարեհ Ա. կաթողիկոսի և մեծ հայրենասեր Քարեն Եփփեի կիսանդրիները: 1997 թ. հուլիսին նրանց կողքին ավելանում է Ս. Մեսրոպ Մաշտոցի որմնաքանդակը, որի պաշտոնական բացումը տեղի է ունենում ճեմարանի հիմնադրության հիսնամյակի շքեղ արարողությունների շարքում, որին անձամբ մասնակցում էր Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Առաջին կաթողիկոսը: Վեհափառ հայրապետն իր արտասանած ճառում ասում է. «Քարեն Եփփե ճեմարանը տիրական ներկայություն դարձավ Սուրիոյ հայութեան կեանքէն ներս եւ իր կարեւոր դերը ունեցաւ հայ գաղութի կազմաւորման ու կազմակերպչական աշխատանքներուն մէջ: Արդ, կարելի չէ հասկնալ վերջին կէս դարու պատմութիւնը Միջին Արեւելքի հայութեան՝ առանց Քարեն Եփփե ճեմարանին: Կարելի չէ հասկնալ նույնիսկ ժամանակակից պատմութիւնը Հալէպ քաղաքին՝ առանց ազգային այս կրթական հաստատութեան, որ իր արժանի տեղը եւ իւրայատուկ դերը ունեցաւ Հալէպի կրթական ու մշակութային կեանքէն ներս:

Հայ դպրոցը հայ դպրոց կղառնայ ո՛չ իր շէնքով եւ ո՛չ ալ իր կրթական ծրագրով, այլ՝ այն հաւատքով ու իտէւալներով, զորս կը փոխանցէ նոր սերունդներուն: Ազգային Քարեն Եփփե ճեմարանը ոգի ներարկող, հաւատք ջամբող, տեսիլք փոխանցող սրբազան վայր մը դարձաւ՝ գիտութիւն բաշխող հաստատութիւն մը ըլլալէ առաջ ու վեր: Եւ հո՞ս կը կայանայ Քարեն Եփփե ճեմարանին ինքնուրոյն նկարագիրն ու եզակի առաքելութիւնը»¹¹¹:

Քարեն Եփփե ճեմարանն այսօր

Ազգային ճեմարանը սիրիահայ համայնքի համար ունի բարձր առաքելություն, գերազույն նպատակ, մեծ կշիռ ու դեր հայապահպանության, հայ երեխաներին ազգային արժեքներ փոխանցելու,

¹¹¹ Չոլաքեան Յակոբ, Յիսնամեակ Քարեն Եփփե ազգ. ճեմարանի, Գալէպ, 1997, էջ 9-10:

նրանց հայեցի կրթություն ու դաստիարակություն տալու գործում:

Իսկ ճեմարանի նախկին տնօրեն Վարդգես Նալբանդյանի խոսքերով՝ «Քարեն Եփփե ազգային ճեմարանը կոչված է հանրային փրկարար դեր կատարելու Միջին Արեւելքի եւ բովանդակ գաղթաշխարհի մէջ: Ճեմարանն է, որ հայ տղոց եւ աղջիկներուն պիտի տայ մտքի ու հոգիի անհրաժեշտ պաշարը, հայ ապրելու գիտակցութիւնն ու հպարտութիւնը: Քարեն Եփփե ճեմարանը սոսկ դպրոց մը եղած չէ մեզի համար, այլ ազգակերտումի ու հայակերտումի յորդահոս աղբիւր, ուրկէ հոսած է միայն ու միայն հայութիւն, վաւերական հայութիւն, ամբողջական հայութիւն»¹¹²:

Ճեմարանի ներկայիս տնօրենն է սփյուռքահայության մեջ ճանաչված ու հարգված մտավորական Վահե Ղազարյանը, որի յուրաքանչյուր խոսքը ճեմարանի մասին տողորված է սիրով, իսկ գործը՝ նպատակասլացությամբ, համոզմունքով ու վճռականությամբ:

Քարեն Եփփե ազգային ճեմարանը Սիրիայի պետական կրթական համակարգի կառույցի մեջ է: Ունի պետականորեն սահմանված կրթական երկու աստիճան՝ միջնակարգ (7-9-րդ դասարաններ), և երկրորդական (10-12-րդ դասարաններ):

Մրանք համապատասխանում են մեր միջնակարգ հանրակրթական դպրոցի հիմնական (4-8-րդ դասարաններ) և ավագ (9-10-րդ դասարաններ) դպրոցներին:

Ճեմարանն ունի մասնավոր դպրոցի կարգավիճակ՝ կրթության նախարարության հովանավորությամբ: Սեփականատերն է Սուրիոյ Բերիոյ թեմի առաջնորդ սրբազան հայրը:

Ազգային վարժարանն իր հիմնադրության օրվանից առ այսօր վայելում է ազգային իշխանության մեծ օժանդակությունն ու հոգատարությունը:

Ճեմարանում ուսուցման գործընթացը տեղի է ունենում արաբական պետական ծրագրով՝ արաբական բաքալորեա, ըստ որի՝ դպրոցում ուսուցանվող բոլոր առարկաները դասավանդվում են արաբերենով՝ 9-րդ և 12-րդ դասարաններում պետական քննություններ:

¹¹² Նույն տեղը էջ 14:

րով: Սրանց ավելանում են օտար լեզուները (ըստ ընտրության — ֆրանսերեն կամ անգլերեն) և հայագիտական առարկաները՝ կրոն՝ շաբաթը երկու ժամ և հայերենը՝ որպես ծիսական լեզու՝ չորս ժամ: Կրոնի ժամերին որոշ չափով ուսուցանվում են հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և մատենագրություն:

9-րդ և 12-րդ դասարաններում կրոնը դասավանդվում է արաբերեն՝ պետականորեն կազմած ծրագրով, և տարեվերջին հանձնվում է պետական քննություն:

Ճեմարանի աշակերտության թիվն այսօր հասել է 1000-ի: Սովորողների գերակշիռ մասը Հալեպի ազգային նախակրթարանների շրջանավարտներն են: Ճեմարանում սովորում են 13-ից 18 տարեկան հայ երեխաներ: 7-12-րդ դասարանների բոլոր աշակերտներն ամբողջ Սիրիայում գործող պատանեկան աշակերտական կազմակերպության անդամ են և կրում են զինվորական համազգեստ:

Ճեմարանում կրթության բովանդակությունը կազմված է հետևյալ ուսումնական առարկաներից (շաբաթական ժամաքանակով). (Աղյուսակ 13)

Աղյուսակ 13.

Ճեմարանում դասավանդվող ուսումնական առարկաների ցանկ

Առարկա	Դասարան	Դասաժամ
Արաբերեն		6 ժամ
Անգլերեն		5 ժամ
Բնագիտություն	7-10-րդ դաս.	2 ժամ
	11-րդ դաս.	4 ժամ
	12-րդ դաս.	5 ժամ
Մաթեմատիկա	մինչև 10-րդ դաս.	4 ժամ
	11-րդ դաս.	6 ժամ
	12-րդ դաս.	8 ժամ
Քիմիա		2 ժամ
Մարդաբանություն		2 ժամ
Պատմություն		3 ժամ
Աշխարհագրություն	բացի 11-րդ և 12-րդ գիտական բաժնից	3 ժամ
Փիլիսոփայություն	գրական բաժին	1 ժամ
Երաժշտ., զծագր.	7-9-րդ դաս.	յուրաքանչյուրը 2 ժամ
Չեռային աշխատանք, Մարզանք	7-9րդ դաս.	յուրաքանչյուրը 2 ժամ
Չայերեն		4 ժամ
Կրոն		2 ժամ

Առարկայական-մեթոդական հանձնախմբեր դպրոցում չեն գործում: Կրթական, մեթոդական, կարգապահական բոլոր հարցերը քննարկվում ու լուծվում են ճեմարանի ուսուցչական ժողովում՝ տնօրենի գլխավորությամբ: Իսկ դպրոցի տնտեսական, ուսումնադաստիարակչական բոլոր խնդիրների լուծման պարտականությունն իր վրա է վերցրել ճեմարանի խնամակալությունը, որը խորհրդակցաբար համագործակցում է Սուրիոյ Բերիոյ թեմի ուսումնական խորհրդի հետ: Ճեմարանի խնամակալության անդամներին ընտրում են ազգային իշխանությունները: Նրանք գաղութում ճանաչված մտավորականներ են, տարբեր մասնագիտությունների տեր ազգանվեր գործիչներ, գործարարներ և բարեգործներ, որոնք կամավոր հանձն են առնում ազգային ճեմարանի անխափան գործունեության և զարգացման գործի կազմակերպումը:

Խնամակալությունը հոգում է վարժարանի նյութական բոլոր կարիքները, շինարարական և վերանորոգման աշխատանքները, գույքային հարցերը, միևնույն ժամանակ հսկում է դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացը՝ հիմնվելով տնօրենի պարբերական զեկույցների վրա:

Ճեմարանի տնօրենին նշանակում է Սուրիոյ Բերիոյ թեմի առաջնորդ սրբազան հայրը՝ խորհրդակցելով ազգային իշխանությունների հետ:

Նկատի ունենալով ճեմարանի ունեցած մեծ դերը սիրիահայ գաղութի կրթանշակության կյանքում և հայապահպանության գործում՝ վարժարանի բոլոր տնօրենները եղել են ազգի նվիրյալներ, կրթական մշակներ և ուժեղ անհատականություններ, որոնք բոլորն էլ իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել ճեմարանի մեծ առաքելական ու ազգանվեր ընթացքի ու զարգացման գործում: Այդպիսի ներդրում է բերում նաև ներկայիս տնօրեն Վահե Դազարյանը, որը սրբորեն պահպանում է իր նախորդների հրաշալի ավանդույթներն ու ձեռքբերումները և անդով աշխատանքներ տանում նոր նվաճումների հասնելու համար:

Ինչպես ազգային բոլոր նախակրթարաններում, այնպես էլ Քարեն Եփփե ազգային ճեմարանում գործում են երկու տնօրեններ՝

արաբ տնօրենը՝ պետության նշանակած ներկայացուցիչը և հայ տնօրենը՝ սեփականատիրոջ ներկայացուցիչը (սեփականատերը սրբազան առաջնորդ հայրն է):

Ըստ տնօրեն Վահե Ղազարյանի խոսքերի՝ խոհեմ ու ներդաշնակ համագործակցություն կա արաբ ու հայ տնօրենների միջև, հստակեցված են յուրաքանչյուրի իրավասություններն ու պարտականությունները և գործունեության շրջանակները:

Ճեմարանի հայ տնօրենի նշանակման և ուսուցիչների ընտրության հարցերում ազգային առաջնորդարանի ուսումնական խորհուրդը միջամուղ չի լինում:

Ճեմարանը ուսումնական խորհրդի հետ կապեր է պահպանում կրթական, մեթոդական, դասագրքային, ուսուցիչների վերապատրաստման հարցերով:

Պետության ճանաչած տնօրենը արաբ ներկայացուցիչն է: Նա ուղղակի կապն է պետության հետ՝ հանձնիս կրթության նախարարության:

Արաբ տնօրենի պարտականությունների մեջ են մտնում.

1. հետևել կրթական մարմնի սահմանած բոլոր օրենքների և ցուցումների կատարմանը ճեմարանում,
2. հսկել բոլոր առարկաների պետական ծրագրերի կատարումը ճեմարանում, բացի հայագիտականից,
3. թույլ չտալ հակապետական որևէ դրսևորում ու երևույթ ճեմարանում,
4. նրան է վերապահված դպրոցին վերաբերող բոլոր փաստաթղթերի ստորագրման և վավերացման իրավասությունը՝ դրանով իսկ ստանձնելով պատասխանատվությունը դրանց համար (բացի տնտեսական բնույթի փաստաթղթերից, որոնք ստորագրում է հայ տնօրենը՝ որպես սեփականատիրոջ ներկայացուցիչ):

Իրականում հայ տնօրենն է, որ աչալրջորեն հետևում է դպրոցի ներքին հարցերին՝ լինեն դրանք կրթական, կարգապահական, թե՛ դաստիարակչական: Հայ տնօրենն իրեն պատասխանատու է զգում ճեմարանի իրականացրած կրթադաստիարակչական, ազգային ու

մշակութային ողջ գործունեության համար՝ խորապես գիտակցելով նրա դերն ու նշանակությունը սիրիահայության համար:

Արաբ և հայ տնօրենների միջև գործում են փոխադարձ հարգանքի, փոխհասկացողության ու փոխվստահության հարաբերություններ: Արաբ տնօրենը որևէ ձևով չի խոչընդոտում դպրոցում տեղի ունեցող միջոցառումները՝ կրթական, դաստիարակչական, ազգային, կրոնական: Նա խոր ըմբռնումով է մոտենում երևույթներին՝ քաջ գիտակցելով, որ ինքը գտնվում է հայկական դպրոցում, ուր թևածում է հայոց լեզուն, հայկական ոգին, քրիստոնեական հավատքը, տիրում է հայկական մթնոլորտ՝ ազգային առանձնահատկություններով, սովորույթներով, ավանդույթներով ու ծեսերով, որոնց հետ հաշվի չնստել նա չի կարող:

Իր հերթին էլ հայ տնօրենն արաբ տնօրենի հանդեպ դրսևորում է պատշաճ հարգանք ու վերաբերմունք՝ հաշվի առնելով նրա կարծիքը, տեսակետը, խորհուրդը՝ միաժամանակ թույլ չտալով որևէ անօրինականություն, որը կարող է վնասել երկրի պետականությանն ու շահերին: Ճեմարանում միջոցառումներ կազմակերպելուց առաջ նրան տեղյակ է պահում և նախապես ստանում արտոնություն: Սա վկայում է երկու տնօրենների ներդաշնակ աշխատանքի մասին, որից միայն ու միայն շահում է հայկական կրթօջախը՝ ճեմարանը, որը սիրիահայ համայնքի համար ունի մեծ առաքելություն, գերագույն նպատակ, լուրջ կշիռ ու դեր հայ երեխաների հայեցի կրթության և դաստիարակության և հայապահպանության նվիրական գործում:

Ճեմարանի ուսուցչական կազմը

Ի տարբերություն ազգային նախակրթարանների ուսուցչական կազմի, որը գրեթե 90%-ով բաղկացած է հայ ուսուցիչներից, ճեմարանի պարագայում մույնը չենք կարող ասել: Միջնակարգում 7-9-րդ դասարանների ուսուցիչների 60%-ն են հայ, 40%-ը՝ արաբ, իսկ երկրորդականում՝ (10-12-րդ դասարաններ) 40%-ը հայեր են, իսկ 60%-ը՝ արաբ:

Ուսուցչական կազմի այս պատկերը պայմանավորված է մի քանի պատճառներով.

1. Ըստ արտաքական բաքալորեայի ծրագրի՝ ճեմարանում դասավանդվող բոլոր առարկաներն ուսուցանվում են արաբերեն, ուստի պահանջվում է արաբերենի կատարյալ իմացություն, իսկ հայ ուսուցիչների շարքում դրանք այնքան էլ շատ չեն:

2. Ճեմարանում աշխատելու համար հիմնական նախապայման է համալսարանական կրթությունը (բոլոր առարկաների համար), որը մույնպես մեծ տոկոս չի կազմում հայ ուսուցիչների շրջանում:

3. Կարևոր նախապայման է նաև տվյալ առարկայի գծով մանկավարժական որոշակի փորձառություն ունենալը:

Այս երեք պայմանների բացակայությունն էլ պատճառ է ճեմարանում հայ ուսուցիչների թվի պակասի համար, որը, բնականաբար, անհրաժեշտ է լրացնել օտարազգի այն ուսուցիչներով, որոնց տվյալները բավարարում են վերոհիշյալ նախապայմանները:

Ուսուցչական կազմի ընտրությունը կատարում է հայ տնօրենը՝ խորհրդակցելով ճեմարանի խնամակալական կազմի հետ: Ուսուցիչներ ընտրելիս, բացի վերոհիշյալ չափանիշներից, հաշվի է առնվում նաև գաղութում տվյալ անձի ճանաչված լինելը, նրա բերած վաստակն ու ներդրումը գաղութի ազգային, կրթամշակութային կյանքում: Ուսուցչի հետ բազմաթիվ զրույցներից հետո, եղած դրական երաշխավորությունների վրա հենվելով՝ տնօրենը նրա թեկնածությունը ներկայացնում է խնամակալական մարմին՝ այն վավերացնելու համար:

Այսօր ճեմարանում աշխատում են սիրիահայության շրջանակներում մեծ ճանաչում, երկար տարիների մանկավարժական վաստակ ունեցող, հայ գաղութի հոգսերով ապրող ու նրա զարգացմանն ի նպաստ գործունեություն ծավալող կրթական և մշակութային այնպիսի մշակներ, ինչպիսիք են Հակոբ Չոլաքյանը, Մարալ Թարխանյանը, Լալա Մինասյանը, Ալիս Գաթրոջյանը, Լենա Նազարյանը, Անի Ֆիշենքյանը և ուրիշներ: Նրանցից շատերն իրականացնում են ոչ միայն մանկավարժական հնուտ աշխատանք, այլ նաև գի-

տահետազոտական գործունեություն: Նրանք հեղինակ են մենագրությունների, դասագրքերի, գիտական և հրապարակախոսական բազմաթիվ հոդվածների, որով և իրենց ներդրումն են բերում մանկավարժության զարգացմանը սփյուռքում: Ինչպես արդեն նշել ենք, բանասեր Հակոբ Չոլաքյանը հեղինակն է ազգային վարժարանների տարրական դասարաններում դասավանդվող «Հայերենի դասագիրք» դասագրքի, ունի ուսումնասիրություններ Քեսաբի մասին, եղել է «Գանձասար» շաբաթաթերթի առաջին խմբագիրը:

Քարեն Եփփե ճեմարանի ուսուցիչներից մի քանիսն իրենց բարձրագույն կրթությունը ստացել են հայրենիքի բարձրագույն ուսումնական հաստատություններում, մասնավորապես Երևանի պետական համալսարանում՝ վաստակաշատ մանկավարժներ Հակոբ Չոլաքյանը և Լալա Մինասյանն ավարտել են ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետը, իսկ Անի Ֆիշենքյանը, ավարտելով ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի մագիստրատուրան, այժմ մույն ֆակուլտետի ասպիրանտն է և պատրաստում է իր թեկնածուական գիտական թեզը:

Ուսուցիչներից շատերը վերապատրաստման դասընթացներ են անցել մայր հայրենիքում՝ ստանալով ոչ միայն հոգեբանամանկավարժական և մեթոդական պատրաստություն, այլ նաև իրենց մեջ խտացնելով հայրենիքի շունչն ու ոգին, հարազատ հողի ձգողականության ու հարազատության ուժը, ստացել են նոր լիցք ու էներգիա Հայաստան-սփյուռք համագործակցության զարգացման համար:

Հիրավի, Քարեն Եփփե ճեմարանի ուսուցիչները լավ պատրաստված, առարկայական խոր գիտելիքների տեր, մանկավարժական փորձառություն ունեցող մասնագետներ են, որի ճշմարտացիության մեջ մենք համոզվեցինք ճեմարանում կատարած մեր բազմաթիվ դասալսումների ժամանակ: Դրանցում բացահայտվում էին հայագիտական առարկաների ուսուցիչների առարկայական խոր ու հիմնավոր իմացությունը, մանկավարժական տակտն ու վարպետությունը, կիրառած մեթոդների բազմազանությունն ու արդյունավետությունը, ուսուցիչ-աշակերտ համագործակցությունը:

Դասագրքերը

Ճեմարանում հայոց լեզվի և գրականության դասագրքերի հարցը դեռևս չլուծված խնդիրներից է: Եղած դասագրքերը լիովին չեն համապատասխանում դասագրքաստեղծման գիտական չափորոշիչներին և լուրջ վերանայման կարիք ունեն ինչպես կառուցվածքային ու բովանդակային (նյութերի ընտրության), այնպես էլ մեթոդական և հոգեբանամանկավարժական տեսակետներից: Մասնավորապես շեշտը պետք է դնել դիդակտիկական այնպիսի կարևոր սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ գիտականության, մատչելիության, ներառարկայական և միջառարկայական կապի, տեսության և պրակտիկայի կապի, սովորողների ինքնուրույնության և ակտիվության զարգացման սկզբունքները: Մրանք նպաստում են նյութի հեշտ ընկալմանն ու յուրացմանը և ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը:

Ճեմարանում գործածվում են՝ միջնակարգի բաժնում Հարություն Զյուրքյանի «Հայրենի աղբյուր», իսկ երկրորդականում՝ Մուշեղ Իշխանի «Արդի հայ գրականությունը» դասագրքերը: Մակայն այս դասագրքերի նկատմամբ կան տեղի մանկավարժների որոշակի վերապահություններ: Նախատեսվում է զաղութի կարող ուժերի՝ ուսուցիչների և գիտնական-մանկավարժների միասնական ջանքերով ձեռնամուխ լինել նոր դասագրքերի ստեղծման գործին:

Սիրիահայ մանկավարժները միանգամայն իրավացիորեն դեն են, որ Սիրիայի հայկական դպրոցների համար դասագիրք գրեն Հայաստանի, նույնիսկ ուրիշ զաղութի մտավորականները, քանի որ, ըստ նրանց, հեղինակը դասագիրքը գրելիս անպայման պետք է հաշվի առնի սիրիահայ երեխայի հոգեբանությունը, մտածողությունը, հետաքրքրությունները, ունակությունները: Նա շատ մոտիկից պետք է ծանոթ լինի այն միջավայրին, ուր ապրում ու մեծանում է սիրիահայ երեխան: Իսկ հայրենիքի մասնագետներից նրանք ակնկալում են մասնագիտական, մեթոդական և հոգեբանամանկավարժական օգնություն:

Երկրորդ տարբերակը համահեղինակությունն է: Նախատեսվում է այլընտրանքային դասագրքերի դեպքում յուրաքանչյուրին տալ փորձառական շրջան՝ 1-3 տարի:

Կրոնի դասագրքերը, բացի 9-րդ և 12-րդ դասարաններից, կազմել է առաջնորդարանը: Կրոնի դասերին հատվածաբար դասավանդվում է նաև հայոց պատմություն, քանի որ 1967-ից այն արգելված է պետության կողմից:

Այստեղ ավելանում են նաև Սիրիայի կրթական համակարգի առանձնահատկությունները, որոնք նույնպես թելադրում են որոշ պայմաններ դասագրքաստեղծման գործին: Դրա վկան է Հակոբ Չոլաքյանի «Հայերենի դասագիրքս» գիրքը (գրված I-VI դասարանների համար), որը, դասագրքին ներկայացվող շատ չափանիշներ խախտած լինելով հանդերձ, սիրիահայ իրականության համար հաջողված գիրք է, քանի որ լրացնում է այն բոլոր բացերն ու պակասը, որոնք առաջացել են հայկական դպրոցներում պետության սահմանած կրթական որոշ սահմանափակումների հետևանքով:

Բրյուվեի և բաբալորեայի ծրագրերը

Ճեմարանի միջնակարգը ներառում է 7-ից 9-րդ դասարանները:

9-րդը ավարտական դասարան է, որ կոչվում է բրյուվեի դասարան (ֆրանսիական կրթական համակարգի նմանությամբ) կամ աստիճան: Ճեմարանի աշակերտության թիվը միջնակարգից երկրորդականին անցնելու շրջանում զգալիորեն նվազում է: Պատճառը հիմնականում 9-րդ դասարանի բրյուվեի պետական քննությունների դժվարություններն ու արդյունքներն են:

Պետական քննություններ են հանձնվում լեզվական, մաթեմատիկական, բնագիտական առարկաներից, ինչպես նաև կրոնից՝ ութ օրվա ընթացքում: Բոլոր 7 առարկաներից քննությունների միավորների ընդհանուր առավելագույն գումարը 290 է, որից 200-ը անցումային միավորն է, դրանից ցածրի դեպքում՝ նույնիսկ 199-ը, քննությունը ձախողված է համարվում:

10-րդ դասարան ընդունվելու համար բրյուվեի պետական յուրաքանչյուր քննությունից աշակերտը պետք է ստանա 100-ից 70 միավոր՝ անցումային ընդհանուր 200 միավորը հավաքելու համար:

Բրյուվեի պետական քննություններն անցկացվում են կենտրոնացված համակարգով, միասնական ծրագրերով, որոնք պարտադիր են Սիրիայում գործող և՛ պետական, և՛ մասնավոր դպրոցների համար:

Միջնակարգից երկրորդականի կրթական աստիճանն անցնելիս, ըստ պարոն Ղազարյանի, ճեմարանը կորցնում է աշակերտության 50%-ը: Իհարկե, քննությունների ձախողումը չէ դրա միակ պատճառը: Քննությունների դրական արդյունքներով անգամ աշակերտության թվի կորուստը 15-20% է, քանի որ չի հավաքվում պարտադիր 200 միավորը: Հիրավի, սա ճեմարանի աշակերտության թվի հսկայական անկում է՝ գրեթե կիսով չափ: Պատկերը հետևյալն է.

7-9-րդ դասարաններում — 250-300 աշակերտ,

10-12-րդ դասարաններում — 100-150 աշակերտ:

Ինչ վերաբերում է հայագիտական առարկաներին, ապա դրանք պետական քննությունների ցանկում ընդգրկված չեն: Ընդգրկված է միայն կրոնը, սակայն արաբերեն:

Յուրաքանչյուր դասարանում (սկսած 7-րդից) հայագիտական առարկաներից տարեվերջյան քննություններ են հանձնվում, սակայն դրանցից ձախողվելը դասարան կրկնելու կամ չկրկնելու պատճառ չի կարող դառնալ: Ի դեպ, նշենք, որ կրոնի պատմությունը 9-րդ դասարանում դասավանդվում է արաբերենով, քանի որ այն ընդգրկված է բրյուվեի պետական քննությունների ցանկում: Համակողմանի ուսումնասիրությունները, ուսուցիչների, տնօրենների և աշակերտների հետ զրույցները մեզ հանգեցրին այն եզրակացության, որ բրյուվեի քննությունների ձախողումների պատճառ է ոչ միայն քննությունների կենտրոնացված համակարգով անցկացումը (ի դեպ սա ապահովում է արդյունքների բարձր օբյեկտիվություն), այլ նաև հայ աշակերտների արաբերենի վատ իմացությունը, քանի որ բոլոր առարկաներից քննություններն անցկացվում են արաբերեն: Գեմարանի տնօրենի տված տվյալներով դպրոցի շրջանավարտների

միայն 50%-ն է շարունակում ուսումը համալսարաններում, որոնցից 60%-ը՝ Սիրիայի բարձրագույն դպրոցներում, իսկ 40%-ը՝ այլ երկրների: Ավելացնենք նաև, որ այս տվյալները տարեցտարի փոխվում են:

Սիրիայի բարձրագույն ուսումնական հաստատություններում մուտքի քննություններ չկան: Յուրաքանչյուր բուհում ըստ մասնագիտությունների սահմանված է մուտքի անցումային միավորը, որին համապատասխան տվյալներ ունեցող դիմորդը կարող է սովորել այդ ճյուղում: Վճռորոշ են համարվում դպրոցների (երկրորդական վարժարանների և ճեմարանների) բաքալորեայի ավարտական քննությունների արդյունքները:

Բաքալորեայի (9-12դդ.) կրթական ծրագիրը կազմում ու վավերացնում է Սիրիայի կրթության նախարարությունը: Այս ծրագրերը միասնական են Սիրիայում գործող բոլոր դպրոցների համար:

Բաքալորեայի պետական ավարտական քննությունները նույնպես անցակցվում են կենտրոնացված համակարգով: Պետական քննությունների հարցաշարը նույնն է Սիրիայի բոլոր դպրոցների համար: Պետական քննությունների արդյունքների (միավորների) գումարն էլ համարվում է մուտքի անցումային միավոր բարձրագույն դպրոցների համար: Այդ միավորների անցումային շենը տարբեր բուհերում և տարբեր մասնագիտությունների համար նույնը չէ, այն կախված է տվյալ բուհի համապատասխան մասնագիտությանը ներկայացված պահանջներից ու չափանիշներից:

Գեմարանի շրջանավարտներից բարձրագույն դպրոցներում սովորողների թվի ոչ մեծ լինելը տնօրենը բացատրում է մի քանի պատճառներով.

1. քննական ծրագրերի բավականին մեծ ու ծավալուն լինելով,
2. հոգեբանական գործոնով (վախ, հուզմունք, նյարդայնացում), պայմանավորված՝ ոչ սեփական դպրոցում քննություններ հանձնելու խնդրով,
3. բոլոր առարկաների քննություններն արաբերենով հանձնելու հանգամանքով (արաբերենի ոչ կատարյալ իմացությամբ),
4. քննական գործընթացին վատ նախապատրաստվելու փաստով:

Վերոհիշյալ բոլոր պատճառները, բնականաբար, ազդում են քննությունների արդյունքների վրա և իջեցնում բուհ ընդունվողների տոկոսը:

Ակնհայտ է, որ աշակերտների մասնագիտական կողմնորոշման հիմքում ընկած են նրանց նախասիրությունները, ներքին մղումը և բնածին տվյալները: Սակայն Սիրիայի աշակերտության համար նախասիրություններն ու տվյալ բնագավառի գիտելիքները չէ, որ խաղում են վճռորոշ դեր, քանի որ բժշկության մեջ իր ուսումը շարունակել ցանկացող և բնագիտական առարկաներից նույնիսկ փայլուն տվյալներ ունեցող աշակերտը չի կարող ընդունվել բժշկական համալսարան (կամ ֆակուլտետ), եթե ընդհանուր միավորը չի հասնում 220, որը կազմվում է հումանիտար առարկաներից նույնպես կատարյալ իմացության դեպքում միայն: Սա զրկում է շրջանավարտին իր նախասիրած մասնագետը դառնալու հնարավորությունից:

Կարծում ենք, հարցին այսպիսի մոտեցումը վնասում է սովորողների մասնագիտական կողմնորոշման չափազանց կարևոր գործին և պատճառ դառնում շատ ու շատ շնորհալի երիտասարդների շարունակական կրթության գործընթացի խափանմանը:

Սա է պատճառը, որ այսօր Սիրիայում հայ համալսարանավարտների թիվը չափազանց փոքր է, և արդյունքում մեծանում է մեր հայ երեխաներին կրթող արաբ ուսուցիչների թիվը հայկական միջնակարգ և երկրորդական վարժարաններում: Բայց չէ՞ որ սրանով մենք վտանգի ենք ենթարկում հայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության գործը, որը բոլոր հայկական դպրոցների գերագույն նպատակն է ու գործունեության իմաստը:

Ըստ ընդունված կարգի՝ շրջանավարտներն իրենց նախընտրած մասնագիտության ճյուղում ձախողվելու դեպքում հաջորդ տարի կարող են վերահանձնել բաքալոբեայի քննությունները՝ արդյունքները բարձրացնելու նպատակով:

Սիրիայի համալսարաններում տարբեր մասնագիտություններ ունեն կրթական տարբեր աստիճաններ՝ բակալավրի և մագիստրոսի և նաև ուսման տարբեր տևողություն՝ չորս և երկու տարի:

Երևանի պետական համալսարանի և Սիրիայի համալսարանների միջև կան նմանություններ՝ կրթական եռաստիճան համակարգի (բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա) և ուսման տևողության առումով (4 և 2):

Քարեն Եփփե ազգային ճեմարանը, կրթական հարցերին զուգահեռ, մեծ ուշադրություն է դարձնում սովորող հայ երեխաների համակողմանի ու ներդաշնակ զարգացման ու դաստիարակության խնդիրներին, որոնք իրականացվում են ինչպես արտադասարանական, այնպես էլ արտադպրոցական բազմաբնույթ միջոցառումների ու ձեռնարկների շնորհիվ:

Լուրջ աշխատանքներ են տարվում՝ զարկ տալու արվեստի տարբեր ճյուղերի՝ գծագրությանը, երաժշտությանը և քատրոնին՝ հատկապես երկրորդական բաժնում:

Մեծ խանդավառությամբ ու բարձր կազմակերպվածությամբ ճեմարանում նշվում են եկեղեցական և ազգային բոլոր տոները:

Ատենամարզանքի անվան տակ ճեմարանի բոլոր դասարաններում դասախոսություններ են տրվում պատմական, ընկերային, բժշկական և այլ թեմաների շուրջ: Հանդիպումներ են կազմակերպվում սփյուռքի և հայրենիքի նշանավոր մտավորականների հետ: Ճեմարանն ակտիվորեն մասնակցում է միջդպրոցական մրցումներին՝ առարկայական, սպորտային, մշակութային և այլն: Դրանք կազմակերպում են ինչպես պետական կրթական մարմինները, այնպես էլ առաջնորդարանի ուսումնական խորհուրդը: Մրցումների արդյունքներում ճեմարանն առաջատարների շարքերում է:

1961-ից ճեմարանում լույս է տեսնում «Ծիլեր» աշակերտական թերթը, որը սովորողներին ընձեռում է ազատ ու անկաշկանդ հնարավորություն՝ ինքնաճանաչման, ձեռք բերած գիտելիքները, կարողություններն ու ունակությունները ստուգելու, ճեմարանի առօրյան, ճեմարանական կյանքը վերլուծելու, արժեքավորելու, քննադատաբար մոտենալու ու իրենց իղձերն ու ցանկություններն արտահայտելու համար: «Ծիլեր»-ում իրենց ստեղծագործական առաջին փորձերն են անում ապագա գիտնականը, բանաստեղծը, լեզվաբանը, գրականագետն ու պատմաբանը, նկարիչն ու ձևավորողը: Տնօրի-

նությանն ու ուսուցչական կազմին ուղղված աշակերտների բազմաթիվ սուր ու քննադատական խոսքերը հանդես են գալիս որպես զգաստացնող ու կրթադաստիարակչական գործընթացը բարեփոխող ազդակ:

1947 թ. առ այսօր ճեմարանում գործում է «Շրջանավարտից միությունը», որը 1999-ից լույս է ընծայում «Շավիղ» պարբերաթերթը: «Շրջանավարտից միությունն» իր բազմաբնույթ գործերով ու ձեռնարկներով նյութական և բարոյական աջակցություն է ցույց տալիս ճեմարանի կրթադաստիարակչական գործունեությանը:

Ընտանիք-դպրոց համագործակցությունը ճեմարանում կարելի է համարել կայացած: Բացի ավանդական ծնողական ժողովներից, առավել ակտիվ են ծնողների անհատական հանդիպումներն ուսուցիչների և տնօրինության հետ՝ աշակերտների դժվարությունները միասնական ուժերով լուծելու նպատակով: Սա ճեմարանի նկատմամբ բարձր հոգածության վկայությունն է և այն ժողովրդի հարստությունը համարող, իրենց զավակներին լույս և հոգևոր ու բարոյական արժեքներ տվող սրբություն: Յուրաքանչյուր դասարանում կազմված են ծնողական կորիզներ (միավորներ, փոքրաթիվ), որոնց աշխատանքը, անմիջական կապը դասարանի ուսուցիչների, դաստիարակի՝ դասարանի պատասխանատուի (մեր դպրոցներում դասղեկն է) հետ նպաստում են դասարանում ծագած ցանկացած խնդրի լուծմանը:

Ճեմարանում հսկայական է հսկիչ-դաստիարակների դերը հայ աշակերտների լիարժեք դաստիարակության գործում՝ նրանց մեջ սերմանելով ազգային ինքնագիտակցության ոգի, բարձր հայրենասիրություն:

Դաստիարակի աշխատանքին մեր դպրոցներում համարժեք է դասղեկի գործունեությունը, սակայն մեկ էական տարբերությամբ, որ մեզ մոտ դասղեկը տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչներից մեկն է, որը միաժամանակ ստանձնում է տվյալ դասարանի կրթադաստիարակչական և կարգապահական բոլոր հարցերի պատասխանատվությունը, իսկ Սիրիայում պետականորեն դաստիարակին արգելված է դասավանդել: Դաստիարակը կամ հսկիչը, ինչպես ան-

վանում են ճեմարանում, զբաղեցնում է վարչական պաշտոն և հիմնականում զբաղվում է սովորողների կարգապահական-դաստիարակչական հարցերով՝ աշակերտների հաճախումներ, կարգապահություն, տարբեր առարկաներից գրավոր աշխատանքների տվյալների հաշվառում, գրավոր հայտագրերի, ծրագրերի պատրաստում, աշակերտների առաջադիմության ամսական, կիսամյակային և տարեկան վիճակագրյցերի, քննությունների հայտագրերի պատրաստում և, իհարկե, աշակերտների հետ բարոյախրատական զրույցների կազմակերպում (դասարանով և անհատական):

Յուրաքանչյուր հսկիչ ստանձնում է տվյալ դասարանին վերաբերող բոլոր գործերը՝ թղթատարային, հսկողական, սրբագրական, վիճակագրական և այս ամենին ավելանում է նրա դաստիարակ լինելը, որը ներառում է սովորողների դաստիարակության խնդիրները:

Ճեմարանում կա ութ 8-րդ դասարան, ուր սովորում է 300 աշակերտ: Այս ութ դասարանների հսկողությունն ու ողջ պատասխանատվությունը դրված են երկու դաստիարակի վրա՝ յուրաքանչյուրին 4 դասարան՝ 150 աշակերտով:

Արդյո՞ք ֆիզիկապես հնարավոր է մոտիկից ծանոթանալ 150 աշակերտի հետ՝ նրանց լավ ճանաչելու, հետևաբար և դրականորեն ներգործելու ու դաստիարակելու համար: Կարծում ենք, որ նրանց աշխատանքի արդյունավետությունը կիսով չափ ընկնում է:

Մեր դպրոցներում դասղեկն աշխատում է մեկ դասարանի հետ, ուր ընդգրկված են 25-30 աշակերտներ: Բնականաբար, այս կազմի հետ աշխատելն առավել հեշտ է ու արդյունավետ: Սրան ավելանում է նաև այն հանգամանքը, որ դասղեկը նաև տվյալ դասարանում դասավանդող ուսուցիչ է, որը նպաստում է աշակերտներին ավելի մոտիկից ճանաչելուն, որը աշակերտների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքների արդյունավետության կարևոր գրավականներից է:

Չնայած իրենց աշխատանքների լայն ընդգրկմանը՝ ճեմարանի հսկիչ-դաստիարակները կատարում են հսկայածավալ անձնվեր գործեր, որոնց արդյունքում ճեմարանում բարձր է կարգապահությունը, թևածում է ազգային ոգին, լավ մակարդակի վրա են ուսու-

ցիչ-աշակերտ, աշակերտ-տնօրհնություն, աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններն ու համագործակցությունը, օտար միջավայրում լինելով հանդերձ՝ այնտեղ տիրում է հայկականությունը՝ հայկական շունչն ու հեքը:

Քարեն Եփփեն ազգային ճեմարանը սփյուռքահայ իրականության մեջ ունեցել է և շարունակում է ունենալ բախտորոշ ու վավերական ներկայություն ու դեր ազգապահպանման գործում:

Ճեմարանի հազարավոր շրջանավարտներ այսօր գրեթե ամենուր սփյուռքում հանրային, կրթական և մշակութային և այլ բնագավառներում իրենց ներդրումն են բերում հայապահպանության գործին: Ճեմարանը սփյուռքին տվել է բազմահազար ուսուցիչներ, մշակավոր ազգային գործիչներ և հրապարակագիրներ:

Սուրիոյ Բերիոյ թեմի առաջնորդ Սուրեն Արք. Գաթարոյանն ասում է. «Ազգային Քարեն Եփփե ճեմարանը ուսման եւ կրթութեան գուգահեռ, աներկբայօրեն նկարագրի կերտման եւ գաղափարապաշտ սերունդի մը դաստիարակութեան վսեմ ձուլարանը եղաւ, որուն լուսեղեն յարկին ներքեւ սերունդներ բացուեցան գիտութեան լոյսին եւ հայաբոյր դաստիարակութեամբ դարձան նուիրեալ մշակները հայ կեանքին»¹¹³:

Միրիայում գործող հայկական այլ դպրոցներ

Բացի ազգային վարժարաններից, հայ առաքելական համայնքում հայապահպանական և կրթամշակութային ակտիվ գործունեություն են ծավալում նաև ՀԲԸ միության և Հնչակյան կուսակցության հովանու տակ գործող դպրոցները, որոնք բացվել են ինչպես Հալեպ քաղաքում, այնպես էլ Միրիայի այլ հայախոծ վայրերում:

Հայ երեխային օտար միջավայրում հայ պահելու, նրա մեջ ազգային ինքնագիտակցության ոգի սերմանելու վսեմ գործին են լծված ՀԲԸ միության Նաջարյան-Գյուլբենկյան կենտրոնական վարժարանը և Հնչակյան կուսակցության Կիլիկյան ճեմարանը:

Լ. Նաջարյան-Գ. Գյուլբենկյան կենտրոնական վարժարանը հիմնվել է 1954 թ.: Այն ունի կրթական երեք աստիճաններն էլ՝ նախակրթարան, միջնակարգ և երկրորդական (ներառյալ մանկապարտեզը):

Դպրոցն ընդգրկված է Միրիայի պետական կրթական համակարգի մեջ, և ուսուցումը կազմակերպվում է պետական ծրագրերով (հավելյալ հայագիտական առարկաները): Առաջինից մինչև 12-րդ դասարաններում բոլոր ուսումնական առարկաները (քնագիտամաթեմատիկական և հումանիտար) դասավանդվում են արաբերենով:

Դպրոցն ունի 1460 աշակերտ (ներառյալ մանկապարտեզը), որից 20 տոկոսը արաբ երեխաներ են, ի տարբերություն Քարեն Եփփե ճեմարանի, որտեղ ամբողջ աշակերտությունը (1000) հայազգի է:

Հետաքրքրական փաստ է, որ Նաջարյան-Գյուլբենկյան վարժարանում սովորող արաբ երեխաները նախակրթարանից սկսած անցնում են հայերեն: Կան նաև խառն ամուսնությունների ընտանիքների երեխաներ:

Նախակրթարանում ուսուցչական կազմի մեծամասնությունը հայ է, իսկ միջնակարգ և երկրորդական բաժիններում 70 % արաբ են, 30 %-ը՝ հայ: Վերջին երկու բաժիններում ուսուցիչների համալսարանական կրթությունը պարտադիր է, իսկ նախակրթարանում՝ նվազագույնը երկրորդականի վկայականը: Դպրոցում հայերենին տրված է 4 ժամ, կրոնին՝ 3 ժամ: Կրոնը դասավանդում են աշխարհիկ ուսուցիչներ (հիմնականում հայերենի ուսուցիչները):

Դպրոցի հոգաբարձուների խորհրդի կազմն ու տնօրենին մշակում է ՀԲԸ միության շրջանային հանձնախումբը:

Վարժարանում չլուծված խնդիր է դասագրքերի հարցը: Նախակրթարանում դասագիրք չկա: Ուսուցիչներն են կազմում տեքստերը: Իսկ միջնակարգում մայրենի լեզուն դասավանդվում է դպրոցի տնօրեն, Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Ալեքսան Աթթարյանի «Տիր» խորագիրը կրող դասագրքերով: Երկրորդականում գործածվում է Մուշեղ Իշխանի գիրքը, սակայն հիմնականում ուսուցիչներն են կազմում նյութերը և բաժանում աշակերտներին:

¹¹³ Չոլաքյան Յակոբ. Յիսնամեակ Քարեն Եփփե ազգային ճեմարանի, Գալեպ, 1997, էջ 11:

Դպրոցի մանկավարժների կողմից առաջարկվում է Հայաստանի մանկավարժների հետ համահեղինակությամբ կազմել դասագրքեր սփյուռքի դպրոցների համար:

Վարժարանում հայերենի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման հարցը դեռևս մնում է կարևոր խնդիրներից մեկը, որին լուծում տալու համար դպրոցն ակնկալում է Հայաստանի կրթության և գիտության նախարարության մեծ օժանդակությունը: Ինչպես նշել ենք առաջին գլխում, այդ գործընթացն արդեն սկսվել է:

Նաջարյան-Գյուլբենկյան կենտրոնական վարժարանի շրջանավարտների մեծ տոկոսն ուսումը շարունակում է Հալեպի պետական համալսարանում, մի քանի աշակերտ՝ Հայաստանում, շատ չնչին տոկոսը՝ արտասահմանում: Վարժարանի աշակերտությունն անդամակցում է Հայ երիտասարդաց ընկերակցությանը, որն իր կիրակնօրյա գործունեությամբ իրականացնում է երեխաների հայեցի դաստիարակության գործը՝ կազմակերպելով դասախոսություններ, խաղեր, մրցումներ, զբոսապատույտներ և այլն:

Լ. Նաջարյան-Գ. Գյուլբենկյան կենտրոնական վարժարանն իր ծավալած կրթանշակությանն համապարփակ գործունեությամբ մեծ ներդրում է բերում Սիրիայում հայապահպանության, մատաղ սերնդի հայեցի կրթության և դաստիարակության նվիրական գործին:

Այս մեծ գործին իր բաժին ավանդել է բերում նաև Կիլիկյան ճեմարանը: Դպրոցը հիմնադրվել է 1921 թվականին (ՄԴՀԿ) Հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ: Սկզբում գործել են մանկապարտեզի և նախակրթարանի բաժինները, իսկ 1960-ից՝ միջնակարգը և երկրորդականը: Դպրոցն ունի մոտ 500 աշակերտ: Ինչպես մյուս բոլոր հայկական դպրոցները, Կիլիկյան ճեմարանը նույնպես Սիրիայի կրթական համակարգի կազմում է և իր ունիոնական գործունեությունն իրականացնում է պետական պարտադիր ծրագրերով: Սրան ավելանում են հայերենը՝ որպես ծիսական լեզու՝ նախակրթարանում 6 ժամ, իսկ միջնակարգում և երկրորդականում՝ 4 ժամ, և կրոնը՝ 3 ժամ: Այստեղ նույնպես ակնառու հիմնախնդիր է դասագրքերի հարցը: Մինչև Հայաստանի անկախացումը ճեմարանը հայրենիքից ստացել է դասագրքեր՝ գրված սփյուռքի դպրոցների համար: Սա-

կայն վերջին 10 տարիների ընթացքում դադարել է դրանց առաքումը սփյուռքի դպրոցներ, որի հետևանքով վերջիններս կանգնել են դժվարին կացության առջև:

Այսօր Կիլիկյան ճեմարանի նախակրթարանում գործածում են Կարապետ Ջուհարյանի «Մրգաստանը», միջնակարգում՝ Ալ. Աթթարյանի «Տիրը», իսկ երկրորդականում դասագիրք չունեն, ուսուցիչներն իրենք են տեքստերը կազմում, երբեմն օգտվում են Մուշեղ Իշխանի «Արդի հայ գրականություն» գրքից:

Կարծում ենք, ժամանակն է, որ Հայաստանի մանկավարժ-գիտնականներն օգնության ձեռք մեկնեն իրենց հայրենակիցներին՝ համատեղ ուժերով վերոհիշյալ խնդիրը լուծելու համար:

Կիլիկյան ճեմարանը նույնպես ունի հոգաբարձուների խորհուրդ, որի անդամներին և նաև դպրոցի տնօրենին նշանակում է Հնչակյան կուսակցությունը: Դպրոցն ունի նաև տիկնանց հանձնախումբ, որի կազմի մեջ են և՛ ծնողները, և՛ Հնչակյան կուսակցության մշակութային ակումբի անդամները, որոնք տարբեր միջոցառումներ են կազմակերպում և հավաքված հասույթը տրամադրում դպրոցին:

Ուսուցիչների կրթական մակարդակի նկատմամբ պահանջները նույնն են, ինչ Քարեն Եփփե ճեմարանում և Նաջարյան-Գյուլբենկյան կենտրոնական վարժարանում: Կիլիկյան ճեմարանն ունի նաև այցելու ուսուցիչներ, որոնք հիմնականում աշխատում են պետական դպրոցներում և մի քանի ժամ դասավանդում են նաև մասնավոր կրթարաններում (6-8 ժամ):

Ճեմարանի աշակերտների արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները հիմնականում տեղի են ունենում ՀՄՄ մարզական և «Նոր սերունդ» մշակութային միությունների շրջանակներում, որոնց անդամ են դպրոցի զրեթե բոլոր սովորողները:

Ճեմարանի ունեցած հաջողությունների մասին խոսում է տնօրեն տիկ. Ազնիվ Կյուրեղյան-Յագուպյանի հետևյալ միտքը. «Երբ դպրոց մը կանգուն կը մնայ 78 տարիներ, փաստ է, որ յաջողութիւն արձանագրած է»¹¹⁴:

¹¹⁴ Հարցազրույց Կիլիկյան ճեմարանի տնօրեն Ա. Ա. Յագուպյանի հետ, Հալեպ, մարտ, 1999:

Նաջարյան-Գյուլբենկյան կենտրոնական վարժարանը և Կիլիկյան ճեմարանը տարբեր կուսակցությունների և միությունների հովանու տակ են գործում և ստանում նրանց մեծ աջակցությունը: Սակայն Սիրիայի պետական համապատասխան կառույցներում նրանք երկուսն էլ արձանագրված են հայ առաքելական համայնքի կազմում:

Սիրիայի հայկական դպրոցների մասին պատկերացումն ամբողջական չի լինի, եթե մեր խոսքը սահմանափակվի միայն հայ առաքելական համայնքում գործող դպրոցների ներկայացմամբ, քանի որ, ինչպես արդեն նշվել է, Սիրիայում հայերը երեք համայնքներով են ներկայացված, և հայկական ամենօրյա դպրոցներ են գործում նաև հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքներում: Նրանց նպատակը նույնպես սիրիահայ երեխային հայեցի կրթություն և դաստիարակություն տալն է և հայապահպանությանը նպաստելը՝ շեշտը դնելով կրոնական դաստիարակության վրա:

Հայ ավետարանական համայնքին պատկանող դպրոցներ

Այսօր Սիրիայի հայ ավետարանական համայնքում գործում է հինգ հայկական ամենօրյա դպրոց՝ ինչպես Հալեպում, այնպես էլ Դամասկոսում և Քեսաբում:

Հալեպի հայ ավետարանական միացյալ վարժարանը հիմնադրվել է 1927 թ. հայ ավետարանական եկեղեցու նախաձեռնությամբ ու հովանավորությամբ: Դպրոցը եկեղեցուն կից է, և նրա գործունեությունը համակարգում ու վերահսկում է համայնքի կրթական հանձնաժողովը, որի անդամներն ավետարանական երեք եկեղեցիների ներկայացուցիչներն են և համայնքի ուսյալ անդամները: Նրանք իրենց աշխատանքով ու աջակցությամբ հոգում են դպրոցի գործունեության անխափանությունը:

Քանի որ դպրոցը պատկանում է հայ ավետարանական համայնքին, սկզբնական շրջանում նրա տնօրենները եղել են պատվելիներ: Վերջին 10-12 տարին է, ինչ տնօրենն աշխարհիկ է և կին՝ տիկ. Բեթթի Նահաս (ազգությամբ հայ է):

Դպրոցն ունի միայն կրթական առաջին աստիճանը՝ նախակրթարանի բաժինը (ներառյալ մանկապարտեզը): Աշակերտության ընդհանուր թիվը հասնում է 250-ի (մանկապարտեզը միասին): Այստեղ ուզում ենք փաստել մի շատ կարևոր հանգամանք: Ի տարբերություն Սիրիայի հայ առաքելական համայնքի դպրոցների, որտեղ աշակերտության գրեթե 100%-ը կամ որոշ դպրոցներում 90-95%-ը հայ երեխաներ են, հայ ավետարանական միացյալ վարժարանում նախակրթարանի աշակերտության կեսն արաբ է, իսկ մանկապարտեզինը՝ կեսից ավելին:

Տնօրենի մեկնաբանությունն այս հարցի վերաբերյալ այն է, որ

1. դպրոցը գտնվում է արաբական թաղամասում, որտեղ հայ ընտանիքները քիչ են: Եվ արաբներն էլ, արժեքավորելով ու բարձր գնահատելով հայ ավետարանական դպրոցի վարկանիշը, իրենց երեխաներին արձանագրում են հայկական վարժարանում,

2. հայ ընտանիքներում, ի տարբերություն արաբների, ծնելիության տոկոսը ցածր է՝ մեկ կամ երկու երեխա:

Վարժարան հաճախող արաբ երեխաների 95%-ը քրիստոնյա է: Սակայն նշենք, որ և՛ մանկապարտեզում (2), և՛ նախակրթարանում (3) կան նաև իսլամ արաբ երեխաներ: Ըստ տնօրենի բացատրությունների՝ այս երեխաները ցանկություն ունեն հայերեն սովորել և մասնակցում են հայերենի դասերին: Իսկ քրիստոնյա արաբ երեխաները մասնակցում են նաև կրոնի դասերին: Դրան մենք ականատես եղանք դասալսման ժամանակ:

Ինչպես մյուս համայնքների դպրոցներում, այնպես էլ Հայ ավետարանական միացյալ վարժարանում հայերենին (որպես ծիսական լեզու) հատկացված է 4 ժամ (շաբաթը), իսկ կրոնին՝ 3 ժամ:

Հայ ավետարանական միացյալ վարժարանում մեծ ուշադրություն է դարձվում կրոնական դաստիարակությանը, որի իրականացումն իր վրա է վերցրել Հայ ավետարանական եկեղեցին: Ամեն առավոտ (շաբաթվա 6 օրը) ժամը 8.00-8.20-ը դպրոցի բոլոր աշակերտները գնում են կից եկեղեցի պաշտամունքի՝ տերունական աղոթքն են ասում, հոգևոր երգեր երգում: Դպրոցն ու եկեղեցին միասին ունեն կազմած յուրաքանչյուր օրվա դասացուցակը: Հատուկ պաշ-

տամուռքի համար դպրոցը կազմել է նաև ամսվա դասացուցակը՝ իր տարբեր նյութերով. աղոթք, երգ, քարոզ: Վերջինս կարող է լինել դաստիարակչական կամ հոգևոր պատմություն:

Շաբաթվա մեկ օրը տրամադրվում է միայն հոգևոր երգեր սովորեցնելուն (100-ից ավելի երգեր), մեկ օրը (ուրբաթ)՝ հայկական, ժողովրդական, ազգային երգերին, իսկ շաբաթ օրը՝ հայոց պատմության դասավանդմանը:

Տոնական օրերին (Թարգմանչաց տոն, մայրերի օր, Վարդանանց տոն) պատրաստվում է գեղարվեստական հայտագիր, հրավիրվում են հյուրեր: Դրանք կարող են լինել պատվելիներ, բանախոսներ, համայնքի ուսյալ մտավորականներ, որոնք ներկայացնում են օրվա խորհուրդը: Նշվում են նաև հիշատակի օրերը (ապրիլի 24-ը):

Այս ամենը կատարվում է եկեղեցում, առավոտյան ժամը 8.00-ից մինչև 8.20-ն ընկած ժամանակահատվածում, որին պետությունն արգելք չի հանդիսանում, քանի որ դպրոցներում պաշտոնապես դասերը սկսվում են 8.30-ին, և դրանից հետո է, որ արաբ տնօրենն իրավունք ունի վերահսկել դպրոցի առօրյան:

Իսկ 8.20-ին, ինչպես Սիրիայի բոլոր դպրոցներում, այնպես էլ Հայ ավետարանական միացյալ վարժարանում կատարվում է պետական դրոշակի արարողությունը, երգվում է պետական հիմնը:

Դպրոցի ուսուցչական կազմում բոլորը հայեր են, որոնց աշխատանքի է ընդունում ու ազատում համայնքի կրթական հանձնաժողովը: Նույն հանձնաժողովն է նշանակում նաև դպրոցի տնօրենին: Ի դեպ, նշենք, որ այստեղ նույնպես տիրում է երկտնօրինության երևույթը՝ արաբ և հայ, որոնց միջև հստակ բաժանված են իրավասությունների շրջանակը և գործառույթները: Ըստ հայ տնօրենի վկայության՝ նրանց միջև կա ներդաշնակ համագործակցություն:

Դպրոցի շրջանավարտների 65-70%-ը ուսումը շարունակում է ՀԲԸՄ-ի Նաջարյան-Գյուլբենկյան երկրորդական վարժարանում և Քարեն Եփփե ճեմարանում, իսկ որոշ տոկոսը հաճախում է պետական դպրոցներ, որտեղ կրթությունն անվճար է:

Դասագրքերի հարցն այստեղ նույնպես չլուծված խնդիր է: Հայերենի համար կիրառում են Կ. Ջուհարյանի «Մրգաստան» խորագրով դասագիրքը, որը թե՛ առարկայական (բովանդակային) և թե՛ մանկավարժական-մեթոդական լուրջ վերանայման կարիք ունի: Իսկ կրոնի համար դասագիրք չունեն: Ուսուցիչներն են պատրաստում նյութերը և բաժանում աշակերտներին: Ի դեպ, նշենք, որ կրոնը դասավանդում է աշխարհիկ ուսուցիչ, որն ունի համալսարանական կրթություն (աստվածաբանության ֆակուլտետ):

Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում անգլերենի ուսուցմանը՝ այն սկսելով դեռ առաջին դասարանից (2+1): Իսկ պետական դպրոցներում օտար լեզուների ուսուցումը սկսվում է 5-րդ, 6-րդ դասարաններից: Անգլերենի դասագրքերը դպրոցը հայթայթում է դրսից:

Ինչ վերաբերում է ուսուցիչների (հայագիտական) վերապատրաստման հարցին, պետք է փաստենք, որ այն անմխիթար վիճակում է, և ուսուցիչները շատ անօգնական են ու անվերջ որոնումների մեջ: Իսկ պետական ծրագրով նախատեսված առարկաներ դասավանդող ուսուցիչների վերապատրաստման գործն իրականացնում է պետությունը՝ կրթական մարմինը՝ պարբերաբար սեմինարներ կազմակերպելով: Ահա այս ուսուցիչներն էլ ստացած մեթոդական գիտելիքները փոխանցում են իրենց գործընկերներին: Բայց չէ՞ որ ընդհանուր սկզբունքներ, կանոններ ու մեթոդներ ունենալով հանդերձ՝ յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման մեթոդիկական ունի իր առանձնահատկությունները, որոնք հաշվի չառնելու դեպքում կտուժեն դասավանդման ողջ գործընթացն ու ուսման որակը:

Չնայած գործի հանդեպ մեծ նվիրվածությանն ու կատարած անդուլ աշխատանքին՝ վարժարանի տնօրենն այնքան էլ լավատես չէ հայկական դպրոցների ապագայի հանդեպ. իրատեսորեն գտնում է, որ երկրի իրավիճակից ելնելով՝ դպրոցների գործունեությունն ու կարգավիճակը կարող են լուրջ փոփոխություններ կրել:

Հայ կաթոլիկ համայնքին պատկանող դպրոցներ

Սիրիայի հայկական դպրոցների լայն ցանցի մեջ իրենց տեղն են զբաղեցնում նաև հայ կաթոլիկ համայնքի դպրոցները, որոնց ծավալած կրթադաստիարակչական գործունեությունը նույնպես միտված է սիրիահայ երեխայի հայեցի դաստիարակությանը՝ շեշտը դարձյալ դնելով կրոնական դաստիարակության վրա:

Հայ կաթոլիկ համայնքում գործում են 9 հայկական ամենօրյա դպրոցներ, որոնք գտնվում են ինչպես Հալեպում՝ Ս. Գր. Լուսավորիչ, Զվարթնոց, Մխիթարեան, Անարատ յղության քույրերու և Դամասկոսում՝ Անարատ յղության քույրերու, Փարոս, այնպես էլ Քեսաբում, Թաբքայում, Քամիշլիում: Կաթոլիկ համայնքի դպրոցները գործում են Վենետիկի Մխիթարյան միաբանության հովանու տակ:

Հայ կաթոլիկ համայնքի Հալեպի Մխիթարյան վարժարանը հիմնադրվել է 1935-ին՝ եկեղեցու կողմից: Մինչև 1965 թ. այն գործել է ֆրանսիական կրթական ծրագրով և ունեցել է կրթական երեք բաժիններն էլ՝ նախակրթարան, միջնակարգ (բրյուվե) և երկրորդական (բաքալորեա):

1965-ից դպրոցը գործում է կրթական երկու աստիճանով՝ մինչև բաքալորեա: Դպրոցը երկսեռ է: Աշակերտության թիվը հասնում է 600-ի (ներառյալ մանկապարտեզը): Յուրաքանչյուր դասարանի աշակերտների թիվը չի անցնում 25-ից, «որպեսզի,— ինչպես ասում է վարժարանի տնօրեն Եղիշե վարդապետ Ջուլյանը,— ուսման որակը բարձր լինի, և աշակերտների ընդգրկումն ու ակտիվությունը դասին մեծանան»¹¹⁵:

Վարժարանի ուսուցչական կազմի 95%-ը հայ են: Ուսուցիչների ընտրությունը կատարում է վարդապետը՝ հինք ընդունելով կրթական աստիճանը, մասնագիտական փորձը: Նախակրթարանում նվազագույնը պահանջվում է բաքալորեայի վկայական, իսկ միջնակարգում՝ համալսարանի:

Դպրոցի արար և հայ տնօրենների միջև հստակ բաժանված են աշխատանքներն ու իրավասությունների շրջանակը: Ըստ վարդապետի տեղեկության՝ ուսումնական բաժինը լրիվ արար տնօրենի ձեռքին է: Նա է կրթական մարմիններում պատասխանատուն դպրոցի համար: Իսկ կրոնական և հայագիտական առարկաների հսկողությունը հայ տնօրենի գործառույթների մեջ է:

Վարժարանի կրթության բովանդակության մեջ ընդգրկված են հայոց լեզուն (ծիսական լեզու) և կրոնը: Նախակրթարանում հայերենին հատկացված է 5-6 ժամ, իսկ կրոնին՝ 2 ժամ, միջնակարգում հայերենին՝ 4 ժամ, կրոնին՝ 3 ժամ:

Հայերենի համար վարժարանում գործածում են Հ. Չոլաքյանի դասագրքերը, որոնց մասին արդեն հանգամանալից խոսվել է:

Մանկապարտեզում միաժամանակ իրականացվում է հայերենի, անգլերենի և արաբերենի գրուսուցումը: Կիրառվում են նույն դասագրքերը, ինչ ազգային վարժարանների մանկապարտեզներում: Ըստ վարժարանի տնօրենի՝ դպրոցը կրոնական է, և հետևաբար մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների հոգևոր, կրոնական դաստիարակությանը: Շաբաթը 2 օր դպրոցում անցկացվում է աշակերտական պատարագ՝ հինգշաբթի՝ միջնակարգի համար, իսկ շաբաթ՝ նախակրթարանի: Հատուկ աշակերտների համար կազմվում է հայտագիր: Պատարագում է վարդապետը: Մանկապարտեզում, նախակրթարանում և միջնակարգում աշակերտներին առանձին ժամով սովորեցնում են հոգևոր երգեր և աղոթքներ: Առավոտյան դպրոցում դասերը պարտադիր սկսվում են «Հայր մեր»-ի աղոթքով: Այս ամենն արվում է հայ երեխային քրիստոնեական հավատքին ամուր պահելու նպատակով:

Մխիթարյան վարժարանը հոգաբարձուների խորհուրդ չունի: Տնօրենը հաշվետու է միայն Մխիթարյան միաբանությանը, որն էլ լուծում է դպրոցի բոլոր խնդիրները:

Ըստ դպրոցում եղած տվյալների՝ Մխիթարյան վարժարանի շրջանավարտների հիմնական մասն ուսումը շարունակում է կան Քարեն Եփփե ճեմարանում, կան էլ ՀԲԸՄ-ի Նաջարյան-Գյուլբենկյան երկրորդական վարժարանում: Մի մասն էլ հաճախում է կան

¹¹⁵ Հարցազրույց Մխիթարյան վարժարանի տնօրեն Եղիշե վարդապետ Ջուլյանի հետ, Հալեպ, մայիս, 1999:

պետական դպրոց, որն անվճար է, կան էլ արհեստից դպրոցներ: Աշակերտության որոշ մասն էլ ուղղակի անցնում է աշխատանքի (ընդամենը 15 տարեկան):

Վարժարանում նշում են կրոնական տոները, հիշատակի օրերը, որոնց մասնակցում է դպրոցի ողջ աշակերտությունը:

Սիրիայի հայկական դպրոցների ապագայի նկատմամբ լավատեսական են հնչում Մխիթարյան վարժարանի տնօրեն Եղիշե վարդապետ Ջուլյանի խոսքերը. «Որքան պիտի տևե հայութեան կացութիւնը այստեղ, մենք անոնց հետ կապւած ենք: Կջանանք աշխատիլ եւ հայ ժողովուրդին օգտակար ըլլալ թե՛ կրոնական և թե՛ հայագիտական տեսակետով: Մեր գլխավոր նպատակը հայ երեխային հայ պահելն է»¹¹⁶:

Ամբողջացնելով մեր խոսքը Սիրիայի հայկական դպրոցների մասին՝ նշենք, որ հայ առաքելական, հայ ավետարանական և հայ կաթոլիկ երեք համայնքներում գործող ամենօրյա դպրոցները, ծրագրային, մեթոդական, դասագրքային ու կադրային որոշ տարբերություններ ունենալով հանդերձ, ծառայում են մեկ միասնական նպատակի՝ սիրիահայ երեխաների հայեցի կրթության ու դաստիարակության, հայկական գաղութի զարգացման և հայապահպանության գործին՝ իրականացնելով կրթամշակութային համապարփակ գործունեություն՝ հաղթահարելով պետական կրթական մի շարք սահմանափակումներ ու սոցիալ-տնտեսական բազում դժվարություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1. Արուսյան Խ., Պատմություն Տիգրանի կամ բարոյական խրատներ, Երկերի ժողովածու, հ. 4, Եր., 1947, 383 էջ:
2. Արուսյան Խ., Նախաշավիղ կրթության ի պետս նորավարժից, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Եր., 1950, 509 էջ:
3. Աբրահամյան Աշ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, 2, Եր., 1964, 1967, 484 էջ:
4. Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, Ա. հատոր, Կահիրե, 1941, 446 էջ:
5. Ակինյան Հ. Ն., Հայ կեանքը Հալեպի մեջ, «Հանդես ամսօրեայ», մարտ-հունիս, 1933, էջ 305-333:
6. Աղայան Ղ., Երկեր, հ. 3, Եր., 1963, 545 էջ:
7. Աղայան Ղ., Երկեր, հ. 4, Եր., 1963, 648 էջ:
8. Աղայան Ղ., Գրագիտություն ուսուցանելու ուղիղ ճանապարհը և նրանից խտորվելը, «Վարժարան», Թիֆլիս, 1883, No 8:
9. Անդրեասյան Ա., Սփյուռքը և հայրենիքը, Պեյրուք, 1962, 165 էջ:
10. Ավագյան Գր., Հայերն աշխարհում, Երևան, 1992, 91 էջ:
11. Աւետարան ըստ Մատթեոսի, 19;14, Ե., 48 էջ:
12. Արսլանյան Գ., Բեյրութ և Լիբանան, «Բյուզանդիոն», 2 հունիսի, 1908:
13. Արսլանյան Գ., Սուրիա, «Բյուզանդիոն», 27 մարտի, 28 ապրիլի, 9 մայիսի, 1908:
14. Բարլոյան Ս., Սփյուռքահայ մամուլի պատմությունից, «Անի» (1946-1955), Եր., 1965:
15. Բահաթրյան Ա., Ուղեցույց հայ ուսուցչի, ընդհանուր մեթոդիկա և առաջին տարվա նյութի մշակումը, Թիֆլիս, 1882, 212 էջ:
16. Բահաթրյան Ա., Քերականություն աշխարհիկ լեզվի, Թիֆլիս, 1879, 82 էջ:
17. Բահաթրյան Ա., Ծաղկոցը կամ մանկանց պարտեզը և նրա նշանակությունը, Թիֆլիս, 1882, 24 էջ:
18. Բահաթրյան Ա., Մայրենի լեզվի ուսումը տարբերակված դպրոցների մեջ, Թիֆլիս, 1878, «Մանկավարժական թերթ», No 1-6:
19. Բահաթրյան Ա., Այբբենարան, գրել և կարդալ սովորեցնելու նյութը, Թիֆլիս, 1878:
20. Բահաթրյան Ա., Այբբենարանից հետո կարդալ ու գրել, Թիֆլիս, 1883, «Վարժարան», No 9, 10:
21. Բահաթրյան Ա., Առաջին ընթերցարան, Թիֆլիս, 1882, 83 էջ:
22. Բահաթրյան Ա., Ընթերցարանը և նրա նշանակությունը ժողովրդական դպրոցների մեջ, Թիֆլիս, 1879, «Մանկավարժական թերթ», No 7, 8, 9, 11:
23. Բարխուդարեան Վլ., Եկավեան Չ., Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան, Եր., 1996, 239 էջ:
24. Գալուստյան Խ., Ուսուցչի հիմնական դերակատարութիւնը, Լիբանան, 1976, 248 էջ:
25. Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Եր., 1962, 248 էջ:
26. Գարեգին Ա Ամենայն հայոց կաթողիկոս, Խորհե՛ և մտի՛ր, Ս. Էջմիածին, 1995, 265 էջ:
27. Գարեգին Բ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Գիր օրհնութեան, առ կիրակնօրեա վարժարան, Անթիլիաս, 1994:

¹¹⁶ Հարցազրույց Մխիթարյան վարժարանի տնօրեն Եղիշե վարդապետ Ջուլյանի հետ, Հալեպ, մայիս, 1999:

28. Դավլաթյան Կ., Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության, Եր., 1994, 459 էջ:
29. Եղիայան Բ., «Մանկավարժական դասախոսություններ», Լիբանան, 1965, 276 էջ:
30. Եղիայան Բ., Սերունդի մը դաստիարակութիւնը, Պեյրուս, 1956, 212 էջ:
31. Եղիայան Բ., Ընտանեկան կրթութիւն, Լիբանան, 1993, 167 էջ:
32. Եղիայան Բ., Ժամանակակից պատմություն կաթողիկոսության հայոց Կիլիկիո, 1914–1972, Անթիլիաս, 1975, 248 էջ:
33. Թեմիրյան Ա., Քեսապ (1909–1946), Պեյրուս, 1956, 147 էջ:
34. Թերզյան Ս., Չմնառու հայ վանքը 1749–1949, Պեյրուս, 1949, 125 էջ:
35. Թովուզյան Յ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, Եր., 1986, 370 էջ:
36. Թովուզյան Յ., Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային ազատագրական շարժումներին, Եր., 1968, 198 էջ:
37. Լեո Երկերի ժողովածու, հ. 4, Եր., էջ 73:
38. Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից Ետապում, Եր., 1964, 368 էջ:
39. Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999, 282 էջ:
40. «Կանոնագիր Լիբանանի թեմի ազգային վարժարանաց», Պեյրուս, 1965, 28 էջ:
41. Հարությունյան Գ., Արևելահայ դպրոցն ու մանկավարժական միտքը XIX դարի 50–60–ական թթ., Եր., 1979, 106 էջ:
42. Հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներ, Անթիլիաս, 1994, 88 էջ:
43. Ղազարյան Վ., ճանապարհորդություն ի Լիբանան, «Բյուզանդիոն», հունվարի 18–19, 26, 28, 1905:
44. Մալխասեան Մ., Կրթութիւն, Ե., 1995, 120 էջ:
45. Մալխասյան Ստ., Համառոտ պատմություն Լեւոնիսիայի հայոց հոգևոր դպրոցի 75–ամյա գոյության, Թիֆլիս, 1900, 214 էջ:
46. Սեւրոպ եպս. Թերզեան, Չմնառեան Կաթողիկոսական Միաբանութիւնը, Չմնառ, 1983, 157 էջ:
47. Միքայելեան Վ., Հայկական արտագաղթերը, «Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան», Եր., 1996, 239 էջ:
48. Մովսիսյան Ա., Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության V–XV դդ, Եր., 1958, 562 էջ:
49. Մսրյան Գ., Սուրիո ժողովուրդը և հայ տարագիրները, «Հուսաբեր», 30 ապրիլի, 1926:
50. Մսրյան Զ., Սփյուռքահայության քաղաքական խնդրումները համաշխարհային Բ. պատերազմի նախօրյակին (1933–1939), «Հայկազյան հայագիտական հանդես», Պեյրուս, 1979:
51. Նազիկյան Գ., Արևմտահայ մանկավարժության միտքն ու դպրոցը XIX դ. սկզբից մինչև 50–60–ական թթ., Եր., 1969, 382 էջ:
52. Նուպար սարկ. Պերպլեռեան, Ղեմքեր եւ դէպքեր հայ եկեղեցւոյ պատմութենէն, Անթիլիաս, 1982, 151 էջ:
53. Շանթ Լ., Երկեր, հ. 6, Բեյրուս, 1951, 251 էջ:
54. Շանթ Լ., Երկեր, հ. 6, 1951, Պեյրուս, Եր., 1989:
55. Շանթ Լ., «Ուսում և կրթութիւն դպրոցական», հ. 7, Պեյրուս, 1952, 364 էջ:
56. Շավարշյան Ա., Հայ մանկավարժներ, Գիրք Ա., Եր., 1958, 619 էջ:
57. Ընդհանրեան Մանուէլ վերապատվելի, Ուրվագիծ հայ ավետարան. Բեթել եկեղեցիի և վարժարանի պատմութեան, Հալէպ, 1973, 25 էջ:
58. Չոլաքեան Զ., Յիսնամեակ Քարէն Եփփէ ազգային ճեմարանի, Հալէպ, 1997, 764 էջ:

59. Սալճյան Գ., Հայ ճարտարվեստը Սուրիո մեջ, «Հուսաբեր», 25 հոկտեմբերի, 1933:
60. Սահակ Բ Սեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս, Կոնդակ կիրակնօրյա դպրոցներու մասին, Անթիլիաս, 1930:
61. Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Եր., 1964, 447 էջ:
62. Սիմոնյան Յ., Հայ մանկավարժության պատմություն (ինքն շրջանից մինչև 18–րդ դ.), Եր., 1999:
63. Սիմոնյան Յ., Հայ մանկավարժության պատմություն (19–րդ դ.), Եր., 2001:
64. Ստեփանյան Ա., Երկրագործական հայ գաղութները Սուրիո մեջ, «Հուսաբեր», 12 հոկտեմբերի, 1927:
65. Սուլտանիսկի Վ., Հայրենիքը սրտումդ ունեցիր, Եր., 1980, Առաջաբան, էջ 13:
66. Սուլտանիսկի Վ., Քաղաքացու ծնունդը, Եր., 1978, 343 էջ:
67. Սուրմեան Արտ. արք., Պատմութիւն Հալէպի հայոց, Ա. հ., Հալէպ, 1940, 1095 էջ, հ. 3, Փարիզ, 1950, 838 էջ:
68. Վազգեն Ա. Հայրապետ հայոց, Կոնդակներ, ճառեր, քարոզներ, Գիրք Գ., Էջմիածին, 1976:
69. Վարժապետյան Ս., Հայերը Լիբանանի մեջ, հ. 1, 2, 3, Բեյրուս, 1951, 1981, 1994:
70. Վրույր, Հայ կրթական գործը Ղանասկոսի մեջ, «Հուսաբեր», 2, 7 մարտի, 1934:
71. Տասնապետյան Երվ., Կրթական կյանքը Հալէպի մեջ, «Հուսաբեր», 21–31 օգոստոսի և 1, 2 սեպտեմբերի, 1928:
72. Տասնապետեան Էդ., Մինչև որ բացուին իրաւ հայրենիքին դռները, «Արեւ», Հալէպ, հոկտեմբեր, 1947:
73. Տեր–Պալուստյան Մ., Սուրիո ազգայնական շարժումը և մենք, «Հուսաբեր», 17–19 դեկտեմբերի, 1928, 3, 4, 17 հունվարի, 1929:
74. Տեր–Գրիգորյան Ա., Գրաճանաչության մեթոդիկա, Եր., 1968, 240 էջ:
75. Տեր–Գրիգորյան Ա., Քերականության մեթոդիկա, Եր., 1971, 197 էջ:
76. Տեր–Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Եր., 1980, 563 էջ:
77. Տեր–Գրիգորյան Ա., Էջեր հայ մանկավարժական մտքի պատմության, Եր., 1980, 82 էջ:
78. Տեր–Ղազարյան Ե., Հալէպի Միփթարյան վարժարանի 50–ամյակը, Վենետիկ:
79. Ուշինսկի Կ., Մանկավարժության ընտիր երկեր, Եր., 1981, 347 էջ:
80. Փիրանյան Մ., Սուրիահայ վաճառականը երեկ և այսօր, «Սուրիահայ տարեցույց», Հալէպ, 1924:

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՍՏԻՄԱՅԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԵԳՐԵՐ ԵՍ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ

81. Ազգային Աբգարեան երկրորդական վարժարանի 1990–91 տարեշրջանի տարեգիրք, Պեյրուս, 1991:
82. Ազգային Աբգարեան երկրորդական վարժարանի 1996–97 տարեշրջանի տարեգիրք, Պեյրուս, 1997:
83. Ազգային Աբգարեան երկրորդական վարժարանի 1997–98 տարեշրջանի տարեգիրք, Պեյրուս, 1998:
84. Ազգային Գյուլպենկեան վարժարան, «Ուղեցույց», Հալէպ, դեկտեմբեր, 1999:
85. Բեյրութի Սահակյան–Լ. Սկրտիչյան քոլեջի «Արևիկ» աշակերտական հանդես:
86. Բեյրութի Հայ ավետարանական քոլեջի «Ամի» և «Գառնի» աշակերտական պարբերաթերթեր, Պեյրուս:
87. «Գիտութեան ճանապարհին» հայ կաթողիկ Մեքոպեան բարձրագույն վարժարանի աշակերտական տարեգիրք, Պեյրուս, 1999, թիւ 1:
88. «Խաչբուռ» ազգային եղիշէ Մանուկեան երկրորդական վարժարանի աշակերտութեան պարբերաթերթ, Լիբանան, 1989–91:
89. Համազգայինի և Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ, (1929–54), Պեյրուս, 1954:

90. Համազգայինի Մեկնաբան և Հայկ Արուսեան և Նշան Փալանճեան ճեմարաններ (1994–95), Պեյրուֆ, 1995:
91. Համազգայինի Մ. և Յ. Արուսեան ճեմարանը, տեղեկագիր, Պեյրուֆ, 1991:
92. Համազգայինի Ն. Փալանճեան ճեմարան, 50–ամեակ, տեղեկագիր, Պեյրուֆ, 1980:
93. Հայ Աւետարանական գոլժի «Սիփան» տարեգիրք, Պեյրուֆ, 1991:
94. Հայ ավետարանական քոլեջի «Սիփան» տարեգիրք:
95. Հայկազյան հայագիտական հանդես, Պեյրուֆ, 1971:
96. «Վահան Թեքեան վարժարան–40», Պեյրուֆ, 1991:
97. Յիսնամեակ Սրբոյ Քառասնից Մանկաց եկեղեցոյ եւ վարժարանի, Պեյրուֆ, 1980:
98. «Շավիղ» պարբերաթերթ, Հալէպ, 1999–2002:
99. Քարեն Եփփէ ճեմարանի «Շավիղ» պարբերաթերթ, Հալէպ, 1999–2001, «Ծիլեր» աշակերտական թերթ, 1961 թ–ից:
100. Քառասնամեակ ազգային Աքսոր Գասարճեան վարժարանի, Ալպոմ, հուշամատենան, (1931–1971), Լիբանան, 1971:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ

101. «Ազդակ», 1927 (6 ապրիլի):
102. «Ազդակ», 1930 (հունիս):
103. «Ազդակ», 1932 (հոկտեմբեր):
104. «Ազդակ», 1939 (հոկտեմբեր):
105. «Այգ», 1960 (2 սեպտեմբեր):
106. «Արարատ», 1953 (սեպտեմբեր):
107. «Արարատ», 1959 (սեպտեմբեր, հոկտեմբեր):
108. «Արարատ», 1997 (4 հուլիսի):
109. «Արև», 1923 (հոկտեմբեր):
110. «Արև», 1924 (հունիս, ապրիլ):
111. «Արև», 1925 (օգոստոս):
112. «Արև», 1926 (օգոստոս):
113. «Արև», 1928 (հոկտեմբեր, հուլիս):
114. «Արև», 1932 (23 մայիսի):
115. «Արև», 1934 (մարտ):
116. «Արև», 1961 (նոյեմբեր):
117. «Արևելք», 1947, (12 հոկտեմբերի, Հալէպ):
118. «Արևելք», 1947, (26 հոկտեմբերի, Հալէպ):
119. «Բյուզանդիոն», 1908, (2 հունիսի):
120. «Բյուզանդիոն», 1908, (27 մարտի):
121. «Բյուզանդիոն», 1908, (28 ապրիլի):
122. «Բյուզանդիոն», 1908, (9 մայիսի):
123. «Գանձասար», (Հալէպ):
124. «Զարթոնք», 1938, 1951, 1952, 1953, 1959 (սեպտեմբեր, հոկտեմբեր):
125. «Էջմիածին» (Էջմիածին), 1998, ապրիլ, No 4:
126. «Ժողովրդի ծայն», 1943, 1 դեկտեմբերի:
127. «Հայաստանի կոչնակ», 1925:
128. «Հայրենիք» (օրաթերթ), 8 Յունուար, (Պոստոմ), 1948:
129. «Հանդես ամսօրեայ», 1935, էջ 442:
130. «Հասկ», 1941:
131. «Մանկավարժական թերթ», 1878, No 1, 2, 3, 4, 5, 6 (Թիֆլիս):
132. «Մանկավարժական թերթ», 1879, No 7, 8, 9, 10, 11 (Թիֆլիս):

133. «Յուսաբեր» (Հուսաբեր), 1921–23, (Ղամասկոս):
134. «Յուսաբեր» (Հուսաբեր), 1924, (Ղամասկոս):
135. «Յուսաբեր» (Հուսաբեր), 1926, (Ղամասկոս):
136. «Յուսաբեր» (Հուսաբեր), 1928, (Ղամասկոս):
137. «Յուսաբեր» (Հուսաբեր), 1929–31, (Ղամասկոս):
138. «Յուսաբեր» (Հուսաբեր), 1934, (մարտ, Ղամասկոս):
139. «Նոր Դրագարկ» պաշտոնական ամսաթերթ հայոց եկեղեցւոյ կիրակնօրեա դպրոցներու, Անթիլիաս, 1997, Յունուար–փետրուար:
140. «Նոր Դրագարկ» պաշտոնական ամսաթերթ հայոց եկեղեցւոյ կիրակնօրեա դպրոցներու, Անթիլիաս, 1997, մարտ–մայիս:
141. «Սուրիահայ տարեցոյց», 1924, Հալէպ:
142. «Սուրիահայ տարեցոյց», 1925, Հալէպ, էջ 257:
143. «Վարժարան», Թիֆլիս, 1883, No 7, 8, 9, 10:

ՌՈՒՍԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

144. Абрамян А. В., Проблема внешкольного образования в армянском общественно–просветительском движении (вторая половина XIX и начало XXвв.), Ер., 1990, 354 с.
145. Амонашвили Ш. А., В школу — с шести лет, “Педагогический поиск”, М., 1987, 544 с.
146. Бодянский В. Л., Вобликов Д. Р. и др., Просвещение и подготовка национальных кадров в странах востока, М., 1971, 405 с.
147. Ветров В. В., Развитие образования в странах Арабского Востока, “Проблемы образования в зарубежных странах”, М., 1968, 105 с.
148. Гербарт И. Ф., Избранные педагогические сочинения, “Учпедгиз”, М., 28 с.
149. Луцкий В. Б., Национально–освободительная война в Сирии (1925–27), М., 1964, 346 с.
150. Салиби К., Очерки истории Ливана, М., 1969, 215 с.
151. “Современная Сирия”, М., 1958, 256 с.
152. Шаталов В. Ф., Учить всех, учить каждого, “Педагогический поиск”, М., 1987, 544 с.

ԱՆԳԼԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

153. Hurani A. H., Syria and Lebanon, London–New York, 1946, 214 p.
154. Robison G., Travels in Palestine and Syria, London, 1837, 126 p.
155. Salibi K., The Modern History of Lebanon, 1965, 176 p.
156. Sanjian A. K., The Armenian Communitis in Syria, 1965, p. 91–92, 184 p.

ՖՐԱՆՍԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

157. Duguet (Dr), La situation des refugies au Liban et en Syrie, dans “Revue Internationale de la Croix Rouge”, Gene ve, 1927.
158. Guys H., Beyrouth et Liban, Paris, 1850, 267p.
159. Ismail A., Histoire du Liban du XVII siecle a nos jours t. 1, 2, Beyrouth, 1958, 375 p.
160. Morgan J. J., La fin du mandat francais en Syrie, Paris, 1938, 219 p.
161. Werner G., Visite aux refugies Armeniens etablis en Syrie et au Liban, Gene ve, 1933, 147 p.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յեղիմակի կողմից 3

Գլուխ առաջին. ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՔՈՒՄ (ԼԻԲԱՆԱՆ, ՍԻՐԻԱ)

- § 1.1. Հայ կրթական գործի հասարակական, քաղաքական, տնտեսական և սոցիալ-մշակութային նախադրյալները 7
- § 1.2. Սփյուռքահայության պայքարն ուժացման դեմ: Օտար միջավայրի բացասական ներգործության հաղթահարման ուղիները 18
- § 1.3. Սփյուռքի և Հայաստանի համագործակցությունը կրթամշակութային ոլորտում 21

Գլուխ երկրորդ. ՍՓՅՈՒՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ (ԼԻԲԱՆԱՆ, ՍԻՐԻԱ) ԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ԱՌԱՆՋԱՂԱՅՏԿՈՒԹՈՒՆՆԵՐԸ

- § 2.1. Հայկական ամենօրյա դպրոցների տիպերը, կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, կրթության բովանդակությունը 29
- § 2.2. Սփյուռքահայ ուսուցիչը. նրա առաքելությունը, աշխատանքի առանձնահատկությունները 40
- § 2.3. Ազգային կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, կրթամշակութային, բարեգործական, հայրենակցական միությունների և եկեղեցու դերը սփյուռքի հայկական ամենօրյա դպրոցների ստեղծման ու զարգացման գործում 45

Գլուխ երրորդ. ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (ԼԻԲԱՆԱՆ, ՍԻՐԻԱ), ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՍՓՅՈՒՔԻ ՀԱՅԱՊԱՂԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

- § 3.1. Եկեղեցու դերը կիրակնօրյա դպրոցների ստեղծման հարցում 52
- § 3.2. Կիրակնօրյա դպրոցների նպատակն ու խնդիրները 57

Գլուխ չորրորդ. ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

- § 4.1. Լիբանանի հայկական գաղթօջախը: Լիբանանահայության ակտիվ մասնակցությունը Լիբանանի պետական և տնտեսական կառավարման, երկրի և հասարակության զարգացման գործընթացին 65

- § 4.2. Հայկական ամենօրյա դպրոցները Լիբանանում. կարգավիճակը, կրթության բովանդակությունը, պետական և հայկական ուսումնական ծրագրերի համադրումը 70
- § 4.3. Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանը 102

Գլուխ հինգերորդ. ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԸ

- § 5.1. Սիրիայի հայկական գաղութը: Սիրիահայության դերը երկրի տնտեսության և հասարակության զարգացման գործում 199
- § 5.2. Սիրիայի հայկական ամենօրյա դպրոցները. գործունեության առանձնահատկությունները 205
- § 5.3. Հալեպի Քարեն Եփփե ճեմարանը 255

Օգտագործված գրականության մատենագիտական ցանկ 297

ՆԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼԻՐԱՆԱՆԻ ԵՎ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

НАЗИК КАРАПЕТОВНА АРУТЮНЯН
АРМЯНСКИЕ ШКОЛЫ ЛИБАНА И СИРИИ
(на армянском языке)
Издательство «Зангак-97», Ереван, 2002

HARUTYUNYAN NAZIK K.
ARMENIAN SCHOOLS OF LEBANON AND SYRIA

Հրատարակչության գլխավոր տնօրեն՝ Ս. Շ. Սկրտչյան
Տնօրեն՝ Մ. Վ. Սնացականյան
Խմբագիր՝ Ա. Խ. Բրուտյան
Գեղ. խմբագիր՝ Ա. Ա. Բաղդասարյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Շ. Ներսիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Գ. Ա. Հարությունյանի

Շապիկի առաջին էջում պատկերված են
Բեյրութի Նշան Փալանջյան ճեմարանը, Հալեպի Քարեն եփիե ճեմարանը

Զորրորդ էջում՝
Բեյրութի Սելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարանը

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 19 տպ. մանուկ,
Տպաքանակը՝ 650 օրինակ: Գինը՝ պայմանագրային:



«ԶԱՆԳԱԿ-97» ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ
375010, Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ.՝ 54-89-32, 54-05-17
Ֆաքս՝ 54-06-07, էլ. փոստ՝ zangak@arminco.com
Տպագրվել է «Զանգակ-97» հրատարակչության տպարանում